







ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Editors **Arpine Chantikyan,
Lusine Vardanyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**


Редакторы **Арпине Чантикян,
Лусине Варданян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱՆԻ ՉՈՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՂՈՐԹԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**

(3 հոկտեմբերի, 2020 թ., Ս. Գայանե վանք)

«Եւ ա՛յս է այն հաղթությունը, որ հաղթում է
աշխարհին՝ մեր հավատը»

(Ա. Հովհ. Ե. 4):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր մեր եկեղեցիների նվիրական կամարների ներքո, մեր տնե-
րում, աշխատանքի վայրերում, ի սփյուռս աշխարհի, միասիրտ ու միա-
հոգի՝ զորակցության մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ Ար-
ցախ աշխարհի խաղաղության, մեր քաջարի զորաց եւ զորականաց հաղ-
թության եւ մեր ժողովրդի անվտանգ ու ապահով կյանքի համար:

Հայրենիքի խաղաղությունը, ազգի ազատ ու անկախ կյանքի պաշտ-
պանությունն ամեն մի հայի սրբազան առաքելությունն են: Այս առաքե-
լությանն ենք լծված բոլորս՝ մեր կյանքով ու ծառայությամբ, մեր սրբա-
զան հայրենիքի պաշտպանության հանձնառությամբ ու նախանձախնդ-
րությամբ: Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք, բայց այժմ գտնվում ենք
մի իրավիճակում, երբ խաղաղություն ունենալու համար պիտի պայքա-
րենք: Մեր ժողովրդի ու հայրենիքի համար վճռական այս օրերին մենք
հաստատակամ ու աներեր ենք՝ մեր հերոս նախնիների նույն նվիրումով,
քաջությամբ եւ ոգու արիության պաշտպանելու հայրենիքը եւ ազատ
ու անկախ կյանքի իրավունքը: Ոչ մի ուժ չի կարող սասանել մեր ժո-
ղովրդի ազատ ապրելու կամքը, որը զորացնում է ազատության համար

մարտնչող հերոս մեր զավակների բազուկները եւ ամրացնում նրանց հոգին: Հայոց բանակի արիասիրտ մարտիկները, Արցախ մեկնած բազում կամավորներ այս պահին էլ դիմակայում են Թուրքիայի հետ համատեղ իրականացվող Ադրբեջանի հարձակումներին եւ թեժ մարտերում ետ մղում հակառակորդին:

Սիրելիներ, հաղթանակը որոշվում է ոգու ամրությամբ ու արիության մեջ եւ անպարտելի հավատքով, որով միշտ զորեղ է եղել մեր ժողովուրդը՝ օրհասական պահերին իր ազատամարտերը պսակելով փառավոր հաղթությամբ: Մեր միաբանությամբ, անպարտելի ոգով ու հավատով պիտի հաղթահարենք փորձություններն ու նեղությունները, եւ Աստծու օրհնությամբ ազգս հայոց պիտի շարունակի զորացնել իր պետականությունը, բազմապատկել խաղաղ կյանքի ձեռքբերումները, որոնցով անկախության այս տարիներին շենացել է Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքը: Ոգու ուժ եւ եռանդ, տոկունություն եւ հաղթանակներ մեզ եւ Արցախի բարեպաշտ մեր ողջ ժողովրդին:

Մենք բոլորս քաջալեր ու գոտեպինդ ենք՝ տեսնելով այս օրերին Արցախից սփռվող արիության ոգին, հաղթական ու անպարտելի հավատքը պատերազմական իրավիճակի նեղությունների ու դժվարությունների դիմագրավման մեջ: Այսօր Պողոս առաքյալի խոսքով ենք գնահատում արցախաբնակ մեր սիրելի քույրերի ու եղբայրների աննկուն կամքը, հանուն հայրենիքի պաշտպանության ու անսասանության անձնագործություններ հանձն առնելու պատրաստակամությունը եւ հաղթանակի վճռականությունը. «Մենք ձեզնով պարծենում ենք, ...ձեր համբերության ու հավատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների ու նեղությունների մեջ, որոնց դուք համբերում եք» (Բ. Թեսաղ. Ա. 4):

Սիրելիներ, Մենք հպարտ ենք մեր ժողովրդով, իրենց զավակներին հայրենիքին ընծայող մեր հայրերով ու մայրերով, դեպի առաջնագիծ շտապող հայրենասեր երիտասարդներով ու ազատամարտիկներով, հանուն մեր կյանքի անվտանգության ու հարատեւության տքնողներով, Արցախին սատարող ամեն մեծ ու փոքրով: Հպարտ ենք զինվոր ու սպա մեր զավակներով, որ անառիկ են պահում մեր հայրենիքի սահմանները եւ մարտնչում են հաղթանակի անվերապահ հավատով: Մենք հպարտ ենք մեր ժողովրդի համախմբվածությամբ եւ միասնականության դրսևորումներով, արցախահայությանն օգնական լինելու աշխարհասփյուռ հայության պատրաստակամությամբ եւ հանձնառություններով,




որով պիտի դիմագրավենք թշնամուն եւ թույլ չտանք իրագործել նոր ցեղասպանություն:

Հայրապետական Մեր պատգամն ենք վերստին բերում ձեզ, սիրելի՛ զավակներ մեր ի հայրենիս եւ ի սփյուռս, զորեղ մնալու հայրենասիրություն՝ ու ազգասիրություն, ոգով աննկուն ու անվեհեր՝ միասնական ջանքերով ու գործերով ընթանալու դեպի հաղթանակ: Միասնաբար պիտի պաշտպանենք մեր հայրենիքը, հզորացնենք մեր անկախ պետականությունը եւ անվտանգ ու խաղաղ երկիր ավանդենք մեր սերունդներին:

Աստծու պահպանությունն ու հովանին մեր ժողովրդին եւ հայրենիքին:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՓԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

(11 հոկտեմբերի, 2020 թ., Սուրբ Էջմիածին)

«Աստված խոռվության Աստվածը չէ,
այլ՝ խաղաղության»
(Ա. Կորնթ. ԺԴ. 33):

Սիրելի բարեպաշտ հավատավոր զավակներ Մեր,

Այսօր համախմբվել ենք միասնական աղոթքի՝ Բարձրյալն Աստծու օրհնությունն ու զորակցությունը հայցելու Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրի ու մեր ժողովրդի խաղաղության եւ անվտանգ ու ազատ կյանքի հարատեւության համար:

Անհանգստությամբ ու տագնապով, ցավով ու վրդովմունքով լեցուն 14 օրեր ապրեցինք, միաժամանակ ապրեցինք հայրենյաց պաշտպան մեր զավակների խիզախությամբ ու հայրենասիրությամբ պատմական դարձած օրեր: Թուրքիայի բացահայտ աջակցությամբ՝ Ադրբեջանը, շարունակելով ռազմատենչ իր քաղաքականությունը, ներգրավելով նաեւ Սիրիայից բերված վարձու ահաբեկիչների, ռազմական լայնածավալ գործողություններ սկսեց Արցախի դեմ: Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների հետեւանքով ծանր մարտերում ընկան հարյուրավոր երիտասարդներ, զոհվեցին քաղաքացիական անձեր, այդ թվում՝ կանայք եւ երեխաներ: Հրթիռակոծվեց նաեւ Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, ինչը մեկ անգամ եւս վկայում է Ադրբեջանի իշխանությունների հայատյաց քաղաքականությունը, որը շարունակվում է Ադրբեջանում տասնամյակներ շարունակ՝ նպատակ ունենալով տեսնել Արցախը դատարկված հայությունից եւ աստվածապարգեւ մեր հավատքի բազում վկայություններից, որոնք Արցախի հողում ամենուր են՝ դարերով կառուցված: Արդարեւ, դարեր ի վեր մեր թշնամիները նույնպես իմացել են, որ մեր հավատքն է մեզ ամուր պահում մեր հողին եւ զորացնում՝ հույսով ու սիրով ապրելու, արարելու եւ հաղթելու:

«Աստված խոռվության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության»,— ասում է առաքյալը: Մեզ խաղաղության կոչած մեր Տեր Հիսուս Քրիստոսի

պատգամներով ենք մենք ապրել մեր կյանքը եւ ձգտել ենք, որ հաստատուն լինի խաղաղ գոյակցությունը մեզ շրջապատող երկրների ու ազգերի հետ, ինչպես որ ավետարանեցին հրեշտակները Փրկչի Ծննդյան բերկրալի առիթով. «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Հիրավի, պատերազմի եւ խաղաղության միջեւ մեր ընտրությունը խաղաղությունն է՝ հաստատված ճշմարտության եւ արդարության վրա: Սակայն հաճախ ստիպված ենք եղել մարտնչելու՝ հանուն խաղաղության, հանուն ազատ ու անկախ ապրելու մեր արդար իրավունքի: Հերթական անգամ մեզ պարտադրված այս պատերազմում մեր քաջարի զավակները՝ որպես խաղաղության մարտիկներ, կենաց եւ մահու պայքարի ելան՝ մեր հայրենիքի լուսավոր գալիքի տեսլականով մահվան հանդիման չերկնչելով ու չերկմտելով, հերոսաբար դիմակայելով արհամիրքներին ու նեղություններին: Հավատքի ու հայրենասիրության նրանց օրինակը հուսավառեց ու համախմբեց մեր ողջ ժողովրդին եւ պարծանքով լցրեց մեր հոգիները:

Սիրելիներ, մենք բոլորս պարտք ու պատասխանատվություն ունենք միշտ լինելու միասնական ու համախմբված՝ մեր հայրենիքը պաշտպանելու, մեր պետականությունը զորացնելու, Հայաստանն ու Արցախը շեն ու բարգավաճ, պայծառ ու ծաղկուն դարձնելու առաքելության մեջ: Մենք պարտք ու պատասխանատվություն ունենք հավատարիմ մնալու ազգային այն նվիրական նպատակներին, այն սրբություններին, որոնց համար պատերազմեցին ու անմահացան մեր ժողովրդի արժանավոր ու ընտիր զավակները: Հայոց բանակի մեր քաջ զինվորների արիության ու փառապանծ սխրանքի ուղենշած ճանապարհը առաջնորդում է մեզ անպայմանավոր հայրենանվիրումի, հանձնառությունների ու ազգասիրության աննահանջ ընթացքի: Քանզի մեր հայրենյաց պաշտպանների զորության ակունքը նաեւ միասնական, համախմբված, ուժեղ ու վստահելի թիկունքն է:

Խաղաղության մեր աղոթքներում ու մաղթանքներում այսօր շարականագրի խոսքով գովաբանենք մեր նոր հերոսներին, որոնք արիաբար վանեցին թշնամուն, վարդագույն արյամբ պսակեցին հարազատ հողը եւ իրենց անձերը որպես բանավոր պատարագ ընծայեցին հայրենիքի պաշտպանության զոհասեղանին: Մեր զոհված հերոսները մեր նորօրյա նահատակներն են, որոնք հողի մեջ ընկած ցորենի հատիկի ավետարանական խորհրդով բազում արդյունքներ են տալու ի խնդիր հայրենիքի հզորության ու անպարտելիության՝ իրենց լուսեղեն օրինակով ազգաշեն ու հայրենասեր մեծագործությունների ոգեշնչելով մեզ եւ գալիք սերունդներին: Հավերժ



փառք, խոնարհում եւ աղոթք մեր նորօրյա նահատակների խնկելի հիշատակին: Հանգստություն նրանց անմահ հոգիներին երկնային արքայության լուսեղեն օթեւաններում: Փառք եւ խոնարհում հայրենյաց պաշտպան մեր հերոսների ծնողներին, որոնք, ցավն ու տագնապն իրենց հոգիներում, արիության գործերի ոգեշնչեցին իրենց զավակներին մարտի դաշտում եւ հայրենիքի պաշտպանության հանձնառությունների՝ թիկունքում:

Մենք հավատում ենք, սիրելիներ, Եսայի մարգարեի տեսիլքին, ըստ որի՝ պիտի գա ժամանակ, երբ ժողովուրդները «իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն, եւ իրենց սվիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել» (Եսայի Բ. 4): Այս մաղթանքով ու տեսլականով գնահատում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների, ի մասնավորի՝ Ռուսաստանի Դաշնության ներդրած մեծ ջանքերը հրադադարի հաստատման եւ բանակցությունների վերսկսման գործում, որոնք, հուսով ենք, կամրագրեն խաղաղությունը տարածաշրջանում եւ կապահովեն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը: Ադրբեջանի կողմից անընդհատ խախտվող հրադադարի լարված եւ փխրուն իրավիճակում հայոց բանակի քաջարի մարտիկները շարունակում են մշտարթուն հսկել հայրենիքն ու հայրենյաց սահմանները, եւ աննկուն են նրանց, ինչպես եւ մեր ողջ ժողովրդի ոգին ու վճռականությունը՝ աննահանջ ու հաղթական մնալու հայրենիքն ու անկախ կյանքը պաշտպանելու սրբազան գործում:

Այժմ միասնական աղոթք բարձրացնենք առ Ամենակարող Աստված մեր վիրավոր զավակների ապաքինման, մեր նահատակված քաջարի զինվորների եւ պատերազմի արհավիրքներին զոհ դարձած հայորդյաց հոգիների հանգստության համար: Թող Տերը խաղաղության մեջ պահի Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքը, Իր Սուրբ եւ պատվական Խաչի նշանով հալածի երեւելի եւ աներեւույթ թշնամիներին, մեր ժողովրդին պահպանի չարի բոլոր փորձանքներից, ամուր պահի մեր հաղթական հավատքն ու ոգին: Եւ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, թող պահի մեր սրտերն ու մտածումները Քրիստոս Հիսուսով (Փիլիպ. Դ. 7), այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՂԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՉՐ

(14 հոկտեմբերի, 2020 թ.)

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աստվածային օրհնությունն ենք բերում ձեզ եւ Հայրապետական Մեր սերն ու աղոթքները:

Մեր հայրենիքի համար վճռական օրեր են: Կենաց ու մահու կռիվ ենք մղում հանուն Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի իրավունքի: Ադրբեջանը, անտեսելով հրադադարի պայմանավորվածությունը, շարունակում է ռազմական գործողությունները Արցախի Հանրապետության դեմ՝ հրետակոծելով նաեւ խաղաղ բնակավայրերն ու բնակչությանը, մեր հուշարձաններն ու սրբավայրերը, Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Թիրախավորվել են նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերը: Ադրբեջանի այս ընթացքն ի ցույց է դնում բանակցությունները ձախողելու, Արցախի ժողովրդին հայրենի հողից վտարելու եւ բնաջնջելու նրա հայատյաց քաղաքականությունը: Արցախի համար չկա եւ չի կարող լինել անվտանգության երաշխիք Ադրբեջանի կազմում: Պատերազմը մեր ժողովրդի ընտրությունը չէ: Մեզ պարտադրված է ինքնապաշտպանությունը՝ որպես բռնության ու բիրտ ուժի դեմ մեր կյանքի, ազատության եւ արժանապատվության պահպանման միակ միջոց:

Մենք դիմում ենք մարդկային կյանքը, խաղաղությունն ու արդարությունը արժեւորող բոլոր պետություններին, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին՝ առավել վճռական քայլեր ձեռնարկելու՝ կանխելու համար Թուրքիայի եւ վարձկան ահաբեկիչների անմիջական ներգրավմամբ Ադրբեջանի կողմից իրագործվող վայրագություններն ու ցեղասպան գործողությունները, հարկադրելու դադարեցնել պատերազմը եւ հիմնախնդրի կարգավորմանը հետամուտ լինել բանակցությունների ճանապարհով: Արցախի ժողովրդի անվտանգ կյանքը, Արցախում կայուն խաղաղության հաստատումը կենսական ու հրամայական է՝ կանխելու ավերածություններն ու հումանիտար աղետը տարածաշրջանում:

Մեր կոչն ենք ուղղում հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին. սիրելիներ, առավել, քան երբեւէ, հայրենիքը կարիքն ունի

մեզանից յուրաքանչյուրի ամբողջանվեր հանձնառության, համայն հայության համախմբման եւ հաղթական վճռականության՝ Արցախը պաշտպանելու, մեր ժողովրդի նկատմամբ արդարություն հաստատելու սրբազան այս գոյապայքարում: Լինենք միասնական եւ աննկուն, շարունակենք Արցախին ցուցաբերվող զորակցությունը, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերը, որպեսզի մեր հերոս նախնիների ոգով ներշնչված՝ փառապանծ հաղթանակով վերականգնենք խաղաղությունը հայրենյաց սահմաններում եւ ապահովենք Հայաստան եւ Արցախ մեր հայրենի երկրի անվտանգ ու ստեղծագործ կյանքը:

Սիրելի՛ զինվորներ եւ սպաներ Հայոց փառապանծ բանակի, առանձնակի զնահատանքով եւ երախտագետ սրտով բերում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը: Ամեն օր ծանր մարտերում դուք սխրանքներ եք գործում՝ պաշտպանելով մեր հայրենիքն ու ազատ ապրելու իրավունքը մեր ժողովրդի: Ամեն ժողովուրդ պիտի հպարտանար ձեզ պես նվիրյալ, արժանավոր զավակներով: Մեր ժողովրդի պարծանքն եք դուք, մեր պետականության, ազատ Հայաստանի, ազատ Արցախի գոյության եւ մեր արդար ձգտումների երաշխավորը: Այս պայքարի ընթացքում նաեւ կորցրեցիք զինակից ընկերներ, որոնք ընկան հերոսի մահով եւ ժառանգեցին նահատակության անթառամ պսակը: Մեր նորօրյա նահատակների լույս հիշատակի առջեւ թող հաստատ լինի ձեր ուխտը՝ ազգասիրության հաղթական ոգին աննկուն պահելու եւ հայրենին պաշտպանելու: Ձեր անձնվիրումի ու ծառայության օրինակով ոտքի է կանգնել համայն մեր ժողովուրդը ի սփյուռս աշխարհի եւ իր ձայնն է բարձրացնում հանուն Արցախի իրավունքների եւ հաղթանակի: Մենք հավատում ենք, որ «Տերն իր ժողովրդին զորություն պիտի տա, իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն պարգեւելով» (Սաղմ. ԻԸ. 11): Եւ այդ հաղթական հավատքով հայցում ենք Բարձրյալից, որ անփորձանք պահի ու պահպանի ձեզ, սիրելի՛ զինվորներ եւ սպաներ, աշխարհազորայիններ եւ կամավորականներ, զինավառի ձեզ իր հոգեւոր սպառազինությամբ եւ զորացնի ձեր բազկի ուժը՝ հաստատելու հարատեւ խաղաղությունը մեր հայրենիքում եւ մեր ժողովրդի կյանքում:

Աղոթում ենք ձեզ համար: Աստված օգնական եւ ապավեն ձեզ, Աստված օգնական եւ ապավեն Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին եւ մեր ժողովրդին: Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՉՆ**

(25 հոկտեմբերի, 2020 թ., Սուրբ Էջմիածին)

Սիրելի՜ զավակներ Մեր,

Մեր ազգի ու հայրենիքի համար վճռորոշ այս պահին հերթական անգամ Հայրապետական Մեր ուղերձն ենք հղում ձեզ:

Այսօր աշխարհասփյուռ մեր ժողովուրդն ամենուր իր կարողությունն ու ներուժն է ներդնում՝ հանուն արցախահայության ազատ ու անկախ կյանքի մեր սրբազան պայքարում: Մեր քաջասիրտ զինվորները, ապավինած Տիրոջ զորությանը եւ մեր տաճարներում մատուցվող աղոթքներին, շարունակում են խիզախությամբ դիմագրավել եւ հակահարված հասցնել թշնամուն՝ ամուր գիտակցությամբ, որ հաղթանակն է երաշխիքն ու գրավականն Արցախի Հանրապետության անվտանգության ու անսասանության:

Պատմության ընթացքում մեր ժողովուրդը բազում փորձությունների է դիմագրավել, երբեք չի ընկրկել դժվարությունների առջեւ եւ միշտ դրսևորել է հաղթանակներ կերտելու անպարտելի ոգի ու զորություն: Մեր հայրերը համբերել են նեղությունների, արիությամբ հեռու են վանել վախն ու հուսահատությունը, մահվանը հաղթել Քրիստոսի Հարության շնորհով ու հավատով եւ կերտել փառապանծ հաղթանակները հայրենի մեր երկրի: Զժմարիտ է ասված. «Քաջերի սերունդները քաջերն են»: Այսօր քաջերի մեր նոր սերունդն է հերոսանում նույն ոգով եւ նախնյաց լուսավառ օրինակով՝ հանձնառու նվիրաբերել նաեւ անգին կյանքը մեր ժողովրդին եւ հայրենիքին: Նույն քաջությունն ու հերոսությունը դրսևորում են նաեւ հայոց բանակին խիզախ մարտիկներ պարգևած սիրասուն ծնողները: Խոնարհում եւ երկնառաք օրհնություն մեր զինվորների եւ աշխարհազորայինների ընտանիքներին, թանկագին մայրերին ու հայրերին: Մեր բարձր գնահատանքն ու աղոթքը մեր ժողովրդին զորավիգ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին եւ հայ զինվորի հետ կողք կողքի մարտնչող նրանց զավակներին:


Այսօր Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված պատերազմը, ժխտական կեցվածքը մարդասիրական հրադադարի հանդեպ, վերջնագրային դիրքորոշմամբ բանակցությունների խափանումը, Արցախի բնակավայրերի ու բնակչության հրետակոծումը եւ պատճառած բազմաթիվ ավերներն ու մարդկային կորուստները, Արցախի հարցը ռազմական ուղիով վճռելու նկրտումները, ինչպես նաեւ վերջին տասնամյակների պատմությունը բավարար են փաստելու, որ Արցախը չի կարող որեւէ կարգավիճակով լինել Ադրբեջանի կազմում: Մեր գոյության առջեւ ծառացած սպառնալիքը մեզ այլ ընտրություն չի թողնում, քան կենաց ու մահու պայքարով պաշտպանել Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի իրավունքը եւ վերահաստատել խաղաղությունը, հատկապես երբ աշխարհը դեռ հապաղում է դատապարտել թշնամու ոճրագործություններն ու վայրագությունները: Խաղաղության ու ազատության ձգտումներում մեզ աջակից է Աստված, որ մեր հոգու եւ հավատքի զորությունը, ինչպես առաքյալն է ասում, Քրիստոս Հիսուսով հաղթություն պիտի պարգևի (հմտ. Բ. Կորնթ. 2.14):


Սիրելի զավակներ Մեր, այս վճռական պահին Մեր կոչն ենք ուղղում ձեզ. քաջաբա՛ր ելե՛ք հայրենիքի ու ազգի պաշտպանության նվիրական պայքարի, կանգնե՛ք սահմանագծում մարտնչող մեր քաջորդիների կողքին, որպեսզի պարտության մատնենք նենգ թշնամուն, խորտակենք նրա շար մտադրությունները եւ առավել հզորացնենք հայրենի մեր երկիրը, մեր պետականությունը: Այսօր առավել, քան երբեւէ, մեզ համար հրամայական է համագգային մեր միասնականությունն ու համերաշխությունը, որպեսզի մեր զավակաց անձնուրաց քաջությունը պսակվի հաղթական ավարտով՝ խնայելով մարդկային թանկ կյանքեր: Մեր արիությունը, մեր կյանքով ու գործով արժանի լինենք մեր հերոս զավակներին, նրանց փառապանծ ոգուն եւ անմահ սխրանքին: Հայրական Մեր պատգամն ենք ուղղում նաեւ հոգեւոր սպասավորներին, հայոց բանակի զնդերեցներին՝ քաջալերելու եւ ոգեշնչելու ազգիս զավակներին հայրենյաց պաշտպանության պայքարում, հավատքով զորացնելու մեր ժողովրդին եւ աղոթք ու ջանք բերելու մեր ընդհանուր հաղթանակին: Արդ, ազգովի, մեկ սիրտ եւ մեկ հոգի դարձած, միաբան եւ համախումբ կերտենք հերթական հաղթանակը մեր նորագույն պատմության: Եւ ինչպես որ մենք ենք ոգեշնչվում մեր հերոս նախնիներով եւ առանձնակի հպարտությամբ արտաբերում պատմահոր խոսքերը, այնպես էլ գալիք սերունդները պիտի հռչակեն, որ քաջերի սերունդներն են, զավակները հերոսական ժողովրդի:

Մեր սրտաբուխ աղոթքն է, որ անկոտրուժ լինեն աշխարհասփյուռ մեր ժողովրդի հաղթանակի կամքն ու վճռականությունը, ամուր՝ թիկունքը, եւ զորավոր՝ ոգին ու բազուկը հայրենյաց պաշտպան զինվորի: Հայցում ենք, որ Բարձրյալ Տերը պահի, պահպանի ու ազատի մեր ժողովրդին չարի փորձություններից, երեւելի եւ աներեւոյթ թշնամիներից եւ շնորհի խաղաղություն ու բարօրություն մեր հայրենիքին եւ համայն ազգիս հայոց, այսօր եւ հավիտյան. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Տ. ՄԻՆԱՍ ԱՔԵՂԱ ՀԱՆՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 հոկտեմբերի, 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տերն իմ լույսն է ու կյանքը, ո՞ւմից վախենամ.
Տերն իմ կյանքի ապավենն է, ո՞ւմից ես դողամ:
Եթե իմ դեմ պատերազմ պատրաստվի, սիրտս
չի սոսկա, եթե իմ դեմ նակատամարտի ելնեն,
միևնույնն է, Տէ՛ր, հույսս քեզ վրա եմ դնելու»

(Սաղմոս ԻԶ. 1, 3):

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր,

ԻԶ. սաղմոսի այս տողերն եմ ընտրել իբրեւ այսօրվա քարոզի բնաբան, քանզի ողջ հայ ժողովուրդն ի Հայաստան ու Արցախ եւ ի Սփյուռս աշխարհի, մեկ բռունցք, մեկ կամք եւ մեկ սիրտ դարձած, սաղմոսերգուի խոսքերի համաձայն՝ զորացած եւ գոտեպնդված Տիրոջով, հերոսական պայքար է մղում հանուն հայրենի սուրբ հողի պաշտպանության, հանուն իր լինելության եւ ինքնության պահպանման:

Հայոց հաղթական բանակի քաջարի մարտիկները, կյանքի եւ մահվան կռիվ մղելով, հաջողությամբ կասեցնում են անօրեն թշնամու հարձակումները՝ իրենց անուններն արձանագրելով մերօրյա պատմության փառավոր էջերում: Հետեւելով Քրիստոսի՝ «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ. 13) խոսքին՝ հայրենիքի հանդեպ սերը նրանք վեր են դասում սեփական անձից: Ոչ մի պարտքի զգացում, ոչ մի վախ կամ հրաման չի կարող ստիպել մարդուն կյանքը զոհել հանուն ինչ-որ մեկի կամ գաղափարի՝ բացի Տիրոջ մատնանշած մեծագույն սիրուց, որն ինքնակամ զոհաբերության է մղում:

Երանելի այն օրերից, երբ Քրիստոսի լույսն իջավ Հայաստան աշխարհ, արդարության և խաղաղության կարոտ մեր ժողովուրդը միշտ մարտնչեց վասն հավատո և վասն հայրենյաց, քանզի հայի համար իր գոյությունը, պայքարը, ապրումներն ու ողջ գիտակցությունը հիմնված են այս երկու նվիրական արժեքների վրա՝ հավատք և հայրենիք, հավատք և ժառանգություն:

Այո՛, սիրելիներ, քրիստոնեությունը նահանջի կրոնն չէ, այն պայքարի, հաղթանակի կրոնն է, չարի ու բռնության դեմ մարտնչելու կրոնն: Հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել կյանքի հարվածներից և գիտի՝ ինչպես իր պայքարը, անգամ նահատակությունը վերածել հաղթանակի: Երբ մի ժողովուրդ հանուն մեծագույն արժեքների պայքարում նույնիսկ նահատակվում է, չի կորչում, չի սպառվում, ապրում է, քանզի հավատում է, որ մարմնավոր խաչելությանը պետք է հետևի հոգևոր հարությունը, մահվան մոռյլ և խավար գիշերվան պիտի հաջորդի հարության լուսապայծառ առավոտը: Այս գիտակցումը, հոգեկան այս վստահությունը մի անառիկ բերդ է, որին չի կարող տիրել ոչ մի շար ուժ, ոչ մի ոսոխ ու թշնամի: Նրան, ով միշտ և ամենուր տեսնում է Աստծու զորությունը, չեն կոտրի ոչ մի սպառնալիք ու փորձություն: Զենքի և բիրտ ուժի դիմաց կա ոգու ուժը, որն արտահայտվում է հավատի զորությամբ: Ոգեղեն այս ուժի մեջ է հայ ժողովուրդը գտել իր փրկությունը, իր հավերժության ու կենսունակության գաղտնիքը:


Փա՛ռք Տիրոջը, հակառակ բոլոր սպառնալիքներին՝ փոթորկահույզ այս օրերին ևս այդ ոգով ենք ապրում, ապրում ենք արդար սպասումների իրականացման տեսիլքով: Մեզ ներշնչում են մեր հերոսների գործած սխրանքները, նրանց՝ սահման չունեցող զոհաբերության ոգին, մահվամբ մահը հաղթելու քրիստոնեական ժայռացած հավատքը: Քրիստոնեական հույսը, սակայն, սիրելիներ, պատրանք չէ մեզ համար, այլ լավատեսություն, վհատություն չէ, այլ ներգործող ուժ, հոգու տոկունություն և հավատք: Քրիստոնեական հույսը լաց ու կոծ չէ, ոչ եւս կրավորական վիճակ, այլ մղիչ ուժ դեպի աշխատանք, դեպի մաքառում, դեպի կյանք:

Սուրբ Գրիգոր Նազիանզացին պատգամում է մեզ. «Երբ կյանքն ու մահը իրար մոտ հայտնվեցին, և լույսը ծագեց խավարից, լույսը և կյանքը խափանեցին ինչ որ իրենց հակառակ էր, որովհետև իր բնությամբ խավարը չի կարող տոկալ լույսի առաջ, և մահը չի կարող գոյատևել այնտեղ, որտեղ գործում է կյանքը»:

Այս պատգամն է, որ առաջնորդող ոգի պիտի դառնա մեր ժողովրդի կյանքի ճանապարհին: Այսօր, առավել քան երբևէ, ամենքիս սրբազան պարտքն է՝ ամուր թիկունք դառնալ հերոս մեր զինվորների ու զորականների համար: Աղոթենք և խնդրենք Տիրոջը, որ ամենակարող Աստված ամուր պահի համազգային մեր միասնականությունը՝ պաշտպանելու մեր իրավունքներն ու հաստատուն քայլերով ընթանալու դեպի արդարություն: Մեր զորավարը մարդը չէ, այլ բոլոր մարտիրոսների և մեր հավատի Զորագլուխը՝ Ինքը Հիսուս Քրիստոս, որի առաջնորդությամբ պիտի հասնենք արդարության հաղթանակին:

Աստված օրհնի և զորավիգ լինի հայ զինվորին և ամրացնի նրա բազուկը՝ անխախտ պահելու հայոց սահմանները և կերտելու նորանոր հաղթանակներ:

Աստծու ամենակարող Աջը թող պահապան լինի ազգիս հայոց, հայոց հողին, որպեսզի կարողանանք խաղաղ երկնքի ներքո միահամուռ ու միաբերան փառաբանել Ամենասուրբ Երրորդությունը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:





Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈԴՈՍՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ «ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻ»

«Ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է»։ Գա-
րեգին Ա. Հովսեփյանց։ «Ամուսինն ու կինը պետք է նման լի-
նեն ձեռքերի եւ աչքերի։ Երբ ձեռքն է ցավում, աչքերն արտա-
սվում են։ Եւ երբ աչքերն են արտասվում, ձեռքերը մեկնվում են
արցունքները մաքրելու»

Ս. Հովհան Ոսկեբերան։

Անտանիքն Աստծուց մարդուն տրված բարձրագույն պարգևն է. «Հա-
շտ, որ մարդը միայնակ լինի։ Նրա նմանութեամբ մի օգնական ստեղ-
ծենք նրա համար» (հմմտ. Ծննդ. Բ. 18), սիրո եւ հավատքի աճն տաճա-
րը. «...որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում եւ խնամում
է այն, ինչպէս որ Քրիստոս՝ Եկեղեցին» (հմմտ. Եփես. Ե. 29), որի երաշ-
խավորն ինքը՝ Տերն է (հմմտ. Մատթ. ԺԹ. 6)։ «Ընտանիք հասկացողու-
թյունը մարդկային պատմության եւ հանրային կյանքում դրսեւորված
հնագույն եզրույթը եւ հասարակության միավորն է... Հայ Եկեղեցու
սկզբունքների եւ ընկալումների նորովի՝ ժամանակակից մարդուն հա-
սանելի լեզվով բացատրությունն ու մեկնաբանությունը, որը բարձրա-
գույն իմաստով արտահայտված է որպէս խորհուրդ՝ Պսակի խորհուր-
դով, այսինքն՝ այն ներգրավված է Եկեղեցու խորհրդական համակար-
գում կյանքի սրբության եւ սրբագործված կյանքի բարձրագույն ըմբռ-
նումով...»¹։ Աստվածաշունչը հավաստում է, որ Աստծու արարչագործու-
թյունն իրականանում է ընտանիքի² համապատկերում (Ժող. Թ. 9)։ Եւ
եղած պատվիրաններն էլ նպատակադրված են հաստատուն պահելու

¹ ԲԱԳՐԱՏ ԵՊՍ. ԳԱԼՍԱՆՅԱՆ, Միտք եւ բանք, Ս. Էջմիածին, 2019, էջ 27–28։

² «Տունն ու ընտանիքը՝ աշխարհի մի մանրակերտ է, ուր համապատասխան չափերում
ներկայացված է այն ամենը, ինչ գոյություն ունի աշխարհում» (Ս. БИЛАХАЙМЕР,
Не постопчай свои печали, Смысл страданий, Чикаго, 1982, էջ 88–89)։

նախեւառաջ ընտանիքի համայնապատկերը. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք» (հմմտ. Հովհ. ԺԳ. 34): Ընտանիքում մարդիկ, հաղորդակցվելով միմյանց եւ Աստծու հետ, մասնակիցը լինելով Տիրոջ արքայության եւ իրականացնելով հոգեւոր եւ սիրո գործառույթ (հմմտ. Մատթ. ԺԹ. 6), անդամագրվում են երկնային արքայությանը (Ա. Տիմ. Դ. 1—8, Եբր. ԺԳ. 4): Ս. Եղիշեն ասում է, որ յուրաքանչյուր մարդ, հավատալով Աստծուն, միանում է Նրա հետ՝ «Միշտ Աստուած ինքն ընդ իւր, միշտ հաւատացեալ՝ ընդ նմա Աստուած»³: Ըստ այսմ՝ ինչպես որ Աստծու տաճար դռնալու հավանականությունն անհատների պարագայում է, այնպես էլ՝ աստվածադիր ընտանիքի (հմմտ. Մատթ. ԺԹ. 6): Աստվածաշնչում բազում են ընտանիքի եկեղեցական բնույթի ու գործառույթի մասին վկայություններն ու ընտանիք-եկեղեցի զուգահեռները⁴: Եսայի մարգարեն, հաստատագրելով Աստված—մարդ հարաբերության կարեւորությունն ու պատկերագրելով Աստծու սերը մարդու նկատմամբ, բերում է ընտանիքի օրինակը. «Աստված անշափ ավելի է սիրում յուր որդիներին, քան թե մայրը յուր մանկանը» (Ես. ԼԹ. 15): Պողոս առաքյալը եւս, Ս. Պաակի խորհրդի կարեւորությունը դիտարկում է ընտանիքի համապատկերում. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ Եկեղեցու վերաբերյալ» (Եփես. Ե. 32, հմմտ. Մատթ. ԻԲ. 37, 39, Հռոմ. Ը. 35, Եփես. Դ. 19, Ա. Հովհ. Դ. 21): Ուրիշ խոսքով՝ քանի դեռ մարդն անմեղ էր եւ հավատարիմ իր կոչմանը, առաջնորդվում էր սուրբ կամքով (Ա. Կորնթ. ԺԵ. 45—47), նրա կենդանի հաղորդակցության եւ դրախտում երջանիկ լինելու շարունակական երաշխավորությունը պայմանավորված էր հենց ընտանիքի գործառույթով: Պատահական չէ, որ բոլոր ժամանակներում այնքան կարեւոր տեղ ու դեր է հատկացվում ընտանիքի հաստատությանը: «Ազգի պատմականորեն ձեւավորված աշխարհայացքային ամբողջական համակարգ բովանդակող ազգային-մշակութային ավանդույթները կարող են նպաստավոր լինել այսօր այդքան պահանջված հասարակական կայունության հաստատման համար... Անձնավորության բարոյական... արժեհամակարգում ընտանիքը բնութագրելի է

³ Քրիստոնեական, էջ 175:

⁴ «Ինչպես որ Ադամից ու Եւայից ծնունդ է առնում ողջ մարդկությունը, այդպես էլ Քրիստոսից եւ Եկեղեցուց ի հայտ է եկել ամբողջ հավատացյալ դասը» (В. Мышцын, Устройство христианской церкви в первые два века, Сергиев Посад, 1909, էջ 244—246):

որպես «ընկերական աշխարհի շենքի» պատվանդան, հետեւապես՝ նաեւ ազգի եւ մարդկության գոյատեւման եւ կատարելագործման հիմք... Հայ ընտանիքում դեռեւս հին դարերում ձեւավորված եւ ընդհուպ նոր ժամանակաշրջանը պահպանված ազգային ավանդույթները հանդես են գալիս որպես ազգի կենսունակությունն ապահովող հոգեբարոյական շաղկապ, ազգային մշակութի վերարտադրման եւ փոխհաղորդման գլխավոր միջոցներից մեկը»⁵։ Եկեղեցական հայրերից ու հայրապետներից շատերը, կարեւորելով ընտանիքի⁶ ինստիտուտը, այն նմանեցնում են Եկեղեցուն։ «Հայաստանյայց Ս. Եկեղեցու մի գավիթն է նաեւ յուր ամեն մի հավատացյալի տունը, քանի որ ընտանիքը Աստուծո արքայության բաղկացուցիչ տարրն է»⁷։ Խրիմյան Հայրիկը, ավելի առաջ անցնելով եւ գրեթե նույնացնելով ազգայինն ու եկեղեցականը, դրանց պահպանման ու ժառանգման դերակատարությունը դնում է ընտանիքի վրա. «...եթէ դրախտի գետերը կը վազեն իւր հրապարակը՝ աղբիւրը դրախտի ընտանիքն է... եթէ երկրէս յետոյ երկինք եւս ժառանգել կուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն, հաւատ եւ եկեղեցին, այժմ այդ սուրբ աւանդները անեղծ անկորուստ պահելու խորանն ընտանիքն է»⁸։ Ուրիշ խոսքով, համաձայն «Հայոց Հայրիկի», առանց ընտանիքի չի կարող գոյություն ունենալ ո՛չ ազգային գիտակցություն, ո՛չ կրոն, ո՛չ Եկեղեցի։ Ս. Մատթեոսի Ավետարանում զետեղված Քրիստոսի անդրադարձը՝ «ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ» (Մատթ. ԺԹ. 20), նախեւառաջ կենսագործելի է ընտանիքում ու ընտանիքի միջոցով։ Ս. Հովհան Ոսկեբերանը, հատկորոշելով ընտանիքի բացառիկ կարեւորությունն ու կենսական անհրաժեշտությունը, ասում է՝ «Ընտանիքը փոքրիկ Եկեղեցի է»⁹։ Քրիստոս եւս, մարդկանց ակնառու դարձնելու համար աստվածայինի ու մարդկայինի անխզելի

⁵ Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, *Ընտանիքը Խորեն Աշրգյանի քաղաքական տեսության մեջ*, «էջմիածին», 2., 2013 (այսուհետ՝ Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ), էջ 57, 59, 66)։

⁶ «Ընտանիքի անքակտելիությունը բացարձակ արժեք է ու նորմ, որը գործելու է բոլոր իրավիճակներում եւ տարածվելու է բոլոր անձանց վրա՝ անկախ հասարակության մեջ նրանց զբաղեցրած դիրքից, դասից, կարգավիճակներից եւ այլ հանգամանքներից» (И. МЕЙЕНДОРФ, *Православие и современный мир*, Москва, 1997, էջ 65)։

⁷ Քրիստոնեական, էջ 531–532։

⁸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, *Երկեր, Երեւան, 1992* (այսուհետ՝ *Դրախտի ընտանիք*), էջ 36։

⁹ ИОАНН ЗЛАТОУСТ, святитель In epistulam ad Ephesios, XX, 62, 143, Полное собрание творений. т. 11, кн. 1, с. 175/Буди же аки цркви храм ваш, мужи и женами составлена, Златоструй. Слово МА. ОР РГБ. Ф. 247.

կապը, հղում է անում ընտանիքին՝ բերելով Աստված—Եկեղեցի (հմմտ. Մատթ. Ե. 27, ԺԸ. 15—16, ԺԹ. 6), անհատ—Եկեղեցի (Հովհ. Ժ. 27, հմմտ. Ա. Կորնթ. ԺԲ. 12, ԺԴ. 12) եւ ընտանիք—Եկեղեցի (Հովհ. ԺԳ. 34, հմմտ. Գործք ԺԸ. 2—26, Հռոմ. ԺԶ. 3, Ա. Կորնթ. ԺԶ. 19, Բ. Տիմ. Դ. 19) զուգահեռները: Հստ այսմ՝ «Պսակը Եկեղեցու այն սուրբ խորհուրդն է, որով երկու հեռավոր անձնավորություններ՝ այր ու կին, ստանում են աստվածային օրհնություն, խորհրդավորապես միանում են իրար հետ, մի մարմին են դառնում եւ, մշտական կենակցության ուխտի մեջ մտնելով, ըստ Քրիստոսի եւ յուր Եկեղեցու միության օրինակին, նվիրվում են միասին Աստուծո արքայության հառաջագիմության համար աշխատելուն եւ նորա բաղկացուցիչ ընտանիքը կազմելուն...»¹⁰: Ուրեմն՝ ընտանիքը երկուսի՝ տղամարդու եւ կնոջ, աստվածային օրհնությամբ եւ մշտական ուխտով (այլեւս չբաժանվելու նպատակադրությամբ) մեկտեղումն է, հաբեւման Քրիստոսի եւ Եկեղեցու օրինակի, ի բարգավաճումն Աստծու արքայության եւ ի հաստատումն Աստծու բաղադրիչ ընտանիքի: Միանգամայն ուշագրավ են (Ս. Պսակի խորհրդի վերաբերյալ) «Մաշտոց» ծիսարանում ընդգրկված սաղմոսները, քարոզները, շարականներն ու աղոթքները, որոնցից հետեւում է, որ պսակվողները նախեւառաջ պետք է ֆիզիկական-մարմնավոր ու հոգեւոր հասունություն, նախապատրաստություն եւ գիտակցություն ունենան (երկուսդ էլ շատ լավ գիտեք, որ կյանքում կան տեսակ-տեսակ փորձություններ...): Խրատի ընթերցմանը հետեւում է (երկուստեք հավատարմության՝ տեր եւ հնազանդ լինելու) խոստման-խոստովանության արարողակարգը՝ Ադամի ու Եւայի պատմության ոգեկոչմամբ: Խոստմանը ներկա են «աներեւույթն Աստված», հրեշտակների բազմությունը, հոգեւոր դասն ու հարսանքավորների բազմությունը: Ինչպես հետեւում է աղոթքից, Աստված է, որ փեսայի՝ սառսկոր է իմ ոսկորից, խոստումից հետո, հոգեւորականի միջոցով (կնքահոր կամ խաչեղբոր ներկայությամբ) Եւայի ձեռքն Ադամին է տալիս: Որից հետո (խստապահանջ) պատվիրվում է՝ Աստծու միացրածը մարդը թող չբաժանի: Ապա հետեւում է քահանայի խնդրագին աղերսը, որ հարեւնման Իսահակի ու Ռեբեկայի (նախախնամված) ամուսնությանը (օրինադրությանը)՝ վերջիններս էլ առաջնորդ ունենան Տիրոջը եւ Ժառանգորդ դառնան երկնային արքայության: Հաջորդում է «աճելու եւ

¹⁰ Քրիստոնեական, էջ 458. հմմտ. Толковая Библия, т. 2, էջ 1104, 1111:

բազմաճյուղ» վերաբերյալ աղոթքը (Աղամի ու Եւայի կյանքի վկայաբերմամբ), որտեղ աշխարհական մասնահատուկ անդրադարձ կա (ինչպես որ մեր նախահայրերի ու նախամայրերի ամուսնությունն օրհնեցիր) «Եւ քո բոլոր արդարների պսակը» (օրհնիր եւ քո այս ծառաներին... պտղալից ձիթենու պես... որպեսզի արժանի լինեն իրենց որդիների որդիներին տեսնելու (խոսքը միայն երկարակեցության մասին չէ), անբիծ ու անարատ վարքով ապրելու...): Աղոթքը եզրափակվում է Գալիլիայի Կանա քաղաքում տեղի ունեցած հրաշքի (եւ ուրախության) վկայությամբ (որտեղ Հիսուս ջուրը գինու է փոխում) եւ գինու օրհնությամբ¹¹: Աստվածաշնչում եւ քրիստոնեական մատենագրության մեջ «պսակ» բառի կիրառությունն առնվազն (պսակավոր(վ)ել՝ փառք ու պատիվ առնել կամ բերել, ամուսնանալ՝ բախտավորվել, լծակցել եւ այլն) երկակի է («Լսիր, որդեակս, քո հօր խրատը եւ մի մերժիր քո մօր հրահանգը: Որովհետեւ դորանք շնորհքի պսակ են քո գլխին, եւ մանեակներ՝ քո պարանոցին» (Առակ. Ա. 8—9), «Առաքինի կինն իր ամուսնու պսակն է» (Առակ. ԺԲ. 4): Հայտնի է, որ Աստծու արարչագործության պսակը մարդ արարածն է, ինչպես նաեւ, որ թեպետ արդարների հոգիներն ունեն անմահության հաստատ հույսը եւ գտնվում են Աստծու ձեռքում, խաղաղության մեջ (տե՛ս Իմաստ. Գ. 1), սակայն նրանք պսակի դեռեւս չեն արժանացել (տե՛ս Հայտ. Զ. 9—11): Հունարենից պսակ է թարգմանվում (նշանակում) նաեւ Ստեփանոս Նախավկայի (հուն.՝ Στέφανος) անձնանունը: Ընդհանրական Եկեղեցու հայրերից սուրբ Եփրեմ Ասորին խաչ(վել)ը համարում է մարտիրոսների պսակ: Ինչպես մեզանում շատ ուրիշներ, Ի. դարի արեւմտահայ հեղինակ Մառի Պեյլերյանը եւս «պսակ» բառը գործածում է փառքի արժանանալու կամ հետմահու իմաստով՝ «Ազնիւ ու օգտակար փառասիրութիւնը, տղա՛քս, դիրքի եւ ճոխութեան մէջ չէ՛. դո՛ւք հետամուտ եղիք անյապիսի փառքերու, որոնք յաւիտեան կապրին, անհատին մահէն ետքն ալ անթառամ պսակ բոլորելով անոր յիշատակին շուրջը»¹²: Վերոհիշյալ իմաստն ունի նաեւ Սիմեոն Շրեւանցի կաթողիկոսի անդրադարձը՝ «...Այնուհետեւ Սուրբ Ստեփանոսը դարձավ

¹¹ Վաղնջական եւ հետքրիստոնեական շրջանի վերաբերյալ, «խաղող», «գինի», հարակից եւ համանման բառերի ծագման, իմաստի, գործառնական առանձնահատկությունների մասին ուշագրավ մենագրություն ունի Լ. Հովհաննիսյանը (տե՛ս Լ. Հովհաննիսյան, «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն», Երեւան, 2018):

¹² Պ. Մ. Ա. Ռ. Ի, Դեպի վեր, Իզմիր, 1914, էջ 27:

Քրիստոսի եկեղեցու պսակն ու ուրախությունը»¹³։ Միանգամայն ակնհայտ է, որ Պսակի խորհրդի ընթացքում հնչող «օրհներ... եւ քո բոլոր արդարների պսակը» արտահայտությունը միանշանակ չէ, կամ՝ միանշանակ երկիմաստ է։ Միաժամանակ պատահականության արդյունք չի կարելի դիտել ո՛չ Գալիլիայի Կանա քաղաքում տեղի ունեցած հրաշքի վկայությունը, ո՛չ էլ գինու օրհնության կարգը։ Որովհետեւ, նախ՝ Ավետարաններում հաճախագեպ են առհասարակ ուտելու եւ խմելու, հացի ու հաց կիսելու մասին (Մատթ. ԻԶ. 20, 26, 29, Ղուկ. ԺԲ. 37, Հովհ. Զ. 35, 54, 57, Եփես. Ա. 3 եւ այլն) անդրադարձները, տեսարաններն ու զուգահեռները («խաղող» բառի առաջին վկայությունը եւս Աստվածաշնչից է. կիրառված է 25 անգամ)¹⁴։ Գինին¹⁵ թե՛ առհասարակ հնագույն ժողովուրդների¹⁶ եւ թե՛ մասնավորապես քրիստոնեության մեջ, ինչպես որ ունեցել է, այնպես էլ շարունակում է ունենալ խորհրդավոր-ծիսական կարեւոր նշանակություն։ Ըստ որում, կապվելով ո՛չ միայն եւ ո՛չ այնքան ուրախ կամ տխուր, որքան պատասխանատու պարագաների ու հանգամանքների հետ։ Քրիստոնեության մեջ, ընթացս սուրբ Պատարագի (Հաղորդության խորհրդի), գինին ոչ միայն Քրիստոսի արյունն է, այլեւ նշանակն ուխտի, ուրախության եւ մանավանդ պատասխանատվության¹⁷ (տե՛ս նաեւ Ա. 15, հմմտ. Ելք ԻԴ. 8, Զաք. Թ. 11, Երեմ. ԼԱ. 31–32, Եբր. Ը. 13, Թ. 20) ։ Այստեղ ուզում ենք ուշադրության հանձնել (ԺԳ. դարի հայ փիլիսոփա, եկեղեցական-հասարակական գործիչ) Հովհաննես Ծործորեցու որոշ դիտարկումները։ Վերջինս, Մատթեոսի Ավետարանի

¹³ «Էջմիածին», ԺԱ.–ԺԲ., 1997, էջ 117։

¹⁴ Հունարեն Աստվածաշնչում՝ 34 անգամ (31-ը՝ Հին Կտակարանում, 3-ը՝ Նոր Կտակարանում), ռուսերեն համաբարբառում արձանագրված է 42 կիրառություն (տե՛ս Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն», էջ 9)։

¹⁵ «Գինի բառի ծագման հարցը, գինի հասկացության այլ անվանումներ»․ անդ, էջ 25–26։

¹⁶ Նախաքրիստոնեական շրջանում որոշ ժողովուրդներ հատուկ պատրաստված ու պահպանված գինի խմելը պատերազմում հաղթելու, թշնամուն սպանելու խորհրդանիշ էին համարում։ Օրինակ՝ սկյուլթներից այդ գինուց իրավունք ունեին խմելու միայն նրանք, ովքեր թշնամու գինվոր էին սպանել։ Իսկ դաշինք հաստատելիս՝ որպես երդման արարողություն, բաժակի մեջ լցված գինուն խառնում էին դաշինքի մասնակիցների արյունը, զենքը բաժակի մեջ թաթախելուց հետո խմում (ՀԵՐՈԴՈՏՈՍ, Պատմություն ինը գրքից, Երեւան, 1986, գլ. Դ., էջ 242–244)։

Գինու պաշտամունքը եւ տարբեր առիթներով գինու «նվիրատվությունը» բնորոշ էին հին հնդեւրոպական ժողովուրդներին։ Իսկ խեթերը գոհաբերվող կենդանու վրա գինի էին թափում (տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 27–28)։

¹⁷ Հմմտ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՐՇՈՐԵՑԻ, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, պրակ Բ. (ԺԹ.–ԻԷ), Ս. Էջմիածին, 2010, (այսուհետ՝ ՄՈՐՇՈՐԵՑԻ), էջ 317–319։

(ԺԹ. 5) մեկնություն մեջ վկայաբերելով Ծննդ. Բ. 24 համարը, եզրակացնում է. «Հետեւաբար տղամարդն ու կինը մեկ բնություն ունեն՝ ո՛չ թե անձով, այլ կամքով եւ սիրո կցորդությամբ...»¹⁸; Ավետարանի (ԺԹ. 6)՝ «Ում Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»-ն նշանակում է, որ ուրիշներ հանդգնում են բաժանել, քանի որ տղամարդն ու կինը Եկեղեցու խորհրդանիշ են (Եփես. Ե. 32), Աստծու հրամանին են հակառակում (Հովհ. Գ. 29, Զ. 57, Ա. Կորնթ. է. 39)՝ ձեռք բերելով մարդասպանի եւ պոռնիկի (Ա. Կորնթ. է. 2) կարգավիճակ¹⁹; Մատթեոսի Ավետարանի ԻԱ. գլխում Հիսուս խոսում է տանուտիրոջ մասին (որն այգի է տնկում, մեկնում է հեռու աշխարհ եւ ապա ծառաներ, իսկ վերջում էլ՝ որդուն է ուղարկում այգու մշակների մոտ), ԻԲ. գլխում՝ Երկնքի արքայությունը նմանեցնում է թագավորության, որտեղ թագավորն իր որդու համար հարսանիք է անում (տե՛ս Մատթ. ԻԲ. 2—3): Ծործորեցին առակի մեկնություն մեջ, Աստվածաշնչի այլ համարներից զատ, վկայակոչում է Պողոս առաքյալի՝ «Զեզ ամենքիդ՝ որպես մի մաքուր կույսի, նշանեցի՝ Քրիստոսի առաջ կանգնեցնելու համար» (Բ. Կորնթ. ԺԱ. 2) միտքը: Բացի վերոհիշյալից՝ հայտնի է, որ գինին Խոսքի անապականությունն է ցույց տալիս, եւ մահվան մեջ՝ կենդանությունը²⁰ (հմմտ. Ղուկ. ԺԲ. 37): Հետեւապես, գինին նաեւ մեր փառքից փառք նորոգվելու (հմմտ. Բ. Կորնթ. Գ. 18)՝ մահվան եւ հարության խորհրդանիշն է, որ հեղվում է շատերի համար (հմմտ. Մատթ. Ի. 28) ու մաքրում է մեզ ամեն չարիքից (հմմտ. Ա. Հովհ. Ա. 7): Եւ ուրեմն՝ Ս. Պսակի խորհրդի ժամանակ եւս գինին ո՛չ թե եւ ո՛չ միայն ուրախության նշանակն է, այլեւ՝ ուխտի եւ պատասխանատվության, ընդ որում՝ թե՛ ընտանիքի եւ թե՛ Երկնային արքայության համապատկերում (հմմտ. Ա. Տիմ. Դ. 1—8, Եբր. ԺԴ. 4):

«Ընտանիքի գաղափարի քրիստոնեական ըմբռնումը եւ Եկեղեցու մտածողությունը հիմնված է Սուրբ Երրորդության դավանական սկզբունքի վրա: Սուրբ Երրորդության ներքին կյանքի, անձերի հավասարության, յուրաքանչյուրի հստակ դերակատարության, պատվի, իշխանության եւ վերջապես Անձերի միջեւ առկա սիրո հարաբերությունն է կազմում ամուսնության եւ ընտանիքի մասին քրիստոնեական ընկալման վարդապետական, դավանաբանական, գաղափարական եւ դրանից բխած

¹⁸ Անդ, էջ 8:

¹⁹ Տե՛ս անդ, էջ 9—12:

²⁰ Անդ, էջ 323:

հանրային դրսևորման եւ միջանձնային հարաբերության հենքը...»²¹։ Հետեւաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ մարդու՝ թե՛ Աստծու, թե՛ հանրության նկատմամբ ունեցած պարտավորության բարոյական սկզբունքը եւս սերում է ընտանիքից։ «Ընտանիքի՝ իբրեւ կնոջ եւ տղամարդու բարոյական միության, սահմանումը անհրաժեշտորեն ենթադրում է երկու սեռի բարոյական հավասարության հաստատում։ Նման կողմնորոշման հիմքում դիտելի է անձնավորության ազատության քրիստոնեական հայտնի գաղափարադրույքը։ Ըստ այդմ՝ կինն ու տղամարդը թեպետ տարբեր են իրենց կարգավիճակով եւ առաքելությամբ, սակայն հավասար են իրավունքներով... Տղամարդը պարտավոր է հարգել, սիրել եւ պաշտպանել կնոջը։ Կինը պարտավոր է սիրել եւ մեծարել տղամարդուն։ Սակայն ամուսնության խորհուրդը ենթադրում է նաեւ «անհատներ արտադրելով»՝ «մշտնջենաւորել» մարդկային մեծ գերդաստանը։ Այս հանգամանքն առաջացնում է իրենց զավակների նկատմամբ ծնողների պարտականությունների կատարման անհրաժեշտություն։ Այդ պարտականություններից կարեւորագույնը զավակների մեջ մարդու ձեւավորումն է, որ ենթադրում է ամենափոքր հասակից արդեն զավակի մեջ մարդու բարձրագույն բնությանը հատուկ եւ մարդկային հասարակության գոյության նախապայմանների՝ արդարության, կարգի, կարեկցության եւ բարեպաշտության գաղափարների սերմանումը։ Բացի այս՝ «պարտք—իրավունք» բարոյական օրենքը տարածվում է ինչպես զավակների փոխադարձ հարաբերությունների, նույնպես եւ «զավակ—ծնող» հարաբերությունների վրա»²²։ Քրիստոսի՝ «միմյանց սիրելու նոր պատվիրանը» (հմմտ. Հովհ. ԺԳ. 35), ինչպես նաեւ առաքելականդ՝ «Միմյանց բեռը կրեցէք եւ այդպիսով կատարեցէք Քրիստոսի օրենքը» (Գաղ. 2. 2) պատգամը, հավասարապես վերաբերում են եւ՛ Եկեղեցուն, եւ՛ ընտանիքին. ըստ ամենայնի՝ ընտանիքին եւ ապա նոր՝ Եկեղեցուն։ «Եկեղեցական օրենքով ամուսնացած զույգը «բարեկամութիւն» է հաստատում Աստուծո հետ եւ երկնային ժառանգության կնիք ընդունում... Դա նշանակում է, որ ամուսինների փոխհարաբերությունները չեն կարող գնահատվել համարժեքային ծառայությունների փոխանակման սկզբունքով. դրանք պետք է ըմբռնվեն իբրեւ աստվածատուր պարտականություն...

²¹ Առավել մանրամասն տե՛ս ԲԱԳԲԱՏ ԵՊՍ. ԳԱԼՍԱՆՅԱՆ, Միտք եւ բանք, էջ 28–38։

²² Տե՛ս Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, էջ 60։

արեւմտյան նորաթուխ վարդապետությունները (բողոքականությունը, աղանդավորությունը եւ դրանց առնչակից ազատականությունը) ունեն գաղափարական խախուտ հիմք եւ չեն բովանդակում ճշմարտության նշույլ անգամ... Ընտանիքում կնոջ եւ երեխաների ազատություն եւ տան անդամների միջեւ հավասարություն քարոզող այդ ուսմունքները մոռացության են տալիս հայրության նվիրական իմաստը... Ընտանիքի անկունաքարը հեղինակությունն է. այն միավորում է ընտանիքի բոլոր անդամներին եւ օգնում նրանց հասնելու միասնական նպատակին: Առանց հեղինակության՝ հասարակությունն ամբոխի է վերածվում: Մինչդեռ «մեծարելի թագաւորութիւն» կոչվող ընտանիքում, որը հիմքն է ցանկացած «թագաւորութեան», խիստ անհրաժեշտ են հայրության գավազանը կրելու ընդունակ ձեռքեր»²³: Միմյանց սիրելու եւ միմյանց բեռը կրելու տիրավանդ հորդորի կենսավայրն ընտանիքն է: Գործնականում (հանրային կյանքում) այս պատվիրանադրությունները կիրարկելի են անմիջականորեն ընտանիքում ու նախեւառաջ ընտանեկան միջավայրում եւ այնուհետեւ՝ Եկեղեցում, ինչպես իրավ կերպով մեկնաբանում է առաքյալը: Որովհետեւ եթե մեկը հոգ չի տանում իր հարազատների եւ հատկապես ընտանիքի մասին, չի կարող հոգալ այլոց պետքերը. «Նուիրապետական զգացումը այսօր ամեն կողմանէ հարուած կրած եւ գրեթէ ամենուրեք յաղթուած է. ասոր համար է որ ծերունեաց յարգանք չի տրուիր, ծնողաց առ մեզ ցուցած խնամքները կը մոռցուին, մեր նախնի հարց պատմութեան եւ գործոց կարեւորութիւն չընծայուիր, եւ, մէկ բառով, ընտանիք եւ ընտանեաց սէր միանգամայն կանհետանան: Այս է վտանգը, այս է մեր ընտանեաց սպառնացող վտանգաց գուցէ ամենէն ծայրագոյնը»²⁴: Ավելին, երանելի Պողոս առաքյալն այդօրինակ վարքուբարք որդեգրածներին համարում է հավատուրաց եւ անհավատ (հմմտ. Ա. Տիմ. Ե. 8): Այս իմաստով չափազանց հետաքրքրական զուգահեռ է պարունակում Ս. Դուկասի Ավետարանում նկարագրված՝ Հիսուսի եւ հետագայում Նրան աշակերտած Զակեոսի պատմությունը, երբ հյուրընկալության վերջում Հիսուս հայտարարում է՝ «Այսօր այս տան համար փրկութիւն եղաւ...» (Դուկ. ԺԹ. 8—9): Ուշագրավ է նաեւ, որ բացատրելու եւ բացահայտելու համար Եկեղեցու կարեւոր դերակատարությունը, Աստվածաշունչն ուղիղ

²³ Անդ, էջ 61:

²⁴ Խ. ԱՇԼԵՆԱՆՅ, Կին քրիստոնեայ, «Յոյս», 1877, թիւ 12, էջ 719:

կերպով բերում է ընտանիքի օրինակը, իսկ ընտանիքի կարեւորությունը հատկանշելու պարագայում՝ Քրիստոս—Եկեղեցի զուգահեռը. «Մարգինկ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար» (Եփես. Ե. 21—33, հմմտ. Մատթ. ԺԹ. 6, Ա. Հովհ. Դ. 21, Ա. Տիմ. Ե. 8): Աստվածաշնչական պատվիրանները (տե՛ս Ելք. Ի. 2—17) եւս գործածական են նախեւառաջ ընտանիքի համապատկերում եւ կոչված են համերաշխելու, ներդաշնակելու համար ընտանեկան, ապա միջանձնական ու հանրային հարաբերությունները (հմմտ. Երեմ. ԻԹ. 5—7): Հիշյալ սկզբունքի արտահայտություն են նաեւ Ծննդոց գրքում գետեղված՝ «Նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք...» (Բ. 18), եւ ապա համատես Ավետարաններում հանդիպող՝ «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղեւտ. ԺԹ. 18, Մատթ. ԻԲ. 39, Մարկ. ԺԲ. 31, Ղուկ. Ժ. 27) պատվիրանադրությունները: Որովհետեւ, ինչպես իրավացիորեն նկատում է Հայ Եկեղեցու պատմության քաջատեղյակ եւ ուսումնասիրող Ա. Տեր-Միքեյլանը, աստվածային սիրո իրականացուցիչն ու գործնականացման առաջին վարժարանն ընտանիքն է, որտեղ Տիրոջ պատվիրաններն իրականանում են «նախ՝ երկու ամուսինների, ապա՝ ծնողաց ու որդիների, հետո՝ եղբայրների ու քույրերի, այնուհետեւ ամուսինների եւ ազգականների, ընտանիքի եւ ազգականների մեջ եւ այլն, եւ այլն, այնքան ընդարձակությունով, որքան նպաստում են հանգամանքների ու հարաբերությանց բարդությունները: Ըստ որում՝ ոչ մի տեսական բացատրություն չի կարող այնպես պարզել ու հաստատել սիրո որպիսությունը մարդկանց հոգու մեջ, որքան ընտանեկան սիրո օրինակն ու վարժությունը: «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»՝ իսկապես ընտանիքի մեջ է յուր կատարումը ստանում եւ ապա ճյուղավորվում դեպի դուրս»²⁵: «Աշխարհի պատմությունը ցույց է տալիս, որ իշխանության առաջին խանձարուրն ընտանիքն է, եւ մինչեւ այսօր, իբրեւ բնական օրենք, ընտանիքի հայրն է իշխում գերդաստանի վրա, եւ ինքը, իր տան մեջ նախաթողին բազմելով, վարում եւ կառավարում է այն, որպեսզի խաղաղություն եւ երկյուղած հնազանդության մեջ մնա ընտանեկան կյանքը: Իսկ երբ ընտանիք կազմելով՝ շատ ընտանիքներ միասին են բնակվել, բնական է, որ զանազան պատճառներից խռովություն, վեճ ու կռիվ են առաջացել: Այնժամ անհրաժեշտությունն ստիպել է, որ բոլոր

²⁵ Քրիստոնեական, էջ 462:

տանուտերերը հայրերի միջից, իբրեւ դատավոր եւ իշխան, մի տանուտեր ընտրեն, որ պատկառելի ծերությամբ, համբավով, զորությամբ ու հարստությամբ առավելություն է ունեցել մյուս տանուտերերից, այսպես է նախապես կազմվել փոքր տանուտիրական իշխանությունը, եւ որքան մարդիկ տարածվել են աշխարհում, այնքան իշխանության աստիճանը եւս, աճելով եւ մեծանալով, հասել է մինչեւ աշխարհակալության ծայրագույն դիրքը, որի հզոր գավազանի տակ փոքրիկ իշխանությունները կամ իսպառ ջնջվել են, կամ նվաճվելով հպատակվել: Ուստի քաջահայտ երեւում է, որ իշխանության առաջին շավիղը արմատից է բուսել եւ փոքր-ինչ մեծանալով՝ ընտանիքից ելել ու ողջ ցեղի վրա է տարածել թեւերը, ավելի եւս մեծանալով, այլեւայլ ցեղեր իր իշխանությանը հնազանդեցնելով՝ տիրել է շատ քաղաքների եւ գավառների: Ի վերջո, ավելի շատ զորանալով, բարձրանալով ու թագ կապելով՝ թագավոր է դարձել կամ այլեւայլ իշխանության առանձին գավազաններ իր միահեծան գավազանի տակ նվաճելով՝ իբրեւ կեսար, կայսրության բարձրագույն տիտղոսն է ստացել: Եւ այսպես աստիճան առ աստիճան բարձրանալով՝ իշխանությունն իր գազաթնածայրին է հասել: Բայց իշխանասիրության ոգին երբեք ծայր ու սահման չունի. քանի այս աշխարհը կա, իշխանության գավազանները պիտի մրցեն իրար հետ, եւ ով գիտի, ապագայում գուցե բովանդակ երկրագունդը մի գավազանի տակ նվաճվի: Միթե աշխարհի պատմությունը եւ փորձը շատ օրինակներով այն չեն ցույց տալիս, որ իշխանության կյանքը եւս իր ծերությունն ու վախճանն ունի...»²⁶:

Ընտանիքի (եկեղեցական լինելու) եկեղեցական գործառույթ ունենալու վերաբերյալ ուղղակի վկայությունների շարքից են ինչպես Գործք առաքելոցի ԺԶ. 4–16, այնպես էլ Բ. Տիմ. Դ. 19–22 համարներում զետեղված իրողությունները: Ըստ որում՝ այստեղ ընտանիք եւ եկեղեցի իրողությունները բառացիորեն նույնանում են՝ «...Ողջունեցէք Պրիսկէին եւ Ակիլադասին՝ իմ գործակիցներին ի Քրիստոս Յիսուս... Ողջունեցէք եւ նրանց առտնին եկեղեցին: Ողջունեցէք Եպենտոսին՝ իմ սիրելիին, որ ասիացիների պտուղն է ի Քրիստոս: Ողջունիր Պրիսկէին եւ Ակիլադասին. նաեւ՝ Օնեսիփորոսի ընտանիքին... Աստծու շնորհը քեզ հետ» (հմմտ. Հռոմ. ԺԶ. 5–16): Աստվածաշնչական կարեւոր հանգրվաններն ու պատգամները (տե՛ս Մատթ. ԻԲ. 37–39, հմմտ. Հռոմ. ԺԲ. 15, Ա. Կորնթ. ԺԳ. 13)

²⁶ Դրախտի ընտանիք, էջ 168–169:

անպայմանորեն աղերսվում կամ հանգում են ընտանիքի գաղափարին. «Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն, եւ ատի իր եղբորը, սուտ է խոսում. ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել: Եւ նրանից ունենք այս պատվիրանը՝ ով սիրում է Աստծուն, նա պետք է սիրի նաեւ իր եղբորը» (Ա. Հովհ. Դ. 21, հմմտ. Հռոմ. Ը. 35, Ա. Կորնթ. ԺԳ. 4—8): Այսպե՜ս ընտանիքն է սկզբնական ու նախապատիվ այն միջավայրը, որտեղից մարդ ներգրավվում է հանրությանը՝ «ներեցե՛ք եւ ներում պիտի գտնեք Աստծուց» (Ղուկ. Զ. 37, հմմտ. Մատթ. Զ. 14, Մարկ. ԺԱ. 25) եւ որտեղ ապահովվում է մարդկության շարունակական (տե՛ս Հովհ. ԺԵ. 13) ու հոգեւոր անվտանգությունը՝ «Ով սիրում է իր եղբորը, բնակվում է լույսի մեջ, եւ նրա մեջ գայթակղություն չկա: Իսկ ով ատում է իր եղբորը, խավարի մեջ է, խավարի մեջ է շրջում եւ չգիտե, թե ուր է գնում, որովհետեւ խավարը կուրացրել է նրա աչքերը» (Ա. Հովհ. Բ. 10—11, հմմտ. Ղուկ. ԻԲ. 34, 42, Մարկ. Թ. 15—23):

РЕЗЮМЕ

В статье, ссылаясь на многочисленные цитаты из Библии и наречения свя-
тых отцов Церкви, говорится, о церковной сущности семьи в контексте Таин-
ства Венчания. Ясно, что Божье творение рождается в рамках семьи, которая
может стать храмом Божиим как в случае отдельных личностей, так и благоче-
стивых семей. Отношения между супругами нельзя оценивать, основываясь на
обмене взаимовыгодными услугами. Их следует понимать как долг, завещан-
ный Богом.

Библейские заповеди используются в основном в контексте семьи, и важ-
ная роль Церкви в Библии характеризуется прежде всего примером семьи. Та-
ким образом, семья — это основная и предпочтительная среда, выходя из кото-
рой человек участвует в жизни общества.

SUMMARY

In the article, according to numerous testimonies of biblical and Church fathers,
there is a reference (in connection with the sacrament of the Holy Matrimony) to

the ecclesiastical nature and role of the family. It is clear that God's creation is implemented within the family. Accordingly, the family has a chance to become the temple of God both in the case of individuals and in the case of godly families. Relationships between spouses should never be judged in terms of the exchange of equivalent services, but should be understood as a God-given duty. The Bible's commandments are used primarily in the context of the family, and the important role of the Church in the Bible is characterized primarily by the example of the family. Thus, the family is the main and preferred environment, from which a person participates in the life of the society, where the security of humanity is constantly ensured.



ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐՈՎԱԴԵՏԻՆ ՔԱՐՈՉԸ ԱՂՈՒԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒՄՆ ՅԱՄԱՐ,
«ԼՈՒԱՅՈՒԵՑԷՔ, ՄԱՔՐՈՒԵՑԷՔ, ԹՕԹԱՓԵՑԷՔ...»¹ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Սուրբերէն մէկը կ'ըսէ, թէ Աստուած բարիքներուն բարեգոյնն է եւ գեղեցիկներուն՝ գեղեցկագոյնը, ո՛չ թէ չարին հետ համեմատելով բարի է Ան, այլ՝ բարիքին համեմատելով, այսինքն՝ հրեշտակներուն եւ սուրբերուն հետ համեմատելով Ան բարի է եւ գեղեցկագոյն. նոյնպէս մարդը Իր պատկերին համաձայն ըրաւ, որ ո՛չ թէ անշունչներուն հետ համեմատելով բարի է մարդը ու գեղեցիկ, այլ՝ բոլոր արարածներուն համեմատելով՝ ասիկա գեղեցկագոյնն է ու բարի: Իսկ մենք չհանդուրժեցինք այսպիսի ճոխութեան՝ Աստուծոյ նմանութեան մէջ մնալ, Ադամի միջոցով ինկանք, մանաւանդ ալ Քրիստոսէ ետք, որ Անոր շնորհներով լուսաւորուելով եւ կերպարանքի նոյն գեղեցկութիւնը առնելով՝ մեր կամքով տգեղցուցինք մեղքի միջոցով: Այդ պատճառով պահքի սկզբնաւորութեան Նսայի Մարգարէն նախաձայնելով կ'ըսէ. «Լուացունցէ՛ք, մաքրունցէ՛ք, թօթափեցէ՛ք...»²:

Սակայն նախ պէտք է գիտնանք, թէ ինչո՞ւ պահքի առաջին օրը, երկրորդ օրը, այսօր եւ բոլոր Կիրակի [օրերը] նոյն Մարգարէն կը կարդանք եւ ո՛չ թէ ուրիշ մարգարէներէ:

Այս մասին վարդապետները երեք պատճառ կու տան.

Նախ՝ որովհետեւ ասիկա աստուածաբան Մարգարէ է, որ առանց առակի՝ Քրիստոսի եւ տնօրինութեամբ [Անոր կրած] չարչարանքներու մասին կը խօսի: Այս պահքը ըստ մարմինի մեզի համար չարչարանք է, որով չարչարանքներով Քրիստոսի յարութեան հաղորդակից կը դառնանք: Այս պատճառով ասիկա կը կարդանք պահքի սկզբնաւորութեան եւ բոլոր կիրակիներուն կը յիշատակենք, որպէսզի անմոռաց մնայ ասոր խրատը:

Երկրորդ՝ քանի որ պահքի այս օրերը ապաշխարութիւն գործելու օրեր են ամբողջ տարուայ ընթացքին: Արդ՝ այս Մարգարէն ապաշխարութեան կարգը յայտնապէս կը սորվեցնէ քան միւս մարգարէները, ինչպէս

¹ Եւ. Ա. 16—20:

² Եւ. Ա. 16:

կ'ըսէ. «Լուացունցէ՛ք, մափրունցէ՛ք եւ ապա եկէ՛ք խօսիմք»³, այդ պատճառով ասիկա կը կարդանք:

Երրորդ՝ որպէսզի ասով քարոզութեան կարգը սորվինք, որովհետեւ երէկ խրատեց. «Բարձրաձայն կանչէ եւ մի՛ խնայեր»⁴, այսինքն՝ յանդիմանութեամբ եւ սաստելով, որպէսզի ծոյլերը զգաստանան: Այդպէս էր այս Մարգարէն՝ կշտամբիչ եւ ընդդիմախօս: Այդ պատճառով մենք, ասիկա կարդալով, քարոզենք ըստ Առաքեալի ըսելուն. «Յանդիմանէ՛, սաստէ՛, մխիթարէ՛»⁵: Այդ պատճառով կ'ըսէ. «Լուացունցէ՛ք»:

Նախ առաջին միտք բանին այս է, որ կ'ըսուի՝ «Լուացունցէ՛ք», այսինքն՝ խոստովանութեամբ, եւ «մափրունցէ՛ք»՝ ապաշխարութեամբ: Եւ թէ մարմնական լուացումին կը նմանցնէ հոգեկան լուացումը, որ է խոստովանութիւնը: Եւ ասիկա բազմաթիւ պատճառներով.

Նախ՝ քանի որ մարմինին աղտեղութիւնը կը լուան, որ սեւցած կ'ըլլայ, ինչպէս նաեւ ո՛չ պայծառ եւ յստակ տեղերը. այդպէս ալ քրիստոնեային վայել է մեղքերը խոստովանիլ եւ ո՛չ թէ աշխարհական հոգեքը՝ ըստ այնմ. «Դու՛մ նախ քան անօրէնութիւններդ ըսէ, որպէսզի արդարանաս»⁶:

Երկրորդ՝ որովհետեւ բոլորն ալ մարմինին մասերը կը լուան, որոնք կը լուան, եւ ոչինչ կը ձգեն՝ որ ջանքով չմաքրեն. այդպէս ալ անոնք, որոնք կը խոստովանին, պարտաւոր են բոլոր մեղքերը խոստովանիլ եւ ո՛չ թէ մէկ մասը միայն, այսինքն՝ մահու չափ [մեղքերն] ու ներելիները, հոգեւորներն ու մարմնականները՝ ըստ այնմ. «Իմ մեղքերս ու անօրէնութիւններս ցոյց տուի Քեզի...»⁷:

Երրորդ՝ որովհետեւ ջուրին զօրութիւնն է բոլոր գարշելի բաները գեղեցկացնել. այդպէս ալ խոստովանութիւնը, որ հոգեւոր ջուր է, կարողութիւն ունի մեղքերու ամբողջ բազմութիւնը մաքրելու, թէեւ շատ մեծ ալ ըլլան՝ ըստ այնմ. «Ե՛ս եմ, որ անօրէնութիւններդ կը ջնջեմ, եւ քու մեղքերդ ա՛լ պիտի չլիջեմ»⁸:

Չորրորդ՝ քանի որ մարմինը մանրամասնութեամբ կը լուան՝ գլուխէն սկսեալ. այդպէս ալ խոստովանութիւնը պէտք է մանրակրկիտ քննութեամբ ըլլայ, որպէսզի ո՛չ մէկ բան մնայ՝ ըստ այնմ. «Եթէ ոեւէ

³ Ես. Ա. 16–18:

⁴ Ես. ԾԸ. 1:

⁵ Տէս Բ. Տիմ. Դ. 2:

⁶ Հմմտ. Ես. ԽԳ. 26:

⁷ Տէս Սղմ. ԼԱ. 5:

⁸ Ես. ԽԳ. 25:

մէկուն հետ խնդիր ունիս, մինչեւ դատարան հասնիլը հասկացողութեան հասիւր անոր հետ»⁹:

Հինգերորդ՝ որովհետեւ ջուրի լուացումով բնական գեղեցկութիւնը մէջտեղ կու գայ, այդպէս ալ խոստովանութիւնը Աստուծոյ բնական պատկերակցութիւնը՝ որ մեղքը անծանօթ դարձուցած էր, պայծառ ու գեղազարդ կը ցուցնէ՝ ըստ այնմ. «Եթէ որդան կարմիրի նման ըլլան, իբրեւ սպիտակ ձիւն պիտի ընեն»¹⁰:

Վեցերորդ՝ քանի որ ջուրին բնութիւնը պաղ է, լուացուելու ժամանակ տաք մարմինը կը սառեցնէ. այդպէս ալ խոստովանութիւնը մարդուն համար պաղ կը թուի, սակայն մեղքերու ջերմ ցանկութիւնը կը սառեցնէ՝ այլեւս գործել չի տար՝ ըստ այնմ. «Տիրոջ երկիւղը ամէն տեսակի շարիքէ կը խորշի»¹¹, որովհետեւ առանց Աստուծմէ երկնչելու՝ հնարաւոր չէ խոստովանիլ:

Եօթներորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք իր կամքով կը լուայ եւ ո՛չ թէ ակամայ, որովհետեւ ակամաները հաւասարապէս լուացուած չեն ըլլար, այդպէս ալ իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր է ինքզինք մեղքերէն լուալ խոստովանութեամբ եւ ոչ թէ՝ ան որ քահանան բռնութեամբ խոստովանութեան կը բերէ, քանի որ ակամաներուն համար Աստուած Մարգարէին միջոցով կ'ըսէ. «Այդպիսի պահքը չընտրեցի»¹²:

Ութերորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, որ կը լուացուի, այդպիսին ազտեղութենէն կը մաքրուի. այդպէս ալ ան, որ մեղքերու մէջ է ու կը խոստովանի, որովհետեւ ինչպէս անձը, որ կը մեղանչէ, նոյնին մէջ կը մեռնի¹³, տգեղութենէն կը մաքրուի, այդպէս ալ ով որ խոստովանեցաւ, կը կենդանանայ:

Իններորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք, որ կը լուացուի, նախ կը մերկանայ եւ ապա կը լուացուի. այդպէս ալ ով որ կը խոստովանի, նախ պարտաւոր է մէկ կողմ դնել ամօթը, որպէսզի կարենայ իր անձին մեղքերը լուալ, որովհետեւ ամէնալը պղինձէ պարիսպ մըն է՝ ընդդէմ սրբութեան:

Տասներորդ՝ որովհետեւ մէկ անգամ լուացուիլը մարմինը իսկապէս չի մաքրեր, այլ՝ կրկնելով ու բազմապատկելով կը գեղեցկանայ. այդպէս ալ ով որ մէկ անգամ կը խոստովանի, չի՛ կրնար մաքրել, քանի որ բոլոր

⁹ Հմմտ. Մտթ. Ե. 25:

¹⁰ Հմմտ. Ես. Ա. 18:

¹¹ Առ. ԺԱ. 27:

¹² Հմմտ. Ես. ԾԸ. 5:

¹³ Հմմտ. Բ. Օր. ԺԷ. 2:

մեղքերը մէկ անգամէն չի՛ կրնար ներկայացնել, որովհետեւ երբեմն կը մոռնայ եւ երբեմն ալ կ'ամչնայ: Այդ պատճառով պէտք է բազմաթիւ անգամներ խոստովանահօր մօտ երթալ, որպէսզի մնացածներն ալ մաքրէ, ատոր համար կ'ըսէ՝ «լուացունցէ՛ք»:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» կ'ըսէ, կը ցուցնէ, թէ բոլորն ալ մեղքերէն մաքրուին, այդ պատճառով յոգնակիով կը դնէ՝ «լուացունցէ՛ք»:

Դարձեալ՝ «լուացէ՛ք» մարմինի մեղքերը կ'ըսէ, ու «մաքրեցէ՛ք» հոգիինը:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» մարդոց առջեւ խոստովանութեամբ, որպէսզի Աստուծոյ առջեւ սուրբ ըլլաք:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» խօսքով եւ «մաքրեցէ՛ք» գործով:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» արտասուքով եւ «մաքրեցէ՛ք» զղշումով սիրտի մէջ:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» առաջին մեղքէն եւ «մաքրեցէ՛ք» ապագայիններէն:

Դարձեալ՝ նախքան պահքը «լուացունցէ՛ք» ամէն տեսակի արատէ, որպէսզի ձեր պահքը սրբուի:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» ծածկաբար ու սուրբ պիտի ըլլաք բոլորին առջեւ յայտնապէս:

Դարձեալ՝ «լուացունցէ՛ք» մեղքերէն, որովհետեւ այս ժամանակին դիւրին է, եւ «մաքրեցէ՛ք», քանի որ հիմա ձեր ձեռքին մէջ է, ապա թէ ոչ այնտեղ ի՞նչ է ձեր աղաղակելը, ու Իմ չլսելը, որովհետեւ այնտեղ ապաշխարութեան ժամանակ չկայ, այդ պատճառով կ'ըսէ՝ «լուացունցէ՛ք»:

Այլ՝ այստեղ, պահքին սկիզբը Մարգարէն տասնմէկ օրէնքներ կը կարգէ, որ այս ընթերցուածին մէջ են:

Նախ կ'ըսէ «լուացունցէ՛ք», այսինքն՝ խօսքով խոստովանեցէք:

Երկրորդ՝ «մաքրեցէ՛ք» պահքով:

Երրորդ՝ «ձեռ անձերէն շարիք հանցէ՛ք», այսինքն՝ սովորութիւն [դարձած] գործը, որ դժուար է ընել:

Չորրորդ՝ «Իմ աշխուս առջես», այսինքն՝ առ երես կեղծաւորութեամբ մի՛ սրբուիք ու արտաքինապէս արդար երեւիք, այլ՝ մեր սիրտերուն մէջ մաքրուինք, քանի որ Աստուծոյ աչքերը մարդոց սիրտերը կը տեսնեն եւ ո՛չ թէ երեսները:

Հինգերորդ՝ «դադրեցէ՛ք շարութիւններէն», այսինքն՝ բոլոր մեղքերէն, որովհետեւ մէկէն դադրիլ ու միւսներուն մէջ մնալ, մէկուն սրբութիւնը չընդունուիր:

Վեցերորդ՝ «սորվեցէ՛ք բարիք գործել», այսինքն՝ սուրբ գիրքերէն ու աստուածահաճոյ մարդոց վարքերէն, քանի որ չարը առանց վարդապետի ինքնին կը մտնէ մարդուն մէջ, իսկ բարին առանց ուսուցանողի արժանի չէ. ասոնցմով ներսը՝ մարդուն մէջ արժանի է ըլլալ: Իսկ ասոնցմէ ետք, որ վեցերորդէն ետք է, արտաքուստ ընել:

Եօթներորդ՝ «իրաւումը փնտռել», այսինքն՝ առանց իրաւունքի դատաստան չընել, այսինքն՝ ճշմարիտը ստել եւ սուտը ճշմարտել: Կը թուի, թէ ասիկա առաջնորդներուն մասին կ'ըսէ:

Ութերորդ՝ «գրկեալները ազատել», այսինքն՝ իւրաքանչիւրին բաժինը իրեն հասցնել, ասիկա Առաքեալն ալ կ'ըսէ. «Ոեւ մէկուն ունէ բանով պարտական մի՛ մնաք»¹⁴:

Իններորդ՝ «որբերուն դատը պաշտպանել», այսինքն՝ տիրութիւն ընել որբին, որովհետեւ ոչ ոք ունի:

Տասներորդ՝ «եւ այրիին իրաւումը տուէ՛ք», այսինքն՝ մխիթարել զինք, քանի որ անոր համար բաւարար է իր այրիութիւնը:

Տասնմէկերորդ՝ այս բոլորէն ետք, եկէ՛ք Ինծի մօտ աղօթքի կեցէ՛ք ու պահ՛ք պահեցէ՛ք: Իսկ եթէ կը զրկէք ու իրաւունք չէք ըներ, եթէ բազմաթիւ անգամներ աղօթէք, պիտի չլսեմ ձեզ, քանի որ ձեր մէջի զրկեալը կ'աղաղակէ, եւ հնձողներուն բողոքը...¹⁵:

Դարձեալ՝ առաջին վեցը մարմինի անօրէնութիւններուն համար կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է մաքրուին: Իսկ ետքի հինգ խօսքերէն կը թուի, թէ հոգիին համար կ'ըսէ, որովհետեւ մարմինը անիրաւուած է ուտելով ու խմելով, ատոր համար կ'ըսէ՝ «իրաւումը փնտռեցէ՛ք»¹⁶, քանի որ հոգին պոռնկութեամբ եւ հեշտութեամբ զրկուած է, ու ան այս բանէն կը նեղանայ, այդ պատճառով կ'ըսէ՝ «գրկեալները ազատեցէ՛ք», որովհետեւ հոգին որբ ու այրի է. որբ է, քանի որ ծնող չունի, ինչպէս մարմինը, եւ այրի է, որովհետեւ բարի գործերէն աղքատ է: Այդ պատճառով կ'ըսէ՝ «դատաստան ըրէ՛ք»¹⁷, քանի որ մարմինը եղբայրներն ու հայրերը կը պատուեն, իսկ հոգիին բարեկամ չկայ, որ օգնական ըլլայ անոր, եւ «այրիին իրաւումը տուէ՛ք», այսինքն՝ որովհետեւ օր օրի մարմինը ինքն

¹⁴ Հռ. ԺԳ. 8:

¹⁵ Հմմտ. Յկ. Ե. 4:

¹⁶ Ես. Ա. 17:

¹⁷ Սղմ. ԶԱ. 3:

իրը կը հոգայ ու հոգիին բաժին չի տար: Եւ ապա՝ ասկէ ետք եկէ՛ք ու խոստովանեցէ՛ք մեղքերը:

Արդ՝ տեսնենք՝ ինչ է մեր շահը, որ այս բոլոր օրէնքները կը դնէ: Երեք բան կը խոստանայ մեզի:

Նախ՝ թէ մեր մեղքը իբրեւ որդան կարմիր սեւցուցած է մեզ, որ մուր է կամ գործելի, քան ձիւնը սպիտակ կը դարձնէ, որ բնութեամբ սպիտակ է:

Եւ երկրորդ՝ թէ մեզ պղծած կ'ըլլայ իբրեւ որդան կարմիր: Որովհետեւ որդ անսուրբ եւ կրկնասեռ կենդանի է, քանի որ նախ բանջար է ու ապա որդ կ'ըլլայ՝ կորսնցնելով իր առաջին յատկութիւնը. այդպէս ալ մարդը մեղքին պատճառով կրկնասեռ կը դառնայ՝ կորսնցնելով իր առաջին սրբութիւնը: Իսկ եթէ Աստուծոյ օրէնքը պահենք քան ասորը, որ մաքուր կենդանիներէն է ու մաքրութիւն կը գործէ, այլեւ՝ ասոր փութով աղտեղութիւնը մէկ կողմ կը ձգէ քան բոլոր նիւթերը, այդպէս ալ կ'ըսէ. «Փութանակի ձեզ առաջին սրբութեան պիտի տանի...»¹⁸:

Եւ երրորդ՝ «այս եւ այն երկրի բարութիւնները լիապէս պիտի ուտէ», քանի որ «բարութիւններ» կ'ըսէ եւ ոչ՝ «բարութիւն», որ ցոյց կու տայ թէ՛ այստեղի եւ թէ՛ հանդերձեալին:

Ինչո՞ւ մեր մեղքը գործելի ու մուրի կը նմանցնէ: Բազմաթիւ պատճառներու համար:

Նախ՝ որովհետեւ մուրը առանց ներկի սեւցած է ու գործելի է ինքն իրմէ եւ ո՛չ թէ արտաքուստ. այդպէս ալ հոգին գործերու միջոցով կը ներկուի ու կը սեւնայ:

Երկրորդ՝ որովհետեւ հուրին ջերմութիւնը փայտին խոնաւութիւնը կը հանէ, ու ան կը սեւնայ. այդպէս ալ ցանկութեան ջերմութիւնը հոգիէն սրբութիւնը կը հանէ, որով ան կը զօրանար, այդ պատճառով իբրեւ այրուած կաթսայ կ'ըլլայ:

Երրորդ՝ որովհետեւ դիւրութեամբ կ'ապականի, քանի որ ինքն իր մէջ ամրացուցիչ չունի. այդպէս ալ մարդը մեղքերուն միջոցով փութանակի կը կորսուի, որովհետեւ ինքն իր մէջ պահապան սրբութիւնը չունի:

Չորրորդ՝ որովհետեւ ուրիշ մը դիւրութեամբ կը ներկէ, եթէ մէկը հասնի անոր. այդպէս ալ մեղքը կը կորսնցնէ ուրիշին, եթէ մէկը խորհրդակից ու ընկերակից է անոր:


¹⁸ Հմմտ. Բ. Պետ. Ա. 9:

Հինգերորդ՝ որովհետեւ տուներուն, եւ ո՛ր որ ալ գտնուի որդան կարմիրը, գարշելի է. այդպէս ալ մեղքը, թէ՛ հոգիին մէջ ըլլայ եւ թէ՛ մարմինին, Աստուծոյ առջեւ գարշելի է: Իսկ եթէ Անոր օրէնքներուն չլսենք, պատուհաս կը խոստանայ մահը՝ ըսելով. «Սուրբ պիտի ուտէ ձեզ»¹⁹:

Եւ ինչո՞ւ մահը սուրին կը նմանցնէ: Ու ասիկա բազմաթիւ պատճառներով. ուրիշ տեղ կը գտնես:

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



¹⁹ Եւ. Ա. 20:

ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ^{1*}

1. Խնդիրը

Ժամանակակից մարդը, իր ամուլ ու հոգեմաշ կասկածների նյարդային կծկումներով բռնված, փորձելով ձեռք առնել հավատից, ազատությունից, խղճից ու ընտանիքից, կանգ չի առնում նաեւ հայրենիքի նվիրական գաղափարի առաջ: Եւ տարօրինակն այն է, որ սույն, ինչպես եւ որոշ այլ հարցերում, հոգու եւ քրիստոնեության թշնամիների տարածած գայթակղիչ կասկածները յուրօրինակ արձագանք են գտնում բուն քրիստոնեության ներսում: Քրիստոնեական հարանվանությունների մերժած հին եւ իրենց դարն ապրած գաղափարները, գաղափարներն առաջին դարերի, վերակենդանանում կամ գիտակցության փաստ են դառնում՝ դրանով իսկ զորացնելով ժամանակակից ընդվզումներն ու մտքի վայրկյանները:

Ուլքեր են հայրենիքի այս կասկածամիտ մերժողները, եւ ի՞նչ պետք է մենք նրանց հակադրենք:

Հայրենիքի «թուլատրելիությունը» կասկածի տակ առնող ժամանակակից քրիստոնյան, հավանաբար, նկատի ունի հետեւյալը:

Քրիստոնեական սերը, ինքն իրեն ասում է նա, սովորեցնում է մեզ հանձին ամենայն մարդու իր եղբորը տեսնել. բոլոր երկրների եւ ժողովուրդների մարդիկ մի Երկնային Հայր ունեն եւ Նրա դեմ հանդիման կոչված են անկեղծորեն ու հետեւողականորեն ընդունելու իրենց տիեզերական եղբայրությունը: Իսկ դա նշանակում է, որ քրիստոնյան ծնվել է աշխարհաբաղաճի^{2*} լինելու համար, եւ նրա բարձրագույն կոչումը մարդկանց ամենայն պայմանական բաժանումներն ըստ խավերի, երկրների, դասակարգերի, ազգությունների, ռասաների եւ այլնի մերժելն

¹ * Թարգմանությունը կատարված է Иван Ильин, Путь духовного обновления, М., 2017 գրքից: Աստղանիշով ծանոթագրությունները թարգմանչինն են:

² * «Աշխարհաբաղաճի» (կոսմոպոլիտ) եզրույթը ցինիկների՝ հին հուն. փիլ.-ն դպրոցներից մեկի ներկայացուցիչների մտքի արգասիքն ու տեսականն էր: Նրանք արհամարհում էին բարոյական չափանիշները, պարկեշտությունը, բարեկրթությունը, մերժում հարստությունը, հայրենիքը եւ ամուսնությունը, կատարելության լույսի տակ ներկայացնում կենդանիների կյանքը՝ «Ինչ բնական է՝ բարոյական է» կարգախոսով, ընդունելի համարում արյունապղծությունն ու մարդակերությունը: Ուստի ժամանակակիցները նրանց ցինիկներ, այսինքն՝ շներ կոչեցին:

է: Բոլոր այս անշրպետները պիտի փլվեն քրիստոնյայի հոգում, եւ այս փլուզմամբ ի դերեւ կելնեն նաեւ մարդկության բաժանումները զանազան «հայրենիքների» եւ «մայր հայրենիքների»: Չէ՞ որ ամեն առանձին մարդկային հոգի աշխարհում ասես Աստուծոյ կենդանի տունն է կամ նրա սրբազան կրակի մի զոհասեղանը: Չէ՞ որ մարդկությունը, ըստ քրիստոնեական տեսակետի, մեկ միասնական եղբայրական համայնք է, որի անդամներից ամեն մեկը ծնվել է հավատի եւ բարի գործերի համար, ուստի անկապտելի իրավունք ունի արտաքին ազատություն ստանալով՝ այն ներքին ազատագրության համար կիրառելու: Միով բանիվ՝ միթե քրիստոնյան միջազգայնականության (ինտերնացիոնալիզմի) համար չի ծնվել: Միթե նա հիմք չունի լրջորեն եւ հետեւողականորեն խոսելու տարբեր ազգություններից, իրեն դասելու դրանցից մեկի շարքին եւ ծառայելու առավելապէս կամ մինչեւ իսկ բացառապէս նրան: Ո՛չ, հայրենասիրությունն ու ազգասիրությունը միանգամայն անհամատեղելի են քրիստոնեական ոգու հետ... Քրիստոնյայի հայրենիքը երկրի վրա ամբողջ աշխարհն է, եւ քրիստոնյան իրավունք չունի, դրանից առավել կամ դրանից բացի, մեկ այլ առանձին, երկրային հայրենիք ունենալու, սիրելու այն, շենացնելու եւ վճռականորեն ու արիաբար մաքառելու հանուն նրա...

Բացի այսպիսի քրիստոնյաներից, որոնք գուցեւ անկեղծ են իրենց մտորումներում, թեպետ մակերեսային, բացի այսպիսի ոչ քրիստոնյաներից, որոնք, կեղծ մարդասիրական նկատառումներից ելնելով, աշակցում են առաջիններին, մեր օրերում կան նաեւ անորոշ քանակությամբ մարդիկ, ովքեր ժխտողական՝ ոչնչապաշտական (նիհիլիստական^{3*}) մղումներով խարխլում են «հայրենիքի» եւ «ազգասիրության» հիմքերը: Մերօրյա աշխարհում գնալով ավելանում են ինտերնացիոնալիստական կազմակերպությունները, որոնց մեջ կան այնպիսիք, որոնք ազգային-հայրենասիրական գաղափարը «հնացած» կամ «հետադիմական» են համարում, հետեւաբար աշակցությանն անարժան, մյուսները հետեւողականորեն ու հարձակողաբար մերժում են այս սկզբունքը՝ ըստ էության «վնասակար» եւ անհանդուրժելի «նախապաշարմունք» համարելով: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս միջազգայնականությունը ժԹ. եւ Ի. դարերի ընթացքում գնալով ավելի ու ավելի լայն շրջանակներ

³ * Նիհիլիստ — 1. ԺԹ. դ. ուսմական մտավորականության շրջանում ծագած ուղղություն, որ ժխտողաբար էր վերաբերվում ազնվական կարգերին, ավանդույթներին, ճորտատիրությանը: 2. Լայնաբար՝ ամեն ինչ ժխտող, բացասող մարդ:

էր գրավում: Օրինակ՝ ի հայտ եկան կազմակերպություններ, որոնք իրենց առաջ խնդիր էին դրել «հաղթահարել» եւ «վերացնել» ազգային լեզուները «համադրական» (սինթետիկ) լեզվով («վոլապուկ» եւ «էսպերանտո»): Բազմացան ու զորացան այսպես կոչված «բանվորական ինտերնացիոնալները», որոնց գաղափարախոսություն համաձայն՝ տնտեսավարող-արտադրող դասակարգերի համերաշխությունը պիտի ավելի գերակշիռ լինի, քան մարդկանց ազգային-հայրենասիրական կամ պետական համապատկանելությունը: Ծայրահեղ բոլշևիստական տեսակետ էլ կա, ըստ որի՝ իշխանությունը պիտի պատկանի «սոցիալ-հեղափոխական» սկզբունքին, իսկ այդ սկզբունքը պահանջում է, որ գիտակից ռամիկը դավաճանի իր «հայրենիքին» եւ խաղաղ ու հատկապես պատերազմական շրջանում նպաստի նրա խարխլմանն ու բանվորական ինտերնացիոնալի հաղթանակին⁴: Ուշագրություն արժանի է նաեւ այն, որ ժամանակ առ ժամանակ բոլշևիկյան ոչնչապաշտության կողմնակիցներին հաջողվում է քրիստոնեական ճամբարում էլ կողմնակիցներ շահել:

Ի հակադրություն սույն մոլար եւ գայթակղիչ ուսմունքների՝ մենք հիմնական խնդիրը պիտի բաց եւ ոչ երկիմաստորեն դնենք ու ինքներս մեզ հարցնենք, արդյոք կարելի է հոգեւորապես Աստծու եւ քրիստոնեության առաջ հիմնավորել ու արդարացնել հայրենիքի գաղափարը:

Ի սկզբանե պարզ է, որ մարդկության կյանքն աշխարհում ենթարկված է տարածական-տեղանքային անհրաժեշտությանը. երկիրը մեծ է, իսկ մարդկությունը՝ սփռված նրա մակերեսով մեկ: Նա չի կարող եւ երբեք չի կարողանա հաղթահարել այս տարածական բաժանությունն ու համաշխարհային մի կենտրոնից կառավարվել: Տարածության, բնական պայմանների, ազգերի, տնտեսության, պետական կառավարման ու օրենքների, լեզվի ու սովորույթների, ճաշակների ու հոգեկերտվածքների պայմանները մարդկանց վրա տարբեր ու ջոկ (դիֆերենցիացիա) կերպով են ներգործում, եւ մարդկությունը հարկադրված պարզապես ընդունում է կյանքի այդ պայմաններն ու համակերպվում: Բոլոր մարդկանց բոլոր առումներով միանման դարձնելու եւ նրանց մի ամենիմաց եւ միահեծան կազմակերպությանը

⁴ Հնթերցողը սրա ապացույցը կգտնի վերջերս լույս տեսած գրքում՝ Alfred Norman. Bolchewistisch Weltmachttrolitik.— Gotthelf Verlag. Bern: Մասնավորապես տե՛ս 13, 14, 15, 16, 17 գլուխները: Գիրքն ամբողջովին կառուցված է սկզբնաղբյուրների հետազոտության վրա: (Ալֆրեդ Նոռման, Բոլշևիկյան մեծապետական քաղաքականությունը, Աշխարհը հեղափոխականացնելու III ինտերնացիոնալի ծրագրերը,— Բեռն, 1935, Ալֆրեդ Նոռմանը Իլլինի կեղծանունն է — ռուսական հրատարակության ծանոթագրություն):

ենթարկելու գաղափարը ցնորական, հիվանդ գաղափար է, ուստի եւ լուրջ հերքման արժանի չէ: Բարեկիրթ մարդը պիտի նստակյաց կենցաղավարությանմբ ապրի ու աշխատի. իսկ այդ նստակյացությունը մի կողմից՝ կցում է մարդուն մի տեղանքի եւ առանձնացնում հեռու ապրողներից, մյուս կողմից՝ հարկադրում նրան անդամագրվելու տեղական բնույթի կազմակերպված ազատ միություններին: Սրա հետեւանքով աշխարհը տարածական առումով տրոհվում է առանձին պետությունների, որոնք նույնիսկ ամենաուժեղ ու բարի ցանկության դեպքում չեն կարող մի պետության մեջ ձուլվել: Ինքնապահպանության բնագոյի, նմանության, տարածության, փոխադարձ պաշտպանության, աշխարհագրական սահմանների ու զեմֆի հանգամանքների բերումով մարդիկ միավորվում են իրավական, իշխող միություններում եւ համակերպվում-հարմարվում իրար. նմանությունը միասնություն է ծնում, իսկ տեւական միասնությունը՝ զորացնում նմանությունը: Միանման եղանակային պայմանները, շահերը, կյանքի ու աշխատանքի կերպը, տարազն ու սովորությունը սատարում են այս նմանությունը եւ ավարտին հասցնում իրավական եւ կենցաղային միաբանությունը: Պետական իշխանությունն այս ամենն ամրագրում է օրենքների եւ հասարակական կարգուկանոնի միասնական համակարգով: Հոգեբանական առումով այս ամենի հիմքում, իհարկե, ընկած է ինքնապահպանության բնագոր, ապա եւ՝ անձնական կյանքի կարնատեսությունը եւ աշխատանքային ու ստեղծագործական առումով անձնական ուժերի սահմանափակությունը: Մարդը երկար ընտրելու ժամանակ չունի, նա դաժան անհրաժեշտության ճնշման տակ է եւ այդ իսկ պատճառով հարկադրված հարում է մի, միակ, միասնական, լավ կազմակերպված խմբի եւ հենց այդտեղ էլ նրանից պաշտպանություն, օգնություն եւ արդարություն հայցում: Իսկ մի որոշակի խմբի հարել նշանակում է սեփական անձը հակադրել մնացյալ բոլորին: Հասարակական համերաշխությունն ու հասարակական հակադրությունը կապված են իրար եւ պայմանավորում են մեկը մյուսին, ինչպես օրինակ՝ լույսն ու մութը: Չարիքը, վտանգն ու վախը մարդուն սովորեցնում են իր մերձավորների հետ համախմբվել, եւ այս համերաշխությունից էլ ծնվում են իրավագիտակցության, «հավատարմության» եւ «հայրենասիրական տրամադրության» առաջին նշույլները: Այսպիսով՝ «հայրենասիրությունը», ամենայն հավանականությամբ, անխուսափելի, նպատակահարմար եւ կենսահաստատ երեւոյթ է...

Սակայն մեր խնդրի մեջ բնավ չի մտնում «հայրենասիրական մտայնություն» բնագոյին անհրաժեշտության եւ փորձով հաստատված՝

էմպիրիկ^{5*} նպատակահարմարության հաստատումը: Սերն առ հայրենիք պիտի հոգեւորապես արդարացվի ու հիմնավորվի, իսկ այն ամենը, ինչ մենք ցայժմ պարզել ենք, ընդամենը հայրենասիրության կենսական-կենցաղային օգտակարությունը վերաբերող մի շարք նկատառումներ են: Մենք դեռ բոլորովին չենք մոտեցել հայրենիքի սիրո վերջին ու ամենախորունկ աղբյուրին, ինչն իրապես քրիստոնյային հայրենասիրությունն առաջին, իսկ աշխարհաքաղաքացիությունը երկրորդ տեղում դնելու հիմք եւ իրավունք է ընձեռում, ընդ որում՝ դա էլ զգացմունքով, եւ կամքով, եւ արարքներով կյանքի կոչելով: Բանն այն չէ, թե ինչ են մեզ պարտադրում բնությունն ու պատմությունը. դրանք մեզ կարող են նաեւ հոգեւորապես անընդունելի բաներ պարտադրել (օրինակ՝ մարդակերություն՝ սովի, խուճապ՝ նավաբեկության ժամանակ եւ այլն): Խնդիրը հայրենասիրության հոգեւոր եւ կրոնական իսկությունը բացահայտելն է: Դրա համար անհրաժեշտ է ցույց տալ, որ սերն առ հայրենիք հոգեւոր իմֆնուոշման ստեղծագործական գործողություն է՝ Աստծու առաջ ընդունելի, ուստի՝ բարեբեր: Միայն ըմբռնման այս լույսի ներքո հայրենասիրությունն ու ազգասիրությունը կարող են բացահայտվել իրենց սրբազան ու անառարկելի նշանակությամբ. միայն սույն լուսաբանմամբ բնազդային անհրաժեշտությունն ու պատմական նպատակահարմարությունը՝ վտանգին, համերաշխությանը եւ փոխադարձ պաշտպանությանն առնչվող բոլոր այս նկատառումները, իրենց գլխավոր ու վերջնական հիմնավորումը կստանան:

Աշխարհում բաներ կան, որոնք կարելի է ընկալել լոկ աչքով (զորօրինակ՝ լույսը կամ գույնը), կան նաեւ այնպիսիք, որոնք մատչելի են սոսկ ականջին ու լսողությանը (օրինակ՝ ձայնը, երգեցողությունը, երաժշտությունը). սրանց հար եւ նման բաներ էլ կան, որոնք կարող են ընկալվել, ապրվել եւ ձեռք բերվել սոսկ սիրով (բնազդի մաքուր սերը լինի թե հոգով թրծվածը): Այսպիսի բաներից է նաեւ հայրենիքը: Այս թեմայով նույնիսկ դժվար կլինեք զրույցի բռնվել մի այնպիսի մարդու հետ, ով զուրկ է այս անդաստանի իրական, կենդանի փորձառությունից, ով երբեք սրտով չի զգացել, թե ինչ է հայրենիքն իր համար:

Հավանաբար, մարդիկ այս հայրենասիրական փորձառությունը ձեռք են բերում առանց որեւիցե որոնման կամ ուսումնասիրման. այն ասես ինքնին է գալիս: Մարդիկ բնազդաբար, բնական եւ աննկատ կերպով են

⁵ * Էմպիրիկ (հուն. empiria — փորձ) — 1. Միայն փաստերի վրա հիմնված, առանց տեսական ընդհանրացումների: 2. Փորձով հաստատված:

ընտելանում շրջակա միջավայրին, բնությանն ու դրացիներին, իրենց երկրի մշակույթին ու իրենց ժողովրդի կենցաղին: Հենց այդ պատճառով է, որ հայրենասիրության հոգեւոր էությունը գրեթե միշտ իրենց գիտակցության շեմից անդին է մնում: Այդժամ հայրենիքի սերը մարդկանց հոգիներում ապրում է որպես անխոհեմ, առարկայորեն անորոշ հակում, որը մերթ իսպառ քարանում ու կորցնում է իր ուժը, քանի դեռ լուրջ խռովքի չի մատնվել (խաղաղ ժամանակ, բարեկեցիկ ապրուստի ժամանակաշրջանում), մերթ կույր ու անխոհեմ կրքով ծառս լինում, արթնացած, վախեցած եւ չարացած բնազդի հրդեհով բռնկվում՝ ի զորու հոգում խլացնելու եւ խղճմտանքի ձայնը, եւ չափի ու արդարության զգացումը, եւ մինչեւ իսկ տարրական դատողության պահանջները: Այդժամ հայրենասիրությունը վերածվում է կույր գերհուզմունքի (աֆեկտի)՝ բոլոր կույր ու հոգեւորապես չլուսավորված գերհուզմունքների ճակատագիրը բաժանող. նա աննկատ է այլասերվում՝ դառնալով չար ու գիշատիչ կիրք՝ արհամարհալից հպարտություն, կատաղի ու հարձակողական ատելություն. այդժամ պարզվում է, որ «հայրենասերն» ու «ազգասերը» ոչ թե ստեղծագործական զարթոնք են ապրում, այլ ժամանակավոր դաժանացում, միգուցե նաեւ գազանացում: Պարզվում է, որ մարդու սրտում ոչ թե հայրենիքի սերն է ապրում, այլ ռազմատենչ ազգայնամոլության (շովինիզմի) եւ բթամիտ ազգային մեծամտության կամ էլ կենցաղային մանրուքների եւ «մեծապետական» խանդավառության (որի ետեւում հաճախ թաքնված է անձնական կամ դասակարգային շահը) տարօրինակ եւ վտանգավոր խառնուրդը: Հենց այս մթնոլորտում էլ՝ զուտ առեւտրական շահերով (ապրանքների վաճառք) պայմանավորված, հաճախ առաջանում է ազգայնականության այն ձեւը, որը վճռականապես չի կամենում հաշվի նստել այլ ժողովուրդների ո՛չ իրավունքների, ո՛չ արժանիքների հետ՝ միշտ պատրաստ լինելով մեծարելու սեփական ժողովրդի արատները: Այսօրինակ «հայրենասիրությամբ» ախտահարված մարդիկ չգիտեն եւ հասու չեն ո՛չ նրան, ինչ իրենք «սիրում» են, եւ ո՛չ հանուն ինչի են նրանք դա «սիրում»: Նրանք չեն առաջնորդվում հոգեւոր-քաղաքական շարժառիթներով, հենց որոնցից էլ միայն կարող է ծնվել նշմարիտ վեհապետությամբ⁶

⁶ Վեհապետությունը* բնութագրվում է ոչ թե տարածքի չափերով և բնակիչների քանակով, այլ ժողովրդի և նրա կառավարության՝ մեծ միջազգային խնդիրների բեռն ստանձնելու և դրանք լուծելու ունակությամբ: Մեծ տերությունն այն է, որ հաստատելով իր իսկ գոյությունը, իր իսկ շահերը, իր իսկ կամքը՝ ստեղծագործական, կառուցողական, իրավական գաղափար է

քաղաքականությունը, այլ հոտային կամ զանգվածային բնազդով իր ողջ կուրուլթյան մեջ. եւ նրանց այս «հայրենասիրական» զգացումի կյանքն սկսում է տարուբերվել, ինչպես իսկական կենդանու պարագայում՝ սառն անտարբերության եւ գիշատիչ պոռթկման միջեւ: Իհարկե, պետք է խոստովանել, որ կույր բնազդի հայրենասիրությունն ավելի լավ է, քան հայրենիքի նկատմամբ որեւիցե սիրո բացակայությունը, որի դեմ կարող են առարկել միայն մոլեռանդ ինտերնացիոնալիստները: Այսօր, սակայն, այնպիսի ժամանակներ են եկել, երբ այսօրինակ՝ զուտ բնազդային հայրենասիրությունը, որը որոշ ժողովուրդների համակում է ամենապարզունակ ազգայնական հպարտությամբ ու նվաճումների ամենաանթաքույց ծարավով, մարդու համար անասելի վտանգներ ու աղետներ է պատրաստում. այսօր արդեն այնպիսի ժամանակներ են եկել, երբ մարդկությունը հատկապես կարիք ունի հոգեւորապես իմաստավորված եւ քրիստոնեաբար ազնվացված հայրենասիրություն, որն իր մեջ կրճառ սեռն ու անձնագոհությունը համատեղեւ իմաստուն զգաստության եւ չափի զգացման հետ, քանզի միայն այս հայրենասիրությունը կկարողանա լուծել ժամանակակից մարդկության առաջ ծառացած մի շարք լրջագույն խնդիրներ... Մենք՝ հոգեւոր նորոգություն որոնողներս, չենք կարող անհոգություն դրսեւորել մեր իսկ կողմից կյանքի կոչվող եւ արմատավորվող հայրենասիրության եւ ազգասիրության որպիսության նկատմամբ:

Սակայն «կույր-բնազդային» հայրենասիրությունը հակադրելով «հոգեւորին»՝ բնավ չենք մերժում եւ նսեմացնում բնազդի ուժը «հայրենիքի» եւ «ազգի» նկատմամբ: Աստ ամենեւին էլ «բնազդը» չէ, որ դատապարտվում է,— դա անհեթեթ եւ անհիմն բան կլիներ,— այլ լուրջ կույր, հոգեւորապես չլուսավորված, հակահոգեւոր բնազդը: Մարդն աշխարհում առանց բնազդի ապրել չի կարող, առանց այս խոհրդավորապես նպատակահարմար, օրգանապես իմաստուն, անիմաստաբար կրքոտ ուժի՝ մեզ Աստծուց շնորհված եւ ի բնե մեզ բնորոշ ուժի, որը կառուցում է եւ անձնական առողջությունը, եւ բնության հետ համակերպումը, եւ տնտեսական աշխատանքը, եւ ամուսնությունը, եւ ընտանեկան կյանքը, եւ թե ժողովրդի պատմությունը: Մարդու առողջ կյանքում բնազդն ու հոգին առհասարակ զատված չեն միմյանցից, սակայն նրանց հաշտության, փոխադարձ համաձայնեցվածության եւ փոխադարձ ներթափանցման աստիճանը

ներմուծում ժողովուրդների բովանդակ ընտանիքի մեջ, ժողովուրդների ու տերությունների բովանդակ «համերգի» մեջ:

միանման չի լինում: Հոգին շրնդունող բնազդը կույր է, ինքնահաճ, անզուսպ եւ մեծավ մասամբ արատավոր. նա դեպի կործանում է տանում: Բնազդը շրնդունող հոգին ներքուստ սասանված է, տեսաբանական է, ամուլ եւ առավել հաճախ անկենսունակ. նա հետզհետե ուժասպառ է լինում: Բնազդն ու հոգին կոչված են փոխադարձաբար միմյանց ընդունելու այնպես, որ բնազդը հոգեղենության իսկությունն ու ձեւն ստանա, իսկ հոգին՝ բնազդի ստեղծագործական ուժը: Հայրենասիրությունը սեր է, այլ ոչ թե պարզապես «նախապատվություն», «հակում» կամ «սովորություն»: Եւ եթե այս սերը «դատարկ խոսք» չէ եւ ոչ էլ «կեցվածք», ապա բնազդային կառչածություն է մի հարազատ բանի: Այդ պատճառով էլ հայրենասիրությունը միշտ բնազդային է: Բայց միշտ չէ, որ հոգեւոր է: Իսկ ձեռք բերելիքը բնազդի եւ հոգու փոխադարձ ներթափանցումը պիտի լինի հայրենիքի վերաբերմամբ: Բնազդային կիրքը պիտի հոգու կրակով մկրտվի. հոգեւոր ընտրությունը, նախապատվությունն ու ինքնորոշումը պիտի բնազդային կրքոտության ողջ ուժը ստանան: Դա աչք ունեցող եւ ձեւավորող սեր կլինի. դա խորհրդավորապես-նպատակահարմար եւ կրքոտորեն-իմաստուն հոգեղենություն կլինի. դա իսկական հայրենասիրություն կլինի...

Իսկ ինչպե՞ս է դա ձեռք բերվում եւ իրականացվում:

Նկատենք, որ մարդը կարող է ողջ կյանքում ապրել իր պետության մեջ եւ «չգտնել» իր հայրենիքն ու շսիրել այն, եւ այդպես նրա հոգին մինչեւ վերջ հայրենասիրական առումով ամալի ու ամուլ կմնա, իսկ այս ձախորդությունը կամ անձնական անկարողությունը նրան կտանեն ուրույն հոգեւոր որբության, ստեղծագործական անհիմնության եւ անպտղության: Բազմաթիվ են ժամանակակից աշխարհում այդպիսի դժբախտ անոթ^{7*} մարդիկ, որոնք ընդունակ չեն սիրելու իրենց հայրենիքն այն պատճառով, որ նրանց բնազդն ապրում է անձնական-եսասիրական կամ էսասիրական-դասակարգային շահերով, եւ հոգեւոր գործարանից էլ զուրկ են: Եւ այսպես՝ հայրենիքի գաղափարը նրանց հոգուն ոչինչ չի ասում: Հայրենիքի գաղափարը մարդու մեջ հոգեղենության կենդանի սկիզբ է ենթադրում: Հայրենիքն ինչ-որ բան է հոգուց կամ հոգու համար, իսկ նրանց մեջ հոգի չկա. նա կամ լռում է, կամ մեռած է: Նրանց հավատալիքը նյութն է, մինչդեռ հոգու ակունքը դեն է նետված կամ անարգված է, իսկ նրանց ցանկանալիքը նյութական բարիքների վերաբաշխումն է. նրանք անտարբեր

⁷ * Անոթ — Ոչ ոք չունեցող, բարեկամ, մտերիմ, ազգական չունեցող, անտերունչ, անտոհմիկ, անհայրենիք, հայրենամերժ:

կամ թշնամաբար են տրամադրված ամենայն հոգեւորի նկատմամբ⁸: Հոգու գործարանը նրանց մեջ ապաճման (ատրոֆիայի) է ենթարկված,— ուրեմն ինչպէս կարող են գտնել եւ սիրել հայրենիքը: Արդ, հայրենիքի ձեռքբերումը իմֆնորոշման հոգեւոր գործողություն է (թեկուզ աղոտ-հոգեւոր, թեկուզ հոգեւոր-բնազդային), որը ենթադրում է, որ ինքը՝ մարդը, հոգով է ապրում, եւ որ հոգեւոր գործարանը նրա մեջ ապաճման ենթարկված չէ. իսկ ինքնորոշման սույն գործողությունը նրան ցույց է տալիս իր իսկ հոգեւոր ակունքներն ու այդու կապանքագերծ է անում եւ բեղմնավորում նրա սեփական հոգեւոր ստեղծագործումը: Այսպիսով՝ հոգով մեռած մարդը չի սիրի յուր հայրենիքը եւ միշտ պատրաստ կլինի ուրանալու, որովհետեւ այն ընկալելու գործարան չունի եւ ի վիճակի չէ այն գտնելու: Այսպիսի դժբախտ մարդիկ սովորաբար այդ անկարողության եւ հոգեւոր անգործության բեռը կրում են հրեթացս իրենց բովանդակ կյանքի:

Սակայն նաեւ այնպէս է պատահում, որ հայրենիք չգտած եւ սիրել չկարողացած մարդը, այդուհանդերձ, հրեթացս բովանդակ կյանքի սխալմամբ իրեն որպէս հայրենասեր է ընդունում եւ հրամցնում: Դա նշանակում է, որ նա իր սիրով հարել է ոչ թե հայրենիքին, այլ նրա ինչ-որ մի «փոխարինիչի» («սուռոգատի»), որն ինքը սխալմամբ հայրենիք է համարում: Այդպիսի «փոխարինիչ» կարող են լինել մեր թվարկած ժողովրդական կյանքի մաս կազմող ամենայն բնական եւ պատմական պայման. հերիք է միայն կյանքի սույն փորձնական պայմաններն առանձնացնել իբրեւ մի ինքնուրույն բան, պոկել այն հոգեւոր իմաստից ու սրբազան նշանակությունից, եւ մոլորություն կառաջանա ինքնիրեն: Ինքնին վերցրած եւ հոգուց կտրված ինչ-որ մի բան՝ լինի տարածք, եղանակ, աշխարհագրական միջավայր, տարածություն՝ մարդկային կողք կողքի բնակությամբ, ռասայական ծագում, սովորական կենցաղ, տնտեսական կացութեամբ, լեզու, ձեւական հպատակություն, հայրենիք չի կազմում, չի փոխարինում ու հայրենասիրական սիրով չի սիրվում: Բանն այն է, որ առանձին վերցրած այս ամենը հար եւ նման է մարմնի առանց հոգու կամ օրորոցի առանց մանկան կամ շրջանակի առանց նկարի. այս ամենն ավելին չէ, քան հայրենիքի բնակավայրը, նրա գործիքը, նրա միջոցը, նրա նյութը, բայց ոչ իմքը: Այս ամենը պետք է նրան. այս ամենը նրանով եւ նրա կյանքով է բարձրագույն իմաստ եւ սրբազան նշանակություն

⁸ Ահա թե ինչ է գրում Կարլ Մարքսը. «Նրա (պրոլետարի) համար օրենքները, բարոյականությունը, կրոնը բացարձակ բուրժուական նախապաշարմունքներ են, որոնց ետևում միմիայն բուրժուական շահեր են թաքնված»: «Բանվորները հայրենիք չունեն» (տե՛ս Կոմունիստական մանիֆեստի «Բուրժուան ու պրոլետարը» և «Պրոլետարն ու կոմունիստները» գլուխները):

ստանում, ինքը, սակայն, այդ ամենից գերիվեր է. դրանով նա չի սպառվում եւ դրան չի հանգեցվում. եւ հենց այդ պատճառով էլ կարող է գոյատեւել ու կյանքի կոչվել եւ նրա բնակավայրի, եւ նրա նյութի որոշակի փոփոխության առկայության դեպքում: Հայրենիքը տարածքի կարիք ունի, բայց տարածքը հայրենիք չէ: Հայրենիքն աշխարհագրական եւ եղանակային միջավայրի կարիք ունի, բայց եղանակի եւ աշխարհագրական միջավայրին նման պայմաններ կարելի է նաեւ այլ երկրներում գտնել եւ այլն: Կյանքի այս պայմաններից եւ ոչ մեկն ինքնին չի կարող մարդու համար հայրենիք լինել, քանզի հայրենիքը ինչ-որ մի բան է հոգուց եւ հոգու համար: Եւ հակառակը՝ հայրենասիրություն կարող է գոյանալ այս բովանդակություններից ցանկացածի բացակայության դեպքում: Երբեք Ռուսիայում չապրած եւ հազիվ ռուսերեն խոսող մարդիկ կան, որոնց սրտերը երգում եւ տրոփում են Ռուսիայի հետ. եւ հակառակը՝ արյունով, ծագմամբ, բնակության վայրով, կենցաղով, լեզվով եւ պետական պատկանելությամբ ռուս մարդիկ էլ կան, ովքեր ուրանում են Ռուսիան, նրա ճակատագիրը, նրա բնակության վայրը, նրա մարմինն ու օրրանը եւ հենց իրեն՝ ի փառս մատերիալիզմի եւ միջազգայնականության:

Հայրենիքի էությանը հասու լինելու համար անհրաժեշտ է խորասուզվել սեփական սրտի մեջ՝ ստուգելով ու հավաստիանալով եւ սեփական հայացքով ընդգրկելով մարդկային հոգեւոր փորձառության բովանդակ ծավալները:

Օտարության մեջ երկար ապրելն այն հայրենիք չի դարձնում՝ անկախ օտար կենցաղի, բնության նկատմամբ ձեռք բերած սովորություններից եւ նույնիսկ նոր հպատակությունից. այս ամենն անզոր էլ կմնա, քանի դեռ մարդը հոգով չի ձուլվել մինչ այդ իրեն օտար ժողովրդին: Ռասայի եւ արյան հատկանիշը հայրենիքի հարցը չի լուծում, օրինակ՝ հայը կարող է ռուս հայրենասեր լինել, բայց կարող է նաեւ թուրք հայրենասեր լինել, կարող է նաեւ հայ անջատողական, հեղափոխական քարոզիչ լինել թե՛ Ռուսիայում, թե՛ Թուրքիայում: Իսկ մեծ պատերազմի ընթացքում ռազմաճակատում Ռուսիայի համար հայրենասիրաբար կռվում էին մի քանի տասնյակ ռուսական ազգությունների ներկայացուցիչներ⁹: Խառնածին արյամբ մարդկանց ծագումն անզոր է լուծելու հայրենիքի հարցը: Ինչ-որ մի պետությանը ձեւական պատկանելությունը ոչ միայն չի տոգորում քաղաքացուն հայրենասիրական տրամադրությամբ, այլեւ ընդհակառակը՝ նվաճման կամ սահմանների կամայական անցկացման պարագայում

⁹ Ըստ 1926 թ. մարդահամարի՝ Ռուսիայում հաշվվում էին մինչև 128 տարբեր ազգություններ:

ող կամավոր հպատակություն է ստեղծում ու մարդկանց հոգիներում համառ հակահայրենասիրական լարվածություն առաջացնում...

Այս ամենը նշանակում է, որ հայրենիքը չի սահմանվում եւ չի սպառվում նշված բովանդակություններով. այն ավելի մեծ ու խորն է, քան դրանցից յուրաքանչյուրը՝ առանձին, քան դրանք բոլորը՝ միասին վերցրած:


Շամպայնից սերող ֆրանսիացի ազնվական կոմս Շամիսսո դե Բոնկուրը¹⁰, որի եղբայրները Լուդովիկոս ԺԶ-ի մանկավիհներն էին, 1790 թ. բռնկված հեղափոխական ահաբեկչությունից իր ընտանիքով փախչելով Գերմանիա, հոգով սերտաճեց նրան եւ դարձավ գերմանական քնարական եւ հայրենասեր ամենախոր բանաստեղծներից մեկը: Շվեյցարացի հայրենասերները չորս տարբեր լեզուներով են խոսում՝ գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն եւ ռոմանշերեն: Լորդ Բիկոնսֆիլդը (դ'Իզրաէլին) հրեա էր եւ անգլիացի հայրենասեր: Է. Ստ. Չեմբեռլենն անգլիացի էր եւ գերմանական հայրենիքի հայրենասեր: 1812 թ. փառահեղ ռուս գեներալ Բենիգսենն արյամբ գերմանացի էր եւ ռուս հայրենասեր: Ներկայումս գաղթական ռուսների սփյուռքում՝ աշխարհի բոլոր պետություններում, կգտնվեն Ռուսիային հոգով հավատարիմ լիիրավ քաղաքացիներ: Հենց այս իմաստով է պետք հասկանալ անգլիացի Եպիսկոպոսների իշխանությունը չընդունող բողոքական Եկեղեցու ներկայացուցիչ Ռոջեր Վիլյամսի արարքը. նա, իրեն կրոնական առումով հալածված զգալով, խզեց բոլոր կապերն այն ամենի հետ, ինչը սովորաբար հայրենիք է համարվում, եւ հեռացավ օվկիանոսից անդին՝ իր համար նոր հայրենիք ստեղծելու, ուր անգլիական հոգին համահունչ կլինեք դավանանքի ազատությունը:

Ուրեմն, ինչպե՞ս է սահմանվում հայրենիքը, եւ ինչպե՞ս է այն գտնում մարդը:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

¹⁰ Իսկական ազգանունն է՝ Comte Chamisso, Vicomte d'Ormond, Seigneur de Boncoert, Magnieux, Tournaison, Levek, Dampierre: Նրա կալվածքները ներկայումս կտարածվեն մինչև Մարնիի դեպարտամենտը:



ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ԲԱՂԲ ԳԱՎԱՌԻ ՀՈՈՆՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ (ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)

Ընդհանուր տեղեկություններ
և տեղանվան տարբերակներ

Շուռնուխ գյուղը գտնվում է հայոց գրչության խոշոր կենտրոններից մեկի՝ «Էջմիածնի Ավետարանի» գրչության վայրի՝ Բղենո Նորավանքի հարեանությունում¹։ Գյուղի մասին առաջին հիշատակողն Ստեփանոս Օրբելյանն է։ Մյուս Բաղբը, որ կոչվում է նաև Քաշունիք, գավառի գյուղացուցակում նշվում է Շոռնոխոյ անվամբ (8 միավոր հարկով)²։ Այս նույն՝ Փարիզի 1859 թ. հրատարակության մեջ Շոռնոխոյ գյուղանունն հիշատակվում է նաև Հաբանդ գավառում՝ 12 միավոր հարկով³, որ հավանաբար գտնվում էր Շոռնոխի խաչեր կոչվող հնավայրի դամբարանաթմբի շրջակայքում՝ Կոռնիձոր գյուղից 2,5 կմ արեւմուտք⁴։ Մյուս հրատարակություններում երկուսն էլ Շոռնոխոյ⁵ են (Թարգմանության մեջ նույնպես տարանջատված են՝ Shornoxoy (ր) և Shor'noxoy (ռ)⁶։ Այս եւ հետագա շրջանում գյուղանունը հանդիպում է Շոռնոխո, Շոռնոխա, Շոռնուխ, Շոռնուխա տարբերակներով՝ «Գյուղ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղբ-Քա-

¹ Տէս Ս. ԲԱՐԵՆՈՒԳԱՐՅԱՆ, «Էջմիածնի Ավետարանի» գրչության վայրը, «Բանբեր մատենադարանի», №4, 1958, էջ 48:

² Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, հտ. Բ., (այսուհետ՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, 1859), Փարիզ, 1859, էջ 269:

³ Անդ, էջ 267:

⁴ Տէս Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ, Ա. ԲՈՐՈՒՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը (այսուհետ՝ Սյունիքի սրբազան լանդշաֆտը). Հնագիտական հետազոտություններ, Երեւան, 2015, էջ 134:

⁵ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, Պատմութիւն տանն Սիսական, (այսուհետ՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, 1861), Մոսկվա, 1861, էջ 375, 276:

⁶ STEPHANOS ORBELEAN'S, History of Sisakan (Translated from Classical Armenian by Robert Bedrosian), Chicago, 2001, pp. 264, 266.

Նկատի ունենալով տեղանվան Շուտնուխ[ի] ձեւի առաջին վկայությունը (ԺԳ. դար) եւ գործածությունից ժամանակաշրջանը՝ սկսած Թ. դարից՝ «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին»¹², բառի հնարավոր բաղադրիչները պետք է փնտրել մատենագրական աղբյուրներում եւ բարբառային՝ մասնավորապէս Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի կազմում: Հավանական է, որ բառը բաղադրյալ է՝ կազմված շոր[n]+ն+n[ու]խ բաղադրիչներից, որոնք էլ հիմնականում կղառնան բառաքնական մեր հումբը:

Շուտնուխ[ի] բառին ձեւմաստային հատկանիշներով մոտ կամ նման միավոր-կաղապարներ

Շոր (շոր[n]+) արմատին արտաքնապէս նման են ՆՀԲ-ում վկայվող շոր (-ի հոլ.) «ձորձ, հանդերձ», շոր(-իկ) «թափառական»¹³, շուտ՝ ժուշուշ «շուրջ»¹⁴, այստեղից՝ վաղաշխարհաբարյան շուր ու մուր «այս ու այն կողմ»¹⁵ եւ այլն:

Ոխ (ո[n]խ) արմատին ձեւով մոտ են բնիկ հնդեւրոպական աղի «օղի», աղոց «հեռու» արմատները, ողի «ուղի, ճանապարհ»¹⁶, անհայտ ծագմամբ՝ ուխ «փայտե թակ, թակ», ուլէլ «ճյուղ»¹⁷, ոխ, ող¹⁸ եւ այլն: Առա-

տարածքը: Հստ բանավոր զրույցների՝ ժամանակին այստեղով խոշոր գետ էր հոսում, որը հետագայում անցել է հողի տակ: Տեղաբնիկների վկայությամբ՝ հիմա էլ տարածքում վարար ջրի ձայն է լսվում: Այստեղ է գտնվում խոտանանցիների համար հայտնի Խալին աղբյուրը, որի ակունքն իրականում գտնվում է բարձր ժայռի վրա, որից ջուր է բխում (տես է. ՍԱՐԳՍՅԱՆ, Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները, (այսուհետ՝ է. ՍԱՐԳՍՅԱՆ, 1989) Երեւան, 1989, էջ 280:

Այս քարանձավներն ունեն սրբազան նշանակություն շրջակա բնակիչների համար, եւ հնարավոր է՝ պաշտամունքային դերով ուշագրավ են եղել դեռեւս Ք. ա. Բ.—Ա. հազարամյակներում (Շուտնուխ գյուղը հնագիտական ուսումնասիրությունից չի ենթարկվել, բայց շրջակա բնակավայրերի՝ Աղվանիի, մասնավորապէս Շուտնուխից մոտ 2—3 կմ հեռավորությամբ գտնվող Տանձավերի դամբարանադաշտի հնագիտական պեղումներից հայտնի են շրջակայքի բնակեցման ամենավաղ շերտերը (Ք. ա. 2900—2500 թթ.) եւ մշակութային խումբը (Կուր-Արաքսյան II). տես Սյունիքի սրբազան լանդշաֆտը, էջ 10):

¹² ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼԵԱՆ, 1859, էջ 259:

¹³ Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Խ. ՍԻՐՄԷԼԵԱՆ, Մ. ԱԻՔԵՐԵԱՆ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, (այսուհետեւ՝ ՆՀԲ), հտ. Բ., Վենետիկ, 1836—1837, էջ 489:

¹⁴ Անդ, էջ 491:

¹⁵ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, Երեւան, 2014, էջ 158:

¹⁶ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 102 (այսուհետ՝ ՀՍԲ):

¹⁷ Անդ, էջ 748:

¹⁸ Անդ, էջ 600:

վել տարածված եւ բարբառներին անցած է ուղիս «ջրի հոսք» բառը, որ կքննվի ստորեւ:

Բարբառային վկայություններից քննվող արմատին մոտ ձևերն են՝ շորշոփ, շորոր (տալ)¹⁹, շոռ «թանից պատրաստված հասարակ պանիր»²⁰, շոռ Ար. Արց. Ուր., Կր. «1. լոռ, ժածիկ, 2. հրբ. կտրված թան, Ար. 3. պանրի տեսակ»²¹, շոր || շոռ Հվր. (այլեւ՝ Սյունիք-Արցախ) «շոր, երեսը սպիտակող հող»²², շ[ը]ռ > շոիկ «փոքրիկ աղբյուր», Սյունիք-Արցախում՝ շոնդու «պաղելուց անհամացած», շո-ալ «առատորեն թափվող ջուր, հող եւ այլն»²³, շոան «մեծ ջրվեժ»²⁴, այլեւ տեղանուն՝ Շըռ[ն]ան, շըռ-օթ, շըռուքկան «փոքր ջրվեժ, 2. ջրի խողովակ տանիքների վրա»²⁵, շըռ(ն)ալ, շոռալ, շըռ(ն)ալի «1. առատ հոսել, 2. առատ (ջրի եւ այլնի մասին)»²⁶, նույն արմատից՝ շըռշըռ «բնական ջրվեժ»²⁷ եւ այլն:

Վերջադիր ոխ (ոխ[ու]խ)-ին բարբառներում ձևով մոտ են ուխար «կրակի կույտ, ուխարել «կրակի մեջ այրել» (հմմտ. Մուշ. օխգի «վառելու հատուկ խոտ»²⁸), օխ || ոխ «սայլի երկու անիվներն իրար միացնող ձող, որ պահում է տախտակամածը» (հավանաբար օղ բառից), ուղիս || ուխ > օխ || օխնը եւ այլն: Վերջադիր բառի ծագումը պետք է որ բնիկ հայերեն լինի կամ թերեւս այդպես ընկալվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնադարյան վկայության մեջ դրվել է –ո[յ] հոլովով՝ որպես հնդեւրոպական ծագում ունեցող բառ²⁹:

¹⁹ ՍԱՀԱԿ ՎՐԳ. ԱՄՍՏՈՒՆԻ, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 521, Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն գաւառական բառարան, Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց (այսուհետ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 838:

²⁰ Տ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆՅ, Բառգիրք Արարատեան բարբառի, Տիֆլիս, 1903, էջ 88:

²¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, (այսուհետեւ ՀԼԲԲ) հտ. IV, Երեւան, 2007, էջ 272:

²² ՀԼԲԲ, հտ. IV, էջ 273, Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, հտ. Գ., Երեւան, 1944, էջ 531:

²³ Նշվում է որպես բնաձայնական բառ (տե՛ս Կ. ԴԱՎԹՅԱՆ, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երեւան, 1966, էջ 444):

²⁴ ՀԳԲ, էջ 845:

²⁵ Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013, էջ 573–574:

²⁶ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Գորիսի բարբառը, Երեւան, 1975, էջ 452:

²⁷ Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Կաքավաբերդի բարբառը, Երեւան, 1967, էջ 201:

²⁸ ՀԳԲ, էջ 1132:

²⁹ Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Գրաբարի քերականութիւն, Երեւան, 2010, էջ 43–44:

Շուռնուխ[ի] բառի բաղադրիչների հայերն եւ օտար աղբյուրներում վկայվող զուգահեռներ

Նշենք, որ դեռեւս ԺԳ.—ԺԴ. դդ. Հայաստանի, մասնավորապես Սյունիք-Արցախի տեղանունները նոր-նոր սկսել էին կրել թյուրքական³⁰ լեզվի ազդեցություններ հիմնականում Պարսկաստանի հյուսիսում ապրող ցեղերից, քանի որ թյուրքական տարրն այստեղ հիմնականում բնակություն է հաստատել սկսած ԺԶ. դարից³¹։ Իսկ մինչ այդ տարաբնույթ շփումներ են եղել հատկապես իրանական եւ կովկասյան ժողովուրդների հետ³²։ Սյունիք-Արցախի տեղանուններում, օրինակ, կան հետքեր, ինչպես՝ Տյաֆ, Տորթնի³³ եւ այլն։ Այդուհանդերձ՝ Շոռնուխյ տեղանվան հիմքերը փորձենք գտնել այլ լեզուներում։ Շոռ կամ շոռ հիմքով թյուրք. ծագմամբ բառ չկա³⁴։ Իրանական լեզուներում կա شور (šur) «աղի» (شور آب) «աղի ջուր»³⁵, քրդ. šur || şor³⁶ «աղի, դառն», միջին հայերենում շօր «աղի, շոռ, աղահամ»³⁷,

³⁰ «Թյուրֆ», «թյուրֆական» եզրույթների ներքո պետք է հասկանալ ընդհանրապես թուրքական լեզվախմբին պատանող լեզուներ, բարբառներ, ապա մասնավոր լեզուներ, ասենք՝ քուրմերեն, աղրբեջաներեն եւ այլն։ Աղրբեջաներենը որպես գրական լեզու, ձեւավորվել է ԽՍՀՄ կազմում Ի. դարի երկրորդ քառորդից։ Մինչ այդ եղած Ատրպատականի թյուրքերենը բարբառների, խոսվածքների, ցեղային ժարգոնների խառնակ ամբողջություն է։ Հաճախ դժվար է լինում նաեւ բարբառային հատկանիշների տեղորոշումը, քանի որ քոչվորական կյանքն ու բնիկ ժողովուրդների հետ ունեցած շփումները Ատրպատականի թյուրքերենը զրկել էին միատարրությունից։

³¹ Ս. Ա. ԽԱՆՎԵՐԴՅԱՆ, Գորիսի ամփոփ պատմություն, Երեւան, 2005, էջ 123—124։

³² Թյուրք-պարսկական տիրապետության շրջաններում եւ դրանից առաջ Սյունիք-Արցախ բարբառախումբը նույնպես օգտվել է, այսպես կոչված, «միջազգային բառարանից» (տե՛ս Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ., Երեւան, 1951, էջ 186), օրինակ՝ Օրբեւլյանի երկի մեջ հանդիպում են թյուրք., հուն., արաբ. փոխառություններ՝ ֆեմդ, ֆիլիս, մահալ (տե՛ս ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵՒԼՅԱՆ, 1859, էջ 293), եւ դա օրինաչափ պետք է համարել։ Տեղանունները նույնպես կարող են լեզվական ազդեցություններ կրել, եւ ինչպես հայերենում կան օտար անվանումներով կամ ազդեցությամբ տեղանուններ, այնպես էլ հակառակը։ Կարծում ենք, որ բնակավայրերի հիմնարկերի եւ պատմական շերտերի որոշման համար առանցքային դեր ունի լեզվի պատմահամեմատական մեթոդը, եթե ուսումնասիրության այլ նյութեր առհասարակ բացակայում են։

³³ Այս մասին տե՛ս Մ. ՔՈՒՄՈՒՆՑ, Մի քանի տեղանունների ստուգաբանություն՝ պատմա-ազգագրական հենքով, Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրները, Գիտական հոգվածների ժողովածու, Երեւան, 2019, էջ 220—221։

³⁴ Արեւմտյան Սիբիրում բնակվող թուրքական համայնքի անուն կա՝ Şor (Շոռ) (<https://sozluk.gov.tr/>)։

³⁵ Հնարավոր է, որ այն կազմում է şorak բառի հիմքը՝ cōr || şōr (թյուրք.՝ tuz > tuzla[u]) արմատից՝ միջին պրսկ. şōrak «աղի, աղի լիճ», որ փոխառել են թյուրքական բարբառներ կրողները։

³⁶ Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, կազմողներ՝ Վ. Կատվալյան, Ա. Բերահամյան, Գ. Մխիթարյան, Երեւան, 2016, էջ 379։

³⁷ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009, էջ 605։

որն էլ, հավանաբար, հնդեվրոպական *sol- «աղ, աղաջուր»³⁸ բառի ձևեր-մաստային ածանցումներից³⁹ մեկի արտացոլումն է միջին պարսկերենում՝ sōr (sōrag)⁴⁰ «աղ»⁴¹ (խնդրահարույց է $l > r$ անցումը, որը հնդեվրոպական լեզուներից հիմնականում արիական խմբին է բնորոշ՝ *sol > šur): Հայ մատենագրության մեջ մեզ չհանդիպեց նշված իմաստով արմատը⁴², ուստի եւ հնարավոր է, որ այն բարբառային բնույթի փոխառություն է եւ բանավոր ճանապարհով է անցել հայերենի բարբառներին, այստեղից էլ (կամ իրա-նական լեզուներից)՝ թյուրքերենի բարբառներին⁴³:

³⁸ Այս եւ մյուս իմաստները տես J. POKORNY, Indogermanisches Etymologisches Wörterbuch, Bern-München (այսուհետ՝ J. POKORNY), 1959, էջ 878—879:

³⁹ Համեմատել ձևերիմաստները՝ ֆր. *salé*, հուն. ἅλς, *hals*, լատ. *sal*, ումբ. *salu*, թուս. *sāle*, լիթ. *saldus*, լաթ. *sālš*, անգլ. *sealt* || *salt*, սանսկ. *salila* «աղ» եւ այլն. C. БУСК, A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages (A contribution to the history of ideas), Chicago & London, 1988, էջ 1032):

⁴⁰ D. MACKENZIE, A concise Pahlavi dictionary, London, New York-Toronto, 1986, p.131.

⁴¹ Պրսկ. نمک (*namak*), հնդ. नमक (*namak*) «աղ», որ, ինչպես նկատում ենք, հ.-ե. *sal- հիմքից չեն:

⁴² Շորաձոր տեղանվան վերաբերյալ Հ. Հյուբշմանը նշում է, որ տարբերակներում է կրել՝ Դորաձոր, Յորաձոր, այդուհանդերձ՝ վերապահությամբ առաջարկում է շոր՝ ձոր կազմությունը (տես Հ. ՀՅՈՒԲՇՄԱՆ, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 392):

⁴³ Պարսկերենից *šor* (shor) «աղի ջուր», այլեւ՝ *šorak* (shorag), *šorba* (shorba) || *šorva* (shorva) «ուտեստ» (Tarama sözlüğü, V, 2-ci bas., Ankara, 1996, էջ 3680). *Šor* (shor) արմատով թյուրք. հիշատակվում է «վեճ, բանակոխի, զրույց» իմաստներով պրսկ. ծագմամբ բառը (տես H. EREN, Türk dilinin etimoloji sözlüğü, ikinci bas., Ankara, 1999, էջ 390): *Šorlamak* (shorlamak) || *shorla-mak* բառը տրվում է բնաձայնական ծագմամբ՝ *šor-šor* (shor-shor) «աղմկել» (İ. EYUBOĞLU, Türk dilinin etimoloji sözlüğü, birinci bas., İstambul, 1988, էջ 309): Ի. էյբուղլուն հետագա աշխատանքներում հստակեցնում է բառի ծագմանը վերաբերող որոշ հարցեր՝ նշելով, որ *šor* բնաձայնությամբ առավելապես վերաբերում է ջրին՝ նրանից հանելով այլ հասկացություն՝ *šar-šun* (shar-shun), որ, անշուշտ, հայերենից փոխառված ջրշուն (Սյունիք-Արցախում՝ ջրշօփ եւ այլն) բառն է (տես İ. EYUBOĞLU, Türkçe kökler sözlüğü, İstambul, 1989, էջ 137): *Šor* (shor) արմատը տրվում է համանուն շարքով՝ 1. հայերեն ձևերիմաստներով՝ *šor < šar* (հմմտ. հայ. շառ-աշ) «շառաշ», 2. *šor < čor* (tchor) «չոր, անջուր», բնիկ հայերեն (հնդեվրոպական *ksoro-) շոր բառից (H. BƏY HADİ, Arin sözlüyü, Təbriz, 2010, էջ 5849). Բեյ Հադիի լրամշակված աշխատության մեջ *šar* (shar), *šir* (shr), *šur* (shur) (այստեղից՝ - *šur salmaq*) հիմքերը գրվում են նույնական ծագմամբ՝ «1. հոսող ջրի բնական ձայնը, 2. աղմուկ, կոկոս» իմաստներով (տես H. BƏY HADİ, Arin: Türkçə etimoloji sözlük, II, Təbriz, 2010, էջ 2545), որ հավանական ընդհանրություններ ունի ալթայյան *saru- (-e ածանցումով)՝ մոնղ. *sar*, թյուրք. *sar*(ı-ı), կոր. *sürü* «վայրի թռչնի մի տեսակ», հավանաբար՝ «ջրալոր» բառի հետ, եւ որեւէ աղերս չի նշմարում շոռ || շուռ արմատի հետ (տես S. STAROSTIN, A. ДЬВО, О. МУДРАК, An etymological dictionary of Altaic languages, 2003, էջ 1217): Այդպես եւ շո[ռ]ն արմատին թյուրքերենում ձևով մոտ բառը արաբական փոխառություն է՝ *šaur*, որ ենթադրվում է «փետուր» բառից (տես İ. EYUBOĞLU, Türk dilinin etimoloji sözlüğü, II, ikinci bas., İstambul, 1988, էջ 631), բայց Նիշանյանի բառարանում հստակվում է ծագումը՝ արաբ. شاور (*šaur*) «հիմանալու, գիտակցելու, հասկանալու կարողություն» (<https://www.nisanyansozluk.com>): Աղբյուրներում *šur* (shur) արմատով համանուններից երկուսի

Ենթադրվում է, որ երկրորդ բաղադրիչը ուղիս «առատ հոսող ջուր, հեղեղատ»⁴⁴ բառի բարբառային տարբերակն է, որ Սյունիք-Արցախ բարբառախոսմբը պահպանել է օխ || օխնը տարբերակներով եւ «ջրամբար» իմաստով: Օտար աղբյուրներում այս բառին զուգահեռ եւ հնարավոր ձեւերն առանձնապես բացակայում են, եղածներն էլ ձեւով կամ իմաստով անհամատեղելի են, ուստի քննության ենթակա չեն: Ուղիս նշվում է ուրարտական ւլիւ «դուրս հոսել, հեղեղել» արմատից⁴⁵, հմմտ. նաեւ՝ ուրարտ. ււա- «գնալ, ընթանալ, հոսել, սահել»⁴⁶ < *lo-, սլիւ- < *ul- «վարել»⁴⁷: Մատենագրության մեջ ուղիս հանդիպում է ուլի տարբերակով, որն էլ ու > օ փոփոխության մեջ առկա է Սյունիք-Արցախում: Գրավոր տեղեկություններից հատանշվում է, որ ուղիս եւ բուղիս բառերը նույն հասկացության (հիմքով որպես բայանուն) կրող են. համեմատենք. «Զի պաշարեցին զիս ջախջախանք մահու, ուղիս անօրէնութեան տագնապեցուցին զիս» (Սղմ. Ժէ. 5)⁴⁸, «...որպէս արար զջրաբուղիսն եւ զջրմուղն...» (Դ. Թագ. Ի. 20)⁴⁹, «...Ջուր մանուածոյ ծիծաղ ծավալ, / Կարկաշահոս, ուղիսինանոս, / Ծայթինասէր, մանուածաւալ...»⁵⁰: Հր. Աճառյանը եւ Գր. Զահուկյանը նշում են բուղիս (< բուլիս) տարբերակի՝ ուշ շրջանից գործածությունը⁵¹: Զուգահեռաբար բերենք վաղ եւ ուշ շրջանի վկայություններ, քանի որ այս եւ վերոհիշյալ

ծագումը նշվում է պարսկական՝ 1. «աղբեջանական դասական մուղամներից մեկի անունը», 2. «խանդավառություն» (տե՛ս Azərbaycanca dilinin izahlı lüğət, cild 1, «Şərq-qərb» (այսուհետ՝ ADIL, 2006), Bağı, 2006, էջ 242–243), իսկ şor (shor) արմատով մյուս համանունների ծագումը չի նշվում՝ 1. «շօր, թթվաշօր», 2. «աղի, շատ աղի, աղաջուր, աղի պանիր», որոնք, հավանական է, հայերենից կամ պարսկերենից փոխառություններ են (տե՛ս ADIL, 2006, էջ 235–236), որ, ինչպես նկատեցինք, «աղի» իմաստով գտնում ենք հայերենի բարբառներում եւ իրանական լեզուներում:

⁴⁴ Այս բառից ձեւավորված է համարվում ձորոխ (Ջուրուխ) գետանունը (տե՛ս Ն. ՄԿՐՏՁՅԱՆ, Վ. ՍԱՀԱԿՅԱՆ, Տեղանունների համառոտ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 68):

⁴⁵ ՀՄԲ, էջ 748–749:

⁴⁶ Գր. Ղափանցյանը ulhulini ձեւից առանձնացնում է ւլի «ոռոգել, հոսեցնել», սրանից էլ՝ ւլիս «արշաւանք, поход»՝ արմատին ազգակից համարելով ուղիս «ջրի հոսանք, սելա, поток». «Իմաստի եւ թերեւս ծագման տեսակետից համեմատել խեթ. lahui «Քափում է ջուրը, եւ выливает» եւ lahha «արշավանք», թողած դեռ լրիս- բնաձայնական արմատը ջրի խուլ շարժվելու մասին» (այս մասին տե՛ս Գր. ՂԱՓԱՆՑՅԱՆ, Երկու բաղաձայն բառ-երեմեաններ, Ն. Մառի անվան կաթինետի աշխատություններ, №3, Երեւան, 1948, էջ 5, 211:

⁴⁷ Г. ДЖАУКЯН, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, с. 120.

⁴⁸ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի (այսուհետ՝ Համաբարբառ), Սբ. էջմիածին, 2012, էջ 1452:

⁴⁹ Անդ, էջ 1559:

⁵⁰ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Տաղեր եւ գանձեր (աշխ.՝ Ա. Քյոշկերյանի), Երեւան, 1981, էջ 254:

⁵¹ ՀՄԲ 1, 481 էջ, ՀՄԲ, էջ 138:

համեմատությունները կարող են օգտակար լինել բառի ստուգաբանական քննությանը (բնագրային տեքստերն անուղղակի տալիս են ուղիս եւ բռնիս բառերի իմաստային մեկնությունը). «...եւ որպէս արար զՅրաբռնիսն եւ զՅրմուղն...» (Դ. Թագ. Ի. 20)⁵², «Ամպ թեթեւ յերկրային ցանկութեանց սուրբ Կոյս եւ վառարան Աստուածային բոցոյն, որ ըզցաւոյն հայրաբռնիս անձրեւեցեր ի բանական երկիր, որով բնութեանս բուսան արդարութեան սուրբ բոյսք»⁵³, այլեւ՝ մըշտընջեմաբռնիս⁵⁴, «առատաբռնիս»⁵⁵, «աստուածաբռնիս առատահոս անձրեւօք»⁵⁶, «յորդաբռնիս»⁵⁷ եւ այլն: Այստեղից՝ բխել հասկացությունը՝ ուղիս «հոսող ջուր, ջրի հոսանք, հեղեղ», բռնիս «դուրս տալի, մեջից առաջ բերելը (ջրի, ծլի)»⁵⁸, որ հավանաբար հետագա շրջանում բառային տարբերակների ձեւավորումից ստացել են նաեւ իմաստային նրբերանգներ⁵⁹: Իմաստային քննությանը հաջորդում են բառի ծագման հետ կապված որոշ հարցեր: Ինչպես արդեն նշեցինք, ուղիս արմատի համար բերվում է ուրարտական *ulhu* նախածելը, որը տարբեր է բռնիս (< բռնիս)-ի հիմքից՝ *bhukh-՝ *b(h)(e)u-: Սակայն նկատում ենք, որ այս երկու արմատներն աղերսներ ունեն հնդեւրոպերենում՝ *uelk- (*uelg-)⁶⁰ «1. թաց, խոնավ, անձրեւոտ, անձրեւ, ջուր, տամուկ» հիմքի հետ՝ *uelk- «ջրհեղեղ» եւ այլն, հմմտ.՝ լատվ. *valks* «հոսող ջուր, խոնավ տեղ», ռուս. *Wolga* (Վոլգա գետ) եւ այլն: Թերեւս խնդրահարույց է բռնիս-ը, որ կարող է ուրարտական ազդեցություն կրած լինի, եթե հաշվի չառնենք իրանական լեզուներում վկայվող *w>b տեղաշարժերը եւ դրանցով կազմված ձեւերի հնարավոր ներթափանցումները, որ այս ուսումնասիրության սահմանում չեն:

Ստուգաբանական փորձեր

Շոտմոխի || Շոտմոխյ տեղանվան ընդհանուր տեղեկությունների, տեղանքի բնական հատկանիշների եւ տեղանվան տարբերակների

⁵² Համաբարբառ, էջ 1559:

⁵³ Գիրք շնորհօք (Շարակնոց) (այսուհետ՝ Շարակնոց, 1698), Յամսդէլօտամ, 1698, էջ 7:

⁵⁴ Անդ, էջ 17:

⁵⁵ Անդ, էջ 22:

⁵⁶ Անդ, էջ 380:

⁵⁷ Անդ, էջ 409:

⁵⁸ ՀԱԲ, I, 451:

⁵⁹ Իմաստային նրբերանգներից առանձնացնում ենք այն, որ գրաբարի բառարանների մեծ մասը բռնիս բառին վերագրում է միայն «պտղի բողբոջը կամ ազոխը, որ երեւում է ծաղիկի փակվելուց հետո» իմաստը:

⁶⁰ Հնդեւրոպական լեզուներում վկայվող ձեւերը (տե՛ս J. Pokorny, էջ 1145–1146):

համադրմամբ թերեւս հնարավոր է դառնում կատարել բառաքննություն: Վերջինիս արդյունքում էլ ըստ էության առանձնացվում են Շուռնուխ[ի] բառին ձեւիմաստային հատկանիշներով մոտ կամ նման միավոր-կաղապարները, բառի բաղադրիչների՝ հայերեն եւ օտար աղբյուրներում վկայվող զուգահեռները, որոնց արդյունքում էլ տեղանվան ստուգաբանության փորձ է արվում:

Ստուգաբանական կանխավարկածներ: Ա. Շոռնոխյ բառը կազմված է շոռ[ր] «աղի, շոր» + ն (միավանկ բառերի վերջնահանգ կամ —ին ածանցի մնացուկ՝ շոր-ին (հմմտ.՝ Շորին döör) եւ ուլիս (օխ) «ջուր, առատ հոսող ջուր, հեղեղատ, ջրամբար» բառերից՝ Շոռնօխ || Շո[ու]ննօ[ու]խ: Տեղանվան ընդհանուր նշանակությունն է՝ աղի, շոր ջուր, առու կամ ջրամբար:

Ձայնավորական փոփոխությունները, անշուշտ, փոխազդեցության հետեւանք են, որով պայմանավորված՝ առաջ են եկել տեղանվան բարբառային տարբերակները: Այսինքն՝ Շոռնօխ[ոյ]-ը Սյունիք-Արցախ բարբառամբում ստեղծված բարբառային հատկանունն է՝ > շո[ու]ննուխ[ի], ինչպես այս տարածքի շատ անուններ, որ հիշատակված են Ս. Օրբելյանի աշխատության մեջ:

Բ. Առաջին արմատը կարող էր լինել շրո բնաձայնությունից ձեւավորված բաղադրիչ, որ լայն տարածում ունի Սյունիք-Արցախ բարբառամբում, ինչպես նշվեց վերելում: Շրո արմատից հետո ընկած ն-ն, հնարավոր է, -ան ածանցից է՝ շրո-ան (հմմտ. Գորիսում՝ Շռան թաղամաս, Քարահունջում՝ վայր-ձորանուն եւ այլն), որ հետագայում դարձել է շոռ[ր] || շուռ[ր]՝ շրոան > շուռն՝ շեշտի ազդեցությամբ ա-ի սղումով՝ ա > 0, վերջադիր (ուխ || օխ) օ կամ ու հնչյունի փոխազդեցությամբ՝ ը-ն դարձել է օ կամ ու՝ Շրո[ր]+ն+օխ > Շոռ[ր]+ն+օխ || > Շրո[ր]+ն+ուխ > Շուռ[ր]+ն+ուխ): Բառակազմական այս կաղապարավորումից կձեւավորվի «քչքչան առու, հեղեղատ, ջրամբար» նշանակությամբ տեղանուն՝ նկատի ունենալով գյուղի չորսբոլորը սփռված հեղեղատները, անտառների բնական աղբյուրները, գյուղ մտնող բնական ջրերից գոյացած աղբյուրները, որ հիմա շատ բարակ են:

Պարզաբանում: Բառաքննական այս երկու տարբերակներում խնդրահարույց է Ս. Օրբելյանի հիշատակած (Շոռնոխյ) վերջադիր —ոյ-ը: Ուլիս || ուխ (օխ || օխնը) գրաբարում ենթարկվել է ի հոլովման⁶¹: Եթե

⁶¹ ՄԿՐՏԻԶ ՎՐԳ. ԱԻԳԵՐԵԱՆ, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Սբ. Ղազար, 1846, էջ 615:

տեղանունը ձեւավորվել է ի վերջադիրով (ենթադրում ենք, որ հոլովական ցուցիչ է կամ դրանից բխած ածանց⁶²՝ տեղանվան մեջ անցած -ու(ու>0) իսկ կամ ուղիւ-ի հետ՝ ուի-ի՝ Շոռ+ն+օխ+ի, ապա այն պետք է վկայվեր Շոռ-նօխի (ինչպես որ է) եւ ոչ թե Շոռնօխոյ⁶³։ Եթե ուշադրություն դարձնենք Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ ընդգրկված տեղանուններին, ապա կնկատենք, որ Տաթեւին հարկատու գյուղերի ցուցակում եւ բուն շարադրանքում դրանք որոշակի փոփոխություններ են հիշատակված։ Երկի բովանդակության մեջ խոսակցական ծագմամբ տեղանունների հիմնական ձեւը պահպանված է։ Փորձենք համեմատել հենց Շոռնօխի շրջակայքը նկարագրող մի հատվածում ընդգրկված տեղանուններն ու ցուցակի անունները, որոնք հեղինակը հավանաբար վկայում է այնպես, ինչպես ինքն է քաղել. բովանդակությունից՝ «Սատանայի կամիջի կապն, ընդ որ յոյժ դժուարաւ ձին թամբով անցանէր, այժմ այնպէս քայքայել տուաւ եւ ետ նորոգել որ ձիւք բեռամբ անցանեն. Շնհէրու եւ Հալիձորու միջի հուրի կապն, այն եւս որ կարի դժուարին էր, ետ ուղղել, Նաւախի այգոյ հնձանն, Ղօշանցոյ այգւոյ հնձանն ի հիմանէ ետ նորոգել. Շուա-նիձորու կարասատունն, եւ Մեղրու երկոքին այգիքն նորոգապէս ետ յօ-րինել բազում խարճագնացիւք եւ աշխատակրութեամբ»⁶⁴, հին ցուցակի տեղանուններից՝ Շնոյ հետք, Հալէ եւ այլն։ Օրբելյանի երկի՝ 1861 թ. Փա-րիզի հրատարակության մեջ այս ցուցակը տողատակում մեկնաբանվել է⁶⁵։ Կարծում ենք՝ հին ցուցակում բարբառային կազմությամբ բաղադրյալ տեղանունը ենթարկվել է ո(յ) պարզ հոլովման, քանի որ՝ 1. «առհասարակ ո հոլովիչով հոլովում են այն բառերը, որոնք վերջաւորում են ու-ով եւ յաջորդող բաղաձայնով կամ բաղաձայններով»⁶⁶, ինչպես՝ անդունդ-անդնդոյ, գլուխ-գլխոյ եւ այլն։ 2. Հայտնի չէ, թե թ. դարից առաջ տեղանունը ինչ վերջավորություն է ունեցել, բայց Շոռնօխի || Շոռնօխի (երկուսն էլ օտար ազդեցությունից զերծ տարբերակներ են)՝ վերջադիր ի-ով տարբերակն արտացոլում է Շոռնօխոյ բառաձեւը։ 3. Չենք բացառում, որ տեղանունը թ. դարից առաջ եւ հետո կարող էր լինել ի վերջադիրով, որ հետագա հիշատակություններում հեղինակային մոտեցմամբ՝ քերականական

⁶² Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 806։

⁶³ Ա. ԱՐԲԷԼՅԱՆ, Գրաբարի ձեռնարկ (այսուհետ՝ Ա. ԱՐԲԷԼՅԱՆ, 1976), Երեւան, 1976, էջ 41։

⁶⁴ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, 1859, էջ 292։

⁶⁵ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, 1861, էջ 375։

⁶⁶ Ա. ԱՐԲԷԼՅԱՆ, 1976, էջ 44։

նմանություն հանգամանքով, գրական տեսք ստանալ՝ ըստ վերոնշյալ կանոնի՝ Շոտնոխյ (բարբառային ծագմամբ լինելը հաստատվում է շօր բարբառային բառով եւ ուխ > օխ տարբերակով), որի բաղադրիչները վերլուծելի չեն (չնայած դա առաջնային պայման չէ)։ Եւ այս երեք դիտարկումներից տրամաբանվում է Ստեփանոս Օրբելյանի կողմից բառի՝ Շոտնոխյ տարբերակի վավերագրումը, որը հենց ԺԳ.—ԺԴ. դդ. (հաշվի առնենք նաեւ գրաբար — միջին հայերեն անցումը) եղել է Շոտնոխի կամ Շոտնոխի (ինչպես որ հիմա են անվանում, չնայած պետական, վարչական փաստաթղթերում նշվում է Շոտնուխ⁶⁷)։ Հետագայում գրական երկում հիմնականում ընդօրինակել են Օրբելյանին՝ Շոտնոխյ⁶⁸, Շոտնոխ⁶⁹, Շոտնոխյ (Շոտնուխ)⁷⁰։

Գ. Ենթադրվում է նաեւ, որ Շոտնոխ[ի] բառի առաջին բաղադրիչը բնիկ հայերեն շուրջ բառի բարբառային տարբերակն է՝ շոն կամ շոբ (մատենագրության մեջ նաեւ՝ ժոն)՝ շուր-ջ⁷¹ շոն կալ, շոն տալ, իսկ երկրորդ բաղադրիչը -օխ(ոյ), անշուշտ բարբառային օխ || օխմը «ջրամբար» բառից՝ «շրջված, փակված, ջրագուրկ» աղբյուր նշանակությամբ տեղանուն։ Այս դեպքում բաղադրիչների մեջ գտնվող ն հնչյունի առկայությունն է կասկածելի, քանի որ շոն || շոն արմատն առանձին գործածություն չունի, հանդես է գալիս բայական հարադրություններում։ Կարծում ենք՝ քիչ հավանական է շուրջն «շուրջ բոլոր» իմաստով ձեւից ջ-ի անկումով կաղապարի առկայությունը՝ շուրջն ուղիս > շոռ[ր] (ջ)ն+օ[ու]խ։

Դ. Նկատի ունենալով Շոտնոխյ տեղանվան արտասանական յուրահատկությունը, վերջին բաղադրիչի ուրարտական աղբյուրները՝ չենք կարող ստուգաբանական տեսակետները սահմանափակել լոկ բարբառային, մատենագրական եւ օտար աղբյուրների տվյալներով։ Ինչպես գիտենք, տարածաշրջանի շատ տեղանուններ հիշատակված են համարվում ուրարտական արձանագրություններում՝ Ծղուկ, Գոբիս, Գեղարփունի⁷² եւ այլն։ Փորձենք Շոտնոխ[ի-ոյ] տեղանվան հիմքերը զուգահեռել նաեւ

⁶⁷ Օրինակ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=109805>։

⁶⁸ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական, Սբ. Ղազար — Վենետիկ, 1893, էջ 274։

⁶⁹ ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 401։

⁷⁰ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Երեւան, 1966, էջ 132։

⁷¹ Գր. ՂԱՓԱՆՅԱՆ, «Հնաբանական» մի քանի մնացորդներ հայերենում, ստուգաբանություններ (այսուհետ՝ Գր. ՂԱՓԱՆՅԱՆ, Հնաբանական), Երեւան, 1927, էջ 3—4։

⁷² Հ. ԿԱՐԱԳՈՋԵԱՆ, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում) (այսուհետ՝ Հ. ԿԱՐԱԳՈՋԵԱՆ, 1998), Երեւան, 1998, էջ 15, 92, 135 եւ այլն։

ուրարտական շրջանից վկայվող ձեւերին: Այս նախաձեռնության համար հիմք են հանդիսացել ուրարտական արձանագրությունների ընթերցման որոշ կանոնական ձեւեր, որ արտահայտություն են գտել տեղանվան մեջ, ինչպես՝ *n* հնչյունի համար հիմնականում գործածվող ու նշան-սեպագիրը՝ շոռնոխ || շուռնուխ, եւ առավել եւս՝ *իա* > *ի* փոփոխությունը՝ շոռնոխ (շուռնուխ) < շոռնոխիա, հմմտ.՝ գուրիա > գուրի(ս)⁷³՝ «նուազագոյն հաշուամներով 2740-ամեայ գրաւոր յիշատակութեամբ վկայուած մի քաղաք, որի շուրջը տարածված էր հնագոյն Գուրիա երկիրը»⁷⁴:

Եթե փորձենք վերականգնել Շոռնոխ տարբերակի ուրարտական նախատիպը, պետք է որ ստանանք առաջին բաղադրիչի համար *šur-ri* || *šur* եւ երկրորդ բաղադրիչի համար *n-ulhi* || *n-ul-i* մոտ կամ նման կաղապարները: Նախ նշենք, որ այս կաղապարավորմամբ կամ հնչյունակազմով տեղանուն չի հանդիպում Սյունիքին վերաբերող սեպագրերում: Շոռնոխ կամ Շոռնուխ կազմության վերջադիր ուլի-նի-ն, սակայն, ըստ էության զուգահեռվում է ուրարտական արձանագրությունների *-hu-ne'*, *-he*, *-he-e* վերջադրութեամբ ձեւերին՝ էթուլի⁷⁵, Ուտեուլի⁷⁶, Դիաուլի (Դիաուլիական)⁷⁷ եւ այլն: Առավել ուշագրավ է Ռուսա Ա.-ի արձանագրության (Ծովինարի)⁷⁸ չորրորդ տողի երեք տեղանուններում առկա հնչյունախմբի համապատասխանությունը քննվող տեղանվան մեջ՝ Շոռն-նի[ս] || Շուռնուլ[ս], ընդգծված բաղադրիչների հետ, որ կարող է լինել «աշխարհագրական վայր՝ գետ, ձոր, անտառ, դաշտ եւ այլն, այլեւ ընդհանրապես՝ տեղ, բնակավայր երկիր, բերդ» հասկացութեամբ բառ, նշված իմաստներով ածանց կամ «պատկանելության ցուցիչ», ինչպես որ կարծում են⁷⁹, համեմատել՝ ^{KUR}*A-da-hu-ne'* (Ադախու երկիր) ^{KUR}*U'-e-le-ku-he* (վելիքուխե երկիր), ^{KUR}*Lu-e-ru-he-e* (Լուերուխե երկիր)⁸⁰: Այս եւ ընդհանրապես նման

⁷³ Գորիս տեղանվան ուրարտական առնչությունների մասին կարելի է տեսնել՝ Մ. Քոնոնց, «Գորիս» տեղանվան ստուգաբանություն, Գիտական հոգվածների ժողովածու (Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ), Երեւան, 2016, էջ 378–396:

⁷⁴ Հ. ԿԱՐԱԳՈՋԵԱՆ, 1998, էջ 135:

⁷⁵ Ս. ԱՅՎԱԶՅԱՆ, Ուրարտերեն-հայերեն բառապաշար եւ պատմահամեմատական քերականություն, (այսուհետ՝ Ս. ԱՅՎԱԶՅԱՆ, 2008), Երեւան, 2008, էջ 173:

⁷⁶ Անդ, էջ 176:

⁷⁷ Անդ, էջ 177:

⁷⁸ Տէս Գ. Меликишвили, Урартские клинообразные надписи, Вестник древней истории, №4, 1953 (надписи №№155–370), Надписи Руса I, сына Сардури. 266:

⁷⁹ Տէս Հ. ԿԱՐԱԳՈՋԵԱՆ, 1998, էջ 126:

⁸⁰ Տէս Գ. Меликишвили, Урартские клинообразные надписи (այսուհետեւ՝ Գ. Меликишвили, 1960), Москва, 1960, էջ 329:

վերջադրությամբ ուրարտական բառերի վերծանության մեջ, սակայն, չի հանդիպում նշված նշանակությունը, առանձնապես «երկիր, քաղաք» եւ մոտ իմաստով *-hinili -hini* վերջադրությունները (^{KUR}Rusa-hinili, ^{KUR}Etiu-hini) ուրարտագիտական աշխատանքներում հանդիպում են *u-hi-*, *-hi-*⁸¹ տառադարձումով, իսկ նախանշած ուղիս արմատը սովորաբար ընդունում է *ul* հիմքակազմիչը: Եթե ընդունենք, որ Շոռնոխո բառի վերջնաբաղադրիչը (ն)ուղիս *ul* «գնալ, ուղեւորվել»⁸², հմմտ.՝ ուղի «ուղղություն, ճանապարհ»⁸³ բառը չէ, այլ *u-hi-*, *-hi-* ուրարտական մնացուկ, ապա հավանաբար կունենանք այլ կամ առնչակից նշանակությամբ բառ-ձեւույթ, որ կարող է պարզվել միայն առաջին բաղադրիչի քննությունից հետո: Այս երկու հիմքերին զուգահեռ՝ նաեւ *naḥa* «գալ, ժամանել» || *naḥu* «հետը տանել, կրել, հետը վերցնել»⁸⁴, *ḫur*(=*išhe*) «ոռոգման ինչ-որ կառույց» (°), «ջուր կուտակելու հոր/ավազան» (ըստ Ս. Այվազյանի) կաղապարները: Արդյունքում, Շոռնոխո-ի բառի վերջնաբաղադրիչի համար կունենանք չորս հնարավոր (ուրարտական) կաղապար՝ 1. *u-hi-* տեղադրական նշանակությամբ հիմնական, ածանցական կամ քերականական ձեւույթ՝ «աշխարհագրական վայր՝ գետ, ձոր, անտառ, դաշտ» եւ այլն, այլեւ ընդհանարապես՝ «տեղ, բնակավայր երկիր, բերդ» հասկացությամբ, 2. *ul-* «գնալ, ուղեւորվել, հոսել, ջրի հոսք, սողք», 3. *naḥa* || *naḥu* որպես ընթացական բայ՝ «գալ, կրել», 4. *ḫur* «ավազան» ընդհանուր իմաստներով:

Անդրադառնանք քննվող նյութի առաջին բաղադրիչին՝ շոռ || շոռ-ն բառին (այլեւ հնարավոր հնչունափոխական եւ հավելական ձեւերին, տարբերակներին, օրինակ՝ *unr*, *qon*, շոռն եւ այլն, որ կարող են ունենալ բաղաձայնական հերթագայություններ, որ առավելապես բնորոշ են

⁸¹ Ուրարտագիտական աշխատանքներում հիմնականում արմատին հաջորդող *i* (*e+i*) վերաբերյալ տարբեր մեկնություններ կան (“*Uṣṣerqini-e+i KUR-eban-I*” (այս մասին կարելի է տեսնել՝ И. Мещанинов, Язык ванской клинописи, II, Структура речи, Ленинград, 1935, էջ 147, 267), եւ մենք խորամուխ չենք լինի այդ հարցում, բայց ընդհանրապես մեկ ընդհանուր նշանակալի միավոր չի տրվում *u-hi-* (*-hi-*) կաղապարին (հնչունական այս խմբի գատումն ունի Մելիքիշվիլին՝ մի քանի նշանակությամբ ծանրաբեռնված կաղապարների շարքում (տես Г. Меликишвили, 1960, էջ 35), որ, կարծում ենք, որոշակի հարցեր է պարունակում (օրինակ՝ Ս. Այվազյանը *iḥ*, *uḥ* հնչունակապակցությունն առավել բնորոշ է համարում ասուրերենի համար (տես Ս. Ազվազյան, Ուրարտերեն, Քերականություն եւ հիմնական բառապաշար (այսուհետ՝ Ս. Ազվազյան, Ուրարտերեն) Երեւան, 2013, էջ 14, աղյուսակ՝ էջ 118):

⁸² Տես И. Дьяконов, Урартские письма и документы, Москва—Ленинград, 1963, էջ 92:

⁸³ Գր. Ղափազյան, Ուրարտուի պատմությունը, Երեւան, 1940, էջ 38:

⁸⁴ Տես Г. Меликишвили, Урартский язык, Москва, 1964, էջ 70:

ասուրերենին (*s/z/š, s/š* եւ այլն⁸⁵, բայց կարող են արտացոլում ունենալ հայերենում եւ նրա տարբերակներում⁸⁶): Այս հիմքով երկու համանուն ձեւեր կան՝ ^{GIŠ}šur(*g*)-*e*(*ni*) «զենք» (*šure* «զենք, զինուժ, աշխարհագոր, ժողովուրդ»⁸⁷), ^{KUR}šur *i-e*⁸⁸ «տիեզերք, աշխարհ, թագավորություն»⁸⁹: Արդյոք ուրարտերենում *šur i-e* չի՞ կարող ըմբռնվել նաեւ «երկիր, կալվածք, հող»⁹⁰: Այս առումով ուշագրավ է Ս. Այվազյանի՝ ուրարտական կոթողային արձանագրություններից առանձնացրած *KUR* սեպանշանի մեկնությունը՝ «*KUR* = *ebani* «երկիր», նաեւ երկրների ցուցիչ, *ŠADU* = *babane* «լեռ», նաեւ լեռնանունների ցուցիչ, (*KUR.KUR*^{MEŠ}) = *šurele* «աշխարհ, կայսրություն»⁹¹:

Այսպես՝ 1. ^{KUR}šur- կաղապարը (որպես հատկանուն կամ անուն) ձեւիմաստային հատկանիշներով կարող է աղերսվել քննվող բառի առաջին՝ շոռ || շոռ տարբերակներին, «շոր, սպիտակած հող» իմաստով: Երրորդ բաղադրիչի նշանակությունը բխեցրել ենք ուղիւ-ից «շուր, ջրի հետ կապված մի անուն» հասկացությամբ, որի հավանական զուգահեռն է՝ *hUR* «ավազան» (զուգահեռվում է հին հայ. «խոր, խորունկ» բառին եւ համանմանվում *h*u- «խոր տեղ, փոս» հիմքին)՝ մոտավոր այսպիսի բաղադրությամբ՝ *šur-hu(r)*, հետագա զարգացմամբ եւ փոփոխություններով՝ < *šur*-(*n*-*u*)-*h*(*u*>*i* (0 կամ *r* > 0) > *šur-nu-hi*: 2. *Šur* (*i-e*) «աշխարհ» իմաստով բառի եւ *naḥa* «գալ, կրել» համադրումից կոդյանան հավանական նշանակությամբ «աշխարհակալ, նոր աշխարհ, աշխարհ եկած» հասկացությունները՝

⁸⁵ Հնչունական փոփոխությունների մասին տես Ս. ԱՅՎԱԶՅԱՆ, 2008, էջ 18–26:

⁸⁶ Քննությունը բուն նպատակից կարող է շեղվել, եթե փորձենք քննել հնչունափոխական եւ իմաստաբանական բոլոր ձեւերը, ինչպես, օրինակ, շ-խ հնաբանական շերտերը՝ շոռնում || խոռնում, շիթեմ || խիթեմ, շեղ || խեղ (Ղափանցյան, Հնաբանական, էջ 13), շերդ (շարդ) «ճեղքել, կտրել» ձեւերից լծորդված քննվող բառին մոտ տարբերակները՝ շերա «ջարդած փայտ, ծղան», շառա-եմ «ճեղքուտել», շեշա «սուր, կտրուկ», շարդ-եմ «ջարդել»՝ *šard* բնից (Գր. ՂԱՓԱՆՅԱՆ, Հնաբանական, էջ 9–10) եւ այլն: Մենք բերեցինք միայն բառի քննությանը համադրվող զափանցյանական մի քանի միավորներ, բայց դրանք շատ են եւ շարունակում են հարստանալ ուրարտագիտության զարգացմանը համընթաց: Ամեն դեպքում մեզ հասանելի գրականությունից առանձնացրել ենք հնարավոր բառամիավորները (կաղապարները), որ կարող են ուղղորդիչ եւ օգտակար լինել Շոռնոխի բառի ծագումը կամ ծագման տեսությունը ամբողջացնելու համար:

⁸⁷ И. Дьяконов, Урартские письма и документы, Москва—Ленинград, 1963, էջ 91.

⁸⁸ Հմմտ.՝ *šuri* (ցեղանուն):

⁸⁹ Г. МЕЛИКИШВИЛИ, Урартский язык, с. 71. (Սույն արմատի՝ Մելիքիշվիլու վերապահությամբ դնելը հետագայում հաստատել են տարբեր հեղինակներ (բառը եւ նրա հնդեւրոպական աղբյուրները տես Ս. ԱՅՎԱԶՅԱՆ, 2008, էջ 51):

⁹⁰ Q(i)ra արմատի հայերենում ունեցած արտացոլումներում նշվում են «երկիր, գետին, հող» իմաստները (Ս. Այվազյան, Ուրարտերեն, էջ 101):

⁹¹ Ս. ԱՅՎԱԶՅԱՆ, Ուրարտերեն, էջ 119:

Šur-naħa > Šur-nuħ (-a-i) (փոխազդեցական հնչյունափոխություն) կաղապարավորումը: 3. Šur- (հետագայում հայերենի –ին ածանցի կցմամբ) եւ Ս «հեղեղատ, առվակ, ջուր» (հմմտ.՝ «pile [փիլ կամ քիլ] գ. «ջրանցք», հեղ «ջրի հոսք» < *pel- «հոսել» կամ պեղ-եմ «փորել, պեղել»)⁹² կաղապարների համադրությամբ պետք է որ ձեւավորվի «ջրերի աշխարհ, հեղեղուտ, խոնավ վայր» տեղանունը՝ šur-(-(i)n)-ul(-i): 4. Šure «զենք» իմաստի ածանցումից՝ «սրատել, կտրել», եւ Ս «հեղեղատ, առվակ, ջուր» ձեւիմաստային բաղադրիչներից կունենանք «կտրված, հատված ջուր, աղբյուր»:

Այսպես կարող են ձեւավորվել տեղանվանք մոտ հասկացություններ՝ նկատի առնելով էւ Շոռնուխի տեղանքը, էւ կազմության բաղադրիչները, էւ հետագա հնարավոր փոփոխությունները: Այսուհանդերձ, կարծում ենք, որ ուրարտագետները կանեն առաջադրված տեսակետներին վերաբերող դիտողություններ եւ շտկումներ, բայց եւ հստակ դիրքորոշում՝ տեղանվան ծագմանը վերաբերող, դժվար է հայտնել, քանի որ գործ ունենք ուրարտական արձանագրություններում չվկայված տեղանվան հետ, որը, անշուշտ, լինելով բավական հին՝ բազմապիսի փոփոխությունների է ենթարկվել ոչ միայն հայերենի զարգացման տարբեր փուլերում եւ հայերենի բարբառային տարբերակներում, այլեւ, ցավոք, հանդիպել է տարշփումների եւ հնարավոր աղճատումների:

Այսպիսով՝ Շոռնուխ || Շուռնուխ տեղանվան ծագման համար առաջարկված է ստուգաբանական չորս վարկած, որոնցից վերջինը վերաբերում է տեղանվան ուրարտական աղբյուրներին՝ հնդեւրոպական զուգահեռներով, եւ իր հերթին բաղկացած է կանխավարկածներից, որոնք կազմում են առաջին երեքի ձեւավորման միջանկյան ենթաշրջան (հնդեւրոպական > ուրարտական (վերականգնված ձեւույթներով) > գրաբար եւ բարբառ (գրավոր եւ բանավոր վկայություններով): Տեղանվան ծագմանը վերաբերող բոլոր չորս տեսակետների համար նյութ են հանդիսացել հայկական տվյալները, ինչն էլ հիմք է տալիս հաստատելու, որ Շոռնուխ || Շուռնուխ տեղանունը ձեւավորվել է հայկական միջավայրում, անվան ծագումնաբանական հենմերը հիմնականում բնիկ են, կրկնում են ընդհանուր հայկական տեղանունների բառակազմական միջոցները, հնչյունական եւ իմաստաբանական առումով օտարաբանություններ չեն նկատվում: Մեր կարծիքով՝ այդ բոլոր տեսակետներից հիմնավոր է առաջինը՝ Շոռնուխ || Շո[ու]ռնո[ու]խ «շոր, ջուր, առու կամ ջրամբար» իմաստներով, որ ուրարտական շրջանի

⁹² Անդ, էջ 100:

*šur-nu-(ul)hi*⁹³ «հատված կամ կտրված, շրջված ջուր», ձևիմաստային ածմամբ Շոռ(ն)օխ «շոր, աղի, կտրված» եւ «ջուր» կաղապարի արտացոլումն է Սյունիք-Արցախ բարբառային տարածքում, մատենագրության մեջ եւ այսօր: Զրի հետ կապված նշանակությունը համոզիչ է նաեւ տարածքի անտառապատ լեռների եւ ձորերի մեջ թաքնված ջրային հարուստ պաշարների, ստորերկրյա քարանձավների ու խորհրդավոր լճակների, խոնավության առկայությամբ, որոնց մասին բազմաթիվ զրույցներ են պահպանվել տեղավայրին հարակից բնակչության շրջանում:

Փաստորեն՝ ուրարտական շերտի վկայությունները հաջորդում են հ.-ե. հիմքերով կազմված ձևերին՝ *k'o-ro- (թերեւս պետք է կարծել, որ ուրարտերենի *šur* հ.-ե. նախատիպի համար պետք է վերականգնել ոչ թե *(s)ker-, այլ *k'o-ro- > *k'ō- «սուր», այլեւ՝ «սորել, սուրալ, հոսել» տարբերակը) եւ *ul* «գնալ, ուղեւորվել» (հ.-ե. *ul < ulhu): Հնդեւրոպական նախաձևերը պետք է համարել արժանահավատ, քանի որ առնչություն կա Ք. ա. Բ. հազարամյակի սկզբից գոյություն ունեցող բնակավայրի հետ: Շոռնոխ տեղանունը, ինչպես նկատում ենք, անցել է հայերենի զարգացման բոլոր շերտերով՝ նախահայերեն՝ *k'o-ro- *uelk- (ներառյալ ուրարտական շրջան՝ *šur-nu-(ul)hi*) գրաբար՝ Շոռնոխոյ, աշխարհաբար՝ Շոռնոխ, Սյունիք-Արցախ բարբառախումբ՝ Շոռնոխ[ի] || Շոռնոխ[ի]՝ սկզբնական «հոսող ջուր, հոսող ջրի վայր, խոնավ տարածք» ընդհանուր նշանակությամբ, ձևիմաստային փոփոխություններ կրել, մասամբ մթազնել են ծագմանը վերագրվող տարրերը (ընդգծված են ուրարտական շերտի ազդեցությունները, ապա՝ բարբառային), բայցեւայնպես պահպանել է նախաձևի արտաքին եւ բովանդակային հիմնական հատկանիշները, որոնք էլ թույլ են տալիս ենթադրելու, որ այն Հայոց աշխարհի ամենահին տեղանուններից մեկն է՝ ստեղծված զուտ հայկական կյանքում եւ գոյատեւած մինչեւ ԻԱ. դարի 20-ական թվականները:

РЕЗЮМЕ

Вокруг происхождения топонима Шорнох/Шурнух образовались четыре этимологические версии, последняя из которых относится к урартским узлам топонима. Исследование велось сравнительно-историческим методом.

⁹³ Առանձին եւ նեղ մասնագիտական քննություն է պահանջում այն հարցը, թե արդյոք գյուղանունը կամ տարածքի անունը կարող էր ընդհանրություններ ունենալ KURA-da-hu-ne' (Ագախու երկիր) KURU'-e-le-ku-ye (վելիքուխ երկիր), KURLu-e-ru-ye-e (Լուերուխ երկիր) տեղանունների ձևակազմական շարքում:

ՀՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1921—1936 ԹԹ.



ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱ Բ. ՕՐՈՔ



Shornokhoy

Сопоставительное исследование армянских и иностранных слов дает основание утверждать, что топоним Шорнохой/Шурнухи образовался в армянской среде, этимологические основы названия в основном коренные, повторяют словообразовательные методы общих армянских топонимов, в звуковом и семантическом выражении не наблюдаются варваризмы. Топоним Шурнух пронесся по всем слоям развития армянского языка: древнеармянский - **k'o-ro*-и **uelk*- (включая урартский период: *šur-nu-(ul)hi*) грабар (древнеармянский) Шорнохой, ашхарабар (современный армянский язык) *Шурнух*, диалектная группа Сюник- [*u*] || *Шорнох* [*u*], с первичным значением «текучая вода, место текущей воды, влажное место». Связанное с водой значение убедительно также наличием спрятанных в лесных горах и ущельях территории богатых водных ресурсов, подземных пещер и таинственных озер. Слово Шорнох в письменном виде встречается, начиная с IX века (Шорнохой), место до наших дней было в основном населено армянами.

S U M M A R Y

Four etymological versions were formed around the origin of the Shornokh/Shurnukh toponym; the latter refers to the Urartian nodes of the toponym. The research was conducted using a comparative historical method. A comparative study of Armenian and foreign words gives grounds to assert that the toponym Shornokhoy / Shurnukhi was formed in the Armenian environment, the etymological bases of the name are mostly indigenous, they repeat the word-formation methods of common Armenian toponyms, and phonetically and semantically there are no idioms.

The toponym Shurnukh has passed through all the stages of the development of the Armenian language: Old Armenian language - **k'o-ro*- and **uelk*- (including the Urartian period: *šur-nu-(ul)hi*); Classical Armenian language – *Shornokhoy*; modern Armenian language – Shurnukh; Armenian dialect group of Syunik-Artsakh – *Shurnukh* [*i*] || *Shornokh* [*i*], with the original meaning “running water, place of running water, damp area”. The water-related significance is also convincing by the presence of areas of rich water resources, underground caves and mysterious lakes hidden in the forested mountains and gorges. The word *Shornokh* has been found in writing since the 9th century (*Shornokhoy*), the place until now has been mainly inhabited by the Armenians.

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր,

բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՉ

«Ագաթանգեղայ Պատմութեան» հունարեն նախօրինակը
և Հովհան Ոսկերեւանը

Մեզ հասած «Ագաթանգեղայ Պատմութիւնը» գոյություն ունի դեռեւս Ե. դ. 30-ական թվականներից: Իզուր չէ, որ այդ մասին վկայություններ ենք գիտում Կորյունի, Եղիշեի, Բուզանդի եւ Խորենացու բնագրային քաղվածքները: Բացի այդ, ըստ Դազար Փարպեցու նկարագրության՝ Ե. դ. Ագաթանգեղոսն ուներ այն նույն բովանդակային կազմը, ինչ ունի այսօր: Բայց դա չի նշանակում, որ հայերեն մայր բնագիրը Ե. դարից հետո փոփոխման չի ենթարկվել: Օրինակ՝ ուշ խմբագրական միջամտություն պետք է համարել Ագաթանգեղոսի վերջում հավելված «հավատո հանգանակը», որն սկսվածքով հանդերձ («Այս են հաւատք ճշմարիտ») կրկնում է «վարդապետության» 362, 363, 366, 385 («Հաւատք ճշմարիտ այս են») եւ այլ պարբերություններ¹: Երեւում է, որ այդ հավելված-հանգանակը դավանաբանական վեճերի սրացումների թելադրանքով ստեղծված մի յուրահատուկ եզրակացություն է՝ բխեցված Ագաթանգեղոսի վարդապետությունից՝ հավանաբար Ե. դ. վերջում կամ Զ. դ. սկզբներին: Իհարկե, իր դավանաբանական խնդրառու եւ հրատապ բնույթի պատճառով «Ագաթանգեղայ Պատմութիւնը» չէր կարող չվերանայվել, չխմբագրվել, բայց հիմնական վարդապետական ու պատմական մասերով մնացել է նույնը: Դրա համար էլ այսօր մեզ հասած Ագաթանգեղոսը, լինելով հանդերձ Է. դ. Կոմիտաս կաթողիկոսի օրոք ստեղծված խմբագրություն, միաժամանակ իրավամբ համարվում է Ե. դ. գրվածք: Այդ գրվածքը կյանքի է

¹ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 472—474: Խմբագրաբար փոփոխված մի քանի բնագրային մանր տեղիներ են ի հայտ եկել Ագաթանգեղոսի եւ «Հոփսիմյան վկայաբանության» վրացերեն թարգմանության համեմատումից: Տե՛ս Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երեւան, 1982, էջ 21—25, որտեղ հեղինակն արձանագրել է փոփոխումներ հայերեն բնագրի №№142, 162, 189, 192, 202, 206, 255 պարբերություններում:

կոչվել սեփական ժողովրդի դարձի, մկրտության եւ Եկեղեցու հիմնադրման սրբազան պատմությունը գրավոր ունենալու պահանջից:

Ի դեպ, նման պահանջ ունեցել եւ բավարարել է ամեն մի ազգ ու Եկեղեցի: Այլ բան է, թե երբ է հրատապ դառնում նման պահանջը: Կարծում ենք՝ Ե. դ. 30-ական թվականների մայր Ազաթանգեղոսի ստեղծումը պայմանավորված էր նման մի պահանջով: Որովհետեւ երկրում գահընկեց էին արված թագավորն ու կաթողիկոս Սահակ Պարթեւը, վերջինիս փոխարինում էին ասորի դրածո կաթողիկոսներ, որոնք ուղիղ վտանգ էին սպառնում հայոց եկեղեցական միասնության ուխտին, որ ստեղծվել էր Մեծ Հայքի երկու մասերի միջեւ՝ Սահակի եւ Մաշտոցի ջանքերով:

Ահա այդ միասնության ուխտն անխաթար պահպանելու եւ շարունակելու նպատակով հարկավոր էր մեկ անգամ ընդմիջտ յուրացնել հայոց դարձի ու մկրտության եւ Հայ Եկեղեցու հիմնադրման սրբազան պատմությունը՝ շարադրված ուղղադավան վարդապետական հայացքով: Հայերի մկրտության եւ Հայոց Եկեղեցու հիմնադրման պատմությունը ձեւավորվել է բանավոր՝ Դ. դարի երկրորդ կեսերին՝ Ս. Գրիգորի ժողովրդական բանավոր հրաշապատումների շրջանակներում: Իհարկե, պետք է ընդունել, որ բանավոր պատումների մեջ դեռեւս իրարից անջատ են եղել Գրիգորի վարքը եւ Հռիփսիմյանների վկայաբանությունը: Հետո է, որ դրանք իրար են միացվել գրական «մոնտաժի» սկզբունքով նախ Սահակի կողմից՝ հունարեն, ապա եւ Ս. Մաշտոցի ու նրա աշակերտ Կորեան կողմից՝ հայերեն, բայց նույն Սահակի ծրագրով: Վերջինս, որ Գրիգոր Պարթեւի՝ որպես կաթողիկոսի սրբացման ու կանոնացման հեղինակն էր, հավանաբար այդ նպատակով հենց ինքն էլ մինչեւ հայերեն գրերի գյուտը հունարեն շարադրել է սրբի վարքը (Դ. դարի վերջ — Ե. դարի սկիզբ), որը թարգմանվել է նաեւ ասորերեն՝ Հայաստանի երկու մասերի եկեղեցիներում նրա հիշատակը տոնելու համար: Հասկանալի է, որ Ս. Գրիգորի վարքը՝ իբրեւ առանձին բանավոր պատում, պետք է Սահակի գրավոր ծրագրով կապվեր Հռիփսիմյանների վկայաբանության հետ, որն էլ իր հերթին առանձին է պատմվել ու ավանդվել Դ. դարում: Նշված վարքի եւ վկայաբանության սահակյան «մոնտաժումը» մտել է Ազաթանգեղոսի Պատմության մեջ: Դա ակնհայտ երեւում է այն բանից, որ սրբուհիների թաղումը եւ նրանց վկայարանների կառուցումն ստանձնում է Գրիգորը՝ դառնալով նրանց

ժամանակակիցը, երբ վերջինս պատմական ասպարեզ էր իջել վկայուհիներից 50 տարի հետո²:

Ս. Գրիգորի վարքի եւ Ս. Հռիփսիմյանց վկայաբանության երբեմնի առանձին գոյություն հետքը մնացել է մայր Ագաթանգեղոսի եւ նրա հունարեն թարգմանության այն դրվագում, որտեղ Ս. Գրիգորը Տրդատին խոզակերպումից փրկում է... երկու անգամ, մեկ՝ բանականապես (զգաստացնելով), մեկ էլ՝ մարմնապես³:

Առանձին վարքում Գրիգորը վիրապից դուրս գալուց հետո պետք է միանգամից բուժեր Տրդատին եւ այդ հրաշքով նրան ու արքունիքին դարձի գալու առիթ տար: Իսկ առանձին վկայաբանության մեջ Հռիփսիմյանները պետք է թաղվեին երեք տեղերում, եւ նրանց գերեզմանները պետք է հրաշալի բուժավայրեր ճանաչվեին՝ ըստ վկայաբանական ժանրի կանոնների:

Սակայն, ինչպես տեսնում ենք, Գրիգորը պետք է միեւնույն երկում եւ բուժի, եւ թաղի: Ուստի «մոնտաժն» անբռնազբոս անելու համար պետք է բուժելն ու թաղելը կապել իրար հետ, այսինքն՝ բուժել ապաշխարելուց ու թաղելուց հետո, հետեւաբար, դիպաշարային զարգացման նախավերջին օղակում՝ մկրտությունից առաջ: Իսկ առաջին բուժումը կա՛մ պետք է մեջտեղից վերացվեր, կա՛մ պետք է համարվեր մասնակի բուժում («զգաստացում»), որպեսզի հակասություն չառաջանար: Ստացվել է Տրդատի խոզակերպությունը թափելու երկու աստիճան, ինչով էլ լիովին չի ավարտվել՝ ըստ մի տարբերակի, որովհետեւ այդ վկայության մեջ Գրիգոր Լուսավորիչը նրա մի ճկույթը թողնում է խոզենի, որպեսզի Տրդատը մեկ-մեկ հիշի իր վայրենաբարո անցյալը:

Փաստորեն Դ. դ. վերջին, երբ Արեւելյան Հայաստանի թագավոր Վռամշապուհն ստանձնել էր նաեւ Արեւմտյան Հայաստանի հարկերի հավաքագրումը, երբ եկեղեցական տոնա-ծիսական ընդհանրություն կար երկու մասերի միջեւ, Սահակ Պարթեւ կաթողիկոսը Ս. Գրիգորի եւ

² Ա. ՍԱՀԱԿՅԱՆ, Հին աշխարհից միջնադար բանահյուսական եւ գրական հետազոտելով, Երեւան, 2019, էջ 12–15, 29–33:

³ Դա երեւում է նաեւ Հովհան Ոսկեբերանի՝ Գրիգորին նվիրված ներբողից: Ա. Մուշեղյանը կարծել է, թե Ոսկեբերանի ներբողում բուժման հատվածի համար աղբյուր է ծառայել Դ. դ. հունարեն վարքը, որը նա նույնացրել է Ժ. Գարիտի գտած էսկուրիալի վարքի հետ (§§63, 89): Հմմտ. «Սոփերք հայկականք», հտ. Դ., Վենետիկ, 1853, Ագաթանգեղոսի Պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմ. բնագրից՝ Հ. Բարթիկյան, «Էջմիածին», 1966, №8, էջ 46–51, Ա. ՄՈՒՇԵԳՅԱՆ, անդ, էջ 217–219:

Ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակի միասնական օր կարգեց՝ նրանց միացյալ վարք-վկայաբանությունը գրելով հունարեն եւ ասորերեն՝ օգտվելով նրանց առանձին-առանձին եղած բանավոր ավանդապատումներից, որոնցից առաջինի կրողներն էին Թիլի ու Թորդանի, ինչպես նաեւ Բագավանի ու Աշտիշատի համայնքները, իսկ երկրորդների կրողները, հարկավ, Վաղարշապատի համայնքն էր: Հավանաբար Սահակ Պարթեւը նպատակ ուներ երկու սրբախոսական ավանդների միավորումով ցույց տալու, որ Արեւելյան եւ Արեւմտյան Հայքերի միասնական Եկեղեցին հիմնված է երկրի երկու կողմերը խորհրդանշող սրբերի հիշատակների վրա: Այդ է պատճառը, որ Սահակ Պարթեւն օգտագործել է երկու ժանրերի համադրման եղանակը:

Գրական համադրման նույն սկզբունքը կիրառեցին նաեւ Մաշտոցն ու Կորյունը «Ագաթանգեղոսի Պատմությունը» կազմելիս: Այստեղ արդեն հարկ եղավ, որ նրանք Գրիգորի ու Հռիփսիմյանց վարք-վկայաբանության հետ միավորեն Վարդապետությունը եւ Հայոց աշխարհի մկրտությունը՝ ստանալով մի կատարյալ դարձաբանական ժանրի ստեղծագործություն:

Ճիշտ է՝ Սահակի կարգած միացյալ տոներ եւ սրբախոսական պատմությունը հունարեն եւ ասորերեն մեզ չեն հասել, իսկ Ագաթանգեղոսի Պատմության մեջ այդ աղբյուրի հետքն ինչ-որ չափով անառարկելի համարելու համար բավարար չէ, ուստի կարիք է զգացվում մի լրացուցիչ տեղեկության առ այն, որ Դ. դ. վերջին Ս. Գրիգորի եւ Ս. Հռիփսիմյանների վարք-վկայաբանությունը միացյալ է եղել:

Բարեբախտաբար նման վկայություն մեզ տալիս է Հովհան Ոսկեբերանը, որը, Ե. դ. սկզբներին աքսորվելով Փոքր Հայք (404—407, Կոկիսոն), այնտեղ կարդալով Ս. Գրիգորի միացյալ վարքը, քաղաքացիների, նաեւ տեղի առաջնորդի (Գրիգոր սարկավազապետ կոչեցյալ) ու վարդապետ Դեոսկորոսի խնդրանքով մի ներբողյան ճառ է նվիրում հայոց սրբին՝ նրա հիշատակի օրը, որը որոշակի ամսաթվով չի նշվում, ինչպես կարդում ենք Դեոնդ Ալիշանի հրատարակության վերնագրում⁴: Վերնագիրն

⁴ «Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ներբողեան ասացեալ յաղագս վարուց եւ նահատակութեան սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց հայրապետի ի Կոկիսոն Հայոց մինչ յաքսորանս էր, ի խնդրոյ հայագին ուրումն եպիսկոպոսի եւ վարդապետի համազգւոյ Նորին Դեոսկորոս անուն կոչեցելոյ եւ ալ եւս յոգնախումբ բազմութեան, որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահռչակ տօնի նորին սուրբ Լուսաւորչին արեւելյան աշխարհին», «Սոփերք հայկականք», հտ. 4, Վենետիկ, 1853:

իր հիշատակարանային բնույթը հավանաբար ստացել է դեռևս հունական բնօրինակի գրիչների կողմից: Իսկ հայերեն թարգմանության հիշատակարանում կարգում ենք. «Ի թուականին ՇՂ. (1141) թարգմանեցաւ ճառս ի հունականէն ի մերս ի ձեռն Աբրահամու Ղռամատիկոսի ի հին եւ յեղծ օրինակաց, իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան եւ բառից՝ յիմոյ նուաստութեան Ներսիսի, հրամանաւ տեառն իմոյ եւ հարազատի Գրիգոր Հայոց կաթողիկոսի...»⁵:

Հիշատակարանի հեղինակի՝ Ներսես Շնորհալու դերը պետք է հասկանալ ոչ սովորական խմբագրի իմաստով, այլ նրանով, որ ինքը թարգմանությունը շտկել ու տեսքի է բերել տվյալ ժանրի կանոնական լեզվի ու ոճի տեսակետից, ինչին կարող էր եւ վարժ շտիրապետել թարգմանիչ Աբրահամ Գրամատիկոսը: Դա շատ պարզ երեւում է հետեւյալ արտահայտությունից, որ բնութագրում է Ներսեսի արածը. «...յարմարեցաւ (Ներսեսի կողմից.— Ա. Ս.) ըստ բանից դպրութեան եւ բառից»⁶: Հայտնի է, որ նման դեր Ներսես Շնորհալին կատարել է նաեւ Սուրբ Սարգսի վարքն ասորերենից հայերեն թարգմանելու գործում: Այս հարցում, սակայն, այլ տեսակետ եւս կա, ըստ որի՝ Աբրահամ Գրամատիկոսի թարգմանածը Ներսես Շնորհալին համեմատել եւ ճշտել է մատենագրական աղբյուրների, այն է՝ «Ագաթանգեղոսի Պատմության» եւ Ս. Գրքի վկայություններով: Ալբերտ Մուշեղյանի տողատակային այս բացատրությունը բոլորովին չի բխում գրաբար բնագրից եւ իզուր շեղում է խմբագրի դերի բուն ըմբռնումից, այն է՝ ժամանակի գրական վարքականոնի (էտիկետի) տեսակետից արված միջամտումներից⁷:

Քանի որ բանասիրության մեջ անվստահություն կա սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված «Ներբողեանի» հեղինակային պատկանելության հարցում, գլխավորապես այն պատճառով, որ այդ երկը նշված չէ մեծ աստվածաբանի մատենագիտության մեջ, ուստի հարկ է փոքր-ինչ խոսքնալ այս խնդրում:

Այսուհետ՝ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ, Ներբող, էջ 86—87: Հմմտ. «Գրիգոր Լուսավորիչը ներբողներում», հրատարակության պատրաստեցին՝ Ա. Գ. Մադոյեան, Գ. Ա. Մադոյեան, Երեւան, 2002:

⁵ Անդ: Այստեղ Ս. Ներսես Շնորհալու հիշատակագրության բուն ասելիքն այն է, որ հետագա գրիչներն իր փոքրիկ հիշատակարանը եւս արտագրեն:

⁶ Անդ:

⁷ Ա. ՄՈՒՇԵԳՅԱՆ, «Ագաթանգեղոսի Պատմությունը», ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը եւ հեղինակի հարցը, ՊՔՀ, 2012, №2 (189), էջ 217:

Ոսկեբերանի կենսագիր Պալլադիոս Հելլենապոլսեցին վկայել է նրա ավելի քան եռամյա աքսորի մասին, որ անց է կացրել Փոքր Հայքում (27 հունիսի 404 թ. — 19 սեպտեմբերի 407 թ.)⁸։ Բնականաբար, այդ տարիներին պարապուրդ չէր կարող տալ մեծ աստվածաբանի ու հռետորի անդուլ ոգին։ Եւ պարտադիր չէ, որ կենսագիրը տեղյակ լիներ աքսորավայրում արված նրա բոլոր գործերի մասին, կամ Փոտ պատրիարքը նշում աներ նրա ամեն մի արարքի առթիվ, որպեսզի ուղղափառ եկեղեցաբանները կամ արեւմտյան բանասերները վավերական համարեն տվյալ տեղեկությունը։

Իսկ տեղեկությունը մեզ է հասել Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողյանի հայերեն թարգմանության հիշատակարանից առ այն, որ Հովհան Ոսկեբերանի հունարեն ճառը գտնվել է հին եւ եղծված օրինակից... Դրանով հավանաբար փորձել են նաեւ բացատրել, թե ինչու է Ներսես Շնորհալին միջամտել Աբրահամի թարգմանած բնագրին։ Մինչդեռ կարելի է այլ տեղեկություն եւս քաղել հունարեն օրինակներին տրված բնութագրից։ Կարելի է հասկանալ, որ այդ բնագիրը աշխուժորեն չի շրջանառվել ձեռագրային ավանդույթում, որ այն տոնական սակավ կիրառումներ ու ընդօրինակումներ է ունեցել, այն էլ սահմանափակ վանական ու թեմական տարածքներում (Փոքր Հայք եւ Կիլիկիա), այն էլ անցյալի մի որոշակի ժամանակահատվածում (ասենք, երեւի Ե.—Ը. դարերում)։ Իզուր չէ, որ հունարեն ձեռագրերը ԺԲ. դ. են հասել հին ու եղծված վիճակում։ Բայց ավելի տրամաբանական է, որ Հովհան Ոսկեբերանն աքսորի մեջ, իր կյանքի վերջին, կայսրության մի ծայրագավառում ասած լիներ նման մի ճառ, եւ կենտրոնում անհայտ մնար։ Հայտնի է, որ Ոսկեբերանի ճառերը բանավոր արտաբերվելուն զուգահեռ սղագրվել են, հետո հեղինակի կողմից խմբագրվել ու հանձնվել արտագրության։ Սակայն կան ճառեր, որոնք հեղինակը ինչ-ինչ պատճառներով չի կամեցել կամ չի հասցրել խմբագրել, եւ դրանք մինչեւ օրս մենք կարդում ենք սղագրված տեսքով՝ մաքուր բանավոր խոսքի կնիքով դրոշմված, չհաշված հետագա գրչական ու խմբագրական ընդմիջարկումները։ Այդպիսի բանավոր ճառի սղագրություն է եղել նաեւ Գրիգոր Լուսավորչին

⁸ Ոսկեբերանը վախճանվել է Փոքր Հայքից դեպի Պիցիոս (Պիցունդա) տանող ճանապարհին՝ Կոմանա գյուղում, որ նույնացվել է Փոքր Հայքի համանուն քաղաքի հետ։ Մինչդեռ դա կարող է լինել նաեւ Զավախքի Գոման գյուղը, ինչը ստուգման կարիք է զգուժում։ Եթե պարզվի, որ վերջինս ճիշտ է, այդ գյուղը կհռչակվի իբրեւ համաքրիստոնեական սրբավայր։

նվիրված ներբողյանը, որը հեղինակը չի խմբագրել, եւ ճառն իր բանավոր արտասանական հետքերը պահպանել է նաեւ հայերեն թարգմանության մեջ, ինչի մասին կխոսվի ստորեւ: Եթե խնդրո առարկա ներբողյանը կեղծ լիներ, ապա այն, անկախ բնագրի լեզվից՝ հունարեն թե՛ հայերեն, պետք է լիներ նախապես համակարգված, մշակված, Ոսկեբերանի մեծ համբավին «հարմարեցրած» բնագիր, ոչ թե բանավոր ճառի սղագրություն: Ս. Ներսես Շնորհալու խմբագրական գաղտնիքն էլ հենց այդ է, որ նա փորձել է Ս. Հովհան Ոսկեբերանին պատկանող սղագրական բնագիրը խմբագրել ըստ միջնադարյան գրական ավանդույթի:

Բարեբախտաբար շատ չի միջամտել, չի կպել բնագրի կառուցվածքին ու տրամաբանությանը, բայց որոշ հավելումներ է կատարել Ս. Գրիգոր Լուսավորչի մեծարման տեղիներում՝ դրանք օժտելով վառ-վառ մակդիրներով եւ վարդապետության մեջ արժարժվող հարցերում միջամտելով: Վերջին միջամտությունը շատ կարեւոր է համարել Ս. Ներսեսը, որովհետեւ դրանով նա նպատակ է ունեցել ցույց տալու, որ Հայ Եկեղեցու վարդապետական դրույթները հավանություն են գտել դեռեւս Ս. Հովհան Ոսկեբերանի ներբողական ճառում: Իսկ գաղտնիք չէ, որ Ներսես Շնորհալին թե՛ որպես կաթողիկոսի եղբայր՝ եպիսկոպոս, թե՛ որպես կաթողիկոս, ինչքան մեծ նշանակություն էր տալիս ուղղափառ աշխարհի հեղինակություններին՝ Բյուզանդական Եկեղեցու եւ արքունիքի հետ ունեցած դավանաբանական պայքարում: Որոշ միջնադարագետներ կարող են գայթակղություն ունենալ հենց դրանով պատճառաբանելու Հովհան Ոսկեբերանին կեղծ ներբողյան վերագրելու անհրաժեշտությունը, բայց իրականում դրանով կարող է միայն պատճառաբանվել Ներսես Շնորհալու խմբագրական միջամտության վերոնշյալ նպատակը եւ ոչ ավելին:

Դիմենք օրինակներին: Ներբողյանի կազմում Ս. Գրիգորին ուղղված հրավեր-կանչերի շարք կա, որում Հովհան Ոսկեբերանն ամեն մի նոր դիմումի մեջ գործածում է «արի՛» սկսվածքը: Բայց ահա այդ շարքում հայտնվում է մի հերթական հրավեր. «...Արի՛, հաստատեալ սիւնդ եկեղեցւոյ իմոյ եւ պարծանք տիեզերաց, արի՛, ուսուցիչդ ուղղափառութեան եւ գեղեցկութիւնդ աշխարհի, արի՛, քարոզդ հաւատոյ եւ առաջնորդ մարդկան ի ճանապարհս արքայութեան...»⁹: Ընդգծված արտահայտությունների մեջ կարելի է ենթադրել Ներսես Շնորհալու ընդմիջարկումը:

⁹ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ, Ներբող, անդ:

Երբ արծարծվող վարդապետական դրույթների շարքում թվարկվում են Տիրոջ կյանքի դրվագներ՝ ըստ Ավետարանի. գալուստ, յարութիւն, իջանելն Հոգւոյն եւ այլն, հանկարծ աչքի է զարնում ոչ թե խաչելություն, այլ՝ «...զխաչելն որ վասն մեր»։ Կարծում եմ, որ նման արտահայտություն ընդունելի է միայն ամենաշուտը Ե. դ. վերջի եւ Զ. դ. դավանաբանական համաբնագրում, մինչ այդ այն ժամանակավրեպ է, ուստի եւ Ներսես Շնորհալու հավելում պետք է համարել։

Հնարավոր է, որ վարդապետության բոլոր թեմաների թվարկումն է Շնորհալու հավելումը, եթե մտածենք, որ դժվար թե Ոսկեբերանը հիշողությամբ վերարտադրեր բուն վարդապետության դրույթները։ Բայց միաժամանակ դրանք ոչ թե վերարտադրումներ են, այլ մոտավոր թվարկումներ՝ Ս. Գրքում եղած ընդհանուր գիտանքների հերթականությամբ։ Ու երբ համեմատում ենք Ագաթանգեղոսի ազգային խմբագրության հետ, ապա երեւում է, որ այն ոչ թե վարդապետությունից է քաղված, այլ նրան նախորդող ու հաջորդող էջերից։ Այսինքն՝ կարելի է կռահել, որ Հովհան Ոսկեբերանի կարգացած հունարեն վարքում այսօր մեզ հայտնի վարդապետությունը կամ չի եղել, կամ էլ եղել է շատ համառոտ, որը հետագա խմբագրության մեջ աճել է։

Պետք է հակվել դեպի երկրորդ տարբերակը, որովհետեւ Դ. դ. վերջին տասնամյակին, երբ Սահակ Պարթեւը գրական համագրման (մոնտաժի) միջոցով միավորեց երկու առանձին սրբախոսական երկերը, դրանով նպատակ դրեց ստանալու ոչ թե մի ընդհանուր դավանաբանական վարդապետություն, այլ դարձաբանական սրբազան պատմություն՝ Ս. Գրիգորի անվամբ, որ ընդունելի ու կիրառելի պիտի դարձներ նրա տոնը Հայոց Եկեղեցու արեւելյան եւ արեւմտյան թեւերում հավասարապես։ Սա մի լուրջ քաղաքական նպատակադրում է Մեծ Հայքի բաժանումից հետո, որ կյանքի կոչվեց Արեւելյան Հայաստանում Վաղարշապատը երկրորդ անգամ մայրաքաղաք հռչակելու եւ դրանով իսկ առաջին անգամ մայրաքաղաքում Մայր տաճար ունենալու պահանջից։

Մինչ այդ «մայր տաճար»-ները եղել են կաթողիկոսական նստավայրերում՝ Աշտիշատում կամ Բագավանում, եւ ինչ-որ տեղ դրանց դերը, ավելի ճիշտ՝ հատուկ տեղը, նշմարվում է մեզ հասած Ագաթանգեղոսի այն դրվագներում, որտեղ Գրիգորը մկրտություններ է անում։ Սահակի օրոք հարկավոր էր դարձաբանական այդ բոլոր իրադարձերի առանցք դարձնել Վաղարշապատը, որովհետեւ այդուհետ արդեն այնտեղ է

լինելու Մայր տաճարը՝ Ս. Կաթողիկե եկեղեցին՝ կից միաբանությունյամբ եւ սրբուհիների երեք եկեղեցիներով շրջապատված:

Հետեւաբար՝ պետք է լինելու տեսիլի միջոցով տրված հրաշագործ հիմնարկեքները տեղավորել Վաղարշապատում՝ իբրեւ կույսերի վկայարաններ, եւ Մայր տաճարը սրբազօծել հատուկ տեսիլով՝ իբրեւ Ս. Շողակաթ՝ Բագավանի տաճարի հիմնարկեքի երբեմնի տեսիլի նմանողությամբ: Այս ամենը հեշտ էր իրագործել ոչ միայն քաղաքականապես, ինչպես նպատակադրվել էր Սահակը, այլեւ գրական ու ծիսատոնական միջոցներով՝ երբ բոլորի կիզակետում տեսնում են Ս. Գրիգորին եւ ամեն ինչ, այդ թվում՝ Հռիփսիմյանների վկայարանների կառուցումը վերագրում են նրան, ինչպես եւ իրականում եղել է: Քանի որ Ս. Գրիգորի կաթողիկոսության օրոք է ներկայիս Մայր տաճարի հիմքում եղած աստուծանը վերածվել քաղաքային եկեղեցու, նաեւ Ս. Գրիգորի օրոք հնարավոր դարձավ նրանից մոտ 50 տարի առաջ նահատակված սրբուհիների գերեզմանները վերածել վկայարանների, որոնք հետո նույն դարի վերջում կամ հաջորդի սկզբներում փայտակերտ եկեղեցիների վերածեց Սահակ Պարթեւը, իսկ է. դ. սկզբներում քարակերտ դարձրեց Կոմիտաս կաթողիկոսը: Թե՛ Սահակը, թե՛ Կոմիտասը Հռիփսիմյաններին առնչել են Ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի հետ, եւ դա մինչեւ օրս շարունակվում է որպես հայ ժողովրդի քրիստոնեական գիտակցության մեջ արմատավորված ազգային եկեղեցական ավանդույթ:

Հայ եկեղեցու մնացյալ տեղական սրբերը մի տեսակ ածանցյալ են վերոնշյալից եւ կոչված են ինչ-որ տեղ պահպանելու եւ ամրացնելու այդ սրբազան ավանդույթը:

Այսպիսով՝ Դ. դ. վերջին, երբ Կ. Պոլսի երկրորդ տիեզերաժողովի միջոցով ողջ աշխարհի եկեղեցին պահպանեց իր ընդհանրական բնույթը, սեփական վարդապետարան կամ դավանաբանական ուսուցումներ ունենալու կարիքը չկար, բայց կար այնքանով, որ դարձի Պատմության հերոսը ժանրի պահանջով պետք է իր միջոցով դարձի եկած թագավորին ու ժողովրդին քարոզեր, թե ինչ է, ըստ էության, նոր դավանանքը, այսուհետ ինչ պետք է դավանի ազգը: Դրա համար էլ Ս. Գրիգորի դարձաբանական վարքի հունարեն ու ասորերեն տարբերակներում Գրիգորը հրապարակավ ուսուցանում էր նոր հավատքի համառոտ դրույթները՝ ոչ թե մեկնաբանելով ու բացատրելով դրանք, այլ ավելի շուտ թվարկելով, ինչպես տեսնում ենք Հովհան Ոսկեբերանի ներբողյանում:

Այլ էին, սակայն, քաղաքական ու դավանաբանական մարտահրավերները Ե. դ. 20–30-ական թվականներին, երբ Արեւելյան Հայաստանը վերածվեց պարսկական մարզպանության, եւ Եկեղեցին միայնակ մնաց ոչ միայն գլուխ բարձրացնող դավանաբանական նոր ուսմունքների (Նեստոր, Եւտիֆես), այլեւ հսկա ոչ քրիստոնյա գերտերության դավանական քաղաքականության առաջ: Ճիշտ ժամանակն էր, որ մինչեւ իրենց վախճանը Սահակն ու Մաշտոցը հասցնեին վերջին կարգավորումներն անել Հայ Եկեղեցու երկու թեւերի միասնության եւ միաբանության ուխտի ամրացման ուղղությամբ:

Այդ կարգավորումների շարքին էր պատկանում նաեւ Հայ Եկեղեցու հիմնադրման սրբազան պատմությունը՝ որպէս հայոց դարձի եւ դավանաբանության հաստատման մի անբաժան, միասնական շարադրանք ունենալու պահանջի իրագործում, ինչի արդյունքը եղավ ընդարձակված «Ագաթանգեղեայ Պատմութիւնը»՝ բավականին ծավալուն վարդապետության մը եւ առաջաբանով: Կասկած չկա, որ այս նոր կամ մայր Ագաթանգեղոսի հիմքում ընկած է Սահակ Պարթեւի գրած Ս. Գրիգորի վարքը (Դ. դ. վերջ): Սա նշանակում է, որ արդի մայր Ագաթանգեղոսը, եթէ ինչ-որ տեղ հեռավոր կամ մոտավոր կերպով թարգմանական հետքեր է պահպանել, ապա դրանցով առնչվում է նախ եւ առաջ Սահակ Պարթեւի հունալեզու նախօրինակի հետ: Այնպէս որ Հովհան Ոսկեբերանը մեծ նպաստ է բերել ոչ միայն այդ նախօրինակի, այլեւ նրա մասը կազմող այն փոքրիկ վարդապետության հիմնական դրույթների պահպանման առումով, որովհետեւ այդ դրույթների թուլցիկ իսկ թվարկումով մենք կարող ենք պատկերացում կազմել Ս. Գրիգորի հունարեն վարքում եղած համառոտ վարդապետության բովանդակության մասին¹⁰, որը Մաշտոցը մեծապէս ընդարձակել է հայերենում:

Այժմ բերենք բանավոր ճառախոսական ոճի օրինակներ ներբողյանից: Հովհան Ոսկեբերանը Ս. Գրիգորի կյանքի տարբեր դրվագների մասին խոսելիս երբեմն զուգահեռներ է անցկացնում նրա եւ իր շուրջը գոյացած իրավիճակների միջեւ եւ տարվելով իր «դարդով»՝ շեղվում է բուն թեմայից եւ նկատում իր իսկ երկարաբանումը: Ահա,

¹⁰ Ընթերցողը կարող է հարց տալ, թե ուր մնաց Ա. Մուշեղյանի պնդումը, թե Ագաթանգեղոսի «վարդապետությունը» Մաշտոցի կազմած նախնական համառոտ Աստվածաշունչն է: Հասկանալի է, որ մեծ վաստակի հասնելու համար երբեմն թափվում են նաեւ զուր ջանքեր: Տես Ա. ՄՈՒՇԵԳՅԱՆ, Ագաթանգեղոսի Պատմությունը եւ հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը, ԼՀԳ, 1987, №3 (531), էջ 66–88:

«Ներբողյան»-ի միջին մասերում նա սրբին գովեստներ հղելուց հետո գրում է. «Այսպիսին վայել է քահանայապետ, ըստ Պողոսի... զի որ այնպիսի ոչ լինիցի, ոչ հովիւ ուրեմն կոչի, այլ գող եւ աւազակ եւ գայլ ապականիչ՝ օձտելով զհօտն Քրիստոսի, ըստ որում եւ առ մեզ իսկ երեւեցան հակառակողք ճշմարտութեանս... Վասն որոյ եթէ հաճոյ թուեսցի, պարտ եւ արժան է նախ եւ առաջին անցանել առ այնպիսիսն բանիւ, եւ ապա զերանելի հօրս մերոյ աւարտել զներբողական ճառս»¹¹: Փաստորեն, առիթն օգտագործելով՝ Ոսկեբերանը հիշում է իրեն եւս ընդդիմացած ճշմարտության հակառակորդներին եւ յուրովի ներողամտություն հայցելով («եթէ հաճոյ թուեսցի»)՝ անցնում է իր գլխին եկած պատմությանը. «Արդ, յաղագս ո՞յր արդեօք խօսի զայսոսիկ մարգարէն, ո՞չ ապաքէն քո՝ ընդ հովիւս եւ վերակացուս, զի պատգամս Աստուծոյ մեք իսկ խօսիմք, որք զաշտիճան քահանայութեան ունիմք: Եւ զիարդ ոչ իցէ շուն յայտնապէս այն, որ հակառակ իրաւանցն Աստուծոյ շարժեաց զլեզու իւր եւ շնացաւ ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ, քանզի կենդանութեամբ իմով զաթոռ իմ յափշտակեաց: Բայց մեք յառաջիկայսն երթիցուք»¹²:

Հիրավի, այսպես կարելի է խոսել միայն բանավոր ճառում, երբ մանավանդ հոետորը վիրավորված եւ հալածված մարդ եւ շատ ասելիքներ ունի աքսորավայրում հավաքված իր համախոհներին: Անփորձ բանասերներին կարող է թվալ մի պահ, թե կեղծարարը դիտավորյալ օգտագործել է Հովհաննի կյանքի այդ հանրահայտ դրվագը՝ ընթերցողներին արժանահավատություն ներշնչելու համար: Բայց միայն մի պահ, որովհետեւ նման դեպքում իսկույն հակասություն է նկատվում բանավոր ճառախոսական անմշակ ոճի հետ, որը կեղծարարը թույլ չէր տա¹³... Բացի բանավոր ճառի սղագրական ոճի հետքերից, որոնցով աչքի է զարնում «Ներբողյան»-ը, նրանում կարելի է նկատել նաեւ ընդհանուր ոճական տեղիներ՝ համեմատած Ոսկեբերանի այլ գործերի հետ: Բերենք մեկ օրինակ: Հռիփսիմյան կույսերին պատուհասելուց հետո Տրդատն արժանանում է աստվածային պատժի, որի առիթով Ոսկեբերանը հարց է տալիս.

¹¹ Յովհան Ոսկեբերան, Ներբող, էջ 45–46:

¹² Յովհ. Ոսկեբերան, անդ, էջ 53:

¹³ Այս դրվագի վրա յուրովի ուշադիր է եղել Ա. Մուշեղյանը, որի կարծիքը՝ հօգուտ Հովհաննի հեղինակության, արժեքավոր է ի շարս մեր բերած այլ փաստարկների:

«Այժմ ռւր է քո թագաւորական բարձրայօնութիւնը... ռւր գերապատիւ աթոռն... ռւր ատենական նախարարքն, ռւր փաղաքուշքն ու կատակերգք, ռւր դատողական բեմն, ռւր տանջողական ատեանն... ռւր են դիքն ձեր, յոր յուսացեալ էիք դուք ի նոսա...»¹⁴: Նկատելով հանդերձ, որ ընդգծված արտահայտութիւնները Դ.—Ե. դարերի իրականությամբ են բուրում, վերոբերյալը համադրենք Ոսկեբերանի մի այլ ճառի հետ, որ նա կարդացել է Կ. Պոլսի Ս. Սոփիայում մի կիրակի օր, երբ այդ տաճարի խորանին էր ապաստանել զինվորականների զայրույթից փախած հյուպատոս-նախարար ներքինի Եւտրոպիոսը: Սա պատճառ էր դարձել, որ Հովհան Ոսկեբերանին Անտիոքից ծառայության կոչեն մայրաքաղաք առաջժամ որպէս եպիսկոպոս, բայց պատրիարքի պաշտոնով¹⁵: Ոսկեբերանը, Եւտրոպիոսին տեսնելով, իսկույն հղանում է ճառի թեման՝ այն հարմարեցնելով նրա վիճակին: Ծառի ընթացքում, առանց անունը տալու եւ մատնացույց անելու, մեծ հռետորը նույնպէս հարց է տալիս իր հերոսին՝ «ռւր է», «ռւր են» հարցականներով նշելով վաղանցուկ փառքերը եւ մարմնական վայելքները, որոնք միանգամից քշվել են բարձրացած քամուց կամ ցնդել գիշերային երազի պէս նոր բացվող օրվա հետ¹⁶:

Իհարկէ, Հովհան Ոսկեբերանի հեղինակային կնիքը «Ներբողյան»-ում խորն է, հատկապէս հեղինակի եւ իր հերոսի նմանեցման եւ անգամ նույնացման պերճախոսական միտումի հարցում, երբ հեղինակը ձգտում է իր հերոսի միջոցով ինքը եւս ավելի բարձրանալ, ավելի արդարանալ եւ... փրկվել: Այդ պերճախոսութիւնն սկսվում է հենց առաջին իսկ խոսքերից. «Նախ յայտ առնել զանուանակոչութիւն երանելոյս, զի ի կոչմանէ անտի ծանիցուք երկնային զքաղաքավարութիւն սորա եւ առաքինասէր վարուք անմարմնոցն գոլ համեմատ. Գրիգորիոս՝ հսկող»¹⁷ առաքինութեամբ, արդարութեան օրինակ, Քրիստոսի արժանաւոր պսակաւոր...

¹⁴ Անդ, էջ 25:

¹⁵ Իոհան ավագերեց Մեյենդորֆ, Ներածութիւն հայրախոսական աստվածաբանության, Ս. էջմիածին, 2013, էջ 28—29:

¹⁶ Անդ: Հարցական դիմումի ոճի կիրառման մի այլ օրինակ եւս տեսն Յովհան Ոսկեբերան, «Ներբող», էջ 57 («Ողբայր երբեմն Դաւիթ յուշ առնելով զգթութիւն Աստուծոյ. ռւր են, ասէ, ողորմութիւնք Քո առաջինք, Տէր: Ողբացից, եւ ես ընդ Դաւթայ եւ ասացից արտասուօք. ռւր են բազմութիւնք երանելի եպիսկոպոսացն առաջնոցն եւ վարդապետացն, ոչք ծագեցին իբրեւ զփայլակն յաշխարհի... յորոց մի է եւ մեր պսակաւոր եւ վկայ...»):

¹⁷ Հունարեն անվան բացատրութիւնը հունարեն բնագրում տարօրինակ չէ, որովհետեւ հեղինակը վեր է հանում բառի ուղիղ եւ հոմանշային իմաստների ալլաբանութիւնը եւ ոչ թե թարգմանում է այն:

գեղեցիկ գործարան Հոգւոյն Աստծոյս, քահանայից գաղափար, հովուապետաց նկարագիր»¹⁸:

Ակնառու է պերճախոսի միտումը՝ հեռվից սկսել եւ վերջին արտահայտութեամբ մոտեցնել իրեն: Ապա գովաբանում է իր հերոսի այն հատկանիշը, որով հայտնի էր ինքը՝ հեղինակը. «Գրիգորիս, որ զբարեպաշտութիւն ճշմարիտ հաւատոյն առաջի բռնաւոր արքային (այսինքն՝ Տրդատի, իսկ հեղինակի դեպքում՝ Եղոքսիա Թագուհու,— Ա. Ս.) քարոզէր համարձակութեամբ եւ ոչ զանգիտեալ զարհուրէր առ ի նմանէն»¹⁹:

...Իսկ ինչի՞ է հանգում նման սկիզբ ունեցող միտումը. «Ընկալար զպսակ նահատակութեան, ընկալցիս եւ այժմ զաթոռ հայրապետութեան» (էջ 30): Այդու նույնացումը կայացված էր, ուստի եւ հաջորդում են քահանայապետութեան հետ կապված տեսիլները, հոտի համար պատրաստակամ Հովվի կերպարը, ճշմարտութեանը հակառակաբանողների դեմ պայքարը եւ ...դարձյալ նույնացում՝ սեփական կյանքի օրինակով. «...ըստ որում եւ առ մեզ իսկ երեւեցան հակառակողք ճշմարտութեանն...» եւ այլն, ինչպես վերը բերվել է: Ուրեմն պետք է առիթն օգտագործել եւ «...սակաւ ինչ եւ զմերս յիշատակել զվիշտ, քանզի կատարած յաւիտենիս արդէն իսկ հասեալ է. անօրէնութիւն բազմացաւ, սէր ցամաքեցաւ» (էջ 47): Եւ հետեւում է միանգամայն տրամաբանական, այսինքն՝ անձնական եզրահանգումը՝ հաշվի առնելով, որ Գրիգոր Լուսավորչի աթոռին ոչ ոք չի հավակնել. «Զայս ամենայն զմտաւ ածելով, սիրելիք, մի՛ ազահոութեան աղազաւ յանդգնաբար ժպրհիք յաթոռ վերակացութեան» (էջ 59): Ապա բուն թեմային վերադառնալու համար ասում է զուտ բանավոր ռճով. «Այլ այժմ բաւական վարկանեմք, որ յաղագս այսորիկ ասացեալ, բեր այսուհետեւ յառաջիկայսն երթիցուք, մատնելով ի բանն ուստի ելաք» (էջ 67): Բայց սրանով հեղինակը չի ավարտում իրեն վերաբերվող մասը, իսկ վերջում հիշեցնում է. «...Աղաչեմ ոչ եւս մեկուսանալ հոգեւորական այցելութեամբ առ ի մէնջ, այլ յիշել զմեզ անմոռաց՝ խնդրելով ի հասարակաց յուսոյ փրկութեան մերոյ, զի եւ մեք զպատահումն սակաւագոյն վշտացս համբերութեամբ կատարեսցուք... եւ քոյին վշտամբեր նեղութեանցս յիշատակաւ ի մերումս մխիթարեալ սփոփեցաք» (էջ 85): Իսկ վերջում պարզվում է, որ վշտերով սփոփվելը խոստումնալից է. «...Եւ ես յայսմհետէ լքանել զկեանս զայս տաղտկալի եւ

¹⁸ Անդ, էջ 11–12:


¹⁹ Անդ, էջ 13:

լինել ընդ Քրիստոսի, թերեւս անդանոր յանդիպեսցուք միմեանց զուարճալի եւ գեղեցկագոյն...» (էջ 86): Մեզ մնում է միայն «ամեն» ասել Հովհան Ոսկեբերանի բաղձանքին՝ սրբերով կազմելու երկնային միություն՝ ուրախ եւ գեղեցիկ, ինչպես վայել է հավիտենությանը:

Բերված փաստերը միանգամայն բավարար համարելով «Ներբողյան»-ի հեղինակութունը Ոսկեբերանին ամրացնելու հարցում՝ պետք է անենք մի կարեւոր պնդում:

Մայր Ազաթանգեղոսի հիմքում ընկած է Դ. դ. վերջին Ս. Սահակի գրած հունարեն վարքը, որի առաջժմ միակ հայտնի ընթերցողական արձագանքը եղել է Ս. Հովհան Ոսկեբերանի կողմից՝ որպես վարքի վերապրում-վերապատում Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված իր «Ներբողյան»-ում (404—405 թթ.):

Շարունակությունը՝ հաջորդիվ



ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ՄՄ

ՍՆԴՈՑ ԳՐՔԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱՎԱԳԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ (ԺԴ. ԴԱՐ)¹

Նայ միջնադարյան արվեստի նշանավոր ներկայացուցիչներից է մանրանկարիչ Ավագը²: Նրա աշխատանքներից է Վենետիկի մատենադարանի Հ^{մր} 935 Աստվածաշունչը, որը նկարազարդել է Սուլթանիեյում 1341 թ. կամ դրանից քիչ առաջ³: Մանրանկարիչն այս մատյանը պատկերազարդել է Հին եւ Նոր Կտակարանների տեսարաններով: Առանձին ուսումնասիրել ենք Ծննդոց գրքի նկարազարդումներից մի քանիսը⁴:

Սույն հոդվածով անդրադառնում ենք Ծննդոց գրքի տիտղոսաթերթի նկարազարդմանը (թ. Յա, նկ. 1): Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել՝

ա. Ծննդոց գրքի տիտղոսաթերթի նկարազարդման համակարգի ձևավորումն ու զարգացումը եւ Ավագի դերն այդ գործում (այլ արվեստների հետ զուգահեռաբար),

բ. պատկերագրության ուսումնասիրությունը՝ գտնելու համար հնարավոր գաղափար օրինակը, որը կարող էր օգտագործել Ավագն իր մատյանը ծաղկելիս,

¹ Այս մասին զեկույց ենք ներկայացրել արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշատակին նվիրված միջազգային գիտաժողովում (13–14 դեկտեմբերի, Փարիզ, 2019): Մատյանը տեղում ուսումնասիրելու հնարավորություն ենք ունեցել «Սիրարփի Տեր-Ներսեսյան հիմնադրամի» տրամադրած կրթաթոշակի շնորհիվ: Այս առնչությամբ շնորհակալություն ենք հայտնում հիմնադրամի անդամներին, նաեւ Մխիթարյան հայրերին (մասնավորապես՝ Վահան ծ. վրդ. Օհանյանին)՝ ձեռագրի ուսումնասիրությունն արտոնելու եւ հյուրընկալ վերաբերմունքի համար:

² Մանրանկարչի կյանքի եւ գործունեության մասին տե՛ս L. SARGSYAN, Armenian scribe and painter Avag Tsaghkogh (14th century), in New Europe College, Publication series of Black Sea Link program, Yearbook 2014–2015, ed. by I. Vainovski-Mihai, Bucharest, 2018, էջ 163–194. L. SARGSYAN, Illustrating a Fourteenth Century Armenian Old Testament: The Vision of Isaiah in the Art of the miniaturist Avag, *ԲՀ*, 2020, թ. 2, էջ 125–126:

³ Ձեռագրի նկարագրությունը, հիշատակարանի առանձին հատվածների ընթերցումը տե՛ս Բ. Վրդ. ՍԱՐԳՍՅԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանի Վենետիկ, հտ. Ա., Վենետիկ, Սուրբ Դավաթ, 1914, էջ 86–98. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հին Կտակարանի նկարազարդումը ԺԴ. դարի հայերեն մի Աստվածաշնչում (Ավագ մանրանկարչի արվեստը), *ԲՄ*, թ. 28, 2019, էջ 296–297:

⁴ Տե՛ս անդ, էջ 311–330:

գ. բնագրային աղբյուրները, որոնք ազդեցություն են ունեցել պատկերագրության ձևավորման վրա՝ ներառյալ ոչ միայն աստվածաշունչը, այլ նաև միջնադարյան հայ գրականությունը,

դ. պատկերագրական որոշ մանրամասների ուսումնասիրությունը՝ ըստ հայ մեկնողական գրականության, որը կօգնի հասկանալ պատկերների աստվածաբանական բովանդակությունը:

Պատկերագրությունը եւ դրա զուգահեռներն այլ արվեստների հետ

Ծննդոց գրքի տիտղոսաթերթի նկարազարդ կիսախորաններ հայտնի են դեռեւս ԺԳ.—ԺԴ. դդ. մատյաններից⁵, օրինակ՝ 1292 թ. (ՄՄ Հ^մ 179, թ. 2ա), 1295 թ. Հեթում արքայի (ՄՄ Հ^մ 180, թ. 1բ), 1303—1304 թթ. (ՄՄ Հ^մ 182, թ. 3ա) կիլիկյան Աստվածաշնչերում: Հիշյալ օրինակները զուտ զարդային եւ թռչնապատկեր ձևավորում ունեն, ինչը բավականին համեստ է քննվող Աստվածաշնչի Ծննդոց գրքի տիտղոսաթերթի համեմատությամբ (թ. 3ա, նկ. 1): Վերջինս կենտրոնում ունի սրածայր վերջավորությամբ կամարակապ բացվածք, ապա՝ բուսական զարդանախշերից բաղկացած մակերես: Վերին գոտում կարմրակտուց եւ կարմրատոտիկ ոսկերիզ ութ թռչուն են, որոնք, հավանաբար, խորհրդանշում են դրախտային այգին:

Բնագրի «Ի» գլխատառի կորի մեջ պատկերված է Մովսեսը՝ հայացքը հառած Աստծու աջին, ապա՝ աղավնակերպ Սուրբ Հոգին: Տառի ուղղահայաց մասում 6-օրյա արարչագործությունն է պատկերված (Ծննդ. Ա.), որն ավարտվում է քառակերպ գահին բազմած Քրիստոսի պատկերով՝ ներկայացնելով Աստծու հանգիստը:

Մովսեսը Ծննդոց գրքի տիտղոսաթերթի «Ի» գլխատառում պատկերված է կանգնած, երիտասարդ եւ անմորուս, լուսապսակով, ձեռքում պահած «Ի ՍԿԶԲԱՆԷ» գրությամբ (Ծննդ. Ա. 1) թերթագալարը: Մովսեսի դիմանկարը Ծննդոց գրքում հանդիպում է ԺԳ. դարից, օրինակ՝ 1269 թ. Երզնկայի Աստվածաշնչում (Երուս. Հ^մ 1925). այստեղ նա պատկերված է օրենքի տախտակը ստանալիս (թ. 8բ) եւ Ծննդոց գիրքը շարադրելիս

⁵ Հստ Ս. Տեր-Ներսեսյանի՝ հայերեն Աստվածաշնչի նկարազարդ ամենավաղ օրինակները հայտնի են հենց ԺԳ. դարից (տես Ս. Տեր-Ներսեսյան, Երզնկայի 1269 թվի Աստվածաշունչը, Երուսաղեմ, թիվ 1925. «Էջմիածին», 1966, ԺԱ.—ԺԲ., էջ 28):

(թ. 9ա)⁶: Կիլիկյան ձեռագրերի նկարազարդումներում եւս հանդիպում է Մովսեսի դիմանկարը, օրինակ՝ 1292 թ. (ՄՄ Հ^մ 179, թ. 1բ⁷) եւ 1303–1304 թթ. (ՄՄ Հ^մ 182, թ. 2բ) Աստվածաշնչերում: Առաջինում Մովսեսը ծնկած է՝ հայացքը հառած երկնքից իրեն օրհնող Աստծու աջին, երկրորդում նա նույն դիրքով է՝ ձեռքում օրենքի տախտակը:

Մեր մանրանկարում երկնքի կապույտը խորհրդանշող ծիրում Աստծու օրհնող աջն ուղղված է դեպի Մովսեսը: Նման պատկերազարույթյուն տեսնում ենք Թորոս Տարոնացու երկու մանրանկարում (1317 թ. ՄՄ Հ^մ 353, թ. 8ա, նկ. 2, 1318 թ., ՄՄ Հ^մ 206, թ. 4ա, նկ. 3), որոնցում Մովսեսը կրկին պատկերված է գլխատառի կորում՝ նստած եւ Աստծու խոսքը գրելիս: Արվեստաբան Ս. Տեր-Ներսեսյանը նման պատկերումն անձանոթ է համարում բյուզանդական արվեստում, սակայն հիշատակում է ասորական երկու ձեռագիր, որտեղ հանդիպում է Մովսեսի կերպարը Ծննդոց գիրքը գրելիս⁸: Հիշյալ օրինակներից քիչ ավելի ուշ՝ 1375 թ., հայերեն մի Աստվածաշնչում նույնպես հանդիպում է Մովսեսի դիմանկարը «Ի» գլխատառի կորում, սակայն ոչ թե գրելիս, այլ ձեռքերն ու հայացքն ուղղած արարչությունը պատկերող մանրանկարների կողմը (Վիեն. Հ^մ 55, թ. 5ա)⁹: 1384 թ. մի Աստվածաշնչում Մովսեսի դիմանկարի այլ մեկնաբանություն ենք տեսնում: Մանրանկարը Ծննդոց գրքի բնագրի հանդիպակաց էջն է գրավում ամենակալ Քրիստոսի պատկերի հետ միասին (ՄՄ Հ^մ 4113, թ. 2բ)¹⁰: Մովսեսը պատկերված է ոչ թե երիտասարդ, այլ մորուսով, Ծննդոց գրքի առաջին բառերը գրելիս, իսկ վերելում Ամենակալն է՝ գահին բազմած, շրջապատված քառակերպով եւ երկու հրեշտակով:

Ի տարբերություն Թորոս Տարոնացու ծաղկած եւ այլ համեմատելի օրինակների՝ Ավագի «Ի» գլխատառն առանձնանում է աղավաղված Սուրբ

⁶ Տե՛ս անդ, էջ 29, 31–32, պատկ. 2, 3. նաեւ՝ է. ԿՈՐԵՄԱՋՅԱՆ, Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ.—ԺԴ. դդ., հրատ. պատր.՝ Ս. Վարդանյան, Գ. Տեր-Վարդանյան, Երևան, ՄՄ, 2015, էջ 49, նկ. 32–33:

⁷ Մանրանկարի վերատպությունը տե՛ս В. КАЗАРЯН, С. МАНУКЯН, Матенадаран, Армянская рукописная книга VI—XIV веков, т. 1, Москва, 1991, էջ 189, նկ. 355:

⁸ Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 33:

⁹ Վերատպությունը տե՛ս Հ. ԵՒ Հ. ԲՈՒՇԱՆՋԷՆ, աշխատ.՝ Եւա Յիմմերմանի, «Նկարազարդ հայկական ձեռագիրներ Մխիթարեան միաբանության Վիեննա», համառոտ գերմ. բնագրէն հայերէնի թարգմ.՝ Հ. Պ. Տէր-Պօղոսեան, Վիեննա, 1978, տախտ. 42, նկ. 101: Մատչանը, ըստ Բուշանյանների, նկարազարդվել է Բջնիում, եւ մանրանկարիչ Մելքիսեդեկի ոճը հիշեցնում է Սարգիս Պիծակի ոճը (տե՛ս անդ, էջ 30):

¹⁰ Վերատպությունը տե՛ս Ա. ԳԵՌՈՐԳՅԱՆ, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն (IX—XIX դդ.), տպագր. Գահիրէ, 1998, էջ 143:

Հոգու պատկերի գոյությունը: Այն առկա է նաև Սարգիս Պիծակի ծաղկած 1338 թ. Աստվածաշնչի Ծննդոց գրքի տիտղոսաթերթում, սակայն ոչ թե «Խ» գլխատառում, այլ կիսախորանի կենտրոնում (ՄՄ Հ^{մր} 2627, թ. 3ա): Հայր Աստծու աջը, Սուրբ Հոգու եւ Քրիստոսի («Ի» տառի ուղղահայաց մասնիկի ստորին մասում) պատկերների հետ միասին, ներկայացնում է Սուրբ Երրորդությունը (դիտարկումը՝ հայագետ Մայքլ Սթոունի): Վերջինս հանդիպում է նաև Սարգիս Պիծակի ծաղկած վերոնշյալ Աստվածաշնչում (թ. 2բ): Երկու ձեռագրում էլ տեսնում ենք մանրանկարները տեղորոշելու եւ պատկերագրելու տարբերություն. Սարգիս Պիծակի ծաղկած մատյանում այն նախորդում է Ծննդոց գրքի բնագրին, եւ Սուրբ Երրորդությունը քառակերպ գահի վրա Հայր Աստված, Քրիստոս եւ Սուրբ Հոգի պատկերագրությամբ է հանդես գալիս: Մինչդեռ Ավագի պատկերումն առավել խորհրդանշական բնույթ ունի՝ Հայր Աստծու աջը, Սուրբ Հոգին եւ Հիսուս Քրիստոս¹¹:

Ավելի ուշ՝ ԺԷ. դարում ստեղծված մանրանկարներում Ծննդոց գրքի տիտղոսաթերթին հաճախ է հանդիպում Սուրբ Երրորդության պատկերագրությունը: Օրինակ՝ 1660 թ. Ղրիմում լրացված (ՄՄ Հ^{մր} 2705, թ. 4ա)¹² կամ 1620 թ. եւ 1640 թ. Կ. Պոլսում ընդօրինակված Աստվածաշնչերում (Երուս., Հ^{մր} 428, թ. 9ա, Հ^{մր} 1932, թ. 15ա)¹³:

Հայկական մանրանկարներում արարչագործության պատկերների ձեւավորման եւ պատկերագրության մասին ուսումնասիրություններ են կատարել Աստղիկ Գեւորգյանը¹⁴ եւ Ավետ Ավետիսյանը¹⁵, սակայն նրանց անծանոթ է եղել Ավագ Ծաղկողի մանրանկարը:

¹¹ Աղավնակերպ Սուրբ Հոգուն Հոր եւ Որդու միջեւ պատկերելը մեզ ծանոթ է Ավագի ծաղկած մեկ այլ Աստվածաշնչի՝ Եսայի մարգարեի տեսիլքը պատկերող մանրանկարից (ՄՄ 4429, թ. 22բ), մանրամասն տես՝ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Եսայի մարգարէի տեսիլքը մանրանկարիչ Աւագի արուեստում, «Սիոն», 2019, թ. 1—2—3, էջ 48—57:

¹² Այս մանրանկարում, բացի Սուրբ Երրորդության պատկերից, այլ մանրամասներ եւս առկա են, որոնք առանձին քննության նյութ են: Հստ տեսաբանների այս Աստվածաշնչի ընդօրինակությունն ու նկարագրողումը երեք փուլով է ընթացել, մանրամասն տես՝ Յ. ԿՈՐԽՄԱՅՅԱՆ, Армянская миниатюра Крыма (XIV—XVII вв.), Ереван, 1978, էջ 56. H. und H. BUSCHHAUSEN, E. KORCHMASJAN, Armenische Buchmalerei und Baukunst der Krim, Erevan, ed. "Nairi", 2009, էջ 203, պոլս. 181, նկ. 862:

¹³ Մանրանկարների վերատպությունները տես՝ "Armenian Art Treasures of Jerusalem", ed. by B. Narkiss, in Collaboration with Stone M., Historical survey by Sanjian A., Managing ed. Peli A., Jerusalem, Massada press, 1979, պատկ. 142—143:

¹⁴ ՏԷՍ Ա. ԳԵՒՈՐԳՅԱՆ, Արարչագործության պատկերի տարբերակները եւ սկզբնաղբյուրները հայկական մանրանկարներում, ԼՀԳ, 1982, ապրիլ, թ. 4 (472), էջ 78—85:

¹⁵ ՏԷՍ Ա. ԱՒԵՏԻՍՅԱՆ, Փրկագործութեան թեման Զաքարիա Աւանցու մանրանկարներում, 2010, թ. Լ., էջ 78—79, 81—87:

Արարչագործությունը պատկերող տեսարանները հայտնի են ԺԳ. դարից սկսյալ, օրինակ՝ Թորոս Տարոնացու վերոնշյալ երկու¹⁶ 1367—1371 թթ. (ՄՄ Հ^ժ 352, թ. 3բ, նկ. 4)¹⁷ եւ 1375 թ. (Վիենն, Հ^ժ 55, թ. 5ա)¹⁸ Աստվածաշնչերից:

Մանրանկարիչ Ավագը վեցօրյա արարչագործությունը պատկերել է ոսկերիզ եւ ոսկեգույն խորքով ուղղահայաց ձգվածություն ունեցող վեց շրջանակի մեջ: Առանձին հատվածներում պահպանված ոսկու հետքերը թույլ են տալիս եզրակացնել, որ մանրանկարի խորքն ի սկզբանե ծածկված է եղել ոսկով: Արարչի դերում հանդես է գալիս Քրիստոս՝ իբրեւ Բանն Աստծու (Հովհ. Ա. 1, Հայտն. ԺԹ. 13): Նա պատկերված է կանգնած՝ երեք քառորդ դիրքով, գլխին՝ լուսապսակ: Արարչության օրերին զուգընթաց փոփոխվում է Քրիստոսի հանդերձանքի գույնը՝ վարդագույն, մորեգույն, կանաչ, սակայն անփոփոխ է Նրա թիկնոցի կապույտը (բացառությամբ արարչության չորրորդ օրը պատկերող մանրանկարի): Ավելի ուշ՝ 1356—1358 թթ. նկարազարդած Աստվածաշնչի հիշատակարանում մանրանկարիչ Ավագը գույների եւ դրանց խորհրդի վերաբերյալ հետաքրքիր հիշատակություններ է թողել՝ կապույտը բնորոշելով որպես թագավորական, իսկ ծիրանին՝ պայծառության եւ նազելի վայելչության գույն¹⁹:

Արարչագործությունը Ծննդոց գրքի գլխատառում պատկերելու նման ձեւավորումներ տեսնում ենք մասնավորապես արեւմտաքրիստոնեական արվեստում ԺԲ. դարավերջից (լատ. “I” գլխատառի

¹⁶ Ավագի եւ Թորոս Տարոնացու ՄՄ Հ^ժ 206 մատյանների միջեւ առնչությունն առաջինը նկատել է Ս. Տեր-Ներսեսյանը (տե՛ս Ս. Տեր-Ներսեսյանի թվալին արխիվ (այսուհետեւ՝ Ս. Տ. Ն.), ՄՄ վավերագիր 695, թ. 2ա): Մեկ այլ վավերագրում հեղինակը համառոտ նկարագրում է Ավագի Աստվածաշնչի տիտղոսաթերթի նկարազարդումը (տե՛ս Ս. Տ. Ն., ՄՄ խտասկավառակ ԺԳ., թղթապանակ Վենետիկ, 935, բնագիր, լուսապատճեն 5, 6):

¹⁷ Տե՛ս S. DER NERSESSIAN, Western Themes in Armenian Manuscripts, in Byzantine and Armenian Studies, t. I, Imprimerie Orientaliste - Louvain, 1973, էջ 612. նաեւ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 81:

¹⁸ Արարչագործությունն այս մանրանկարում պատկերված է «Ժ» գլխատառի ուղղահայաց մասում, եւ որպես Արարիչ՝ հանդես է գալիս Քրիստոս մորուսով եւ խաչաձեւ լուսապսակով:

¹⁹ «...գևազս գնկառող սուրբ Աստուածաշնչիս զոր ոսկեակար դեղօք եւ լազուարդօք եւ զոր սատակ ի՜նձ ըստ համօրեն նկարողացն...» (ՄՄ Հ^ժ 6230, թ. 303բ), «...եւ վերստին քակել գկազմն եւ մեծաձախ երանգօք եւ ոսկեակար դեղօք եւ քազաւորական լազուարդօք եւ ծիրանօք ամենայն պայծառութեամբ եւ նազելի վայելչութեամբ ծաղկել եւ պատուել մեծափառ տնօրինականացն պատկեօք...» (ՄՄ Հ^ժ 6230, թ. 505բ): Մեջբերված երկրորդ հիշատակարանը տե՛ս Ա. ԳԵՆՈՐԳՅԱՆ, Ինչպես էին նկարազարդվում ձեռագրերը, Բնշ, 1991, թ. 2, էջ 76:

ձեւավորումներում)²⁰։ Բերենք մի քանի օրինակ մեզ հետաքրքրող շրջանին ավելի մոտ՝ 1275–1300 թթ. հարավային Ֆրանսիայում տեղագրված (Քլիվլենդ Հ^մ 2008.2, թ. 1բ²¹), ԺԳ. դարի վերջին քառորդով թվագրվող հյուսիսարեւելյան Ֆրանսիայում (Մորգան Հ^մ 969, թ. 5բ²²) եւ Բոլոնիայում ընդօրինակված (Բրիտ. Հ^մ 18720, թ. 5ա²³), 1391 թ. ու 1410 թ. չեխական երկու (Մորգան Հ^մ 833, թ. 5ա²⁴, Հ^մ 317, թ. 6ա²⁵), անգլիական (Բրիտ. Հ^մ 250, թ. 6բ²⁶) Սուրբ Գրքերի համանուն մանրանկարները։ Ուշագրավ է, որ ինչպես Ավագի, այնպես եւ համեմատելի մանրանկարներում շրջանակները թեպետ տարբեր են՝ շրջանաձեւ, ձվաձեւ, սակայն իրարից անշատ չեն։ Կարծում ենք՝ այս հանգամանքը միտված է ցույց տալու Աստծու արարչության օրերի անբաժանելի շարունակականությունը։ Պատկերագրական ընդհանրություններով հանդերձ՝ Ավագի մանրանկարն ունի տարբերակիչ մի շարք մանրամասներ. դրանցից մեկը Քրիստոսին անմորուս եւ «էմմանուել» պատկերագրությամբ ներկայացնելն է։ Նույն մանրամասը տեսնում ենք Թորոս Տարոնացու համեմատելի երկու մանրանկարում էլ, իսկ ավելի ուշ՝ ԺԶ. դարում, Զաքարիա Ավանցու արվեստում (բացառությամբ Եւայի ստեղծման եւ Աստծու հանգստի պատկերների)²⁷։ Զաքարիա Ավանցու մանրանկարների օրինակով Քրիստոսի պատկերին նախապատվություն տալը Ա. Ավետիսյանը բացատրում է հնավանդ մի կանոնով, ըստ որի՝ Հայր Աստված աննկարագրելի է Իր էությունմբ, ուստի Նրան պատկերում էին Հիսուսի՝ մարդացյալ Աստծու նմանողությամբ կամ պարզապես

²⁰ Թորոս Տարոնացու մանրանկարների օրինակով այս կապը նկատել է նախ Ս. Տեր-Ներսեսյանը, ապա՝ է. Կորխմազյանը (տե՛ս S. DER NERSESSIAN, նշ. աշխ., էջ 612. E. KORCHMASIAN, T'oros Taronac'i, ein Armenischer Buchmaler des 14 jahrhunderts und seine Franzosischen Vorbilder, Wiener Jahrbuch für Kunstgeschichte, Herausgegeben vom Bundesdenkmalamt Wien und vom Institute für Kunstgeschichte der Universität Wien, Sonderdruck, Böhlau Verlag, Wien, Köln, 1989, band XLII, էջ 89–90, նկ. 22, 23):

²¹ Թվային պատճենը տե՛ս <http://www.clevelandart.org/art/2008.2.1.a> (11.07.2020):

²² Թվային պատճենը տե՛ս <http://ica.themorgan.org/manuscript/page/3/145388> (11.07.2020):

²³ Թվային պատճենը տե՛ս <http://www.bl.uk/catalogues/illuminatedmanuscripts/ILLUMIN.ASP?Size=mid&IllID=13666> (11.07.2020):

²⁴ Թվային պատճենը տե՛ս <http://ica.themorgan.org/manuscript/page/2/158986> (11.07.2020):

²⁵ Թվային պատճենը տե՛ս <http://ica.themorgan.org/manuscript/page/2/77420> (11.07.2020):

²⁶ Թվային պատճենը տե՛ս <http://www.bl.uk/catalogues/illuminatedmanuscripts/ILLUMIN.ASP?Size=mid&IllID=4316> (11.07.2020):

²⁷ Տե՛ս Ա. ԱՒԵՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 83–4:

խորհրդանշորեն²⁸: Ավագի մանրանկարում Հայր Աստծու ներկայության խորհրդանշական պատկերման դրսեւորում կարելի է համարել նաեւ Նրա աջը:

Թեպետ մանրանկարի որոշ հատվածներ վնասված են, այդուհանդերձ՝ պահպանված վիճակը բավարար է դրանք ուսումնասիրելու համար: Առաջին շրջանակում պատկերված է արարչության առաջին օրը՝ լույսի զատումը խավարից (հմմտ. Ծննդ. Ա. 1—5): Սովորաբար Քրիստոս պատկերվում է երկրագունդը ձեռքին, օրինակ՝ Թորոս Տարոնացու մանրանկարներում: Մինչդեռ Ավագի պատկերագրության մեջ տեսնում ենք լույսի եւ խավարի անջատման առավել խորհրդանշական մոտեցում. Քրիստոս, աջը վեր բարձրացրած, զատում է լույսը ավելի մուգ տոնով պատկերված խավարից:

Արարչության երկրորդ օրը անջրպետելով ջրերը՝ Աստված ստեղծեց տարածությունը՝ կոչելով այն երկինք (հմմտ. Ծննդ. Ա. 6—8): Մանրանկարիչ Ավագն այս արարումը պատկերել է Քրիստոսի ոտքերի դիմաց ջրային միջավայրի, ճերմակով ընդգծված ալիքների եւ վերելում առկայծող աստղալից երկնքի տեսքով: Ալիքները հիշեցնում են Թորոս Տարոնացու պատկերները, սակայն Ավագի մանրանկարում ալիքների կապույտն անջատված չէ երկնքի կապույտից. ստորին մասի ջրերը վեր բարձրանալով միաձուլվում են երկնքին եւ իջնում վար՝ կազմելով շրջան:

Արարչության երրորդ օրն Աստված ստեղծեց երկիրը եւ ասաց. «Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ, սեմանել սեմն ըստ ազգի եւ ըստ նմանութեան. եւ ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում, որոյ սեմն իւր ի նմին ըստ ազգի ի նմանութիւն ի վերայ երկրի» (Ծննդ. Ա. 11): Արարման այս դրվագում Քրիստոս ձեռքերն առաջ է պարզել դեպի կանաչ խոտածածկույթը, որից ծլարձակել է կարմիր պտուղներով եւ կանաչ տերեւներով ծառի ճյուղը (նկարադաշտի փոքրության պատճառով նկարիչը սոսկ պտղատու մի ճյուղ է պատկերել): Կարմիր պտուղներով ծառ է պատկերված նաեւ Ղրիմի 1367—1371 թթ. Աստվածաշնչի՝ արարչագործությունը պատկերող նույն դրվագում:

Արարչության չորրորդ օրն Աստված երկնքում ստեղծեց լուսատուները, որ լուսավորեն երկիրը եւ բաժանեն ցերեկն ու գիշերը (հմմտ. Ծննդ.

²⁸ Տե՛ս անդ, էջ 91:

Ա. 14—19): Երկնքի կապույտ ծիրում նկարիչը պատկերել է երկու կլոր լուսատուները՝ արեգակը եւ լուսինը՝ համապատասխանաբար մեծ ու փոքր, սակայն աստղերը բացակայում են (ի տարբերություն Թորոս Տարոնացու՝ ՄՄ Հ^ր 353 մատյանում առկա մանրանկարի)՝ հավանաբար արարման երկրորդ օրը պատկերող դրվագում արդեն ներկայացրած լինելու պատճառով: Փոխարենը մի հետաքրքիր մանրամասն ենք նկատում. Քրիստոսի առջեւ՝ մանրանկարի ստորին մասում, պատկերված են ճարտարապետական ձևեր՝ կենտրոնում բարձր գմբեթով: Ինքնատիպ այս մանրամասնը (համեմատելի որեւէ այլ օրինակ մեզ առայժմ հայտնի չէ), կարծում ենք, եկեղեցու կամ տաճարի²⁹ որպես երկրի վրա Աստծու տան պատկերումն է:

Արարչության հինգերորդ օրն Աստված ստեղծեց ջրային կենդանիներին ու թռչուններին, որոնք պետք է լցնեին ծովերի ջրերը եւ բազմաձայն երկրի վրա (հմմտ. Ծննդ. Ա. 20—23): Այս դրվագը մանրանկարիչը պատկերել է ծովի կապույտ ջրերում ձկների հազիվ նշմարվող սեւ ուրվագծերով եւ ջրերից առանձնացած ճերմակ թռչուններով, որոնց Արարիչն օրհնում է աջով:

Աստված արարեց նաեւ չորքոտանի կենդանիներին ու սողուններին (հմմտ. Ծննդ. Ա. 24—25), որոնց մանրանկարիչ Ավագը չի պատկերել՝ ի տարբերություն Թորոս Տարոնացու:

Արարչության վեցերորդ օրն Աստված ստեղծեց մարդուն՝ Ադամին՝ Իր կերպարանքով եւ նմանությամբ (հմմտ. Ծննդ. Ա. 26—27, Բ. 7, Իմաստ. Բ. 23): Սովորաբար ընդունված է Ադամին պատկերել երիտասարդ հասակում եւ մերկ՝ համաձայն հրեական ավանդույթի, որտեղ նա բնորոշվում է ոչ թե որպես երեխա, այլ քսան տարեկանը բոլորած տղամարդ՝ ի սկզբանե լինելով մարմնեղ, արտակարգ զորությամբ ու հոգեւոր կատարելությամբ օժտված³⁰: Մանրանկարիչ Ավագն Ադամին պատկերել է ավելի հասուն՝ միջին տարիքում, երկար շագանակագույն վարսերով եւ մորուսով: Նախաստեղծի մորուսով եւ երկար վարսերով պատկերը հիշեցնում է ավելի վաղ՝ 915—921 թթ., Ադթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնաքանդակի Ադամի պատկերը, որին կից մակագրությունը վկայում է եղեմական պարտեզում մյուս շնչավորների հանդեպ Ադամի իշխանու-

²⁹ Թեպետ Ծննդոց գրքում Աստծու տաճարի մասին հիշատակություն առկա չէ, բայց ելից գրքում արդեն սկսում է հանդիպել (ԻՆ. 9, ԻԶ. 30 եւ այլն):

³⁰ Sѓu V. MAVROSKA, Adam and Eve in the Western and Byzantine Art in the Middle Ages, Inaugural dissertation zur Erlangung eines Doktors der Philosophie im Fachbereich Sprach — und Kulturwissenschaften der Johann-Wolfgang-Goethe Universitt zu Frankfurt am Main, 2009, էջ 80:

թյան մասին (հմմտ. Ծննդ. Բ. 20)³¹: Ադամն Արարչի առջեւ ծնրադիր է՝ ձեռքերն առաջ պարզած, իսկ Քրիստոս մի ձեռքը հպել է նրա ուսին, մյուսը՝ գլխին³²:

Արարչագործությունյան այս դրվագի ամենաուշագրավ մանրամասներինց մեկը նախաստեղծի ոչ թե մերկ, այլ հագուստով հանդես գալն է՝ ի տարբերություն Թորոս Տարոնացու մանրանկարների, որտեղ Ադամի ու Եւայի արարումները ներկայացված են միասին, եւ հետեւելով ընդունված ավանդությունը՝ մանրանկարիչը երկուսին էլ պատկերել է մերկ ու երիտասարդ: Արարչագործությունյան շարքում Ադամին հագուստով կարելի է տեսնել ավելի ուշ՝ ԺԶ. դարում, Հակոբ Զուղայեցու (1585 թ., ՄՄ ՀՊՐ 9691, թ. 20բ³³, 1586 թ., Սամ Ֆոգգ, այսպես կոչված “Ex Pozzi” հավաքածու, թ. 370բ [12բ]³⁴, 1587 թ., Մանչեսթր ՀՊՐ 20, թ. 9բ³⁵), Զաքարիա Ավանցու (1595 թ., ՄՄ ՀՊՐ 2804, թ. 8բ) արվեստում³⁶: Սակայն այս մանրանկարներում Ադամը հագուստով է ոչ թե իր³⁷, այլ Եւայի արարման տեսարանում՝ ոչ թե մերկությունն ամբողջությամբ, այլ մինչեւ ծունկը ծածկող հանդերձով:

Ուշագրավ է, որ մեր մանրանկարում բացակայում է Եւայի արարումը՝ ի տարբերություն հայկական եւ օտար համեմատելի օրինակների: Կարծում ենք՝ դա պետք է բացատրել Ադամի արարման յուրօրինակ եւ բազմախորհուրդ նշանակությունամբ, որտեղ Եւայի արարումն ավելորդ կլիներ:

³¹ Ադամի այս պատկերաբանդակի հետ համեմատություն արել ենք նույն Աստվածաշնչի մեկ այլ մանրանկարում՝ դրախտի պարտեզում Ադամի թագավորական պատկերի մեկնություն առնչությամբ (տե՛ս Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հին Կտակարանի նկարազարդումը..., էջ 315):

³² Քրիստոսի եւ Ադամի ձեռքերի շարժումները հիշեցնում են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու Ծննդոց շարքի համանուն որմնանկարը: Գծապատկերն ըստ Ն. Թիերիի (տե՛ս N. THIERRY, Le Cycle de la Creation et de la Faute d'Adam a Alt'amar, REArm, t. XVII, Nouvelle Serie, Paris, 1983, էջ 312, 314, սյուն. III, V, նկ. 1, 8):

³³ Վերատպությունը տե՛ս T. GREENWOOD, E. VARDANYAN, Hakob's Gospel: The life and work of an Armenian Artist of the sixteenth century, London, Sam Fogg, 2006, էջ 28, նկ. 13:

³⁴ Տե՛ս Sam Fogg, Ex Pozzi Collection. ձեռագիրն ունի երկու թերթակալում՝ առաջինը ներկայացնում է հին, իսկ երկրորդը՝ նոր թերթահամարը (անդ, էջ 77, 87):

³⁵ Թվային պատճենը տե՛ս <https://luna.manchester.ac.uk/luna/servlet/detail/Manchester~91~1~416826~191381?qvq=q%3Aarmenian+ms&mi=11&trs=12> (11.07.2020):

³⁶ Տե՛ս Օ. ՔԵՆԵՇՅԱՆ, Օխուի Ավետարանը եւ դրա աղբյուրները Հակոբ Զուղայեցու արվեստի հետ, ԲՄ, 2015, թ. 22, էջ 95:

³⁷ Ադամի արարումն այս ձեռագրերում քննվող պատկերատեսակից խիստ տարբեր է ներկայացված. Ադամը երիտասարդ տարիքում է, անմորուս, տեսանելի են միայն գլուխը կամ մերկ կիսանդրին:

Ադամի գլխավերեւում մանրանկարիչը պատկերել է կանաչ տերեւներով մի ճյուղ, որը կրկնում է բարու եւ շարի գիտութեան ծառի ճյուղերի ձեւը: Ադամի արարման տեսարանում հաճախ կարելի է տեսնել ծառի պատկերում, որը դրախտային պարտեզի հետ է կապվում. օրինակ՝ Ադամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարում³⁸, 840 թ. Տուրում նկարագարված Աստվածաշնչում (Բրիտ. Հժր. 10546, թ. 5բ)³⁹ եւ 1170 թ. անգլիական Հանթերյան Սաղմոսարանում (Գլազգո Հժր. Ս. 3. 2 (229), թ. 7բ)⁴⁰ եւ այլն: Հանթերյան Սաղմոսարանում պատկերված է բարու եւ շարի գիտութեան ծառը, եւ ճյուղը կախված է Ադամի գլխավերեւում, ինչպես մեր մանրանկարում է: Կարելի է ենթադրել՝ մանրանկարիչ Ավագը, տեղի փոքրութեան պատճառով կենաց ծառից միայն մի ճյուղ պատկերելով, փորձել է դրախտային միջավայրում ամբողջացնել արարումը, որի պատկերագրական զուգահեռներն արդեն կային:

Վեցօրյա արարչությունից հետո՝ յոթներորդ օրը, Աստված հանգստացավ (Ծննդ. Բ. 2—3): Քրիստոս բազմած է կարմիր գորգի վրա տեղադրված գահավորակին, որի շուրջ քառակերպի չորս խորհրդանշներն են՝ ի տարբերություն համաժամանակյա մանրանկարների, որտեղ դրանք բացակայում են: Ավելի ուշ Քրիստոսին քառակերպ գահին տեսնում ենք Հայր Աստծու հանգիստը պատկերող Զաքարիա Ավանցու մանրանկարում⁴¹:

Գաղափար օրինակի խնդիրը: Ծննդոց գրքի՝ մանրանկարիչ Ավագի կիրառած պատկերագրությունը, ինչպես տեսանք, անմիջական զուգահեռ ունի նրա ավագ սերնդակից Թորոս Տարոնացու արվեստի հետ: Ավագի համար որպես նախօրինակ, անշուշտ, կարող էին ծառայել Թորոս Տարոնացու համանուն մանրանկարները, եթե հաշվի առնենք, որ երկու մանրանկարիչն էլ կրթություն են ստացել Գլաձորի համալսարանում⁴²: Արարչագործության տեսարանների պատկերումը, որը, ինչպես

³⁸ Տե՛ս N. THIERRY, նշ. աշխ., էջ 293, պլան. III, V, նկ. 1, 8:

³⁹ Թվային պատճենը տե՛ս <http://www.mondimedievali.net/Artemedievale/narrare/adamo.htm> (11.07.2020):

⁴⁰ Թվային պատճենը տե՛ս <http://special.lib.gla.ac.uk/exhibns/month/may2007.html> (11.07.2020):

⁴¹ Տե՛ս Ա. ԱՌԵՏԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 86:

⁴² Նրանց արվեստի առնչություններն առաջինը նկատել է Թուրքեն Դրամբյանը (տե՛ս Р. ДРАМПЯН, Армянская миниатюра и книжное искусство, Очерки по истории искусства Армении, сборник статей, Москва—Ленинград, 1939, էջ 24. նույն հեղինակի՝ «Из Истории Армянского искусства», сборник статей, 2-е переизд., ред.-состав. и автор вступ. статьи И. Драмбян, Ереван, 2018, էջ 29:

նկատեցինք, ունի արեւմտյան ազդեցութիւն, Թորոս Տարոնացու արվեստի օրինակով Ս. Տեր-Ներսէսյանը բացատրում է 1318 թ. քիչ անց Ատրպատականի Սուլթանիէ քաղաքում Մարաղայի լատին եպիսկոպոսութեան հիմնադրմամբ, որի հետ Գլաձորի համալսարանն ուներ կապեր⁴³։ Հեղինակն ուշագրավ դիտարկումներ է անում Գլաձորի համալսարանի հոգեւորականների եւ Մարաղայի լատին միսիոներների հարաբերութիւնների վերաբերյալ⁴⁴։ Նշենք, որ Ավագն իր Աստվածաշունչը ծաղկել է հենց Սուլթանիէում, եւ չբացառելով Թորոս Տարոնացու արվեստի հնարավոր ազդեցութիւնը՝ չենք կարող չդիտարկել նաեւ լատին ձեռագրերի հետ ուղղակի առնչութիւնը։ Հատկապէս՝ եթէ հաշվի առնենք, որ այս Աստվածաշունչի Ծննդոց գրքի մյուս մանրանկարներում Ավագը կիրառել է պատկերազարական այնպիսի մանրամասներ, որոնց զուգահեռները Թորոս Տարոնացու եւ առհասարակ հայկական մանրանկարչութեան մեջ առայժմ մեզ հայտնի չեն, սակայն տեսանելի են լատին միջավայրում ստեղծված ձեռագրերում⁴⁵։ Հնարավոր գաղափար օրինակների կիրառումը բնավ չի նսեմացնում Ավագի արվեստի յուրօրինակութիւնը՝ շնորհիվ մի շարք մանրամասների. օրինակ՝ գմբեթանման շինութեան պատկերումն արարչութեան շորրորդ օրը կամ Ագամի պատկերն արարչութեան վեցերորդ օրը։

Դիտարկումներ մանրանկարների խորհրդաբանության շուրջ

Այժմ անդրադառնանք Վեն. Հ^{մր} 935 Աստվածաշունչի Ծննդոց գրքի տիտղոսաթերթի պատկերների խորհրդաբանութեանը, որը կօգնի ըմբռնել պատկերազարական թե՛ ընդունված, թե՛ արտասովոր թվացող մանրամասների նշանակութիւնը։ Եղիշեն իր «Մեկնութիւն Արարածոց» աշխատութեան մեջ նկարագրում է արարչագործութիւնը։ Նա Ծննդոց գրքի «Ի սկզբանէ առաւ Աստուած զերկին եւ զերկիր...» (Ա. 1) ընթերցվածն այսպէս է մեկնում. «Նւ երկին երկու՝ հուր եւ աւդ, եւ երկիր երկու այլ՝ ջուր եւ հող, իսկ որ է ճշմարիտն Հայր, Բան՝ Որդի, է՝ Հոգին Սուրբ.

⁴³ Տէս S. DER NERSESSIAN, նշ. աշխ., էջ 629:

⁴⁴ Տէս անդ, էջ 629–630 (հեղինակն այս հարաբերութիւններն ուսումնասիրում է Գլաձորի դպրոցի մանրանկարիչ Թորոս Տարոնացու արվեստում արեւմտյան մի շարք տարրերի ի հայտ գալու առնչութեամբ):

⁴⁵ Տէս Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հին կտակարանի նկարազարդումը..., էջ 326–327, 329:

Աստուած՝ եռանձնեայ եւ մի արար զերկին եւ զերկիր»⁴⁶։ Նման հատված է առկա նաեւ Տիմոթեոս վարդապետի «Մեկնութիւն Արարածոց» երկում. «...իսկ՝ Հայր, Բան՝ Որդի, է՝ ամենասուրբ Հոգին...»⁴⁷։ Այստեղից էլ պարզ է, թե ինչու է Ավագը Ծննդոց գրքի «Ի» գլխատառը ձեւավորել Սուրբ Երրորդության պատկերով։ Հովհաննէս Երզնկացին վերոհիշյալ ընթերցվածը (Ծննդ. Ա. 1), ինչպէս Եղիշեն, ներկայացնում է չորս տարրերի արարմամբ. «Ըստ այսմիկ եւ երկին երկու իրս նշանակէ. զհուր եւ զհողմ, եւ երկիր՝ զչուր եւ զհող, որ եմ տարեւր չորս, յորմէ աշխարհ լիւ իւրով հաստատեցան...» (Բ. ԺԵ. 5)⁴⁸։

Արարչության երկրորդ օրը պատկերող դրվագում ուշագրավ է կապույտի շրջապատւյտը ձվածիրի ներսում. սա ասես կերպավորում է լինի Տիմոթեոս վարդապետի տողերի, ըստ որոնց՝ ձվի օրինակով՝ ջրերն ամպերով ամեն կողմից, ինչպէս արգանդում, պահում են այս աշխարհը⁴⁹։ Զրային միջավայրի կապույտը երկնային կապույտից առանձնացնելու նպատակով՝ նկարիչը երկնքում պատկերել է առկայծող աստղեր։

Երկրի՝ ցամաքի արարումը մանրանկարիչը ներկայացրել է կանաչ խոտաբույսեր պատկերելով։ Այս առնչությամբ Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայր Բարսեղ Կեսարացին «Յաղագս վեցաւրեայ արարչութեան» երկասիրութեան⁵⁰ Ե. ճառում գրում է. «Արդ՝ Բանգի ամենայն ինչ, զոր բոլիս երկիր, զկանաչութեան գոյն ունի, վասն այնորիկ ասէ, թէ՛ բոլիսցէ երկիր դալարի...»⁵¹։ Պտղաբեր ծառ խորհրդանշող կարմիր պտուղներով ճյուղն իր ձեւով հիշեցնում է եղեմական պարտեզում պատկերված կենաց ծառը։ Վարդան Արեւելցին գրում է. «Եւ այնմ ատուր [երեւաբքի] եղև

⁴⁶ Եղեցե, Մեկնութիւն Արարածոց, աշխատ.՝ Լ. Խաչիկեանի, ծանօթ. եւ խմբագր.՝ Յ. Քէոսէանի, թարգմ.՝ Մ. Փափագեանի, Երեւան, 2004, էջ 18։

⁴⁷ Ն. ԱԿԻՆԵԱՆ, Տիմոթեոս վարդապետ եւ իր մեկնութիւնն Արարածոց գրոց (ԺԱ. դար), ՀԱ, 1952, ԿԶ. տարի, թ. 1—3, էջ 9։

⁴⁸ ՅՈՎԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ, Ճառեր եւ քարոզներ, Մատենագրութիւն Ա., աշխատ.՝ է. Բաղդասարեանի, խմբագր.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2013, էջ 61։ Հեղինակը նույն միտքը կրկնում է արարչագործության օրերի առանձին նկարագրության առնչությամբ՝ նմանեցնելով չորս տարրերը ձվի կառուցվածքին (ԺԳ. Ե. 1 եւ ԺԳ. Թ. 3—8) (անդ, էջ 235, 238)։

⁴⁹ Տես «Յառաջաբան համառատ ի Ծննդոց, զոր արարեալ է Տիմոթեա լուսաւոր վարդապետի», աշխատ.՝ Յ. Քէոսէանի, ՄՀ, Ժ. դար, հտ. Ժ., 2011, էջ 915 (§161—162)։

⁵⁰ Այս երկասիրության հայերեն թարգմանության ժամանակի եւ դրա առանձնահատկությունների մասին տես Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երեւան, 1976, էջ 169—204։

⁵¹ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխատ.՝ Կ. Մուրադյանի, Երեւան, 1984, էջ 123։

դրախտն ընդ այլ ծառսն, յորում եւ տնկեցաւ ծառն կենաց եւ ծառն գիտութեան բարոյ եւ չարի...»⁵²: Նկատենք, որ Ավագի պատկերումը տարբեր է Թորոս Տարոնացու մանրանկարներից, որտեղ Արարիչն օրհնում է ցորենի հասկի նմանվող սերմնատու բույսը⁵³:

Արարչության չորրորդ օրը ներկայացնող դրվագում երկրի վրա պատկերելով գմբեթաձեւ շինություն, իսկ երկնքում՝ երկնային լուսատուներ՝ մանրանկարիչը, հավանաբար, փորձել է ամբողջացնել տիեզերքը՝ ցույց տալով երկրից երկինք անցումը:

Ձկների եւ թռչունների արարման խորհրդի մասին ուշագրավ համեմատություն է անում Տիմոթեոս վարդապետը՝ տարատեսակ ձկներն առաքինության օրինակ, իսկ ճայերն իբրեւ ծնողներին խնամող համարելով⁵⁴: Թռչունները, որոնք Ավագը պատկերել է ճախրելիս կամ ջրում լողալիս, իրենց ձեւով հիշեցնում են Տիմոթեոսի մեկնության մեջ հիշատակվող ճայերին:

Նախաստեղծի արարումը ներկայացնող մանրանկարում Ադամի կերպարն առաջմ շունի համեմատելի որեւէ օրինակ թե՛ համաժամանակյա, թե՛ առավել ուշ շրջանում ստեղծված պատկերազրույցյան մեջ: Ձեռագիր հիշատակարանում մարդու արարման մասին գրված է. «...եւ ապա կազմէր զտեսակ մարդոյ ի պատկեր բարեաւորութեան իւրոյ՝ ընձեռելով նմա շնորհս աննառելիս եւ աստուածապատումս...» (Թ. 448բ): Իսկ Բարսեղ Կեսարացին նշում է. «...ըստ բնութեան աստուածութեանն, նոյնպէս եւ նմանութիւնն իւր է...»⁵⁵: Մանրանկարիչ Ավագը նախաստեղծ Ադամին պատկերել է հասուն տարիքում՝ մերկությունը ծածկող հանդերձով, ինչն ընդգծում է նրա գերակայությունը մյուս արարածների նկատմամբ:

Նախաստեղծի արտաքին հատկանիշները հիշեցնում են Ադամարի Ս. Խաչ եկեղեցու Ադամի պատկերաքանդակը, սակայն մանրանկարում, կարծում ենք, մեկնաբանությունն այլ է: Ադամարի Ս. Խաչ եկեղեցու՝ Ադամի պատկերաքանդակն Իգոր Դորֆման-Լազարելը բնորոշում է

⁵² ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, Ճառք, ներբողեանք, աշխատ.՝ 3. Քէոսէանի, Երեւան, 2000, էջ 27:

⁵³ Յորենի հասկի վերաբերյալ հետաքրքիր մեկնություն ունի Բարսեղ Կեսարացին արարչագործությանը վերաբերող Ե. ճառում: Հեղինակը ցորենը նույնացնում է ճշմարիտ ուսուցման հետ (տե՛ս ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ, նշ. աշխ., էջ 140): Ուշագրավ է, որ ՄՄ 2^{րդ} 212 Ավետարանի հիշատակարանում Ավագը որոմը համեմատում է Աստուծոց հեռանալու, մոլորվելու հետ (309ա):

⁵⁴ Տէս «Յառաջաբան համառատ ի Ծննդոց, զոր արարեալ է Տիմոթեա լուսաւոր վարդապետի», էջ 916 (§188):

⁵⁵ Տէս ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ, նշ. աշխ., էջ 319:

իբրեւ թագավորի պատկեր⁵⁶։ Հեղինակն այս պատկերաքանդակի թագավորական խորհուրդը համեմատում է նախաստեղծի արարման խորհրդի հետ՝ հղելով Եպիփան Կիպրացու, Տիմոթեոս վարդապետի եւ այլոց մեկնություններին⁵⁷։ Առաջին հայացքից այս զուգահեռը բնորոշ է թվում նաեւ քննվող մանրանկարի համար, սակայն չմոռանանք, որ Ավագն Ադամին պատկերել է Արարչի առջեւ ծնրադիր։ Ենթադրում ենք՝ այս կարեւոր հանգամանքն ընդգծում է Աստծու հավիտենական գերակայությունը բոլոր կենդանի արարածների, այդ թվում՝ նախաստեղծի նկատմամբ։

Փաստորեն՝ Ադամի կերպարում մանրանկարիչ Ավագն ասես մի կողմից ընդգծում է նախաստեղծի աստվածանմանությունը եւ իշխանությունն այլ արարածների հանդեպ, մյուս կողմից՝ կանխորոշում նրա ապագա մեղքն ու անկումը։

Արարչի հպումն Ադամին կարելի է բացատրել Ագաթանգեղոսի ավանդած հետեւյալ՝ «զստեղծուածս ձեռաց քոց» եւ «ստեղծեալ զմարդն ձեռոք իւրովք»⁵⁸ տողերի կերպավորմամբ։ Մեկնողական գրականության մեջ այս մասին ուշագրավ տեղեկություններ են առկա։ Եկեղեցական նշանավոր հայր Իրենիոս Լուզիտանացու (Լիոնացի) «Հնդդէմ հերձուածոց» աշխատության մեջ գրված է. «Զի մարդ է խառնուած ոգւոյ եւ մարմնոյ՝ ըստ նմանութեանն Աստուծոյ տպաւորեցելոյ.... եւ ի ձեռն ձեռաց նորա ստեղծեցելոյ...», կամ՝ «...ի հանութենէ Հաւրն ձեռքն նորա զկենդանի մարդն գործեցին. զի եղիցի Ադամն ըստ պատկերի եւ նմանութեանն Աստուծոյ»⁵⁹։ Եպիփան Կիպրացին իր Ա. ճառում Ադամի արարումը մեկնում է ըստ Սաղմոսի (ՃԼԸ. 5). «...եւ Աստուած Բանն Հաւր հայէր ի գործս ձեռաց իւրոց՝ ունելով զարարչագործ աջն ի վերայ նորա...»⁶⁰։ Ուշագրավ է, որ մեր մանրանկարում Արարչի աջն է պատկերված՝ Ադամի գլխին հպվելիս։ Ադամի արարմամբ նրան հոգի, շունչ, անմահություն եւ միտք հաղորդելը Մ. Սթոունը բացատրում է ըստ Ս. Գրիգոր Լուսավորչի

⁵⁶ ՏՆՍ I. DORFMANN-LAZAREV, Kingship and hospitality in the Iconography of the Palatine Church at Alt'amar, in *Revista di Storia e Letteratura Religiosa*, Firenze, 2016/3, LII, էջ 495։

⁵⁷ ՏՆՍ I. DORFMANN-LAZAREV, Gagik Arcruni (908–943/4) un Roi Théologien, in *Journal of Eastern Christian Studies*, 2016, №. 68 (3–4), էջ 337–338։

⁵⁸ Բնագիրը տե՛ս «Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1909, էջ 42, 142։

⁵⁹ ԻՐԵՆԻՈՍ, Ցոյցք առաքելական քարոզութեանն (Հնդդէմ հերձուածոց), հրատ. պատր.՝ Կ. եպս. Տէր-Մկրտչեան, Ե. Տէր-Մինասեան, Լայպցիգ, 1910, էջ 9, 154։

⁶⁰ ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ, Ճառք, աշխատ.՝ Յ. Քէսսեանի, Ս. էջմիածին, 2013, էջ 69։

«Յաճախապատում ճառերի»՝ նույնացնելով դրանք չորս տարրերի հետ⁶¹: Առաջին մարդու արարումը նման բազմիմաստ պատկերմամբ ներկայացված է Վենետիկի Ս. Մարկոսի բազիլիկի՝ արարչագործությունը պատկերող ԺԳ. դարի խճանկարների շարքում, սակայն ոչ թե մեկ, այլ մի քանի դրվագի միջոցով⁶²:

Հայկական մանրանկարչության մեջ Ադամի արարման այսպիսի ինքնօրինակ պատկերման գեղարվեստական խտացումը հանդիպում է շուրջ կես դար ուշ՝ Առաքել Սյունեցու (1350–1422 թթ.) «Ադամգիրք» աշխատության մեջ՝ գրված 1401–1404 թթ.⁶³:

Հայր Աստծու հանգիստը պատկերելով եզեկիելի (Ա. 4–12) եւ Եսայիի մարգարեություններից (Ես. է. 14), ինչպես նաեւ Հայտնության գրքից (Դ. 6–7) ներշնչված՝ մանրանկարիչ Ավագը մի կողմից ընդգծել է Քրիստոսի մարդեղությունը, մյուս կողմից՝ շեշտել հայտնութենականության գաղափարը, որը, ինչպես գիտենք, առանցքային տեղ է զբաղեցնում նրա արվեստում⁶⁴: Ավագի ուսուցիչ Եսայի Նչեցին եզեկիելի մարգարեությանը նվիրված իր աշխատության մեջ գահի տեսիլքում Քրիստոսի կերպարը մեկնում է որպես Նրա մարդեղության խորհուրդ. «Տեսանի եւ ի մարդեղութիւն Քրիստոսի կաոփս. մարդն ի նա այն զի ի ձեռն մարմին լինելոյն ի չորից նիւթոց եկն առ մեզ...»⁶⁵: Ինչպես նշեցինք,

⁶¹ Տէս M. STONE, Adam and Eve traditions in Fifth-Century Armenian Literature, in *Le Muséon, Revue d'étude Orientales*, t. 119, fasc. 1–2, Louvain-la-Neuve, 2006, էջ 93, ծանոթ.՝ 19:

⁶² Տէս K. WEITZMANN, The Genesis Mosaics of San Marco and the Cotton Genesis Miniatures, in O. Demus, *The mosaics of San Marco in Venice, the Thirteenth Century*, Washington D. C., Chicago and London, 1984, հտ. I, էջ 111–113, հտ. II, նկ. 116–118. V. MAVROSKA, նշ. աշխ., էջ 83–84: Ս. Մարկոսի բազիլիկի այս խճանկարները Ք. Վեյցմանը կապում է վաղքրիստոնեական ավանդույթի հետ՝ համեմատելով Ե.–Ձ. դդ. թվագրվող հունարեն Քոթթոնի Աստվածաշնչի (Բրիտ. Cotton, Otho B VI) համանուն պատկերների հետ (տես K. WEITZMANN, նշ. աշխ., հտ. I, էջ 105, 112):

⁶³ Տէս ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՅԻ, Ադամգիրք, աշխատ.՝ Ա. Մադոյեանի, Երեւան, 1989, էջ 14, գլուխ Ա., §30–44. նաեւ՝ “Adamgirk”: The Adam Book of Arakel of Siwnik, trans. with an introd. by M. Stone, 2007, Oxford University Press, էջ 59, 86–87, Adamgirk I, chapter 1, §1.1.9, 1.1.10, 1.1.11:

⁶⁴ Տէս Լ. ՍԱՐԳՍԵԱՆ, Եսայի մարգարէի տեսիլքը..., էջ 70:

⁶⁵ Բնագիրը Երուս. Հ^ր 1159 ձեռագրից է, մեջ ենք բերում հետեւյալ աշխատությունից՝ TH. M. VAN LINT, Grigor Narekac'i's *Tal Yartu'tean*, in *Apocryphes arméniens: transmission-traduction-création-iconographie, Actes du colloque international sur la littérature apocryphe en langue arménienne* (Genève, 18–20 septembre, 1997), édités par Calzolari Bouvier V., Kaestli J.-D. and Outtier B., publications de l'Institut Romand des Sciences Bibliques I, éditions du Zèbre, Lausanne, 1999, էջ 122. E. VARDANYAN, Voir Dieu: L'iconographie Arménienne de la Vision du Trône d'Ezéchiel dans le contexte de l'art de l'Orient chrétien, in “The Armenian Apocalyptic Tradition, A Comparative Perspectives”, *Essays Presented in Honor of Professor Robert W. Thomson on the Occasion of His Eightieth Birthday*, ed. by K. Bardakjian and S. La Porta, Leiden: Brill, 2014, էջ 585:

Ս. Գրիգոր Լուսավորչի ճառերում չորս տարրերի միավորումն արտացոլված էր նաեւ Ադամի արարման խորհրդում, ինչը եւս մեկ ակնարկ է Ադամ—Քրիստոս զուգահեռի, նաեւ Ադամի ու Քրիստոսի այսօրինակ պատկերագրության բացատրության:

Համառոտագրություններ

Արխիվային նյութերի՝

Ս. Տ. Ն. — Սիրարփի Տեր-Ներսեսյանի թվային արխիվ (խտասկավառակները պահվում են Փարիզի Նուբարյան գրադարանում եւ ՄՄ-ում, իսկ վավերագրերը՝ ՄՄ-ում)

Հավաքածուների՝

ԲԻԽ. — Բրիտանական գրադարան, Լոնդոն, Միացյալ Թագավորություն

ԳԼԱԳՈ — Գլազգոյի համալսարանի գրադարան, Հատուկ հավաքածու, Գլազգո, Միացյալ Թագավորություն

ԵՐՈՍ. — Երուսաղեմի Սբեդ Նազարյանց վանք, Ս. Թեոդորոս ձեռագրատուն, Երուսաղեմ, Իսրայել

ՄԱՆԶԵՍՐ — Ռալլանդս հավաքածու, Մանչեսթր, Միացյալ Թագավորություն

ՄՈՐԳԱՆ — Մորգանի գրադարան եւ թանգարան, Միջնադարյան եւ Վերածննդի ձեռագրեր, Նյու-Յորք, ԱՄՆ

ՎԵՆ. — Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարան

ՎԻԵՆ. — Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարան

ՔԼԻՎԵՆԴ — Քլիվլենդի արվեստի թանգարան, Ջոն Լ. Սեւերանս ֆոնդ, Քլիվլենդ, ԱՄՆ

РЕЗЮМЕ

Одним из выдающихся деятелей армянского средневекового искусства является миниатюрист Аваг, творческая деятельность которого длилась несколько десятилетий (1329—1377 гг.). До нас дошли одиннадцать иллюстрированных рукописей, созданных Авагом. Одна из них — Библия, хранящаяся в библиотеке Конгрегации Мехитаристов в Венеции (рук. №935). Миниатюрист Аваг украсил ее, возможно, в 1341 году, или чуть раньше в Султании. В статье говорится об иллюстрировании титульного листа Книги Бытия, где имеются изображение Моисея, образ Святой Троицы, сцены семи дней Творения.


В статье основной акцент сделан на таких проблемах как: формирование и развитие традиции иллюстрирования титульного листа Книги Бытия и роль миниатюриста Авага в истории армянской библейской иллюстрации

(параллели с христианским искусством); изучение библейской иконографии с целью определения возможного прототипа (прототипов), использованного мастером; текстовые источники, включая средневековую армянскую поэзию, повлиявшие на развитие данной иконографии; осмысление некоторых иконографических деталей в соответствии с комментариями средневековых армянских авторов, способных раскрыть теологическую основу изображений.

S U M M A R Y

Miniaturist Avag is one of the outstanding figures of the Armenian medieval art, whose creative activity lasted for several decades (from 1329 to 1377). Eleven illustrated manuscripts created by Avag have survived. One of them is the Bible kept in the library of the Mekhitarist Congregation in Venice (manuscript No. 935). Miniaturist Avag decorated this Bible, perhaps in 1341, or a little earlier in Sultanieh. The article talks about the illumination of the title page of the Book of Genesis, which portrays Moses, the Holy Trinity, as well as the scenes of the seven days of Creation.

The article focuses on such issues as: a) the formation and development of the tradition of illustrating the title page of the Book of Genesis and the role of Miniaturist Avag in the history of the Armenian biblical illustration (in parallel with Christian art in general); b) the study of biblical iconography in order to determine a possible prototype (prototypes) used by the master; c) text sources, including medieval Armenian poetry, which influenced the development of this iconography; d) comprehension of some iconographic details in accordance with the commentaries of medieval Armenian authors, which helps to understand the theological interpretation of images.





Նկ. 2. Ծննդոց Գրքի տիտղոսաբերքը, ՄՄ Հ^մ 353, ք. 8ա: Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի թույլտվությամբ:



Նկ. 3. Յննդոց Գրքի տիտղոսաբերը, ՄՄ Հ^մ 206, ք. 4ա: Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի թույլտվությամբ:



Նկ. 4. Արարչագործությունը, Ադամն ու Եան դրախտում, մեղսագործությունը և դրախտից արտաքսումը, ՄՄ Հ^մ 352, ք. 3բ: Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի թույլտվությամբ:

ԿԱՐԵՆ ՓԱՀԼԵԻԱՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ՝ ԵՐԶՐՈՒՄԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմին հայազգի զինվորականության մասնակցության, առանձին մարտական գործողություններում նրանց ներդրած ավանդի լուսաբանման հիմնահարցերը, տարբեր պատճառներով պայմանավորված, պատմաբանները հատուկ ուսումնասիրման առարկա չեն դարձրել: Պատճառների թվում էին ինչպես 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո խորհրդային միության ամբողջ տարածքով հին բանակի զինվորականության նկատմամբ իրականացված հատուկ միջոցառումները, այնպես եւ ազգային պատկանելության, արխիվային փաստաթղթերի անհասանելիության գործոնները եւ այլն: Բացի այդ՝ տասնամյակներ շարունակ Առաջին աշխարհամարտը խորհրդային հասարակության գրեթե բոլոր շերտերում ընկալվել է որպես իմպերիալիստական-նվաճողական, կեղեքիչ պատերազմ, եւ հետեւաբար ռազմական գործողությունների նշանակությունը եղել է ստվերված, արդյունքները՝ չկարեւորված, իսկ մարդկային գործոնը՝ մոռացված եւ չգնահատված: Եւ եթե չէին հիշում ցարական բանակի՝ ազգությունամբ ռուս զինվորականներին, ապա հայ զինվորականների մասին խոսելն ընդհանրապես ավելորդ էր, մինչդեռ բազմահազար հայեր, ռուսական կանոնավոր բանակի կազմում մարտնչելով, Առաջին աշխարհամարտի ընթացքում ոչ միայն բարեխղճորեն կատարեցին զինապարտության մասին օրենքով սահմանված իրենց պարտավորությունները, այլեւ պատերազմի մի շարք ռազմափուլերի ընթացքում իրենց ծանրակշիռ ներդրումներով նպաստեցին բեկումնային հաղթանակների ձեռքբերմանը՝ հարստացնելով հայոց զինական ուժի պատմության փառավոր էջերը:

Այդպիսիներից էր նաեւ 1915 թ. դեկտեմբերի 28-ից¹ 1916 թ. մարտի 12-ը Կովկասյան ռազմաճակատում ծավալված էրզրումի ռազմական

¹ Հոդվածում տեղ գտած ամսաթվերը նշված են հին տոմարով:

գործողությունների արդյունքում ձեռք բերված կարեւոր հաղթանակը, որի կերտման գործում մեծ էր հայ զինվորականության դերակատարումը:

Համաձայն հայտնի ռազմական պատմաբան գեներալ Ն. Կորսունի՝ էրզրումի գործողությունը բաղկացած էր չորս հիմնական դրվագից.

ա) 1915 թ. դեկտեմբերի 28-ից 1916 թ. հունվարի 8-ն ընկած հատվածում ծավալված ռազմական գործողություններ եւ Քյոփրի-Քյոյի ճակատամարտ,

բ) 1916 թ. հունվարի 8-ից 30-ը՝ էրզրումի պաշտպանական շրջանի գրոհման նախապատրաստություն,

գ) 1916 թ. հունվարի 30-ից փետրվարի 3-ը՝ էրզրումի գրոհ,

դ) փետրվարի 3-ից մինչեւ մարտի 12-ը՝ թուրքական Յ-րդ բանակի մնացած մասի հետապնդում եւ ռազմական գործողություններ Կովկասյան բանակի գլխավոր ուժերի թեւերում²:

1914 թ. վերջին եւ 1915 թ. սկզբին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի իրականացրած՝ Սարիղամիշի հաղթական գործողությունից հետո Օսմանյան կայսրությունն ամեն կերպ ջանում էր վերականգնել իր բանակի կորսված մարտունակությունը: Այդ կապակցությամբ թուրքական հրամանատարությունն ուղիներ էր փնտրում այլ ռազմաճակատներից կովկասյան թատերաբեմ նոր ուժեր տեղափոխելու համար, եւ միայն 1915 թ. վերջին, երբ ավարտվել էր Դարդանեւյան հայտնի գործողությունը, թուրքերը կարող էին իրենց զորքերի մի զգալի հատվածը նեղուցների շրջանից տեղափոխել եւ կենտրոնացնել ռուսական՝ Կովկասյան բանակի դեմ: Առանձին վկայությունների համաձայն՝ իր Յ-րդ բանակն ուժեղացնելու նպատակով թուրքական հրամանատարությունը նախատեսում էր կովկասյան թատերաբեմ տեղափոխել 8 դիվիզիա:

Ռուսական հրամանատարությունը, 1915 թ. վերջին ճիշտ գնահատելով ստեղծված իրադրությունը եւ Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի կրկնապատկման հնարավորությունները, ինչպես նաեւ հասկանալով, որ հապաղել չի կարելի, ձեռնարկեց մի շարք քայլեր: Մասնավորապես արդյունավետ կերպով կազմակերպվեց բանակի համալրման գործընթացը, եւ քանզի մյուս ռազմաճակատներում իրադրությունը ծայրահեղ ծանր էր, ռուսական Կովկասյան բանակի հիմնական համալրումը տեղի ունեցավ հատկապես Կովկասից զորակոչվածների

² *Տե՛ս* Н. Г. Корсун, Кавказский фронт Первой мировой войны, Москва, 2004, էջ 461–462, 612:

հաշվին: Համալրմանը զուգահեռ մշակվեց նաեւ աշխույժ գործողությունների համալիր. Կովկասյան բանակի հրամանատար Ն. Յուդենիչը, ստանալով Կովկասի տեղապահ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի համաձայնությունը, որոշեց մինչեւ թուրքական՝ վերը նշված զորախմբի ժամանումը ջախջախել թուրքական Յ-րդ բանակը:

Տարբեր հետազոտողների տվյալների համաձայն՝ այդ ժամանակ ռազմական գործողությունների շրջանում ռուսական բանակի մոտ 75 000 զորական կանգնած էր թուրքական 60 000-ից 80 000-ի հասնող զինվորականության դեմ³:

Եթե հակամարտող կողմերի ուժերը հետեւակի առումով գրեթե հավասար էին, ապա հրետանու եւ հեծելազորի առումով ռուսներն ունեին զգալի առավելություն, իսկ օդում՝ բացառիկ մենաշնորհ (այդ ժամանակ Թուրքիան Կովկասում չուներ օդուժ)⁴: Թուրքական կողմի առավելությունն այն էր, որ էրզրում բերդաքաղաքն անմատչելի էր: Նախ էրզրումը պաշտպանված էր բնական-աշխարհագրական դիրքով. քաղաքը շրջապատված էր բարձր լեռներով, որոնց վրա կառուցված էր 15 ամրություն (գրեթե բոլորը ծովի մակարդակից առնվազն 2400 մետր բարձրության վրա): Բացի այդ՝ գերմանացիները, գեներալ Պոսսելտի գլխավորությամբ, ռազմաինժեներական առումով էապես ամրացրել էին բերդաքաղաքը, ավելացրել էին ամրաշինական կառույցները, գնդացիորների, հրետանու քանակը եւ այլն⁵: էրզրումի պաշտպանական գոտու ձգվածությունը հասնում էր 40 կիլոմետրի: Նշված պատճառներով էր պայմանավորված թուրքական կողմի գլխավոր թիկունքային հենակայանի եւ թուրքական Յ-րդ բանակի կառավարման կենտրոնի՝ այստեղ գտնվելու հանգամանքը: Առանձին ուսումնասիրողների կարծիքով՝ էրզրումի պաշտպանական շրջանը գերմանական ինժեներական մտքի գլուխգործոցն էր⁶:

Այդուհանդերձ՝ ռուսական կողմը գլխավոր հարվածը նախատեսում էր հասցնել հենց էրզրումի մատուցներում, ինչի կապակցությամբ էլ մանրակրկիտ մշակում էր էրզրումի գործողության բաղադրիչները:

³ Сѣу А. В. Шишов, Кавказский фронт. // Первая мировая война. Пролог XX века, Москва, 1998, էջ 583–584. Н. Г. Корсун, Кавказский фронт..., էջ 443:

⁴ Сѣу Мировые войны XX века, в 4-х книгах. Руков. проекта Ржешевский О. А., кн. 1-я. Первая мировая война, Москва, 2002, էջ 188:

⁵ Сѣу В. Е. Шамбаров, За Веру, Царя и Отечество!, Москва, 2003, էջ 554:

⁶ «Совершенно Секретно», Москва, № 5/440, март 2020, Владимир Сержин — Штурм Эрзурума.

Հարկ է նշել, որ մինչև էրզրումին հասնելը ռուսական զորքերը պետք է անցնեին նրա «նախադռան» միջով՝ Բասենի դաշտով, որտեղ գտնվում էին թուրքական ուժեղացված Քյոփրի-Քյոյի դիրքերը: Այնուհետև ռուսները պետք է հաղթահարեին թուրքական դիրքերի հետնամասում գտնվող լեռների միջև՝ նեղ անցումում, կառուցված Հասան-դալա ամրոցը՝ երբեք չանտեսելով նաև հյուսիսից էրզրումի ուղին փակող Թորթում, Վեյչիհաս, Շաքլյար, Արզըլ-Քիլիսա եւ Կոշ բնակավայրերի մատույցներում տեղակայված թուրքական ուժերը:

Ռուսական Կովկասյան բանակի շտաբի ծրագրով՝ թուրքական 3-րդ բանակի ձախ թեւում գլխավոր հարվածը հասցնելու էին գեներալ Մ. Պրժեւալսկու հրամանատարության ներքո գտնվող Թուրքեստանյան 2-րդ եւ գեներալ Պ. Կալիտինի ղեկավարած Կովկասյան 1-ին բանակային միավորումները: Նրանք պետք է հարձակվեին Հայ-Դաղ եւ Կոջուխ լեռներով, ճեղքեին թուրքական զորքերի պաշտպանության մի քանի գիծ եւ ապա դուրս գային Քյոփրի-Քյոյի դիրքեր: Ընդ որում՝ Թուրքեստանյան 2-րդ բանակային միավորման հարձակումը պետք է սկսվեր 2 օր շուտ:

Վլադիմիր Դե-Վիտտի հրամանատարության ներքո գտնվող Կովկասյան 4-րդ բանակային միավորման ուժերը ռազմաճակատի կենտրոնական հատվածում՝ Խնուսի եւ Մուշի ուղղությամբ, պետք է հասցնեին օժանդակող հարվածներ, ինչի արդյունքում թուրքերը չէին կարողանալու ռազմաճակատում իրականացնել անհրաժեշտ վերախմբավորումներ:

Ռուսական հրամանատարությունն իր հիմնական խաղաղորույթը կատարել էր անակնկալության գործոնի հաշվարկով, ինչը մինչև գործողությունների սկիզբը հնարավոր եղավ պահպանել: Նույնիսկ թուրքական 3-րդ բանակի երկու բարձրաստիճան զինվորականները՝ հրամանատար Մահմուդ-Քամիլ փաշան եւ շտաբի պետ Գյուլգեն, միաժամանակ գնացին արձակուրդ՝ կարծելով, որ ձմռան ընթացքում իրենց զորքին ոչինչ չի սպառնում:

1915 թ. դեկտեմբերի 28-ին՝ հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո, Թուրքեստանյան 2-րդ բանակային միավորումն սկսեց ծավալուն մի հարձակում՝ նպատակ ունենալով ոչ թե ռազմավարական զորաշարժի միջոցով, այլ հատկապես ճակատային հարվածով տիրել Հայ-դաղ լեռնային հանգույցին: Երկու օր անց՝ դեկտեմբերի 30-ին, ընդհանուր հարձակմանը միացավ նաև Կովկասյան 1-ին բանակային միավորումը:

Առաջին օրերին ծավալված մարտերում իրենց քաջագործություններով առանձնացած հայազգի զինվորականներից էր Կովկասյան 1-ին բանակային միավորման 39-րդ հետեւակային դիվիզիայի Դերբենդյան 154-րդ հետեւակային գնդի պողպորուչիկ Միխայիլ Հովհաննեսի Բագինովը⁷: Դեկտեմբերի 30-ին, երբ 154-րդ հետեւակային գունդն սկսել էր հակառակորդի շրջանաձեւ պաշտպանական գծի՝ Թարխոջինյան բարձունքների գրոհը, Բագինովը, իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումով գիշերը սվինամարտի բռնվելով, կարողացավ թուրքերին դուրս չպրտել եւ հաստատվել նրանց լքած՝ ուժեղ ամրացված երկշարք դիրքերում՝ գերի վերցնելով 4 հոգու: Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ Բագինովի զբաղեցրած դիրքերը հայտնվեցին հակառակորդի խաչաձեւ կրակի ներքո, նահանջելու անհրաժեշտություն առաջացավ: Ոչնչացումից խուսափելու համար Բագինովն իր ջոկատով հաստատվեց դիրքերի թեւային հատվածում՝ թուրքերի ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով իր ուղղությամբ: Բագինովի ստորաբաժանման դիպուկ կրակով լռեցվեց հակառակորդի գնդացիը, եւ ռուսական բոլոր ստորաբաժանումներին առավելագույնս անկորուստ նահանջելու հնարավորություն ընձեռվեց: Այս գործողությունների ժամանակ հայորդին վիրավորվեց, սակայն վերջինն էր, որ լքեց դիրքերը: Նշված գործողությունների համար Բագինովն արժանացավ Ս. Գեորգիեւյան 4-րդ աստիճանի շքանշանի⁸:

Դերբենդյան 154-րդ հետեւակային գնդի պողպորուչիկ Հովհաննես (Իվան) Եւստաֆեւիչ Մանիեւն առանձնացավ 1915 թ. դեկտեմբերի 30-ին Տիկ-Դադ կոչվող բարձունքների համար ծավալված մարտերի ժամանակ: Գնդի հետախույզների հրամանատար Մանիեւն այդ օրը ծառայություն էր իրականացնում ռուսական միավորման գործողությունների ձախ թելում՝ գնդապետ Նաշիեւի հրամանատարության ներքո: Հայորդին, իրավիճակը ճիշտ գնահատելով, կարողացավ հակառակորդի տեղատարափ հրածգություն պայմաններում արագ անցնել հարձակման: Մանիեւը փոքրաթիվ ուժերով գրավեց թուրքական 3 խրամատ, որտեղից հակառակորդը կործանարար վնաս էր հասցնում ռուսական ստորաբաժանման թելին: Մանիեւի գործողությունների շնորհիվ ռուսական ստորաբաժանման նշված մասը եւս աշխուժացավ եւ միացավ համընդհանուր հարձակմանը՝

⁷ Հոգվածում հայազգի զինվորականների անուններն ու ազգանունները ներկայացված են այնպես, ինչպես դրանք նշված են արխիվային փաստաթղթերում:

⁸ ՌՊՊԱ, ֆ. 496, ց. 3, գ. 1122: ՌՊՊԱ, ֆ. 400, ց. 12, գ. 27310, թ. 247, 271:

արդյունքում Տիկ-Դաղ բնակավայրի ուղղությամբ գրավելով հակառակորդի առաջապահ դիրքերը: Նշված քաջագործության համար Մանիելը 1916 թ. հունիսի 28-ին արժանացավ Գեորգիեւյան զենքի⁹: Հովհաննես Մանիելն աչքի ընկավ նաեւ 1916 թ. փետրվարի 2-ին՝ Դեւե-Բոյնու դիրքի Զոբան-դեդե ամրության (Ֆորտ) համար մղվող մարտի ժամանակ: Հայորդին հրաձգային եւ հրետանային ուժեղ կրակի տակ, իր հրամանատարության ներքո գտնվող հետախույզների հետ միասին, կարողանում է առաջինը մտնել նշված ամրություն՝ միանգամից տիրելով հակառակորդի 6 հրանոթի եւ գերեվարելով թշնամու 29 զինվոր: Հարձակումը շարունակելով եւ փախչողներին հետապնդելով՝ հարուստ ռազմավար է ձեռք բերում, տիրում հակառակորդի եւս 22 հրանոթի եւ մեծաքանակ ռազմամթերքի: Այս գործողությունների համար Մանիելը 1916 թ. մայիսի 21-ին արժանանում է Ս. Գեորգիեւյան 4-րդ աստիճանի շքանշանի¹⁰:

Դեկտեմբերի 30-ին ծավալված տիկդաղյան մարտերի ժամանակ իր քաջագործությամբ աչքի ընկավ նաեւ Դերբենդյան 154-րդ հետեւակային գնդի շարքային Վարդան Սարգսի Կիրակոսյանցը: Վերջինս, հմուտ մարտավարելուց բացի, կարողացավ նաեւ ճիշտ ժամանակին դրսևորել կազմակերպչական հմտություններ: Շարքային լինելով հանդերձ՝ հայորդին կարողացավ դեկտեմբերի 31-ին համախմբել իր շուրջ գտնվող զինվորականներին, ապահովել միասնական՝ դիպուկ կրակ՝ այդ կերպ բացառելով հակառակորդի ցանկացած նախահարձակ գործողություն: Իսկ ավելի ուշ՝ 1916 թ. մարտի 1-ին ծավալված կռվի ընթացքում, Կիրակոսյանցը կարողացավ որպես ռազմավար վերցնել թուրքական 97-րդ հետեւակային գնդի դրոշը, ինչի համար արժանացավ Ս. Գեորգիեւյան 3-րդ աստիճանի շքանշանի¹¹:

Թուրքեստանյան 18-րդ հրաձգային գնդի 1-ին վաշտի հրամանատար, փոխգնդապետ Դավիթ Գրիգորի Օսիպովը, հրաման ունենալով հյուսիսից գրոհել Կուզու-Հան լեռան թուրքական դիրքերը, արհամարհելով հակառակորդի հրետանային եւ գնդացրային կրակը, 1915 թ. դեկտեմբերի 30-ին, քաջալերելով իր հրամանատարության ներքո գտնվող զինվորականներին եւ անձամբ ղեկավարելով բոլոր գործողությունները,

⁹ ՌՊՌՊԱ, ֆ. 2369, ց. 2, գ. 323, թ. 113:

¹⁰ Անդ, ֆ. 400, ց. 12/6, գ. 27310, թ. 20:

¹¹ Տէս Ս. НАВОЕВ, Герои офицеры и солдаты великой Отечественной войны, Пг., 1916, էջ 23–25:

սրընթաց գրոհ իրականացրեց եւ գրավեց հակառակորդի 3 ամրացված խրամատային դիրք, որոնք գտնվում էին Էխիզ-գյուլ լճից արեւելք: Հաջորդ օրերին զարգացնելով գրոհը՝ փոխգնդապետ Օսիպովը կարողացավ նպաստել հակառակորդի Կուզու-շան լեռան դիրքերի ամբողջութեամբ գրավմանը: Այս մարտերի ժամանակ նրա խումբը գերի վերցրեց 18 թուրք զինվոր եւ ավարառեց 65 հրացան¹²:

Թուրքեստանյան 16-րդ հրաձգային գնդի պրապորշչիկ Սերգեյ Առաքելի Տարպինովը 1915 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը՝ լույս 1916 թ. հունվարի 1-ին, հակառակորդի մահաբեր կրակի ներքո, իր հրամանատարութեան տակ գտնվող ջոկատով՝ ցուցաբերելով քաջության աննախադեպ օրինակ, հաղթահարելով հակառակորդի պաշտպանական՝ կառուցապատ առաջին գիծը, վիրավորված վիճակում բռնվում է սվինամարտի եւ կարողանում է Նորշինյան բարձրությունների վրա գտնվող հակառակորդի «Անանուն լեռ» կոչվող դիրքերը գրավել, այնուհետեւ հետապնդել մինչեւ Խոզախոր գյուղի մատուցները՝ աջակցելով ռուսական ստորաբաժանումներին գրավել այդ հատվածի թուրքական պաշտպանական դիրքերը: Քաջագործությունների համար հայազգի սպան արժանանում է Գեորգիեւյան զենքի¹³:

1916 թ. հունվարի 1-ին Կովկասյան 1-ին բանակային միավորումները կարողացան գրավել հաջորդ կարեւոր պաշտպանական դիրքերը, որոնք ձգվում էին Ազապքոյ անվամբ բարձրություններով: Այս դիրքերի գրոհի ժամանակ գերի վերցվեց 420 թուրք զինվորական, ռուսների ձեռքն անցան նաեւ 6 հրանոթ եւ 8 գնդացիր¹⁴: Ազապքոյան դիրքերի համար մղված մարտերում առանձնացած զինվորականներից էր նաեւ Բաքվի 153-րդ հետեւակային գնդի հայազգի գնդապետ Դանիել-Բեկ Աբխաղովի Փիրումովը:

Ռազմաճակատում 1915 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը՝ լույս 1916 թ. հունվարի 1-ին ծավալված ռազմական գործողությունների ժամանակ, իր ենթակայության տակ ունենալով մեկ վաշտ, մեկ զորագունդ եւ 4 գնդացիր՝ Փիրումովը հանձնարարություն ստացավ գրոհել Ազապքոյ-Արդոս ճանապարհի մատուցներում հյուսիս-հարավ ձգվող ազապքոյան

¹² ՌՊՌՊԱ, ֆ. 400, ց. 9, գ. 34936, թ. 32 շրջ.:

¹³ Տէս Կ. АСАДОВ, 3000 армянских офицеров царской России. Историко-биографическая книга памяти (1701—1921). В 2-х томах, т. 2, Москва, 2018, էջ 481:

¹⁴ Տէս В. Е. ШАМБАРОВ, նշ. աշխ., էջ 556:

ամրուսթյունները: Հայազգի գնդապետը կարողացավ թուրքական կողմի ուժեղ եւ կործանիչ հրաձգության եւ հրետակոծության պայմաններում դրսեւորել հրամանատարի բարձր որակական հատկանիշներ եւ իր արիության շնորհիվ հաղթել ծավալված սվինամարտում: Փիրումովը թուրքերին դուրս շարտեց Ազապէյոյ տեղանքից եւ գրաված տարածքներում ճիշտ դիրքավորվեց: Մարտի ընթացքում ավարառվեց թուրքական 2 ծանր հրանոթ: Վերը նշված գործողությունների համար Դանիել-Բեկ Աբխաղովի Փիրումովն արժանացավ Գեորգիեւյան զենքի¹⁵:

Ազապէյոյան բարձունքների գրավումից հետո հաջորդ վճռական գործողությունները ծավալվեցին Զիլի-Գելի բլուրների համար. սրանով վերջնականապէս ապահովվելու էր ռուսական ստորաբաժանումների մոտեցումը Քյոփրի-Քյոյի դիրքերին: Այստեղ Կովկասյան բանակի ստորաբաժանումների դրսեւորած վճռականության շնորհիվ դարձյալ ձեռք բերվեց հաղթանակ, եւ ռուսական երկու բանակային միավորումները կարողացան միաժամանակ դուրս գալ Քյոփրի-Քյոյի դիրքերի դեմ:

Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ-Քամիլ փաշան Քյոփրի-Քյոյի դիրքերի վրա ռուսական գրոհը կասեցնելու նպատակով կենտրոնացրեց իր ամբողջ ուժերը: Իր հերթին գեներալ Յուդենիչը նույնպէս այստեղ օգտագործեց առկա պահեստային ուժերը: Սկսված մարտերի ժամանակ՝ հունվարի 5-ին, հակառակորդի պաշտպանությունը երեւոյց, թուրքերն սկսեցին նահանջել, ինչը կարճ ժամանակ անց վերածվեց անկանոն փախուստի: Այս մարտերում գերեվարվեց թուրքական 9-րդ եւ 11-րդ միավորումների մոտ 2000 զինվոր¹⁶:

Ռուսական ստորաբաժանումները հաջող մարտերից հետո մոտեցան Հասան-Ղալա ամրոցին, որի գրավման համար բանակային պահուստից բերված Սիբիրյան կազակական միավորմանը հունվարի 6-ին հաջողվեց գրոհով ներխուժել ամրոց: Հունվարի 7-ին Կովկասյան 1-ին բանակային միավորման ստորաբաժանումներն արդեն դիրքավորվեցին էրզրումի ամրակառույցների դիմաց¹⁷:

Որպէս ռազմական գործողությունների վերջնական արդյունք՝ ռուսական կողմը պետք է վերցնէր էրզրում բերդաքաղաքը, սակայն դա

¹⁵ ՌՊՊԱ, ֆ. 496, ց. 3, գ. 1122: Տէս «Русский Инвалид», Петроградъ, №194, 21 июля (3 августа) 1916, էջ 1:

¹⁶ Տէս В. Е. ШАМБАРОВ, նշ. աշխ., էջ 557:

¹⁷ Տէս Н. Г. КОРСУН, Кавказский фронт..., էջ 470:

հնարավոր չեղավ ի կատար ածել հընթացս՝ բնակլիմայական բավականին ծանր պայմանների, ինչպես նաեւ պաշարողական հրետանու բացակայության պայմաններում: Էրզրումի վրա այդ պահին հարձակումը, բազմաթիվ ռազմագետների կարծիքով, կլիներ խելահեղություն¹⁸:

Նշված հանգամանքները նկատ առնելով, Կովկասյան բանակը կործանումից փրկելու նպատակով, Կովկասի տեղապահ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը ելման դիրքեր նահանջելու վերաբերյալ հրաման արձակեց: Սակայն Ն. Յուզենիչը կարողացավ համոզել գլխավոր հրամանատարին, որ գործողությունը շարունակվի, եւ իր պատասխանատվությամբ սկսեց ամրոցի գրավման նախապատրաստական աշխատանքները, մշակվեց ամրոցի վրա գրոհելու ծրագիրը, որի համաձայն՝ Կովկասյան բանակի գլխավոր ուժերը պետք է իրականացնեին հետեւյալ գործողությունները.

— Թուրքեստանյան 2-րդ բանակային միավորումը մարտերով պետք է անցնեի Դեւե-Բոյնուի դիրքերի աջ թեւով,

— Կովկասյան 4-րդ հրաձգային զորախումբը կենտրոնում պետք է ուղղություն վերցնեի դեպի Կարղաբազարի սարահարթ,

— Կովկասյան 1-ին բանակային միավորումը ձախ թեւում ճակատով գրոհելու էր Դեւե-Բոյնուի եւ Պալանտեկենի լեռնաշղթայի թուրքական դիրքերի վրա:

Նշված միավորումների հարձակման հետ միասին Կովկասյան 4-րդ բանակային զորախումբը պետք է շարժվեր դեպի Մուշ եւ Բիթլիս, որպեսզի թուրքերին թույլ չտար օժանդակ ուժեր ուղարկել դեպի գրոհվող ամրոց:

Էրզրումի պաշտպանական շրջանի գրոհման նախապատրաստական միջոցառումների ժամանակ դարձյալ տեղի ունեցան թեժ մարտեր, որոնց ընթացքում վերստին փայլեցին բազմաթիվ հայ զինվորականներ:

Հունվարի 13-ին Թուրքեստանյան 15-րդ հրաձգային գնդի պրապորշչիկ Ստեփան Սարկիսյանցը, իր ենթակայության տակ ունենալով գնդի 10-րդ վաշտը, հարձակում սկսեց Օտագին-դաղ բարձրության արեւմտյան հատվածում: Տեղանքի դժվարամատչելի ոլորան հանդիսանալու հանգամանքով պայմանավորված՝ Սարկիսյանցի վաշտը ենթարկվում էր հակառակորդի դիմահար եւ կողային կրակի: Սարկիսյանցը 3 մարտիկների

¹⁸ См. А. А. Керсновский, История Русской Армии, в четырех томах, т. IV, Москва 1994, էջ 144:

հետ միասին փորձեց հետախուզություն իրականացնել հակառակորդի դիրքերում, սակայն հանդիպելով թուրքական զինվորների՝ սվինամարտի բռնվեց։ Արդյունքում, ոչնչացնելով թուրքական փոքրաթիվ խումբը, Սարկիսյանցն իր ջոկատով կարողացավ հաստատվել Օտագին-դաղ բարձրության ամենաբարձր կետում եւ արդյունավետ կրակով մեծ կորուստներ պատճառել թուրքերին։ Ծավալված այս մարտի ընթացքում թուրքերը տվեցին մոտ 80 սպանված եւ վիրավոր։ Հունվարի 15-ին թուրքական կողմը 4 գրոհ ձեռնարկեց Սարկիսյանցի դիրքերի ուղղությամբ՝ ցանկանալով դիրքը հետ վերցնել, սակայն բոլոր գրոհները կասեցվեցին, եւ ռուսները 13-րդ վաշտի աջակցությամբ վերջնականապես ամրացան նշված բարձրության վրա։ Այս գործողությունների համար 1916 թ. հունիսի 28-ին հայորդին արժանացավ Գեորգիեւյան զենքի¹⁹։

Ռուսական ստորաբաժանումներն էրզրումի գրոհն սկսեցին ոչ թե վաղ առավոտյան, ինչպես դա սովորաբար արվում էր հարձակումների ժամանակ, այլ հունվարի 29-ին՝ ժամը 14:00-ին՝ հրետանային նախապատրաստությամբ, որին արդեն ժամը 23:00-ին հաջորդեց հետեւակի գրոհը՝ 30 աստիճան սառնամանիքի պայմաններում։

Թուրքեստանյան 2-րդ բանակային միավորումը գրոհեց Դումլուդաղ լեռնաշղթայով. հաջողության դեպքում այս ստորաբաժանումը Գյուրջի-բողաղ լեռնանցքով պետք է դուրս գար էրզրումի հարթավայր։ Հունվարի 30-ին ռուսական առաջավոր զորամասերը գրավեցին Կարապյուբեկ եւ Դալանգյոզ ամրությունները, իսկ փետրվարի 1-ին Կովկասյան 4-րդ հրաձգային զորաբանակը տիրեց Զոբան-դեդե կարեւոր դիրքին։

Եւօրյա մարտերի արդյունքում ռուսական ստորաբաժանումները կարողացան ճեղքել հակառակորդի պաշտպանական գիծը Կարդաբազարի սարահարթի շրջանում²⁰։ Նշված հաղթանակը հետեւյալ կերպ է բնորոշված Ա. Կերսնովսկու աշխատության մեջ. «Անգամ քարայծերի համար ձմռանն անհաղթահարելի Կարդաբազարի սարահարթի անկման լուրը շմեցրեց թուրքական 3-րդ բանակի հրամանատարությանն ու զինվորականությանը՝ այդու նախանշելով էրզրումյան մարտերի հաղթական ելքը ռուսների համար»²¹։

¹⁹ Сѣу «Русскій Инвалидъ», Петроградъ, №194, 21 июля (3 августа) 1916, էջ 2։

²⁰ Сѣу Н. Г. Корсун, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, Москва, 1946, էջ 51—53։

²¹ Сѣу А. А. Керсновский, История Русской Армии, в четырех томах, т. IV, Москва, 1994, էջ 147։

էրզրումի գրոհի ժամանակ վերստին առանձնացավ Բաքվի 153-րդ հետեւակային գնդի հեղինակավոր գնդապետ Դանիել-Բեկ Աբխաղովի Փիրումովը²²։ Դեւե-Բոյնուի ճակատում գնդի աչ զորասյունը, իր կազմում ունենալով 3 գումարտակ եւ 4 վաշտ, գնդապետ Փիրումովի հրամանատարութեամբ հյուսիսից գրոհեց Դալանգյոզ ամրութեան վրա։ Ծանր մարտերից հետո՝ հունվարի 30-ի լուսաբացին, Փիրումովին հաջողվեց գրավել Դալանգյոզ ամրութիւնը։ Հարկ է նշել, որ այս մարտի ժամանակ հայազգի գնդապետը, ծանր վնասվածքներ ստանալով հանդերձ, շարունակում է մնալ մարտական շարքում եւ կարողանում է գրոհը հասցնել հաղթական ավարտի։ Այստեղ թուրքերը, չհամակերպվելով Դալանգյոզ կարեւորագույն ամրութեան կորստի հետ, 8 գրոհ ձեռնարկեցին՝ կորցրածը վերադարձնելու համար։ Սակայն Փիրումովի մարտիկները բոլոր գրոհները հետ շարտեցին²³։ Այս հաղթանակի շնորհիվ Կովկասյան 1-ին բանակային միավորումը կարողացավ կառչել Դեւե-Բոյնուի ամրութիւններին եւ ապա ամբողջովին գրավել դրանք։

Դալանգյոզի մարտերի համար 1916 թ. փետրվարի 29-ին Դանիել-Բեկ Աբխաղովի Փիրումովը պարգեւատրվեց Ս. Գեորգիեւսյան 4-րդ աստիճանի շքանշանով։ Գնդապետ Փիրումովն առանձնացավ նաեւ Չոբան-դեդե ամրութեան գրավման ժամանակ։ Նրա աջակցությամբ ռուսական Դերբենդյան 154-րդ եւ Ելիզավետպոլյան 156-րդ հետեւակային գնդերը կարողացան գրավել նշված ամրութիւնը։ 1916 թ. փետրվարի 2-ին ծավալված այդ գործողութիւններում հրամանատարական բարձր հատկանիշներ ցուցաբերելու համար հայորդին պարգեւատրվեց Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով հանդերձ²⁴։

էրզրումի գրոհի ընթացքում՝ Դալանգյոզ ամրութեան համար մղվող մարտերի ժամանակ, Բաքվի 153-րդ հետեւակային գնդի կազմում առանձնացավ նաեւ պողպորուչիկ Սուքիաս Պետրոսի Տեր-Պետրոսովը։ 1916 թ. հունվարի 29-ի գիշերը՝ 30-ի առավոտյան՝ Դալանգյոզ ամրութեան գրոհի ժամանակ, լինելով գնդի 93 հետախույզների հրամանատարը, հայորդին մարտական հանձնարարութիւն էր իրականացնում գնդի առաջապահ ստորաբաժանման կազմում։ Նրա ղեկավարած գրոհի

²² Ն. Կորսունն իր աշխատութեան մէջ գնդապետ Փիրումովին բնորոշել է որպէս վճռական հրամանատար (տե՛ս Н. Г. Корсун, Кавказский фронт..., էջ 574)։

²³ Տե՛ս Ю. Пирумян, На обрывках лет и дней: жизнь Даниэла-бека Пирумяна, Москва, 2013, էջ 267–268։

²⁴ Տե՛ս Ю. Пирумян, նշ. աշխ., էջ 270։

արդյունքում թուրքերը նահանջեցին, եւ նրա ստորաբաժանմանը հաջողվեց գրավել Մալի-Տուլ բնակավայրը եւ տեղակայվել Դալանգյոզ ֆորտից 100 քայլ հեռավորության վրա: Վիրավոր հայորդու գործողությունները գնահատվեցին որպես մեծ ներդրում Դալանգյոզի գրոհի ժամանակ, ինչի համար 1917 թ. հուլիսի 8-ին նա արժանացավ Գեորգիեւյան զենքի²⁵:

Կովկասյան 1-ին առանձնացված հրետանային միավորման հրամանատար կապիտան Իոսիֆ Ֆադեյի Տիգրանովը 1916 թ. փետրվարի 2-ին՝ Դեւե-Բոյնու ամրությունների համար մղվող մարտի ժամանակ, հակառակորդի կործանիչ կրակի տակ առանց վարանելու կարողացավ իր ենթակայության տակ գտնվող մարտկոցները դուրս բերել նախնական դիրքերից, տեղակայել դրանք ռուսական զորքերի գրաված նոր ամրություններում եւ առանձնակի խիտ կրակով լռեցնել թուրքական Օրտայուկ, Կաբուզա եւ Ուզուն-Ահմեդ ամրություններից ծավալվող հրաձգությունը՝ արդյունքում ռուսական հետեւազորին հնարավորություն տալով գրավել նշված ամրությունները եւ ապա վերջնականապես դիրքավորվել: Նշված գործողությունների համար Տիգրանովը 1916 թ. հունիսի 28-ին արժանացավ Գեորգիեւյան զենքի²⁶:

Փետրվարի 3-ին ռուսները գրավեցին Էրզրումը²⁷: Ամրոցի գրավման ժամանակ գերեվարվեցին 235 սպա եւ 12753 թուրք զինվոր: Ռուսների ձեռքն ընկան նաեւ 12 դրոշակ եւ 323 հրանոթ: Ռուսական կողմի կորուստները կազմում էին 8500 զոհված եւ վիրավոր զորական եւ մոտ 6000 ցրտահարված կամ ամբողջ զորքի 10%-ը, մինչդեռ թուրքերի կորուստն ամբողջ զորքի մոտ 50%-ն էր²⁸:

Էրզրումի գրոհի ժամանակ, գրեթե զուգահեռաբար, կարողացան իրենց առջեւ դրված մարտական առաջադրանքներն ի կատար ածել Կովկասյան 4-րդ բանակային զորախմբի ստորաբաժանումները: Հունվարի 13-ին՝ Կարա-Քյոփրի բնակավայրի մատուցյներում ռազմական ծանր գործողություններից եւ ապա Խնուսի գրավումից հետո, Կովկասյան 4-րդ բանակային միավորման հրաձգային դիվիզիան, գեներալ Թ. Նազարբեկովի գլխավորությամբ, փետրվարի 3-ին գրավեց Մուշը, իսկ գեներալներ Աբաքիելի եւ Զերնոգուբովի ստորաբաժանումները ծանր մարտերի

²⁵ ՌՊՌՊԱ, ֆ. 2369, ց. 2, գ. 323, թ. 32 շրջ.-33:

²⁶ Տէս «Русский Инвалид», Петроградъ, №194, 21 июля (3 августа) 1916, էջ 1:

²⁷ Տէս Փ. Ի. Ելիսեև, Казаки на Кавказском фронте 1914—1917. Записки полковника Кубанского казачьего войска в тринадцати брошюрах-тетрадах, Москва, 2001, էջ 9—11:

²⁸ Տէս Ա. В. Шишов, նշ. աշխ., էջ 584. Փ. Ի. Ելիսեև, նշ. աշխ., էջ 8:

արդյունքում կարողացան փետրվարի 17-ին գրավել Բիթլիսը: Այս հաջողությունների շնորհիվ ռուսական Կովկասյան բանակի ձախ թեւը հայտնվեց ապահով վիճակում: Ռուսական 4-րդ բանակային միավորման գործողությունների արդյունքում գերեվարվեցին հակառակորդի 59 սպա եւ 1427 շարքային, ինչպես նաեւ ռուսները տիրացան 20 հրանոթի եւ հակառակորդի մի քանի դրոշի:

Էրզրումի գրավումից հետո հակառակորդի հետապնդումը տարբեր ուղղություններով տեւեց մինչեւ մարտի 12-ը: Ընդհանուր առմամբ՝ էրզրումի գործողության ընթացքում թուրքերի ընդհանուր կորուստը կազմեց մոտ 60 000 մարդ:

Այսպիսով՝ ռուսական բանակը, գրավելով էրզրումը եւ շարունակելով հետագա առաջխաղացումը, հակառակորդին ստիպելով անընդհատ փախչել, կարողացավ հիմնականում կազմացրել այդ ուղղությամբ գործող թուրքական բանակը²⁹, ինչի մեջ իր ծանրակշիռ ավանդը ներդրեց նաեւ հայ զինվորականությունը:

Վերլուծելով էրզրումի ռազմագործողություններին մասնակցած ազգությունամբ հայ զինվորականության քանակական տվյալները՝ պարզվում է, որ սկսած այն ժամանակներից, երբ ոչ ռուս ազգությունները մասնակից դարձվեցին համընդհանուր զորակոչին, Գերագույն շտաբի հատուկ գաղտնի ցուցումի համաձայն՝ ցարական բանակում ոչ ռուս զինվորների (բացի ուկրաինացիներից եւ բելառուսներից) թվաքանակը չպետք է գերազանցեր անձնակազմի 1/5-րդը՝ խաղաղ ժամանակներում, իսկ պատերազմական ժամանակաշրջանում՝ 1/3-րդը³⁰: Առաջին աշխարհամարտի տարիներին ոչ ռուս զինվորականների համար սահմանված նշալ քանակական կազմը թեպետ ցարական հրամանատարությունը ձգտում էր չգերազանցել, սակայն Կովկասում այն հնարավոր չեղավ հստակ պահել՝ կապված պատերազմի հսկայական կարիքների եւ Կովկասի ժողովուրդների բնակավայրերը ռազմական գործողությունների անմիջական թատերաբեմ հանդիսանալու հանգամանքի հետ: Այդ առումով էր, որ ռուսական Կովկասյան բանակում հայերի ու վրացիների քանակական տվյալները նախասահմանվածից բարձր էին:

²⁹ ՌՊՌՊԱ, ֆ. 2003, ց. 1, գ. 1165, թ. 195:

³⁰ Сёв А. Гаркавенко, Партия, армия и флот в февральской революции, Ленинград, 1972, էջ 50. П. А. Голуб, Большевики и армия в трех революциях, Москва, 1977, էջ 21:

1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Կովկասյան 4-րդ բանակային միավորման կազմում հաշվառված էին 589 սպա, 20 797 զինվոր, 4184 հեծյալ³¹ (ընդամենը 25 570 հոգի): Նույն միավորման արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայերը կազմել են անձնակազմի 10%-ը³² (կամ ավելի քան 2500 հայ այդ ժամանակ ծառայելիս է եղել Կովկասյան 4-րդ բանակային զորախմբում): Նշված 10% ցուցանիշը հաստատվում է նաեւ Կովկասյան բանակի շտաբի կողմից Կովկասյան ռազմական շրջանի շտաբի պետին հասցեագրված միջնորդությամբ, որտեղ Կովկասյան բանակի շտաբի պետի պարտականությունները կատարող գեներալ-մայոր Լ. Բոլխովինովը տեղեկացնում է, որ զորքերում տեղայնացրել է ստորին չինների կազմում 10% տեղաբնիկներ ունենալու վերաբերյալ հրամանը³³:

Նշված համամասնությունը կիրառելով Կովկասյան բանակի մյուս՝ Թուրքեստանյան 2-րդ եւ Կովկասյան 1-ին բանակային միավորումների անձնակազմերի վրա՝ ստացվում է, որ առնվազն 7500 հայ զինվորական մասնակցել է էրզրումի ռազմական գործողություններին (առանց հայկական կամավորական ջոկատների հաշվառման):

Ժամանակակից գրող-հրապարակախոս, Ռուսաստանի պատմության վերաբերյալ մի շարք աշխատությունների հեղինակ Վ. Շամբարովի կարծիքով՝ էրզրումի գործողության ժամանակ ցուցաբերած հերոսության համար ավելի քան 100 զինվոր եւ կազակ արժանացել են Գեորգիեւյան տարբեր աստիճանի շքանշանների³⁴: Ուսումնասիրելով Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվում պահպանվող մի շարք փաստաթղթեր³⁵՝ պարզվում է, որ էրզրումի գործողություններում ներգրավված ռուսական 3 բանակային միավորումներից Ս. Գեորգիեւյան շքանշանի³⁶ տարբեր աստիճաններով է պարգևատրվել շուրջ 320 հայազգի

³¹ Сёв Н. Г. КОРСУН, նշ. աշխ., էջ 488:

³² ՌՊՌՊԱ, ֆ. 2300, ց. 1, գ. 453, թ. 164:

³³ ՌՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 1038, թ. 8:

³⁴ Сёв В. Е. ШАМБАРОВ, նշ. աշխ., էջ 563:

³⁵ Զինվորականների ծառայողական ցուցակներ, պարգևատրման թերթիկներ, հրամաններ եւ այլն:

³⁶ Գոյություն ունեցող ռազմական շքանշանների շարքում ամենապատվավորը Սուրբ Նահատակ Հաղթական Գեորգիի շքանշանն էր (Գեորգիեւյան խաչ – ստեղծվել է 1769-ի նոյեմբերի 26-ին, ունի 4 աստիճան եւ սպաների, եւ ստորին չինների համար): Եթե բոլոր շքանշանները կարող էին տրվել եւ պատերազմական, եւ խաղաղ պայմաններում, ապա Գեորգիեւյան շքանշանը տրվում էր բացառապես մարտական գործողություններում աչքի ընկնելու, առանձնահատուկ խիզախություն ցուցաբերելու համար: Գեորգիեւյան շքանշանին

զինվորական, որից մոտ 250-ը՝ միայն Կովկասյան 1-ին բանակային միավորման ռուսական 39-րդ հետեւակային զորախմբից:

Ասպիսով՝ էրզրումի ռազմական գործողություններն աննախադեպ էին ինչպես մարտավարական առումով, այնպես եւ իրենց ռազմաքաղաքական նշանակությամբ: Բնական եւ աշխարհագրական դժվարագույն պայմաններում հաջողությամբ իրականացված էրզրումի գործողությունը նաեւ հայազգի զինվորականների ռազմական տաղանդի, որակական լավագույն հատկանիշների դրսեւորման ասպարեզ հանդիսացավ: Հայազգի զինվորականներից շատերն ստացան բարձր կոչումներ, արժանացան տարբեր շքանշանների եւ պարգեւների: Սույն հոդվածի շրջանակում նրանց մի մասի քաջագործությունների ու սխրանքների անվանական լուսաբանումն ընդամենը էրզրումի ռազմական գործողություններին մասնակցած ավելի քան 7500-ի հասնող հայ զինվորականության օրինակելի ծառայության հավաքական բնորոշումն է:

Էրզրումի գործողությունից քաղված դասերը, ձեռք բերված փորձն ու հմտությունները հայ զինվորականությունը հետագայում օգտագործեց Հայկական բանակային միավորման ծառայության եւ 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ:

РЕЗЮМЕ

Вопросы участия и освещения вклада армянского воинства в Первой мировой войне по разным причинам не были предметом специального исследования историков.

Между тем, в ходе Первой мировой войны более 250 000 армян в составе регулярной русской армии сражались на разных фронтах Первой мировой войны и внесли весомый вклад в достижение побед российских войск.

Одной из таких побед стала решающая победа Эрзерумской военной операции на Кавказском фронте, в достижении которой большую роль сыграло около 7500 армянских солдат. Эрзерумская операция, разработанная, а затем успешно проведенная в тяжелейших климатических условиях, была ареной для проявления военного таланта и лучших качеств армянских военных.

Ի հավելում գոյություն ունեին բազմաթիվ պարգևներ, ինչպես նաեւ տարեկան թոշակ (տե՛ս Երզրումի գործողություն ունեին բազմաթիվ պարգևներ, ինչպես նաեւ տարեկան թոշակ (տե՛ս Военная энциклопедия, Петроградъ, 1914, т. 17, էջ 143—145):

Только вовремя Эрзерумской операции более 320 армянских военнослужащих были награждены различными степенями ордена Святого Георгия за самоотверженность и высокие тактические способности, многие были удостоены других наград и высоких званий.

Уроки, извлеченные из Эрзерумской операции, приобретенный опыт и навыки армянская армия впоследствии использовала в 1918 году во время майских сражений.


S U M M A R Y


The issues of participation and coverage of the contribution of the Armenian army in the First World War for various reasons were not the subject of a special study by historians.

Meanwhile, during the First World War, more than 250 000 Armenians in the regular Russian army fought on different fronts of the First World War and made a significant contribution to the victories of the Russian troops.

One of them was the decisive victory of the Erzurum military operation on the Caucasian front, in the achievement of which about 7500 Armenian troops played an important role. The Erzurum operation, planned and then successfully carried out in the most difficult climatic conditions, was an arena for the manifestation of the military talent and the best qualities of the Armenian military. During the Erzurum operation alone, more than 320 Armenian servicemen were awarded various degrees of the Order of St. George for their dedication and high tactical abilities; many were awarded other awards and high titles.

The lessons learned from the Erzurum operation, the experience and skills gained by the Armenian army were subsequently used in 1918 during the May heroic battles.





ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ՄՄ

Ս. ԷՋՄԻԱՍՆԻ ՍԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԱԹՈՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նայկական միջնադարյան վանքերում ու եկեղեցիներում իրականացվող շինարարական եւ բարեկարգման աշխատանքները կարելուով եւ նախ եւ առաջ մեր պատմամշակութային ժառանգությունը նոր գտածոներով հարստացնելու եւ ուսումնասիրություններ իրականացնելու տեսանկյունից: Այս առումով բացառություն չէին նաեւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությունները՝ վերջին տարիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իրականացվող հիմնանորոգման լայնածավալ աշխատանքները, որոնց արդյունքում ոչ միայն ի հայտ եկան Մայր տաճարի որմնանկարների ուշագրավ շերտեր, այլեւ դրանք հնագիտական ու վիմագրագիտական նոր բացահայտումների առիթ դարձան: Ասվածի հավաստիքն են վերջերս հրապարակված գիտական հոդվածները¹, դրանցից մեկը նվիրված է Մայր տաճարի վիմագրական նորահայտ նյութին, որի հեղինակն է Ս. Էջմիածնի «Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն» կազմակերպության արվեստաբան, լուսահոգի Ավետիս Ավետիսյանը²: Գնահատելով բազմաշնորհ հեղինակի

¹ Տե՛ս Ա. ՊԱՊՅԱՆ, Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների վերականգնման ընթացքը, «Նայկական որմնանկարություն» գիտական հոդվածների եւ նյութերի ժողովածու, կազմ. եւ խմբ.՝ Կ. Մաթեոսյան, Երեւան, 2019, էջ 279—281, 388—389. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ԲԱԳԻՇՅԱՆ, Զաքարիա վարդապետ Վաղարշապատցին եւ նրա նորահայտ դամբարանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2020, Ա., էջ 44—57:

² Տե՛ս Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Նորահայտ վիմական արձանագրություններ եւ վիմագրական ճշգրտումներ Էջմիածնի Մայր տաճարում, «Հայագիտության հարցեր», 2020, թ. 1 (19), էջ 113—128: Ցավոք, Արցախյան վերջին պատերազմը չխնայեց նաեւ մեր երիտասարդ գործընկերոջ կյանքը. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ա. Ավետիսյանն իր հոդվածում հրապարակել է 7 արձանագրություն, որոնցից մեկը՝ ոչ վիմագիր: Արձանագրություններից երկուսը շինարարական բնույթի են, իսկ մյուսները՝ ԺԸ.—ԺԹ. դդ. հիշատակագրություններ, մեկից էլ միայն թվագիրն է պահպանվել՝ ՌՃԼԵ. (1686): Մանրատառ ու անվարժ փորագրությամբ աչքի ընկնող հիշատակագրություններից մեկը, ըստ հեղինակի,

մասնագիտական հմտությունները, այդուհանդերձ, ցանկանում ենք որոշակիորեն հստակեցնել Մայր տաճարի մեծ գմբեթի խաչաթոռի³ արձանագրության վերծանությունը՝ զուգահեռ որոշ մանրամասներ հաղորդելով բովանդակության վերաբերյալ:

Այն, որ եկեղեցիների գմբեթները պսակող խաչերի հետ զուգակցվող առարկաները երբեմն արձանագրվել են, վկայում է դեռևս Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, որն իր «Ստորագրութեան» երրորդ՝ «Յաղագս սուրբ մասանց եւ նշխարաց սրբոց եղելոց աստէն ի գանձարանի սրբոյ խորանի մեծի Կաթողիկէ եկեղեցոյս» մասում սուրբ գեղարդի, Հավուց թառի Ամենափրկիչ խաչափայտի, սրբոց աջ-մասունքարանների ու տապանակների կողքին հիշատակում է նաեւ Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսի (1763–1780 թթ.) օրոք պատրաստված «գագաթ գլխոյ սրբուհւոյն Հռիփսիմեայ կուսի»՝ ագուցված արծաթյա ութանկյուն անոթի մեջ: Վերջինիս վրա պահպանված է եղել կաթողիկոսական փոքր կնիքը, նաեւ՝ կողպեքը (կուպղ), որով ամրացվել է գմբեթին եւ գագաթի անոթին, այսինքն՝ խաչաթոռին: Կողպեքի երկու կողմերում արձանագրված է հետեւյալը. «Ձեռամբ Սիմէօն կաթողիկոսին, Սուրբ Հռիփսիմէի գագաթն է, ՌՄԺԴ. (1765)»⁴:

Նշենք, որ 2017 թ. Մայր տաճարի գմբեթի նորոգման նպատակով խաչն իջեցվել է, իսկ խաչաթոռի արձանագրությունը դեռևս 2012 թ. տեղում տեսել եւ այդ մասին Մայր Աթոռի գիտական խորհրդին է տեղեկացրել վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ամիրան Բադիշյանը, որը խաչն իջեցնելուց հետո ճշտել է նաեւ նորոգման թվականը⁵: 1.60 մ բարձրությամբ մետաղե խաչի բաղկացուցիչ մասն է նաեւ

հայտնում է Պողոս վարպետ Կյծակի անունը, որը 1680-ականներին կառուցել է տաճարի փոքր զանգակատուն-գմբեթները (Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 117):

³ Մենք հակված ենք գմբեթի խաչահիմքը հանդիսացող գնդաձեւ պատվանդանը կոչելու խաչաթոռ, այլ ոչ խնձորակ: «Ժաչաթոռ» եզրը բացատրվում է իբրեւ քարե կամ փայտե (տվյալ դեպքում՝ մետաղե) խնձորաձեւ պատվանդան, որի վրա կանգնեցվել է խաչը («Հայերէն բացատրական բառարան», կազմ.՝ Ստ. Մալխասեանց, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 242):

⁴ Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՍ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատ.՝ Ա. Տէր-Ստեփանեանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 51–52. հմմտ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 254:

⁵ Ա. Բադիշյան — բանավոր հաղորդում, 02.09.2020 թ.: Շնորհակալությամբ նշենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանի առաջարկով վերջերս առիթ ունեցանք լուսանկարելու եւ տեղում ճշտելու խաչաթոռի արձանագրության վերծանությունը (27.08.2020 թ.):

գնդաձեւ, երկու մասից կազմված խաչաթողը (բարձ.՝ 0,22 մ, տրամ.՝ 0,31 մ), որի վրա էլ պահպանվել է գոտկաձեւ, ելնդատառ արձանագրությունը (նկ. 1, 2): Փորագրիչն այն կազմել է իրար զուգահեռ տողերի միջնամասում, տառերի բարձրությունը մոտ 2 սմ է. սկզբում պարզունակ, թեւերը եռաբողբոջ խաչ է պատկերված, իսկ տողերի ավարտին՝ ոճավորված գծային զարդանախշեր: Բուն արձանագրությունից անշատ իբրեւ երկրորդ տող, բավականին ուշագրավ եղանակով նշված են նաեւ վարպետների անունները: Արձանագրության վերժանությունը, ըստ առաջին հրատարակչի, հետեւյալն է. «Ի թուին ՌՃԼ. (1681), եղայ կաթողիկոս.... Եղիազար Ամենայն Հայոց, ի շարժման է եւ ի կայծակնայ խախտել, կրկին նորոգեցաւ ՌՃԼԹ. (1690) թուին, ուստայ Ովանէս Քրրիստոս բլիք»⁶: Այսինքն՝ Եղիազար Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք (1681—1691 թթ.) նորոգվել է երկրաշարժից եւ կայծակից «խախտված» (վնասված) խաչը, իսկ նորոգող վարպետը (ուստա) Ովանէսն է:

Ակներեւ է, որ արձանագրության հատկապես վերջին հատվածում վերժանությունը հստակ չէ, ինչը մտորելու տեղիք է տալիս (նկ. 3): Նախ՝ ՔՐԻՍՏՈՍ անունը տրամաբանորեն պետք է արձանագրվեր համառոտագրված՝ «ՔՍ» ձեւով, ինչպես ընդունված է նաեւ միջնադարյան վիճակագրերում: Բացի այդ՝ անհասկանալի է վերջին՝ «ԲԼՅԻՔ» տառաշարքը, որի «ՅԻՔ» հատվածը Ա. Ավետիսյանը հավանական է համարում կարդալ «ՅԻՇԵՍՁԻՔ» կամ «ՅԻՇԵՂՔ»⁷: Առերեւոյթ չբացատրելով հեղինակի առաջարկած տարբերակները՝ նկատենք՝ «ՅԻՇԵՅԵՔ» բառը, որին սովորաբար հաջորդում է «Ի ՔՐԻՍՏՈՂՍ» կանոնական դարձած ձեւակերպումը, «ՅԻՔ» ձեւով առհասարակ չի սղվում, առավել եւս, որ սրանից առաջ դեռ երկու տառ անհասկանալի է՝ «ԲԼ»: Նկատառելով այդ՝ առաջարկում ենք հետեւյալը.

Նախ՝ տեղին է «ՈՒՍՏԱՅ» բառի վերջին «Յ»-ն կարդալ որպես ՈՎԱՆԵՍ անվան սկզբնատառ, այսինքն՝ ՅՈՎԱՆԵՍ, քանի որ նշված ժամանակաշրջանում «Յ» կիսաձայնի քերականական կարգին գրիչները ոչ միշտ են հետեւել, կամ՝ այն կարելի է կարդալ երկիցս՝ «ուստայ Յովանէս». Ովանէս անվանաձեւը շատ ավելի սակավագույն է արձանագրվել: Անվանը

⁶ Անդ: Նշենք, որ նախքան արձանագրության հրատարակումը հեղինակն իր վերժանությունը նաեւ մեզ էր ներկայացրել, եւ հապճեպ գննությամբ մենք եւս նկատեցինք, որ արձանագրության վերջին հատվածն անընկալելի է:

⁷ Անդ, էջ 118, ծնթ. 5:

հաջորդող «Ք» գրից հետո «ԸՍՏ» տառաշարքն է, այնուհետև ոչ թե «Ս», այլ կցագրված «ԱՄ» է, այսինքն՝ «ԸՍՏԱՄ», որին էլ հաջորդում է «ԲԼՅԻՔ» կամ, որ ավելի տրամաբանական է, «ԲԼՅԻՔ» հատվածը: Մենք հակված ենք երկրորդ՝ «ԲԼՅԻՔ» տարբերակին, քանի որ փորագրիչն իրականում «Յ» եւ «Յ» տառերը միակերպ չի արձանագրել, որից դատելով՝ միայն «Օ»-ի վերականգնմամբ կարելի է կարդալ «ԸՍՏԱՄԲՕԼՅԻՔ»: Կ. Պոլիսը, որը մեր մշակութային հայտնի կենտրոններից էր, հատկապես Ժէ.—ԺԹ. դդ. սկզբնաղբյուրներում հաճախ է հիշվում «Ըստամբօլ», «Ըստամպօլ» անվանաձևերով, ուստի համոզիչ է թվում այս կերպ վերծանումը⁸: Ինչ վերաբերում է ինչպես ԸՍՏԱՄԲՕԼՅԻ, այնպես եւ ՅՈՎԱՆԷՍ անվանումների վերջում հստակ ընթեռնելի «Ք» տառի առկայությանը, ապա տրամաբանական ենք համարում դրա հոգնակերտ նշանակությամբ գործածումը, մի բան, որը մեր միջնադարյան աղբյուրներում վկայված բացառիկ երեւույթ կարելի է համարել, այսինքն՝ նույնանուն երկու «Յովանէս» վարպետ⁹ (ուստա), երկուսն էլ՝ «Ըստամբօլցի», որոնց անունները երկիցս փորագրելու փոխարեն՝ գրիչը հետաքրքիր լուծում է գտել: Այսքանով հանդերձ՝ արձանագրության մեր վերընթերցումը հետեւյալն է (նկ. 4).

† Ի ԹՈՒԻՆ ՌՃԼ. (1681), ԵՂԵԻ ԿԼԱ՝ԹԼՈՒ՝ՂԼԻ՝ԿԼՈ՝Ս ՍԲ. ԷՋՄԻԱՇՆԱՅ՝ ԵՂԻԱԶԱՐ ԱՄԼԵՆԱՅՆ՝ ՀԱՅՈՑ, Ի ՇԱՐԺՄԱՆԷ ԵԻ Ի ԿԱՅՄԱԿՆԱՅ ԽԱԽՏԵԼԱ՝ԿԻԿԻՆ՝ ՆԼՈ՝ՐՈԳԵՑԱԻ ՌՃԼԹ. (1690) † ԹՎԻՆ, ՈՒՍՏԱՅ ՅՈՎԱՆԷՍՔ ԸՍՏԱՄԲԼՈ՝ԼՅԻՔ:

⁸ Խոսուկն օրինակ է Ս. Հռիփսիմե վանքի քառամույթ սրահ-զանգակատան հարավարեւելյան սյան արեւմտահայաց նիստի արձանագրությունը, ըստ որի՝ 1730 թ. ապագա կաթողիկոս Աղեքսանդր վարդապետ Ըստամբօլցին, ի հիշատակ իր եւ ծնողների, վանքին նվիրաբերել է հիսուն ոչխար տամազլուխ, այսինքն՝ բազմացնելու նպատակով (Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Նորահայտ արձանագրություն Ս. Հռիփսիմեի վանքից, ՊԲՀ, 2011, թ. 2, էջ 192—198. հմմտ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, էջ 265—266, արձ. 527):

⁹ Ոմն վարպետ Հովհաննես նորոգողի անվանակիր փոքր խաչքարը ներկայումս ագուցված է Մայր Աթոռի միաբանական կացարանի բաց կամարասրահի արեւելահայաց որմին: Խաչքարն ավելի վաղ ագուցված է եղել հին վեհարանի արեւմտյան պատին, իսկ գիրն առաջինը հրատարակել է վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, ըստ որի՝ դժվար է ասել, թե ինչ է նորոգել Հովհաննեսը, սակայն նա էջմիածնում գործած Ժէ. դարի վարպետներից է (Ս. ՍԱՂՈՒՄՅԱՆ, Վիմագիր մասունքներ, «Էջմիածին», 1994, Ը., էջ 111): Մենք եւս հետազայում այս խաչքարին անդրադառնալիս նշել ենք, որ այն կարելի է թվագրել առնվազն ԺԶ.—ԺԷ. դդ.՝ հնարավոր համարելով նաեւ այն, որ խաչքարը կարող էր բերված լինել այլ վայրից (Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, էջ 121, արձ. 128): Բացառված չէ, որ խաչաթոռի նորոգման արձանագրության մեջ հիշատակված նույնանուն երկու Հովհաննես վարպետներից մեկը հենց խաչքարի վիմագրում վկայված Հովհաննես նորոգողն է:

Անդրադառնանք բովանդակությանը: Արձանագրությունը նախ հայտնում է Ս. էջմիածնում Եղիազար Այնթապցու կաթողիկոսության սկիզբը, որն իրավամբ Հայոց ՌՃԼ., այսինքն՝ 1681 թվականն է¹⁰: Նշենք, որ չնայած արձանագրության մեջ հանդիպող «ԵԻ»-ի առանձին գրությամբ, «ԵՂԵԻ» բառում վերջին «ԵԻ»-ը փորագրիչը կցագրել է, եւ այն տեղին է կարգալ «ԵՂԵԻ», այլ ոչ «ԵՂԱ»: Պատմագիր Զաքարիա Քանաքեռցին Եղիազար Այնթապցի կաթողիկոսին բնութագրում է իբրեւ «նարտարախօս եւ ճոռումբաւ, առնազոյց եւ բախատուր,աներկիւղ, որ եւ նարտարութեամբն իւրով ամենեցուն սիրտն առ ինքն ձգեաց...»¹¹: Եղիազար Այնթապցի հայրապետի տասնամյա գործունեությունը նշանավորվել է հատկապես եկեղեցաշինությամբ: Նույն Զաքարիա պատմագրի հաղորդմամբ՝ Եղիազար Այնթապցի կաթողիկոսը, Մայր տաճարի հարավային ու հյուսիսային խորանները բարձրացնելով, քարե ամպհովանի գմբեթներով պատարագի սեղաններ հիմնեց: Իսկ «ի տանիս եկեղեցոյն յերիս տեղիս կանգնեաց կաթողիկէ»¹² ասելով՝ պատմագիրը նկատի ունի Մայր տաճարի արտաքուստ շեշտված արեւելյան, հյուսիսային եւ հարավային խորաններին կանգնեցված զանգակատուն-գմբեթները, որոնք Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի բնորոշմամբ՝ տաճարին հնգագմբեթ տեսք հաղորդեցին՝ «...որով եղեն հինգ կաթողիկէ ի տանիս տաճարին»¹³:

Զմոռանանք, որ Եղիազար Այնթապցու կաթողիկոսության շրջանին նախորդել էր Երեւանի 1679 թ. հունիսի 4-ի ուժգին երկրաշարժը, որի վերաբերյալ մատենագիրները մանրամասն տեղեկություններ են հաղորդել: Երկրաշարժին ականատես Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմութեան» ԾԱ. (51) «Վասն ահագին շարժին Երեւանայ» գլխում վկայում է, որ ցնցումն այնքան ուժգին էր, որ հողին հավասարվեցին բազմաթիվ «գեղեցկայարկ» շինություններ, վանքեր ու եկեղեցիներ (Գառնիի տաճար, Հավուց թառի վանք, Աղջոց վանք, Զագավանք, Գեղարդավանք, Խոր Վիրապի վանք եւ այլն): Ավերվեցին հիմնականում Երեւան քաղաքը

¹⁰ Սիմեոն Երեւանցի Եղիազար Այնթապցու հայրապետության սկիզբ է համարում 1682 թվականը. «...նստի ի ՌՃԼԱ. (1682) թուղն ի Սուրբ էջմիածին, ի թագաւորութեանն Պարսից շահ Սուլեյմանի, եւ օսմանցոց սուլթան Ահմատին....» (ՍԻՄԵՕՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Զամբո, գիրք, որ կոչի յիշատակարան, հայելի եւ պարունակող բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 25):

¹¹ ԶԱԲԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՐՑԻ, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատ.՝ Ա. Վիրաբեանի, Երեւան, 2015, էջ 130:

¹² Անդ, էջ 151. տես նաեւ ՍԻՄԵՕՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Զամբո, էջ 26:

¹³ ՍԻՄԵՕՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ, Զամբո, էջ 26:

եւ ներկայիս արվարձանները՝ Նորագավիթ, Նորագյուղ, Նորք, Քանաքեռ եւ այլն¹⁴: Երկրաշարժի ցնցումները հասել են մինչեւ Ս. Էջմիածին ու Սեւան¹⁵: Ըստ գրիչ Գրիգոր Երեւանցու՝ աղետը մեծ վնաս է հասցրել Արարատյան դաշտի զգալի մասին՝ Մեծ Մասիսից մինչեւ Շամիրամի բլուր՝ բացառյալ հայ ժողովրդի նվիրական երեք սրբությունների՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարի, Ս. Հռիփսիմե եւ Ս. Գայանե վանքերի. «...բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց՝ լուսաւորչաշէն բարձրագմբէքն Էջմիածին միայն մնաց, հանդերձ Գայանաւ եւ Հռիփսիմէին, ի պարծանս ազգիս մերոյ»¹⁶:

Խնդրո առարկա խաչաթոռի արձանագրության մեջ վկայված երկրաշարժի ու կայծակի մասին ուշագրավ հիշատակությունները թույլ են տալիս ենթադրել, որ տաճարի գմբեթը, այնուամենայնիվ, վնասվել է: Այս տեսանկյունից արձանագրությունն ավելի է արժեւորվում՝ իբրեւ փաստական ու հավաստի վավերագիր տարերային աղետներից մեր պատմամշակութային հուշարձանների կրած վնասների մասին:

Պատմաբան Վարդան Ստեփանյանի բնորոշմամբ՝ 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժն ընդգրկել է գրեթե ողջ Արարատյան դաշտը՝ հասնելով մինչեւ Սեւան: Չնայած նրան, որ սկզբնաղբյուրներն Արարատյան դաշտում երկրաշարժեր են հիշատակում նաեւ 1681 եւ 1683 թթ.¹⁷, այդուհանդերձ, Մայր տաճարի խաչի եւ խաչաթոռի՝ 1690 թ. նորոգված լինելու հանգամանքը, կարծում ենք, պետք է համարել Երեւանի 1679 թ. մեծ երկրաշարժի հետեւանք: Ինչ վերաբերում է խաչի՝ նաեւ կայծակից վնասված լինելու փաստին, ապա ժամանակագրություններում մեզ հաջողվեց գտնել երկու ուշագրավ աղբյուր, որոնցում եւս ակնարկվում է կայծակից եկեղեցիների կրած վնասի մասին: Վաղագույնը ՄՄ Հ^{մր} 3613 ձեռագրի մագաղաթյա պատառիկին պահպանված 1449 թվակիր հիշատակարանն է, ըստ որի՝ նշված տարվա օգոստոսի 15-ին՝ Աստվածածնի վերափոխման տոնին, «...կայծակն էգարկ սուր նիկոլայ զանգակատան

¹⁴ Տե՛ս ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՅԻ, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, էջ 149:

¹⁵ Տե՛ս Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչեւ XIX դարի սկիզբը), Երեւան, 1995, էջ 17:

¹⁶ «Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ե., կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, 2009, սյուն 156:

¹⁷ Տե՛ս Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում եւ նրա մերձակայքում, Երեւան, 1964, էջ 80, 87:

գլուխն անեռեց...»¹⁸: Մյուսը՝ ՄՄ Հ^ր 604 ձեռագրում գրիչ Պետրոս սարկավագը, որը Գողթանի գյուղերից թերեւս Փառիսոսից էր, հայրենի եւ շրջակա գյուղերում տեղի ունեցած իրադարձությունների մասին համառոտ՝ շուրջ 16 տարվա (1703—1719 թթ.) ժամանակագրություն է թողել¹⁹, որի միավորներից մեկում նշում է. «Դարձեալ այսմ ամի (ՌՃԾԲ.— 1703 թ.— Ա. Հ.) մեր եկեղեցուն կայծակ տուեց, գմբէթն քանդեց, վասն իմ ծովացեալ մեղացն...»²⁰: Ցավոք, ինչպես այս, այնպես եւ նախորդ հիշատակագրության մեջ վկայված եկեղեցիները չեն որոշակիացվում, փոխարենը հիմնավորվում են կայծակից դրանց գմբեթների, տրամաբանորեն նաեւ խաչերի վնասումն ու ավերումը, ինչպես Մայր տաճարի դեպքում:

Ամփոփելով՝ պետք է արձանագրել, որ Ս. Էջմիածնի Մայր տաճարի խաչաթոռի 1690 թվակիր արձանագրության փաստագրումն իր բովանդակային հենքով գալիս է համալրելու Ժէ. դարում Մայր Աթոռում եւ հարակից վանքերում իրականացված շինարարական եւ բարենորոգչական մեծածավալ աշխատանքները: Այն ուշագրավ աղբյուր է ոչ վիմական արձանագրությունների շարքում բնական, տարերային աղետների (երկրաշարժ, կայծակ) եւ դրանց պատճառած վնասների (խաչի խախտման ու նորոգման) մասին հավաստի տեղեկություն հաղորդելու տեսանկյունից: Առավել հետաքրքիր է արձանագրության վերջում նույնանուն երկու վարպետների՝ Հովհաննես Ստամբուլցիների անունների արձանագրման եղանակը՝ ոչ թե առանձին-առանձին նշելու, այլ «ք» հոգնակերտի հավելմամբ, որն արձանագրություններում հանդիպող սղագրության յուրատեսակ օրինակ կարելի է համարել:

Նշենք նաեւ, որ 2020 թ. հունիսի 14-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց եւ տեղադրվեց Մայր տաճարի մեծ գմբեթի նորակերտ խաչը (նկ. 5—8): Նկատառելով այն, որ հին խաչն ու խաչաթոռն արդեն մեծապես վնասված եւ քայքայված էին, խաչաթոռին առկա էին կրակոցներից առաջացած անցքեր՝ որոշվել է այն փոխարինել նորով, իսկ հինը հանձնել Մայր Աթոռի թանգարանային պահպանությանը²¹:

¹⁸ «Մանր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ.», հտ. II, կազմ.՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 514:

¹⁹ Տե՛ս անդ, էջ 508:

²⁰ Անդ, էջ 524:

²¹ Խաչի օծման եւ տեղադրման լուսանկարները մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն,

РЕЗЮМЕ

В 2017 году в процессе проведения в последние годы в Первопрестольном Святом Эчмиадзине широкомасштабных реставрационных работ был спущен крест большого купола, в результате чего выяснилось, что на шаровидном основании креста имеется памятная надпись. Согласно надписи, он был отреставрирован при Католикосе Всех Армян Егиазаре I Айнтапи в 1690 году, поскольку было существенно повреждено от землетрясения и удара молнии, реставраторами же были мастера с одинаковым именем — Ованнес Стамболци.

Документирование памятной надписи по своему содержанию призвано дополнить информацию о числе проводимых в XVII веке в Кафедральном соборе и окрестных монастырях полномасштабных строительных и восстановительных работ. Она является примечательным источником с точки зрения сообщения достоверной информации о природных катаклизмах (землетрясение, молния) и причиненном ими ущербе. По-видимому, упомянутое землетрясение — стихийное бедствие, произошедшее в Ереване до периода правления Католикоса Егиазара I 4 июня 1679 года, в результате которого, как позволяет полагать данная надпись, купол Кафедрального собора и крест были повреждены, хотя сам собор и окрестные монастыри не были разрушены.


SUMMARY

In 2017, in the process of large-scale restoration works carried out in the Mother See of Holy Etchmiadzin in recent years, the cross of the large dome of the Cathedral was lowered, and as a result, it turned out that there is a commemorative inscription on the spherical base of the cross. According to the inscription, it was repaired in the reign of Yeghiazar I of Ayntap, Catholicos of All Armenians, in 1690, since it had been significantly damaged by the earthquake and lightning strikes, and the restorers were masters with the same name — Hovhannes of Istanbul.

Documenting the commemorative inscription in its content is intended to supplement information on the number of full-scale construction and restoration works carried out in the Etchmiadzin Cathedral and the surrounding monasteries in


Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսնակ Տ. Վահրամ քհն. Մելիքյանին:

the 17th century. It is a remarkable source in terms of reporting reliable information about natural disasters (earthquakes, lightning) and the damage caused by them. The aforesaid earthquake apparently occurred in Yerevan before the reign of Catholicos Yeghiazar, on June 4, 1679, which though did not destroy the Etchmiadzin Cathedral and the surrounding monasteries, however, damaged the dome and the cross of the Cathedral, as this inscription suggests.





Նկ. 1. Մայր տաճարի գմբեթի խաչը և խաչաթողը
(լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 2. Արձանագիր խաչաթողը (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



ՏԵՆԵՑԻՆԻ ԿԵՐԸՅՍ ԲԼՅԻՔ

Նկ. 3. Խաչաթրոփի արձանագրության վերջնամասի լուսանկարն ու գրանկարն
ըստ Ա. Ավետիսյանի նշված աշխատության (էջ 119, նկ. 4)



ԻՌՈՒԻՆՈՒ ՃԼԻՆԿԱԾԱՍՍՈՒԹԵՐԵՐԱՅ



ԿԵԼԶԻՐԱՅԱՅՈՅԻ ՇԱՐԿԱՆԵՐԻ ԻՆՅՈՒՆԻՆ Յ



ԿԱՆՈՒՆԻՐԻ ՆՐՈՐԻՆ ՅԱՆՃԻՆՈՒՐԵՆ ԵՐԵՐ



ՄԵՏԱՅՈՒՆԻ ԿԵՐԸՅՍ ԲԼՅԻՔ

Նկ. 4. Խաչաթրոփի արձանագրությունը (հատվածական լուսանկարներից որոշներն
արտատպված են Ա. Ավետիսյանի նշված աշխատությունից, իսկ գրանկարները մերն են)



Նկ. 5—8. Մայր տանարի խաչի օծումը և տեղադրումը, 2020 թ.
(լսնկ.՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի)



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ (1936–1940 թթ.)¹

Կիլիկիան լքելուց հետո նոր պայմաններում Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության գործում կարեւոր դերակատարում ունեցան այն քիչ թվով հոգեւորականները, որոնք իրենց ծառայությունը շարունակում էին նվիրակատական այս աթոռի շրջանակում: Նրանց շարքում էր Պետրոս արք. Սարաճյանը:

Պետրոս Սարաճյանը ծնվել է 1870 թ. հունվարի 6-ին Սիվրիհիսարում²: Նախնական կրթությունն ստանում է Կ. Պոլսի ազգային հիվանդանոցի որբանոցում, ապա 1888–1891 թթ. ուսանում Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցում: Ավարտելով ուսումը՝ նույն թվականին ձեռնադրվում է սարկավագ՝ այն ժամանակ լուսարարապետ Սահակ եպս. Խապայանի ձեռամբ: Այնուհետեւ՝ մինչեւ 1894 թ., անցնում է ուսուցչական աշխատանքի Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում³:

1898 թ. Պետրոս Սարաճյանը ձեռնադրվում է վարդապետ եւ 1899-ից մինչեւ 1905 թ. ստանձնում Կիպրոսի առաջնորդի պարտականությունները: 1905–1909 թթ. նորից անցնում է ուսուցչական աշխատանքի Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցում՝ դառնալով նաեւ վարժարանի տեսուչ⁴: 1910 թ. ընդամենը մի քանի ամիս ստանձնում է Բեյրութի հոգեւոր տեսչի պարտականությունները եւ նույն թվականին դառնում է Հաճնի հայոց թեմի առաջնորդը: 1914 թ. մայիսին Սսում Սահակ Բ. Խապայան

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Տե՛ս «Հասկ», յունիս-օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 90: Բաբկեն Կյուլեսեյանը Պետրոս Սարաճյանի ծննդյան ամսաթիվ է նշում հուլիսի 14-ը (տե՛ս ԲԱԲԳԷՆ Ա. ԿԻԼԻԿԵՍԻՅԱՆ, Հայ Կիպրոս, Հայ գաղութը եւ Ս. Մակար), Անթիլիաս–Լիբանան, 1936, էջ 249:

³ Տե՛ս ԲԱԲԳԷՆ Ա. ԿԻԼԻԿԵՍԻՅԱՆ, նշ. աշխ., էջ 249:

⁴ Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», թ. 4, խմբ.՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա–Կիպրոս, «Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան», 2010, էջ 92:

կաթողիկոսի (1902—1939 թթ.) կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս⁵, իսկ 1924 թ., երբ Պետրոս սրբազանը Կիպրոսի թեմի առաջնորդն էր, վերջինիս շնորհվում է արքության աստիճան⁶:

Թուրքական ցեղասպանական գործողություններն սկսվելուց հետո՝ 1915 թ. մայիսի 24-ին, Պետրոս Սարաճյանը Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանի հետ տարագրվում է Հալեպ, ապա՝ Իդլիբ⁷: Հաջորդ տարի տեղափոխվում է Երուսաղեմ, որտեղ Սահակ Բ. Խապայանը հաստատվել էր նոր՝ «Կաթողիկոս-պատրիարք Թուրքիոյ հայոց» կարգավիճակով⁸: Պետրոս սրբազանը մինչև 1917 թ. մնում է Երուսաղեմում, որտեղ ընդգրկվել էր սինոդի կազմում: 1918—1919 թթ. կարճ ժամանակով ստանձնում է Դամասկոսի առաջնորդությունը, իսկ 1919 թ. հոկտեմբերին կրկին վերադառնում է Կիլիկիա⁹: Տարագրության այս շրջանի վերաբերյալ նա իր նամակներից մեկում գրում է. «Ամբողջ կեանքս պայքար մը եղած է, ոչ միայն պաշտօնիս բերմամբ ստիպուած եմ մահադիւ պլ մա եւ 1914էն ի վեր տաւազրութեան ցուպ ի ձեռին չափեցի աւաբական քաղաքներն ու անապատները, ամեն տեսակ զրկանքներու, անօթութեան եւ մահուան հովիտներէն անցնելով»¹⁰:

1919 թ. նոյեմբերին Պետրոս Սարաճյանը կրկին վերադառնում է Հաճն՝ շարունակելով ղեկավարել տեղի թեմը¹¹: Սակայն վերադարձից հետո Հաճնում մնում է մոտ երեք ամիս՝ մինչև 1920 թ. փետրվարը: Հարկ է ընդգծել, որ Հաճնից տարագրման շրջանում՝ 1915—1919 թթ., Պետրոս Սարաճյան սրբազանը, ըստ էության, շարունակում էր մնալ Հաճնի հոգևոր առաջնորդը¹²:

⁵ Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», «Դար» հիմնադրամ, խմբ.՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա—Կիպրոս, 2011, էջ 255. նաե՛ւ «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 90: Նշենք, որ Բաբկեն Կյուլեսերյանը եւ Բյուզանդ Եղիայանը Պետրոս Սարաճյանի եպիսկոպոսական ձեռնադրության տարեթիվ են նշում 1915 թ., որը, կարծում ենք, սխալ է, քանզի այդ թվականին վերջինս արդեն գտնվում էր տարագրության մեջ. այս մասին տե՛ս ԲԱԲԳԷՆ Ա. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 249—250. Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914—1972, Անթիլիաս, 1975, էջ 462:

⁶ Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 125:

⁷ Տե՛ս անդ, էջ 18:

⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 57—68:

⁹ Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 93—94. նաե՛ւ «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 255—256:

¹⁰ «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 255:

¹¹ Տե՛ս Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 462:

¹² Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 255:

Թուրքերն ամեն կերպ ջանում էին ճնշել հայության ինքնապաշտպանության փորձերը. հերթը Հաճնինն էր: Հաճնեցիները, հասկանալով իրավիճակը, որոշում են կազմակերպել քաղաքի ինքնապաշտպանությունը: Ստեղծվում է Հաճնի ինքնապաշտպանության բարձրագույն ժողով՝ թեմի առաջնորդ Պետրոս եպս. Սարաճյանի նախագահությամբ¹³: Մինչ ռազմական գործողությունների սկսումը Պետրոս սրբազանը 1920 թ. փետրվարի 22-ին, իր խոսքով՝ «ինքնապաշտպանութեան ժողովին որոշումով», պաշարված հաճնեցիներին օգնելու նպատակով ժամանում է Ադանա¹⁴: Վերջինիս ուղեկցում էին նաեւ բողոքականների պատվելի Հարություն Խաչատրյանը եւ Ազգային վարժարանի տնօրեն Շմավոն Փոստոյանը¹⁵: Հաճնում Պետրոս սրբազանն անում է հնարավոր ամեն բան պաշարված հայրենակիցներին օգնելու համար, սակայն ապարդյուն: Ֆրանսիական իշխանություններն այդպես էլ որեւէ գործնական աջակցություն չեն ցուցաբերում¹⁶:

1920 թ. մարտի կեսերին թուրքերն սկսում են առաջին հարձակումները Հաճնի վրա: 1920 թ. ապրիլի 12-ին Պետրոս Սարաճյանը «առանց զգեստի ու ճերմակեղէնի, առանց ռեւէ դրամի»¹⁷ ժամանում է Կիպրոս, իր իսկ խոսքերով՝ «անկէ աւելի ազատ կերպով հեռագրական դիմումներ կատարելու թէ՛ անգլիական, ֆրանսական եւ ամերիկեան կառավարութեանց եւ թէ՛ Ազգ. պատուիրակութեան՝ Հաճնոյ օրհասական վիճակը պարզելու եւ անմիջական օգնութիւն խնդրելով»¹⁸:

Ցավոք, Հաճնը շուրջ ութ ամիս հերոսաբար դիմադրելուց հետո՝ հոկտեմբերի վերջին, ընկնում է: Փրկված մոտ 400 հաճնեցիներ մազապուրծ հասնում են Ադանա, իսկ հետագայում այնտեղից էլ հեռանալով՝ հաստատվում են տարբեր երկրներում, այդ թվում՝ Կիպրոսում¹⁹: Հաճնում զոհվում է Պետրոս եպս. Սարաճյանի մայրը²⁰:

¹³ Տէն Յ. ՊՕՂՈՍԵԱՆ, Հաճնի ընդհանուր պատմությունը, Անթիլիաս, 2014, էջ 539:

¹⁴ Տէն «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 23. նաեւ՝ ԲԱՐԳԷՆ Ա. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 250:

¹⁵ Տէն Յ. ՊՕՂՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 547. նաեւ՝ Հ. ՂԱՋԱՐՈՍԵԱՆ, Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ.-ի ազգասիրական գործունեությունը եւ կիլիկիահայությունը, «Էջմիածին», 1990, Ե.-Զ., էջ 95:

¹⁶ Պետրոս Սարաճյանի՝ Հաճնին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ իրականացրած ջանքերի մասին տես «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 54–70. նաեւ՝ «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 23–26:

¹⁷ «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 256:

¹⁸ ԲԱՐԳԷՆ Ա. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 250:

¹⁹ Տէն Յ. ՊՕՂՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 608–611, 662–663:

²⁰ Տէն «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 256:

Պետրոս սրբազանը որոշում է հաստատվել Կիպրոսում: Կղզին խորթ չէր վերջինիս համար. ինչպես նշվեց, շուրջ մեկուկես տասնամյակ առաջ նա մեկ անգամ արդեն առիթ ունեցել էր ղեկավարելու Կիպրոսի հոգեւոր առաջնորդութիւնը: Ստանձնելով Կիպրոսում հայոց թեմի առաջնորդութիւնը՝ Պետրոս եպս. Սարաճյանն այն ղեկավարեց մոտ 20 տարի՝ կարեւոր ներդրում ունենալով թեմի վերակազմութեան, տեղի ազգային իշխանութեան մարմինների ձեւավորման եւ գաղթականութեան կրթամշակութային ու ընկերային (սոցիալական) խնդիրների լուծման հարցում:

Պետրոս եպս. Սարաճյանն իր գործունեութեան ողջ ընթացքում, հոգեւոր ծառայութիւնից բացի, կարեւոր նպաստ է բերում իր ղեկավարութեանը հանձնված թեմերի շենացման գործում: 1899–1905 թթ. Պետրոս սրբազանը կատարում է հսկայածավալ աշխատանք ազգային, կրթական կյանքի կազմակերպման, ինչպես նաեւ իր ղեկավարած թեմերի համար անհրաժեշտ շինութիւնների կառուցման ուղղությամբ: Սահակ Բ. կաթողիկոսին ուղղված նամակներից մեկում Պետրոս եպս. Սարաճյանն անձամբ է հիշատակում իր կատարած շինարարական աշխատանքների մասին. «1910 դեկ. 3 – 1920 փետ. 25 տասը տարիներ կեանքս մաշեցուցած եմ եւ շատ դժուարին պարագաներու մէջ Հանրնը կառավարած եմ...», ապա շարունակում է. «...իսկ Հանրնի մէջ շինած շէնքերս Ձերդ Վեհափառութիւնը տեսած ու գնահատած է, աւելորդ չեմ համարի յիշել Սահակ-Մեսրոպեան հոյակապ վարժարանը, Ս. Գեորգի կից տղայոց վարժարանը, Ս. Յակովբայ եկեղեցւոյն խորանները, որբանոցի կից հիւանդանոցը եւ այլն...»²¹: Վերջինիս առաջնորդութեան շրջանում բազմաթիւ նոր շինութիւններ են կառուցվում նաեւ Կիպրոսի հայոց թեմում:

Պետրոս արք. Սարաճյանի ձեռնարկները կաթողիկոսական փոխանորդության շրջանում (1936–1940 թթ.)

1936 թ. մահանում է Կիլիկիոյ աթոռակից կաթողիկոս Բաբկէն արք. Կյուլեսերյանը²²: Վերջինս պետք է Սահակ Բ. Խապայանին հաջորդեր Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին: Տարագրվելուց հետո, հերթական անգամ, ծերունագարդ Սահակ Բ. կաթողիկոսը կանգնում է իր հաջորդի ընտրութեան դժվարին հարցի առջեւ: Այս ընտրութիւնը վերակազմված

²¹ «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 94:

²² Տե՛ս «Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ», «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» (1441էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1990, էջ 1078–1087:

եւ բազում խնդիրների առջեւ կանգնած կաթողիկոսության համար միայն հաջորդ գահակալի ընտրության հարց չէր, այլ, կարելի է ասել, նվիրապետական աթոռը պահպանելու խնդիր (նոր իրավիճակում սա լինելու էր կաթողիկոսական առաջին ընտրությունը)։ Այդ առումով թե՛ Սահակ Բ. Խապայան կաթողիկոսը եւ թե՛ բարձրագույն հոգեւոր դասը ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ էին մոտենում խնդրին։

Սահակ Բ. կաթողիկոսի նախաձեռնությամբ Անթիլիասում 1936 թ. հուլիսի 17–21-ը հրավիրվում է եպիսկոպոսաց ժողով՝ ստեղծված իրավիճակը քննարկելու համար²³։ Կաթողիկոսը, թեմական առաջնորդների հետ «համախորհուրդ»²⁴, հուլիսի 20-ին հայրապետական կոնդակով կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ է նշանակում Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս արք. Սարաճյանին. «...որպէսզի մեզի հետ խորհրդակցութեամբ վարէ կաթողիկոսարանիս վերաբերեալ ներքին եւ արտաքին բոլոր գործերը»²⁵։ Վերջինս, իր ցանկության համաձայն, միաժամանակ շարունակելու էր ղեկավարել Կիպրոսի հայոց թեմը²⁶։ Պետրոս արք. Սարաճյանը Կիպրոսի առաջնորդությունը պահպանում է մինչեւ 1940 թ.՝ Կիլիկիո կաթողիկոս ընտրվելը։ Ընտրության հարցում հաշվի էր առնվել Պետրոս արք. Սարաճյանի երկարամյա բազմավաստակ փորձն ու կազմակերպչական ունակությունները, որոնք խիստ անհրաժեշտ էին կաթողիկոսության վերակազմության գործընթացի համար։ Բյուզանդ եղիայանն ահա այսպես է հիմնավորում Պետրոս արք. Սարաճյանի ընտրությունը. «Սահակ կաթողիկոսի անվերապան վստահութիւնը վայելող ամենէն հեղինակաւոր անձն էր, ամեն տեղ ժողովրդականութիւն շահած ու շինարարութիւններով ազգային վերակազմութեան նպաստած»²⁷։

Հաստատվելով կաթողիկոսական փոխանորդ՝ Պետրոս արք. Սարաճյանը տեղափոխվում է Անթիլիաս եւ արագ ձեռնամուխ լինում կաթողիկոսության առջեւ կուտակված խնդիրների լուծմանը։ Վերջինս նախ եւ առաջ, ինչպես որ ընդունված էր, հանդիպումներ է ունենում Լիբանանի

²³ Տէս Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 460։

²⁴ Տէս «Հասկ», յունիս–օգոստոս, 1936, թ. 6–8, էջ 105։

²⁵ «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ.-ի թիւ 116 կոնդակ», 20 յուլիսի 1936, Անթիլիաս–Լիբանան, Հայաստանի ազգային գրադարան, գրանցահամար 25–ԱՀ, պատճեն, էջ 1։

²⁶ Տէս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 409. նաեւ՝ Բ. ԵՂԻՍԵԱՆ, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս, 1975, էջ 461։

²⁷ Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 462։

բարձարգույն իշխանության եւ ֆրանսիական հանձնախմբի (կոմիսարության) ներկայացուցիչների հետ: Պետրոս արք. Սարաճյանի նշանակման մասին Սահակ Բ. Խապայան կաթողիկոսը պաշտոնագրերով տեղեկացնում է նաեւ Սիրիայի նախագահին, Կիպրոսի կառավարչին, օտարերկրյա հյուպատոսներին եւ Սիրիայի ու Լիբանանի կրոնական առաջնորդներին²⁸:

Պետրոս արք. Սարաճյանի փոխանորդության շրջանում Կիլիկիո աթոռի վերաշինության եւ Անթիլիասի կաթողիկոսարանի կառուցապատման ուղղությամբ ձեռնարկվում են բազմաթիվ աշխատանքներ: Այդ շրջանում, պայմանավորված Սահակ Բ. կաթողիկոսի պատկառելի տարիքով, կաթողիկոսարանի հիմնական աշխատանքները, ըստ էության, նախաձեռնում եւ կազմակերպում էր կաթողիկոսական փոխանորդը:

Պետրոս արք. Սարաճյանի փոխանորդության շրջանում էր, որ վերջնականապես լուծվեց Անթիլիասի կալվածքների գնման հարցը: Հայտնի է, որ 1930 թ. ապրիլի 7-ին Ամերիկյան նպաստամատույց հանձնախմբի եւ Կիլիկիո կաթողիկոսության միջեւ կնքված պայմանագրի²⁹ համաձայն՝ Բեյրութից ոչ հեռու գտնվող Անթիլիասում տեղակայված նախկին որբանոցի շենքերը անհատույց, հինգ տարի ժամկետով տրվել էին Կիլիկիո կաթողիկոսությանը, որը պետք է իր աթոռը հաստատեր այնտեղ՝ միաժամանակ պարտավորվելով տեղում հիմնադրել ուսումնական նոր հաստատություն³⁰: Հինգ տարի անց՝ նախատեսված ժամկետն ավարտվելուց հետո, նպաստամատույց հանձնախումբը վաճառքի էր հանել իրեն պատկանող կալվածքները: Կիլիկիո կաթողիկոսությունը դիտարկվում էր նախընտրելի գնորդ: Սակայն վերջինս չունեւ բավարար միջոցներ նախատեսված գումարը վճարելու համար: Վտանգված էր Կիլիկիո կաթողիկոսության նստավայր ունենալու հարցը, ուստի կաթողիկոսությունը փորձեց նախատեսված գումարը հայթայթել հանգանակության միջոցով: Այդ նպատակով 1936 թ.՝ Անթիլիասում տեղի ունեցած մյուռոնօրհնեքի արարողության ժամանակ, հայտարարվում է հանգանակություն սկսելու մասին: Սակայն

²⁸ Տէս «Հասկ», յունիս—օգոստոս, 1936, թ. 6—8, էջ 108:

²⁹ Տէս Բ. ԵՂԻՍԵՅԱՆ, նշ. աշխ., էջ 332:

³⁰ Այդ մասին տես է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի հիմնումը եւ նրա դերը Սիրիա—Լիբանանի հայկական համայնքների կրթական կյանքում, «ՎէՄ» համահայկական հանդես, ԺԲ. (ԺԸ.) տարի թիվ 2 (70), ապրիլ—հունիս 2020, էջ 217—234:

գործընթացը շատ դանդաղ էր ընթանում, իսկ կալվածքները վաճառող կողմը չէր կարող երկար սպասել: Խնդիրը լուծվում է խոշոր նվիրատվության շնորհիվ: Կահիրեում բնակվող պոլսեցի տեր եւ տիկին՝ Սիմոն եւ Մաթիլդ Գալբաթյանները 1937 թ. մայիսին կալվածքների գնման համար «...իմֆայօժար, իմֆամատոյց ժէսթով, առանց քելադրութեան, առանց խնդրանքի եւ առանց միջնորդի»³¹ Կիլիկիո կաթողիկոսությանն են նվիրաբերում 4000 անգլիական ոսկի³²: Այս նվիրատվության շնորհիվ 1937 թ. հոկտեմբերին Կիլիկիո կաթողիկոսությունը վերջնականապես գնում է Անթիլիասի կալվածքները³³: Սա կարեւոր քայլ էր կաթողիկոսության վերակազմության եւ Անթիլիասում վերջնական հաստատման համար: Ավելի քան յոթ հարյուր տարի պատմական Սսի կաթողիկոսական աթոռանիստից հետո Անթիլիասը դառնում է Կիլիկիո կաթողիկոսների հաջորդ նստավայրը:

Անթիլիասի կալվածքները գնելուց հետո մեկնարկում է կաթողիկոսարանի կառուցապատման գործընթացը, որը նպատակ ուներ նախկին որբանոցի տարածքը վերածել Կիլիկիո աթոռին վայել նստավայրի: Այս աշխատանքները հիմնականում նախաձեռնում եւ համակարգում է Պետրոս արք. Սարաճյանը: Անհրաժեշտ միջոցները հիմնականում գոյանում էին հանգանակություններից եւ առանձին բարերարների նվիրատվություններից: Շինարարական աշխատանքները համակարգելու նպատակով Պետրոս արք. Սարաճյանի ատենապետությամբ ստեղծվում է «Շինութեանց յանձնախումբ», որտեղ, բացի հոգեւորականներից, ընդգրկվում են նաեւ Մարտիրոս Ալթունյանը, որը Լիբանանի հանրային շինարարության ճարտարապետն էր, ճարտարագետ Խոսրով Երամյանը, որը Բեյրութի Ամերիկյան համալսարանի դասախոս էր, եւ ուրիշներ³⁴:

1909 թ. Ադանայի ջարդերից հետո եգիպտահայ վաճառական Մաթեոս Խերյանը գումար էր կտակել Կիլիկիո կաթողիկոսությանը՝ երկրագործական վարժարան կառուցելու համար: Սակայն բռնկված Առաջին աշխարհամարտը եւ դրան հաջորդած իրադարձությունները թույլ չէին տվել իրագործել բարերարի ցանկությունը: Անթիլիասում հաստատվելուց հետո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը համոզում է

³¹ «Հասկ», մայիս, 1937, թ. 5, էջ 60:

³² Տէս անդ, էջ 53:

³³ Տէս Բ. Եղեմեան, նշ. աշխ., էջ 467—478:

³⁴ Տէս անդ, էջ 507:

Սահակ Բ. Խապայանին վերոնշյալ կտակից կաթողիկոսությանը բաժին հասած միջոցներով Բեյրութի հին հայկական գերեզմանոցի տարածքում կառուցել եկամտաբեր կալվածք: Շինարարական աշխատանքները մեկնարկել էին դեռևս 1935 թ.: Շինության ճարտարապետն էր Տիգրան Խուպեսեյանը, որի նախագծով հետագայում կառուցվեց նաև Բեյրութի Ս. Նշան Մայր տաճարը: 1936 թ., երբ մահացավ Բաբկեն Կյուլեսեյանը, կալվածքի կառուցումը չէր ավարտվել, սակայն նախատեսված միջոցներն սպառվել էին: Կաթողիկոսական նորանշանակ փոխանորդ Պետրոս արք. Սարաճյանը ձեռնամուխ է լինում այդ շինության կառուցումն ավարտին հասցնելու գործին³⁵: Շինարարական աշխատանքներն ավարտվում են 1938 թ., եւ այս կալվածքը դառնում է սուղ միջոցներ ունեցող Կիլիկիո կաթողիկոսության համար կայուն եկամուտ ապահովող առաջին կալվածքը³⁶:

Անթիլիասում հաստատվելուց հետո բազմիցս քննարկվում էր Մայր եկեղեցու կառուցման հարցը: Սսի Ս. Սոփիայի հոյակերտ տաճարը կորցնելուց հետո անհրաժեշտ էր ունենալ վայելուչ եկեղեցի, քանզի Անթիլիասը ոչ միայն կաթողիկոսական նստավայր էր, այլ նաև աստիճանաբար վերածվում էր նաև հոգեւոր-կրոնական կարեւոր կենտրոնի Մերձավոր Արեւելքում, հատկապես՝ Սիրիայում եւ Լիբանանում հաստատված գաղթական հայության համար: Նոր եկեղեցու կառուցման հարցը մի շարք պատճառներով մի քանի անգամ հետաձգվել էր: 1937 թ. հոկտեմբերի 27-ին, երբ Սահակ Բ. կաթողիկոսն Անթիլիասի կալվածքների փոխանցման փաստաթղթերը ստորագրելուց հետո շնորհավորանքներ էր ընդունում ներկաներից, հայտնում է, որ այս ամենից հետո եւս մեկ փափագ ունի՝ «Տեսնել կաթողիկոսաւրանին ու դպրեվանքին հետ կառուցուած Մայր տաճարը»³⁷: Կաթողիկոսական փոխանորդ Պետրոս արք. Սարաճյանը հայրապետի փափագը համարում է որպէս հրաման եւ անմիջապէս անցնում գործի: Եւ հիրավի, մեկ-երկու տարի անց կաթողիկոսի փափագը իրագործվում է: Համառ ջանքերի եւ աննկուն աշխատանքի շնորհիվ Անթիլիասի կաթողիկոսարանի տարածքում վեր են խոյանում ոչ միայն Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, այլ նաև վեհարանի եւ դպրեվանքի նոր շէնքերը:

³⁵ Տէս Բ. ԵՂԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 466:

³⁶ Տէս անդ:

³⁷ Անդ, էջ 510:

1938 թ. ապրիլի 4-ին հրավիրված եկեղեցական ժողովը հավանություն է տալիս Մայր տաճարի կառուցման գաղափարին, եւ, ինչպես միշտ, որոշվում է դա իրականացնել հանգանակության միջոցով³⁸։ Պետրոս արք. Սարաճյանի՝ Եգիպտոսից վերադարձից հետո³⁹ նոր թափով են մեկնարկում Մայր տաճարի կառուցման աշխատանքները։ 1938 թ. մայիսի 2-ին Պետրոս արքայանի գլխավորությամբ Անթիլիասի կաթողիկոսարանում գումարված եպիսկոպոսաց հերթական ժողովը քննում է Մայր տաճարի կառուցման հետ կապված ընթացիկ հարցերը, եւ վերջինիս գլխավորությամբ ընտրվում է շինարարության հանձնաժողով⁴⁰։ Անթիլիասի կապվածքները գնելուց հետո սկսված հանգանակությունը չէր դադարեցվել, պարզապես փոխվել էր հանգանակության նպատակը՝ այն ուղղվելու էր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցմանը։ Վերոնշյալ ժողովից հետո որոշվում է նոր թափ հաղորդել հանգանակությանը։ Նվիրատուների անունները եւ հանգանակված գումարի չափը պարբերաբար տպագրվում էին կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկի» էջերում⁴¹։ Հետաքրքիր է, որ 1938 թ. սկսած մինչեւ Մայր եկեղեցու կառուցման ավարտը «Հասկ» ամսաթերթը լույս էր տեսնում՝ շապիկին ունենալով նոր եկեղեցու պատկերը⁴²։ Սրա նպատակը հանգանակության խրախուսումն էր։

Բեյրութի քաղաքապետարանի հայազգի ճարտարապետ Մարտիրոս Ալթունյանը պատրաստում է նորակառույց եկեղեցու հատակագիծը, իսկ շինարարության ճարտարագետն էր Խոսրով Երամյանը, որն աշխատում էր նույն քաղաքի Ամերիկյան համալսարանում՝ որպես երկրաչափության դասախոս⁴³։ Նոր եկեղեցին պետք է կառուցվեր նախկին փայտե մեծ տաղավար եկեղեցու տեղում, ունենալու էր 35—37 մ բարձրություն, 30 մ երկարություն եւ 20 մ լայնություն։ Եկեղեցու կառուցման համար ընտրվել

³⁸ Տէս Բ. ԵՂԻՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 510։

³⁹ Պետրոս Սարաճյանն այցելության էր գնացել բարերար Գալղճյանին, որի նվիրատվությամբ գնվել էր Անթիլիասի կապվածքը։ Այդ ընթացքում հանկարծամահ է լինում Գալղճյանը, իսկ Ալեքսանդրիայում պատահական միջադեպի արդյունքում կոտրվում է Պետրոս արքայանի ձեռքը, որի պատճառով մինչեւ 1938 թ. ապրիլի վերջը ստիպված է լինում մնալ Եգիպտոսում. տես «Հասկ», ապրիլ, 1938, թ. 4, էջ 62։

⁴⁰ Տէս անդ, յունիս, 1938, թ. 6, էջ 91։

⁴¹ Տէս «Հասկ», նոյեմբեր, 1937, թ. 11, էջ 145—147, յունուար, 1938, թ. 1, էջ 1, յունիս, 1938, թ. 6, էջ 95—96, յուլիս—օգոստոս, 1938, թ. 7—8, էջ 123—124, նոյեմբեր, 1938, թ. 11, էջ 149 եւ այլն։

⁴² Տէս անդ, յունուար, 1938, թ. 1, էջ 3։

⁴³ Տէս անդ, յունիս, 1938, թ. 6, էջ 91։

էր «...ընտիր՝ դեղնորակ աւագուտ փայլուն հատիկներով փափ տեսակ մը» ունեցող քարհանքը, որից ստացված քարով կառուցվել էին նաեւ Լիբանանի խորհրդարանի եւ թանգարանի շէնքերը⁴⁴:

1938 թ. գարնանն սկսել էին նախնական շինարարական աշխատանքները: 1938 թ. հուլիսի 2-ին՝ Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի տոնին, տեղի է ունենում եկեղեցու հիմնարկեքը, որի ընթացքում ապագա խորանի մոտ՝ հողի մեջ, տեղադրվում է շիր, որում զետեղվում են եկեղեցու շինարարության մասին տպագիր արձանագրություն եւ մետաղադրամներ⁴⁵:

Թեեւ, ինչպես նշվեց, Անթիլիասի Մայր տաճարի համար ընթանում էր հանգանակություն, սակայն հավաքված գումարը բավարար չէր: Եկեղեցու կառուցումը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ էր ավելի քանի 2000 անգլիական ոսկի⁴⁶:

Շուտով՝ 1938 թ. մարտի վերջերին, արտասահմանում ապրող մեծահարուստներից մեկը Մանչեսթրում բնակվող Լեւոն Ճամուզյանի միջոցով Սահակ Բ. կաթողիկոսին ուղարկված նամակով ցանկություն է հայտնում «տեղեկութիւն առնելու Անթիլիասի մէջ շինուելիք շէնքերու ծրագրի մասին»⁴⁷: Սկսվում է նամակագրություն դեռեւս իր անունը հայտնել չցանկացող անձանոթ բարերարի եւ Անթիլիասի միջեւ: Բարերարի ու նրա միջնորդի շփումներն Անթիլիասի հետ համակարգում եւ ուղղորդում է դեռեւս Եգիպտոսում գտնվող Պետրոս սրբազանը⁴⁸: Վերջինս հայտնում է, որ այդ պահին Անթիլիասի կաթողիկոսարանը երեք կարեւոր շինությունների կառուցման կարիք ունի. առաջինը՝ «հայրապետանոցի վայել Եկեղեցի մը», որի կառուցումը կարժենար 2000 անգլիական ոսկի, երկրորդը՝ «ընծայարան մը»՝ մոտ 1000 անգլիական ոսկի շինարարական ծախսով, եւ երրորդը՝ «կաթողիկոսական շուքին եւ անուան համապատասխան... վեհարան», որի կառուցումը, ըստ ճարտարապետական հաշվարկների, կարժենար 800 անգլիական ոսկի⁴⁹: Նամակագրությունից եւ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալուց հետո բարերարը որոշում է ամբողջությամբ ստանձնել Անթիլիասի Մայր տաճարի կառուցման ծախսերը՝

⁴⁴ Տէս «Հասկ», յուլիս—օգոստոս, 1938, թ. 7—8, էջ 122:

⁴⁵ Տէս անդ:

⁴⁶ Տէս «Հասկ», սեպտեմբեր—հոկտեմբեր, 1938, թ. 9—10, էջ 127:

⁴⁷ Անդ, սեպտեմբեր—հոկտեմբեր, 1938, թ. 10—11, էջ 126:

⁴⁸ Տէս Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 512:

⁴⁹ Տէս «Հասկ», սեպտեմբեր—հոկտեմբեր, 1938, թ. 9—10, էջ 127:

խոստանալով այդ նպատակով մաս-մաս տրամադրել 2300 անգլիական ոսկի⁵⁰: Կիլիկիո կաթողիկոսությունը ցնծության մեջ էր: Սա Անթիլիասի կալվածքների գնումից հետո երկրորդ դեպքն էր, երբ անակնկալ հայտնվում է մի բարերար, որն ամբողջությամբ տրամադրում է այդ պահին անհրաժեշտ գումարը: Արդեն հունիսին Անթիլիաս է ուղարկվում խոստացված գումարի մի մասը: Անծանոթ բարերարը միաժամանակ իր նամակներում «փափկօրէն փափաք կը յայտնէր», որ իր տրամադրած գումարը օգտագործվեր միմիայն եկեղեցու շինության համար, իսկ Անթիլիասի հիմնադրամում հավաքագրված գումարները կարող են հատկացվել դպրեվանքի եւ վեհարանի կառուցման համար⁵¹: Կաթողիկոսությունը պարբերաբար բարերարին իրազեկում էր կատարված աշխատանքների մասին: Ամեն երկու ամիսը մեկ վերջինիս էր ուղարկվում «...մանրամասն հաշուեցոյց Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ շինութեան ծախուց եւ լուսանկար՝ կատարուած աշխատանքը ներկայացնող»⁵²:

Մայր տաճարի բարերարը, որը մինչեւ վերջ էլ չբացահայտեց իր անունը, ընդհանուր առմամբ Կիլիկիո կաթողիկոսությանը փոխանցեց 2500 անգլիական ոսկի, որից 2300 տաճարի կառուցման, 200-ը՝ կահավորման համար⁵³: Ի պատասխան Սահակ Բ. Խապայան կաթողիկոսի հարցմանը՝ անծանոթ բարերարի անունը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագ դռան վրա նախատեսվող արձանագրության մեջ նշելու վերաբերյալ՝ վերջինս ցանկություն է հայտնում Մայր տաճարի փոքրիկ խորաններից մեկն անվանակոչել Ս. Սարգսի անունով: Վերջինիս փափագին համապատասխան՝ տաճարի հարավային կամարի փոքրիկ սեղանը անվանակոչվում է Ս. Սարգսի անունով⁵⁴: Շատերը կարծում էին՝ Սարգիսը բարերարի հոր անունն է եւ սխալմամբ ենթադրում, որ բարերարը կարող է լինել Գալուստ Գյուլբենկյանը⁵⁵:

1940 թ. փետրվարի վերջերին Անթիլիասի Մայր տաճարի կառուցման աշխատանքներն ավարտվում են⁵⁶: Ներքին հարդարանքներից

⁵⁰ Տէս Բ. ԵՂԱՅԵԱՆ, նշ. աշխ, էջ 513:

⁵¹ Տէս «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1938, թ. 9–10, էջ 128:

⁵² Անդ, էջ 128:

⁵³ Տէս «Հասկ», յուլիս-հոկտեմբեր, 1943, թ. 7–10, էջ 260:

⁵⁴ Տէս «Հասկ», յուլիս-հոկտեմբեր, 1943, թ. 7–10, էջ 261. Նաեւ՝ Բ. ԵՂԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 514:

⁵⁵ Գալուստ Գյուլբենկյանի հոր անունը Սարգիս էր. բարերարը 1922 թ. Լոնդոնում կառուցել էր Ս. Սարգիս եկեղեցին:

⁵⁶ Տէս «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 48:

հետո՝ մարտի 10-ին՝ Անթիլիասի ուխտի օրը, Պետրոս արք. Սարաճյանը կատարում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի⁵⁷ օծման արարողությունը: Այդ օրը վերջին պատարագն է մատուցվում 1930 թ. Անթիլիասում կառուցված առաջին⁵⁸ Ս. Թարգմանչաց մատուռում, որն այսուհետեւ վերածվելու էր տպարանի⁵⁹:

Մայր տաճարի բացումից միայն երեք տարի անց՝ 1943 թ. գարնանը, պարզ է դառնում, որ շինարարության հովանավորը պոլսահայ վաճառական Սարգիս Քրնաճյանն էր: Վերջինիս մահվանից հետո հայտնի դարձած այդ կարեւոր լուրը Անթիլիասին է հայտնում Պոլսո պատրիարք Մեսրոպ արք. Նարոյանը⁶⁰: Մայր տաճարի բարերարի անունը հայտնի դառնալուց հետո ավագ դռան ճակատի՝ այդ նպատակով տեղադրված մարմարե քարի վրա փորագրվում է համապատասխան արձանագրություն Սարգիս Քրնաճյանի կողմից տաճարի կառուցումը հովանավորելու վերաբերյալ: Տարիներ անց բարերարի եւ կնոջ աճյունները տեղափոխվում են Անթիլիաս եւ ամփոփվում կաթողիկոսարանի տարածքում կառուցված դամբարանում⁶¹: Անծանոթ բարերարի հայտնի դարձած անվան արձանագրումով ամբողջանում է Անթիլիասի Մայր տաճարի ավագ դռան կիսաբոլոր հիշատակարանը, եւ դրանով դրվում է եկեղեցու կառուցման վերջակետը:

1938 թ., Անթիլիասի Մայր տաճարի կառուցմանը զուգահեռ, սկսվել էին դպրեվանքի եւ վեհարանի նոր շենքերի կառուցման աշխատանքները: Դպրեվանքի նոր եռահարկ շինություն ճարտարապետն էր Կարո Պալյանը, որը ժամանակին նախագծել էր նաեւ Կիպրոսի Մելքոնյան վարժարանի շենքը⁶²: Արդեն 1939 թ. մարտին դպրեվանքի նոր շենքը պատրաստ էր շահագործման, իսկ նախկին շինությունը հատկացվում էր մանկապարտեզ-նախակրթարանին: 1938 թ. դեկտեմբերի սկզբին ավարտվել էր նաեւ նոր վեհարանի կառուցապատումը⁶³:

⁵⁷ Նորակառույց Մայր տաճարի մանրամասն նկարագրությունը տե՛ս «Հասկ», մայիս, 1940, թ. 5, էջ 73–78:

⁵⁸ Տե՛ս «Սիրոն», յունուար, թ. 1, 1931, էջ 28:

⁵⁹ Տե՛ս «Հասկ», մայիս, 1940, թ. 5, էջ 61:

⁶⁰ Տե՛ս «Հասկ», մայիս–յունիս, 1943, թ. 5–6, էջ 237, յուլիս–հոկտեմբեր, 1943, թ. 7–10, էջ 258–259:

⁶¹ Տե՛ս Բ. Եղիսեան, նշ. աշխ., էջ 517:

⁶² Տե՛ս անդ, էջ 507:

⁶³ Տե՛ս «Հասկ», դեկտեմբեր, 1938, թ. 12, էջ 177:

Կաթողիկոսարանի տարածքում կատարվում են նաեւ մի շարք այլ նորոգութիւններ ու բարեկարգման աշխատանքներ⁶⁴։ Կաթողիկոսարանի նախկին հյուրասրահը վերածվում է հանդիսասրահի, որտեղ կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ, ինչպես նաեւ դպրեվանքի ուսանողների ավարտական հանդեսները։

Շուտով սկսվում են նաեւ ցեղասպանութեան զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-հանգստարանի կառուցման աշխատանքները։ Հուշարձանի կառուցման միտքը Բյուզանդ Եղիայանինն էր, որի հետ սիրով համաձայնում է Պետրոս արք. Սարաճյանը⁶⁵։ Հուշարձանը կառուցվելու էր Մայր տաճարի նմանութեամբ, ունենալու էր 9 մ բարձրություն եւ տեղակայված էր լինելու նորակառույց տաճարի աջ կողմում։ Հուշարձանի նախագծի հեղինակն էր ճարտարապետ Մարտիրոս Ալթունյանը⁶⁶։ Այս հուշարձան-հանգստարանի մեջ զետեղվելու էին հայ նահատակների ոսկորներն ու նշխարները, որոնք հավաքվել էին Դեր Զորից եւ Հայոց ցեղասպանութեան այլ վայրերից։ Հայ նահատակների ոսկորների հավաքման գործն ստանձնում է հաճնեցի նախկին զինվորական Հարություն Հովակիմյանը՝ Կիլիկիո աթոռի եւ Սիրիայի ներքին գործերի ու առողջապահության նախարարութեան թույլտվութեամբ։ Նրա որոնումների արդյունքում հայտնաբերված մասնունքները զետեղվում են չորս մեծ արկղերում եւ տեղափոխվում Անթիլիաս⁶⁷։ Այս յուրօրինակ հուշարձան-մատուռը պետք է դառնար ուխտատեղի ցեղասպանութեան նահատակների հարազատների եւ վերապրածների համար։ Պաշտոնաթերթ «Հասկը» գրում է. «Նահատակաց յիշատակաւանի կառուցման գաղափարը Սփիւտֆի հայութեան կողմէ մեծ համակրանքով ողջունուեցաւ»⁶⁸։ Կիպրոսաբնակ Վահրամ Իվթիվճյանը նամակով⁶⁹ հայտնում է Պետրոս արք. Սարաճյանին, որ պատրաստ է ամբողջութեամբ ստանձնել հուշարձանի կառուցման համար անհրաժեշտ ծախսերը, որը կազմում էր 150 անգլիական ոսկի։ Սակայն հետագայում պահանջվեցին ավելի շատ միջոցներ։ Քանի որ հուշարձան-մատուռի կառուցման համար կազմակերպվել էր նաեւ հանգանակություն, հետագայում շինութեան վրա արձանագրվեց,

⁶⁴ Տէս «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1938, թ. 9–10, էջ 146։

⁶⁵ Տէս Բ. ԵՂԻԱՅԱՆ, նշ. աշխ., էջ 518։

⁶⁶ Տէս անդ։

⁶⁷ Տէս «Հասկ», յունուար, 1939, թ. 1, էջ 12։

⁶⁸ «Հասկ», մարտ, 1939, թ. 3, էջ 46։

⁶⁹ Տէս անդ, էջ 46։

որ այն կառուցվել է համայն հայությունն նվիրատվությամբ⁷⁰: 1938 թ. դեկտեմբերի 17-ին, երբ դեռ ընթանում էր Մայր տաճարի շինարարությունը, տեղի է ունենում նահատակաց հուշարձան-մատուռի հիմնարկեքը, իսկ 1939 թ. մարտի 31-ին կատարվում է օծումը, եւ այն անվանակոչվում է Ս. Ստեփանոս՝ «...քրիստոնէութեան առաջին նահատակին եւ վկային ի յիշատակ»⁷¹: Պետրոս սրբազանի կարգադրությամբ հաստատվում է նաեւ «նահատակաց նշխարներու ուխտի օրը.... նոր կիրակէին», որն առաջին անգամ նշվում է հուշարձան-մատուռի օծման օրը՝ հազարավոր ուխտավորների մասնակցությամբ: Նույն թվականի ապրիլի 23-ին հանդիսավոր արարողությամբ տեղի է ունենում հայ նահատակների՝ Դեր Զորից եւ շրջակայքից հավաքված մասունքների թաղման արարողությունը նորակառուց հուշարձանի մեջ⁷²:

Անթիլիասի այս հուշարձան-մատուռը դարձավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված առաջին հուշարձաններից մեկն աշխարհում:

Կարելոր է նշել, որ Ֆրանսիական Բարձր հանձնախումբը, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության դրդումով, մի պահ անհանգստանում է հուշարձան-մատուռի շինարարությունից: Սակայն Անթիլիասից ստանալով համապատասխան մեկնաբանություն՝ Ֆրանսիացիները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում հուշարձանի կառուցումը: Այդ առնչությամբ ուշագրավ է Բարձր հանձնախմբի պատասխանը Արտաքին գործերի նախարարությանը հուշարձանի կառուցման վերաբերյալ. «Արտօնեցիմ, որ ամօմ շինեն իրենց նահատակաց յուշարձանը, որովհետեւ ազգ մը, որ կը յարգէ իր նահատակները, արժանի է յարգանքի»⁷³:

Բացի շինարարական աշխատանքներից՝ Պետրոս արք. Սարաճյանի ուշադրության կենտրոնում էին նաեւ բազմաթիվ այլ հարցեր, որոնք այդ շրջանում ծառացած էին կաթողիկոսության առջեւ՝ արտաքին հարաբերություններից մինչեւ հայության հայապահպանության, կրթության կազմակերպման խնդիրները, դպրեվանքի գործունեությունը եւ այլն: Կարելոր հարցերն անպայման քննարկվում, եւ համապատասխան որոշումները կայացվում էին Անթիլիասում հրավիրված եպիսկոպոսական

⁷⁰ Տէս Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 519:

⁷¹ «Հասկ», մայիս, 1940, թ. 5, էջ 59–60:

⁷² Տէս «Հասկ», ապրիլ, 1939, թ. 4, էջ 64:

⁷³ Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 523:

ժողովներում: Իր կաթողիկոսական փոխանորդության եւ հայրապետության շրջանում Պետրոս արք. Սարաճյանը հրավիրում եւ անցկացնում է ութ եպիսկոպոսական ժողով⁷⁴:

Կիլիկիո կաթողիկոսության հոգածության առարկա են դառնում 1939 թ. Ալեքսանդրեոսի սանջակից տեղահանված եւ Սիրիայում ու Լիբանանում ապաստանած հայության խնդիրները, որոնց լուծման համար լրացուցիչ ջանքեր են պահանջվում: Կիլիկիո կաթողիկոսությունը հսկայական աշխատանք իրականացրեց այդ ուղղությամբ: Այդ աշխատանքների հիմնական կազմակերպողը տեղապահ Պետրոս արք. Սարաճյանն էր: Կաթողիկոս ընտրվելուց հետո՝ 1940 թ. հուլիսին, Պետրոս Ա.-ն այցելում է հարավային Լիբանանում՝ Սուրում եւ Այնճարում տեղակայված հայկական գաղթականներ՝ փորձելով տեղում ծանոթանալ խնդիրներին⁷⁵: Պետրոս արք. Սարաճյանը Ռամկավար ազատական կուսակցության կողմից Ամերիկայում ի նպաստ Ալեքսանդրեոսի սանջակից գաղթած հայության կազմակերպած ցորենի հանգանակության «քաջալերողն ու կերպով մը գլխաւորողն եղաւ»⁷⁶: Իր նախագահության ներքո կազմվեց նաեւ «նպաստից կենտրոնական հանձնաժողովը», որը հետո փոխանցվեց ՀԲԸՄ-ին, որը շարունակեց հանգանակության կազմակերպումը⁷⁷: Բ. Եղիայանը սանջակի հայության աջակցության հարցում Կիլիկիո կաթողիկոսության ունեցած դերակատարման վերաբերյալ գրում է. «Գաղթականաց հանգստեան, պարենատրման, ապահովութեան եւ ֆաղափացիական շահերուն հետապնդումը՝ հովանաւոր Բարձր գովաւորութեան եւ տեղական կառավարութեանց առջեւ դեկլարուեցաւ Անթիլիասէն»⁷⁸:

Կաթողիկոսական փոխանորդության շրջանում բնակվելով Անթիլիասում՝ Պետրոս արք. Սարաճյանը պարբերաբար մեկնում է նաեւ Կիպրոս՝ տեղում կարգավորելով թեմի ընթացիկ գործերը, ինչպես նաեւ մասնակցելով տարբեր միջոցառումներին:

Այսպիսով՝ Պետրոս արք. Սարաճյանը, հաստատվելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ, ձեռնամուխ է լինում նվիրապետական աթոռի վերաշինության գործին: Վերջինիս ջանքերը հատկապես ուղղված էին Անթիլիասի կաթողիկոսարանի

⁷⁴ Տե՛ս անդ, էջ 525. նաեւ «Հասկ», մարտ, 1937, թ. 3, էջ 32 եւ այլն:

⁷⁵ Տե՛ս Բ. Եղիայան, նշ. աշխ., էջ 523:


⁷⁶ Տե՛ս «Զարթօնք», Բէյրութ, 2 հոկտեմբերի, թ. 916, 1940:

⁷⁷ Տե՛ս Բ. Եղիայան, նշ. աշխ., էջ 527:

⁷⁸ Անդ:

կառուցապատման աշխատանքներին: Պետրոս սրբազանի փոխանորդության չորս տարիների ընթացքում ամբողջությամբ վերափոխվում է կաթողիկոսարանը, նախաձեռնվում եւ ավարտին է հասցվում կառուցումը մի շարք կարեւոր շինությունների (Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար, դպրեվանքի եւ վեհարանի նոր շենքեր), նահատակաց մատուռ-հուշարձանը եւ այլն⁷⁹: Պետրոս արք. Սարաճյանի փոխանորդության շրջանի մասին «Հասկը» գրում է. «Անթիլիաս մտած է արդէն նիւթական բարգաւանման հոյակապ շրջանի մը մէջ, մասնաւորաբար այն օրէն ասդին, երբ նորընտիր հայրապետը հոս գործի լծուեցաւ իբրեւ ընդհանուր փոխանորդ երջանկայիշատակ Տ. Սահակ Բ. կաթողիկոսի»⁸⁰: Իսկ Բյուզանդ Եղիայանը, իրավամբ, Պետրոս արք. Սարաճյանի կաթողիկոսական փոխանորդության ընթացքը համարում է վերջինիս «յաջողագոյն գործունէութեանց» շրջանը⁸¹:


Շարունակությունը՝ հաջորդիվ



⁷⁹ Պետրոս արք. Սարաճյանի փոխանորդության եւ կաթողիկոսության շրջանում կատարած շինարարական աշխատանքների, ինչպես նաեւ Անթիլիասի կալվածքների գնման մասին տես «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1940, թ. 9, 10 էջ 134–144:

⁸⁰ «Հասկ», յունիս-օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 89:

⁸¹ Տես Բ. Եղիայան, նշ. աշխ., էջ 462:



ԶՕՐԱՅԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԼՍԲ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌ ՋԱՅԱՏԱՆԵԼՅՅ

Ուրախութեամբ առինք լուրը, որ Մայր Աթոռի հրատարակչությունը ի լոյս ընծայած է Տ. Եղիշէ աւագ քահանայ Սարգսեանի գիրքը¹, անշուշտ նաեւ ցաւ ապրելով, որ հատորին աշխարհ գալը հեղինակը չէ տեսած: Հայաստան ըլլալնուս կարճ ատենը, որ պատեհութիւն ունեցած ենք Տէր Հօրը հանդիպելու, մեծ բաւականութիւն ստացած ենք իր հետ զրուցելէ: Ան իր հանդարտ, բարի եւ կամեցող կեցուածքով հանգստութիւն կճառագէր շփումի ամբողջ ընթացքին, ազատ եւ անկաշկանդ խօսակցութեան կը տրամադրէր (թերեւս իր գիրքն ալ նոյն ոճով ստեղծած է. չի ճնշեր կամ չ'ազդեր ընթերցողին վրայ, այլ պարզ եւ անմիջական միջոցով ներքին զրոյցի մը կամ խոկումներու կտրամադրէ): Ի թիւս այլ նիւթերու շօշափուեցան նաեւ Հայ Եկեղեցւոյ, հայոց կրօնքի, ինչպէս նաեւ այլ հայկական հարցեր, եւ իւրաքանչիւր պահի զգալի էին Տէր Հօր հայրենասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը, նուիրումը ազգին ու ազգայինին: Նոյնն է նաեւ իր գիրքին պարագան. մեծ, անսահման, անծիր սէր եւ նուիրում Հայ Եկեղեցւոյ եւ ազգին Թորգոմեան:

Արդէն գիրքի դիւրակիր-թուային տարբերակին մէջ ընթերցելով ամփոփի՝ «Հեղինակի մասին» խօսքը (էջ 196—198), տեղեկացած ենք, որ Տէր Եղիշէի «հոգեկերտուածքի, բարոյականութեան եւ հայրենասիրութեան ձեւաւորման գործում մեծ է եղել նախնիների դերը». հայրը ուսանած է «Վարագավանքի նշանաւոր Սբ. Խաչ դպրոցում: Պապը... եղել է Վարագավանքի կալուածոց տեսուչ»: Եւ եթէ աւելցնենք նաեւ Գէորգեան ճեմարան ուսանած ըլլալուն հանգամանքը, ինչպէս եւ իր կենաց ուղին, կտեսնենք, որ իրաւամբ մեծ ազգասէր մը ըլլալու էր ան:

Վերջընթեր՝ «Որպէս յիշատակարան» (էջ 194—195) հատուածը կիմացնէ, որ Տէր Եղիշէին երախտապարտ յետնորդներն են, որ կազմած

¹ Տ. Եղիշէ ԱՌԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՐԳՍԵԱՆ, Դրուագներ Հայ Եկեղեցու պատմութեան, Ս. էջմիածին, 2020, 200 էջ. հետագայ նշումները շարուածքին մէջ:

են գիրքը՝ իր ճեմարանական դասախօսությունները ի մի հաւաքելով եւ օգտուելով տարբեր տարիներու իր ուշիմ ուսանողներու գրառումներէն: Տեղին է նաեւ իրենց յայտնած փաստանքը, որ «գրքի հրատարակութիւնը ձեռնարկուեց շատ ուշ, երբ խորագէտ եւ բազմահմուտ Տէր Հօր տարիքն արդէն բաւականին առաջացեալ էր, եւ այլեւս չէր կարող երբեմնի հետազօտական բժախնդրութեամբ եւ նախկին աւիւնով կատարել գործը»: Ուստի, ազնիւ, գուցէ նաեւ խոնարհ գտնուելով ուսուցչի յիշատակին առջեւ՝ անոնք դիմած են ընթերցողին. «...որքան գեղեցիկ, բարձր ու վէս մտքեր հանդիպես այս հատորում, Տէր Հօր շնորհքն է, իսկ սխալներն ու սայթաքումները՝ աներկբայ վերագրիր մեզ»: Նկատելի է նաեւ, որ այս բանը ըսած են, իրենց իսկ խօսքովը, մեր «համեմնի ծաղկողների ու գրիչների նմանութեամբ», որովհետեւ ամէն պարագայի մենք չենք հանդիպած սխալներու եւ սայթաքումներու:

Գիրքին ընդգրկած ծիրը Հայոց դարձէն մինչեւ 1441 թուականն է, որ անտեղեակ համբակի մը կարող է թուալ, թէ Հայ եկեղեցւոյ նուիրուած ուսումնասիրություններու կամ անդրադարձներու (Չամչեան, Օրմանեան, Տէր-Մկրտչեան, Տէր-Մինասեան եւ այլն) կողքին, Տէր Եղիշէին գիրքը պէտք է դիտուի իբրեւ քաղուածական կամ սղագրական գործ մը, որ ստեղծուած է յատկապէս ուսանողութիւնը «ստուար հատորներու ընթերցանութիւնից զերծ պահելու համար»: Սակայն իրականութիւնն այլ է. դասագրքային, բոլորին յայտնի ընթացքը ներկայացնելէն զատ՝ Տէր Հայրը յաճախ տեղեկություններ կու տայ, որ սակաւ կամ համեմատաբար քիչ կերպով շրջանառուած են: Ահաւասիկ եօթներորդ թերթին գրածը. «Տեղին ենք համարում յիշել, որ եկեղեցական աւանդութեան համաձայն՝ Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալները գալիս են Հայաստան եւ իրենց կենդանի քարոզութեամբ, աւետարանական գաղափարներով լուսաւորում են Հայոց աշխարհը՝ դառնալով առաջին լուսաւորիչները մեր երկրում: Սա առաւել տարածուած աւանդութիւնն է, եւ ցաւալիօրէն քիչ են բերում Սուրբ Գրիգոր Տաթեւացու խօսքերը, համաձայն որոնց՝ «հայերը երեք առաքեալ ունեն՝ Թադէոս, Բարթուղիմէոս եւ Յովա՝ Յակոբի որդին, որ Հայոց Յորմ քաղաքում է [ամփոփուած]» (էջ 15, այլ օրինակներ տես էջ 16, 18 եւ այլն):

Բուն շարադրանքը բաժնուած է 54 փոքրիկ հատուածներու (օրինակ, Հայոց եկեղեցու քրիստոսահաստատ կենտրոնը, Հայոց դարձը, Սուրբ Գրիգոր եւ Սուրբ Տրդատ, Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ, Աւարայր, Հայերը Երուսաղէմում, Շարականոց, Ներսէսի եկեղեցաշինությունը եւ այլն).

2—3 էջանոց նիւթեր, որ հեղինակը տուած է պարզ եւ դիրքամբոնելի լեզուով, ամէնէն բարդ եւ խրթին խնդիրները մատուցելով հանրամատչելի ու միեւնոյն ժամանակ խորին ու համակողմանի կերպով: Իր աղբիւրները շատ են ու տարաբնոյթ՝ հին մատենագիրներէն մինչեւ մեր ներկայիս գրագէտ վարդապետները, եւրոպացի ու մերազնեայ հետազօտողները եւ այլն:

Առաջին իսկ տողերէն պարզ կերեւի Տէր Հօր եկեղեցասէր եւ հայրենասէր շունչը. «Հայոց Հայրապետական Աթոռը սոսկ փառքի Աթոռ չի եղել. մեր սրբազան հայրապետների համար այն տառապանքի, շատ յաճախ նաեւ Գողգոթա տանող ճանապարհ էր. ժողովրդի եւ պետութեան օրհասական պահերին ծանր խաչը մշտապէս դրուած է եղել Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջին սպասաւորի՝ Հայոց Հայրապետի ուսերին: Եւ ի փառս ու ի պատիւ մեր սրբազան Կաթողիկոսների պէտք է ասել՝ Հայոց Եկեղեցու, Հայրենիքի եւ Ազգի հզօրացման համար՝ աստուածային կամօք կեանքի կոչուող իրենց մեծագործութիւններով նրանք հաստատել եւ հաստատում են, միայն Սուրբ Լուսաւորչի սրբազան Աթոռի հզօրութիւնը չէ, որ արժեւորում է Հայոց Հայրապետների սրբազան անձը: Իրենք՝ գահակալները, բազում վիշտ ու տառապանք տեսած Հայոց Եկեղեցու հոգեւոր եւ ազգային առաջնորդութիւնն իմաստնութեամբ ու գերբնական աշխատասիրութեամբ վարելով, Հայոց Եկեղեցու դաւանանքն ամուր եւ անսակարկ պահելով հանդերձ, մնում են միակ անդաւաճան եւ ճշմարիտ առաջնորդները, Ազգի ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ընտրեալները» (էջ 12):

Հայ Եկեղեցւոյ եւ անորմէ որեւէ կերպ անմեկնելի Հայոց պատմութեան վերելքի եւ յաջողութիւններու փուլերուն հասած ատենը, Տէր Հայրը մեծ ոգեւորութիւն եւ հպարտութիւն կապրի եւ անմիջապէս կվարակէ իր ընթերցողին, իսկ անկումի կամ աւերի պահերը յիշած ժամանակ՝ կյուզուի-կյուզուէ, զգօնութեան եւ ազգային գործի կը կոչէ բոլորին: Տէր Հայրը համոզուած է, որ «Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր գահակալներով դարերի հոլովոյթում բիւզանդական, պարսկական, արաբական եւ թուրքական, այլ եւ այլ զաւթիչների համար հաւատքի եւ հայրենասիրութեան այն ամրոցն է հանդիսացել, որը գրաւելու դէպքում թշնամին դիրաւ կմիաձուլէր համայն ազգը Հայոց: Բայց Հայոց սրբազան եւ նուիրական Մայր Աթոռը՝ բերդն այս, եղել է, կայ եւ յաւէտ կմնայ անառիկ, որովհետեւ մեր Սուրբ


Հայրերը Եկեղեցի-ամրոցի հիմքերը հաւատքով խարսխեցին Հայքի քա-
րաժայռերին եւ Հայ ժողովրդի գիտակցութեան մէջ, Սուրբ Վարդապետ-
ները յոյսով կտրեցին եւ կոկեցին քարերը, եւ ժողովուրդը սիրով աղօթք
վերառաքելով՝ շաղախեց պատերն անառիկ» (էջ 169—170): Եւ այսպէս
է, որովհետեւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին նկատմանը հան-
գոյն՝ «...առաքելական հաստատութեամբ ամրացեալ եւ առաքելական
արեամբ ոռոգեալ եւ առաքելական վարդապետութեամբ զօրացեալ» Հա-
յաստանեայց Աթոռը «հիմնարկեցաւ նախ յառաջին Լուսաւորչացն մերոց
ի սրբոց առաքելոցն Թադէոսէ եւ Բարթողիմէոսէ, եւ որ յետոյ ինքնին
արտափայլեալ նորոգեցաւ յերկրորդ Լուսաւորչէն մերմէ ի Սրբոյն Գրի-
գորէ Լուսաւորչէ, եւ որ յարաժամ ի գերագոյն Հայրապետաց աթոռակա-
լաց Լուսաւորչահիմն Գահուն խնամեալ պահեցաւ եւ սփոփեցաւ»: Տէր
Հայրը բացորոշ եւ անթաքոյց կերպով ցոյց կու տայ պատմական իրողու-
թիւններէ քաղուելիք դասերը, որոնցմէ գլխաւորը՝ Հոգ Հայրենին, Ազգին
Կրօնքն ու Լեզուն, Ազգային Բնաւորութիւնն ու Աւանդութիւնը, սրբօրէն
պահելն ու անոնց շուրջը համախումբ միաւորուիլն է:

Պարունակած տեղեկութիւնները կարելոր նկատելով՝ հեղինակը իբ-
րեւ Յաւելուած գիրքին կցած է նաեւ Առաքել Դաւրիժեցիի Պատմութեան
Լ. գլուխը (էջ 173—188) եւ Գէորգ Զ. Կաթողիկոսի Կոնդակը՝ նուիրուած
Հայրապետական Աթոռի Կիլիկիայէն տեղափոխութեան 500-ամեակին
(էջ 189—193):

Իր ամբողջութեան մէջ Դրուագներուն ընթերցանութիւնը մէկ-միաս-
նական շունչով ընթացող գործ մըն է, շատ հաճելի եւ ընդհատումի կա-
րիք չճանչցող: Եւ այն մեծապէս արժեւորելուն ընթացքին անպայմանօ-
րէն պէտք է յիշուի նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հոգեւոր-
կրթական հաստատութիւններուն մէջ ձեւաւորուած աւելի քան հարիւ-
րամեայ աւանդոյթը՝ կապուած անուանի եւ լաւագոյն դասախօսներու
երկերն ու դասախօսական տքնութիւններու արգասիքները հրատարա-
կելուն հետ, որուն շնորհիւ բազմաթիւ գնահատելի հատորներ ի յայտ
եկած են, որոնց թուին մէջ վստահօրէն իր ուրոյն տեղը գրաւած է Տէր
Նղիշէին Դրուագները:

ՅԱՐՈՒԹ ՍԱՐԳԻՍ ԳԱՐՏԱՆԱՔԵԱՆ
(ՅՈՐԴԱՆԱՆ)

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԵՐ ԵՂԻՉԷ ԱԻԱԳ ՔԱՅԱՆԱՅ ՍԱՐԳՍԵԱՆ

Հոկտեմբերի 20-ին ի Տէր հանգաւ արժանապատիւ Տէր Եղիշէ աւագ Բահմայ Սարգսեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Գերագոյն հոգևոր խորհրդի անդամները եւ ողջ հոգևոր դասը սգում են արժանապատիւ Տէր Հօր մահը եւ վշտակցում հարազատներին՝ աղօթելով նրա հոգու հանգստութեան եւ խաղաղութեան համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրական

Տէր Եղիշէ աւագ քահանայ Սարգսեանը (Սարգիս Գրիգորի Սարգսեան) ծնունդ է 1929 թ. մայիսի 26-ին Էջմիածին (Վաղարշապատ) քաղաքում՝ արեւմտահայ գաղթականների նահապետական ընտանիքում: Մայրը ծնունդով Վան-Տոսպ գաւառի Ալիւր գիւղից էր, հայրը՝ Վան քաղաքից: Վերջինս Մկրտիչ Խրիմեանի օրօք սովորել է կաթողիկոսի հիմնած Վարագավանքի նշանաւոր Սբ. Խաչ դպրոցում: Պապը՝ Սարգիս Սարգսեանը, եղել է Վարագավանքի կալուածոց տեսուչ: Եւ բնական է, որ ապագայ հոգեւորականի հոգեկերտուածքի, բարոյականութեան եւ հայրենասիրութեան ձեւաւորման գործում մեծ է եղել նախնիների դերը:

Գերազանց առաջադիմութեամբ 1945 թ. աւարտելով Էջմիածին քաղաքի թիւ 1 (Անաստաս Միկոյեանի անուան) միջնակարգ դպրոցը՝ տեղեկանում է, որ Գէորգ Զ. կաթողիկոսի ջանքերով վերաբացուած Գէորգեան հոգեւոր ճեմարանում ընդունելութիւն է յայտարարուած. անմիջապէս դիմում եւ քննութիւնները յաջողութեամբ յանձնելով՝ ընդունւում է:

Ճեմարանական ուսումնառութեան վեց տարիները (1945—1951 թթ.) հետաքրքիր են եղել եւ յագեցած: Երիտասարդ Սարգիսն այնտեղ առիթ

է ունեցել աշակերտելու հայ մշակույթի երախտաւորներ Աւետիք Իսահակեանին, Երուանդ Շահագիրզին, Ստեփան Կամսարականին, Ստեփան Մալխասեանցին եւ ի հարկէ Ամենայն Հայոց Հայրապետ Գէորգ Զ. Զորէքչեանին: Աւարտական լսարանում ձեռնադրուել է սարկաւագ եւ ուսումը շարունակելու նպատակով մեկնել Զագորսկ (Սերգիեւ Պոսադ), ուր սովորել է մինչեւ 1952 թ.: Արտագնայ ուսումնական ծրագիրն աւարտելուց յետոյ վերադարձել է Սբ. էջմիածին եւ Գէորգ Զ. տնօրինութեամբ նշանակուել Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսչի օգնական եւ վերակացու: 1954-ին արեղայական ձեռնադրութեամբ ստացել է Հայր Եղիշէ անունը, իսկ մէկ տարի անց՝ 1955-ին, Վազգէն Ա. հայրապետի ձեռքից ընդունել վարդապետական աստիճան: 1956 թ. նշանակուել է Վազգէն Ա. կաթողիկոսի գաւազանակիր եւ Մայր Աթոռի լուսարարապետի օգնական: 1960—1961 թթ. ստանձնել է Շիրակի, այնուհետեւ Ադրբեջանի թեմի առաջնորդութիւնը, որտեղ 5 ամիս պաշտօնավարելուց յետոյ հայրապետական հրամանով նշանակուել է Վիրահայոց թեմի առաջնորդի ժամանակաւոր պաշտօնակատար:

1962-ին Հայր Եղիշէն թողել է հոգեւոր ծառայութիւնը եւ ամուսնացել: Ծննդարանական կրթութեան եւ բացառիկ գիտելիքների շնորհիւ աշխատանքի է անցել հին ձեռագրերի թանգարան-ինստիտուտում՝ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում, զուգահեռաբար նաեւ շարունակել կրթութեան կատարելագործումը, հեռակայել է Խ. Աբովեանի անուան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմութեան բաժնում՝ աշակերտելով անուանի գիտնականներ՝ Խաչատուր Կանայեանին, Համօ Յարութիւնեանին, Աշոտ Աբրահամեանին եւ այլոց:

1976 թ. կրկին կոչուելով հոգեւոր ասպարէզ՝ Տէր Եղիշէ աւագ քհնյ. Սարգսեանը նշանակուել է Գեղարդավանքի վանահայր: Իր պաշտօնավարութեան շրջանում (1976—1999 թթ.) կազմուել է նոր միաբանութիւն, եւ վերականգնուել է Գեղարդավանքի երբեմնի փառքը:

Մասնակցել է 1999 թ. կաթողիկոսական ընտրութեան համար գումարուած Ազգային-եկեղեցական ժողովին որպէս Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի միաբանութեան կողմից ընտրուած պատգամաւոր:

2000—2006 թթ. եղել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ: Այդ տարիներին է, որ Գարեգին Բ. սրբազնագոյն կաթողիկոսի նախաձեռնութեամբ Գէորգեան հոգեւոր ճեմարանի ուսումնական ծրագրերը համապատասխանեցուցին ԳԿ նախարարութեան չափորո-



Տ. Եղիշե ավագ ֆահանա Սարգսյան

շիշներին, եւ Հայաստանի հնագոյն ուսումնական հաստատութիւնը հաւատարմագրուեց իբրեւ պետականօրէն ճանաչուած բուհ՝ Աստուածաբանական համալսարան:

Սկսած 2006-ից մինչեւ կեանքի մայրամուտ Տէր Եղիշէ աւագ քհնյ. Սարգսեանը դասախօսական առաքելութիւն է իրականացրել Ճեմարանում՝ իր հարուստ կենսափորձն ու գիտելիքները փոխանցելով ուսանողներին եւ երիտասարդ հոգեւորականներին:

2003 թուականին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհել է «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշան:

2006 թուականին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհել է ականակուռ լանջախաչ:



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , на всенародном молебне в поддержку Арцаха	5
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , на молебне за мир	8
Призыв ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН	11
Призыв ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН	13

ПРОПОВЕДИ

Проповедь АРХИМАНДРИТА МИНАСА АХВЕРДЯНА , произнесенная во время Литургии в монастыре Святой Гаяне	16
---	----

РЕЛИГИОВЕДЕНИЕ

АРХИМАНДРИТ ИСААК ПОГОСЯН — Семья как «первая Церковь»	19
Проповедь АРХИМАНДРИТА МАТЕОСА на изречение «Омойтесь, очиститесь, удалите...», произнесенная на первый день Великого поста	32
ИВАН ИЛЬИН — О Родине	39

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

МГЕР КУМУНЦ — Поселение Шорнох провинции Бахк исторического Сюника (попытка этимологического анализа)	50
АРЦРУНИ СААКЯН — Об оригинале Агатангелоса	67

- ЛУСИНЕ САРГСЯН** — Иллюминирование титульного листа Книги Бытия
в искусстве армянского миниатюриста Авага (XIV в.)81
- КАРЕН ПАХЛЕВАНЯН** — Армянское воинство в военных действиях Эрзерума
в ходе Первой мировой войны98

СООБЩЕНИЯ


- АРСЕН АРУТЮНЯН** — Надпись на шаровидном основании креста купола
Кафедрального собора Св. Эчмиадзина 114
- ЭДГАР ОВАННИСЯН** — Архиепископ Петрос Сараджян 123

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- АРУТ САРКИС ГАРТАНАКЯН** — Укрепленный Учением
Армянский Апостольский Престол 139

НЕКРОЛОГИ

- Высокопреподобный протоиерей Егише Саркисян 143



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the nationwide prayer ceremony in support of Artsakh . . .	5
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the prayer of Peace	8
Appeal of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS	11
Appeal of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS	13

SERMONS

Sermon delivered by REV. FR. MINAS HAKHVERDYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	16
--	----

RELIGIOUS STUDIES

ARCHIMANDRITE ISAHAK POGHOSYAN — Family as the “First Church” . .	19
On the sermon of ARCHIMANDRITE MATTHEOS for the first day of the Lent, “Wash, cleanse, loosen yourselves...”	32
IVAN ILYIN — On the homeland	39

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

MHER KUMUNTS — Shornokh settlement of Baghk province of historical Syunik (etymological research).	50
ARTSRUNI SAHAKYAN — About the Original of Agathangelos.	67

LUSINE SARGSYAN — Illumination of the Title Page of the Book of Genesis in the Art of the Armenian Miniaturist Avag (14 th Century)	81
KAREN PAHLEVANYAN — Armenian troops in the military operations of Erzurum during the First World War	98

ESSAYS


ARSEN HARUTYUNYAN — Inscription on the spherical base of the cross of the dome of the Etchmiadzin Cathedral	114
EDGAR HOVHANNISYAN — Archbishop Petros Sarajian as the Catholicos’ Vicar General and Patriarch of Cilicia (1936—1940).	123

LITERARY REVIEW

HAROUT SARKIS GARTANAKIAN – Apostolic See of Armenia strengthened with the doctrine	139
---	-----

NECROLOGY

Archpriest Yeghishe Sargsyan	143
--	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը յանուն Արցախի զորակցության համագգային աղօթքի արարողությանը	5
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Խաղաղության աղօթքի արարողության ընթացքում	8
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոչը	11
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոչը	13

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄԻՆԱՍ ԱԲՂՅ. ՀԱՆՈՒԵՐԴԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Ս. Պատարագին	16
--	----

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՕՂՈՍԵԱՆ – Ընտանիքը որպէս «առաջին Եկեղեցի».	19
ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ քարոզը աղուհացի առաջին օրուան համար, «Լուացուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք, թօթափեցէ՛ք...» խօսքին մասին	32
ԻԲԱՆ ԻԼՅԻՆ – Հայրենիքի մասին	39

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ – Պատմական Սիւնիքի Բաղք գաւառի Շոռնոխ բնակավայրը (ստուգաբանության փորձ)	50
ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ – Ազաթանգեղոսի բնագրի շուրջ	67

ԼՈՒՄԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ — Ծննդոց գրքի տիտղոսաթերթի նկարագարումը
մանրանկարիչ Ալազի արուեստում (ԺԴ. դար). 81

ԿԱՐԷՆ ՓԱՀԼԵԲՅԱՆ — Հայ գինուորականությունն Առաջին
աշխարհամարտի՝ Էրզրումի ռազմական գործողություններում 98

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ — Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի
խաչաթռռի արձանագրությունը 114


ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Պետրոս արքեպիսկոպոս Սարաճեանը Կիլիկիոյ
կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ եւ հայրապետ (1936—1940 թթ.) . . 123

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹ ՍԱՐԳԻՍ ԳԱՐՏԱՆԱՔԵԱՆ — Զորացեալ վարդապետութեամբ
Առաքելական Աթոռ Հայաստանեայց 139

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Արժանապատիւ Տէր Եղիշէ աւագ քահանայ Սարգսեան 143



ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատույթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

«ԷԶՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.11.2020 թ.



ՄԵՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾԻՆ ԵՊԻՍԿՈՍ